Բան : Առաւել ըստ բանականութե : ԼՃ. Այսինքն . բանականութեան որ հաւանականապէս խորհեցեալ , և ոչ ապացուցականապէս : Եւ պատճառն է , զի որպէս կարելի է ոչ լինիլ 'ի վեցորեայ գործօ այլ յաջորդութի ժամանակի , այլ բնութե , այսպէս և կարելի է , զի նախկնական ստեղծուածքն եղեալք իցեն յայ անմիջաբար , և 'ի հետեւեայ աւուրսն յաջորդաբար առածեցեալք 'ի յանկատարութենէ առկատարելութի , որպէս ասենք սբ բառիկոս . ամբարսիկոս . և ոսկեբերանն : Քանզի թէպէտ նկատմամբ ամենակարողութեան այլ , ասեմք թէ զոր ինչ առնէ ամ ինքեամբ անմիջաբար , առնէ զայնս իականջ լիադէս , և կատարելաբար . բայց նաև այս ոչ է անկարելի , զի եթէ իմաստութի այլ կամիցի պահել միշտ զկարող յաջորդութե 'ի յիրս , արասցէ այնպէս զի յաջորդութիս դռանիցի նաև 'ի յայնս՝ որք անմիջաբար արտադրին ինքեանէ այլ :

1. Բ. 66.

պ. 1.

ԴԼԲ.

Ա

Բան : Յաշխարհի էր : ԼՃ. Այսինքն . 'ի յիդէս այլոյ աշխարհի . զոր օրինակ , արհեստաւորն յորժամ խակայ յուշադրաբար 'ի վերայ առնել ինչ գործոյն իւրոյ , ասի գոյ 'ի յիդէս այլոյ գործոյն : Եւ կամ այսպէս , իդէայ աշխարհիս էր 'ի յամ . ուրեմն նաև ըստ այսմ , ամ էր յաշխարհի ըստ որում տրամադրէր առնել զաշխարհ՝ ըստ այնմ 'իդէայի որք 'ի յինքն : Տես և 'ի վեր յառաջին գիրս լուծմանց 'ի յգլուխն իւր .

Բ

Բան : Սակայն ոչ բաղադրեալ : ԼՃ. Այսինքն . տարրն՝ արդարև ոչ է բաղադրեցեալ , այլ սկիզբն բաղադրելեաց ասի , սակայն՝ նկատմամբ մարմնեց իբրութե , 'ի մարմնոց ոչ է բաղադրեցեալ : Բայց եթէ ամենևինք ոչ բաղադրեցեալն որոնիցի , ըստ այսմ՝ միայն նիւթն առաջին , և տեսակն ասին ոչ բաղադրեցեալք . և պարզ սկզբունք բաղադրելեաց , իսկ տարերքն բաղադրեցեալք 'ի նիւթոյ և 'ի տեսակէ :

Դ

Բան : Ուստի և ոչ ունի իսկ զպատճառ ապակա նութեան : ԼՃ. Ոչ է իմանալի թէ ոչ ունելով հինգերորդ էութիւնն (որք են երկինն և աստեղք) զպատճառ ապականութե , նաև ոչ ունիցի զպատճառ ոչնչացուցման : Քանզի ենթ ամային կամայնէ դոյն ամենից . ուստի , և իցէ ստեղծուած՝ կարէ ոչնչացուցանիլ յայ , երբ կամի ամ :

1. Բ. 104.

պ. 1.

Բան :

Բան : Ուր միայն է ծայրագոյն չար : 18. Ասինքն :
 'ի սեռի պատժոց , և ոչ 'ի սեռի էից : Բանդի
 ծայրագոյն բարին՝ թէ 'ի սեռի փառաց , և թէ 'ի
 սեռի էից՝ դոյ • վասն զի տեսութիւն անծային է ծայ-
 րագոյն բարի փառաց • և ինքն ան որ է ծայրագոյն
 էակ է և ծայրագոյն բարի • բայց ծայրագոյն չարն
 թէպէտ 'ի սեռի պատժոց դտանի , մինչ զրկիլն յայ
 յանկունականաբար՝ և պատժիլն , է՝ ծայրագոյն չար •
 բայց 'ի սեռի էից ոչ դտանի իմն , որ իցէ ծայրագոյն
 չար • որպէս և ասի 'ի վեր , 'ի յառաջին գիրս լուծմանց
 'ի դուխն Գ :

Բան : Պօրէ երկնին , կամ ջրեղինին : 18. Գի-
 տելի է զի սյօրէ , կամ ապակեղէն ասի երկնին
 այն՝ վասն կարծրութե և սառնաստեսակ հաս-
 տատութեանն • զի ջուրքն այնք՝ չեն հոսականք :
 Եւ ջրեղէն ասի • զի ասէ սք գիրն՝ գոյ ջուրք 'ի վե-
 րոյ երկնից : Բայց թէ որպիսաբար իցեն ջուրքն
 այնք 'ի վերոյ երկնից , զանադանապէս առնշանի 'ի
 սրբոց հարց • զորմէ տեսցես 'ի վայր Ը գլուխն , ենթ
 այբին :

Բան : Իսկ տարակաջութիւք վերոյ ասացեալ միոյ
 բակացդ : 18. Զգուշացիր՝ ո՛վ ուսումնասէր , զի
 մի՛ կարծիցես , թէ բացորոշականապէս գնէ ասուն
 հեղինակն զթիւ տարակաջութե միջոցայն • վասն զի
 նոյն ստուգութիւն ոչ է խնդրելի յամ՝ ուրք , այլ
 լատ որում տանիլ կարէ նիւթն : Ուստի պարտիս
 գիտել , զի զբացորոշեցեալ թիւն՝ փոխանակ անբացո-
 րոշեցերոյ առնու , և գրէ թէ կամի ասել զայս • ոմանք
 այսպէս վարկեալ այսքան միջոց գոյ ասացին :
 Ըստ այսմ՝ իմա և զթուոց հրեշտակաց , զորս գնէ
 ստորեւ այսմ գրոյս , 'ի դուխն ԴԳ • բանդի զիրաց որք
 տարակաջ են 'ի մէնջ՝ ոչ կարեմք ճառել ապացուցա-
 կանապէս • այլ միայն վարկեք հաւանականաբար :

Բան : Զարմարին հրեղէն երկնի , և առաջնոյ
 շարժումն : 18. Տրեցեալ սահմանէ հասարակ
 ամենից երկնից • բայց ոչ գնի շարժումն 'ի նմին՝
 զի և պատկանիցի հրեղէն երկնի՝ որ է անշարժ :

Բան : Անջրպետական ջուրց : 18. Հաստատութիւն
 զջուրս երկրայինս որ առ մեզ , բաժանէ 'ի ջուրց
 որք են 'ի վերոյ երկնից , բայց այնպէս իմանալի է՝ ըստ
 որում գրի 'ի վայր , 'ի Ը գլուխն , ենթ այբին :

Դ

ԴԼԴ

Ա

Բ

1. Իս. 52.
պ. 3.

ԴԼԴ

Ա

Բ

1. Իս. 68.
պ. 2.

Գ

Բան : Կարօտանան տարրականաց որակութեանց :
 ԼԾ. Այսինքն , տեսակաբար կարօտանան , բայց
 զօրութե օւնին զքերմութի , զցրտութիւն , և զայս
 որակութիս . զի ոչ կարէին պատճառել և տալ՝ եթէ
 ոչ օւնիցէին զօրութե . և ոչ կարէին մնալ անսպա-
 կանք , եթէ օւնիցէին զայնպիսի որակութիւնն տե-
 սակաբար :

Դ

Բան : Ոչ օւնին զզօրութի փոփոխելոյ զկամս մար-
 դոյն : ԼԾ. Ոչ զներդործութիս կամաց որք են
 ելուզեցեալք , և ոչ զներդործութիս կամաց՝ որք են
 հրամայեցեալք : Ի կամաց ելուզեցեալ ներդործութիք
 են սօքա , այսինքն , կամիլ , զմայլլ , դիտել , ընտրել ,
 խորհրդակցիլ . համահաւանիլ , վարիլ և այլք նմանք :
 Իսկ հրամայեցեալքն են այսոքիկ , այսինքն , ուտել ,
 ննջել , բայլել , և այլք նմանք . որք թէպէտ են դոր-
 ծողութիք մարմնոյն , բայց դուրս ՚ի ներքոյ հրամանի
 կամացն ասին հրամայեցեալ ներդործութիք կամաց .
 և թէ է՛ր վասն , ոչ կարեն փոփոխել զսոսալայտէ-
 ցի երկնային մարմինքն փոփոխեն միայն զայնս՝ որք են
 կախեցեալք ՚ի մարմնական դործեաց , և կազմուածոց .
 և կամ են ապականացուք . իսկ կամքն է՝ ազատ յեր-
 կոցունցն ևս . ուրեմն և ոչ ստորանկանի ազդեցմանց
 երկնայնոց մարմնոց . դարձեալ զի ներհակի ինքեան
 բանի կամացն , ստորանկանիլ բռնութեց :

Ի. Խ. 105.
 ա. 4.

Ե

Բան : Այլ ձկտեցուցանել յաւէտ և նո՛ւաղ : ԼԾ.
 Զխառնուածս մարմնոյն , և կամ զցանկական և
 զցասմնական զօրութիս , որք իշխին յաստեղաց , յաւէտ
 կամ նո՛ւաղ՝ ըստ ենթանկեցմանց խառնուածոց զա-
 նազանից մարդկանց՝ ձկտեցուցանեն : Կան զի ըստ
 որում մարդիք ՚ի ձեռն կամաց յաւէտ և նո՛ւաղ ընդ
 դիմանան կրից ցանկականին և ցասմնականին , ըստ
 այնմ և կիրքն յաւէտ և նո՛ւաղ ձկտեցուցանեն
 զմարդն : Ուտի յայտէ՝ զի թէպէտ աստեղք այլա-
 լնն զխառնուածս մարմնոյն , բայց կամքն ընդդիմա-
 նալովն կրից՝ կարէ խաւանել զձկտուած բնութե , և
 այնու՝ ոչ յաղթի յաստեղաց , այլ յաղթէ զաստեղս .
 ըստ բանից աստեղաբանից՝ որք ասեն . խմստուան
 իշխէ աստեղաց :

Ի. Խ. 105.
 ա. 4.

ԴԵ.

Ա

Բան : Եւ այս կամ յերկրէ , կամ ՚ի մոլորակացդ :
 ԼԾ. Ի մոլորակաց խաւարիլն՝ իմա ՚ի ստորնա-
 դոյն մոլորակէն , որդոն , ՚ի լուսնոյն՝ որ է վեր-
 ջնն . զի վայրագոյն մոլորակքն ոչ խաւարին ՚ի վեր-
 նա

նապունէն , այլ միայն յերկրէ ։ որպէս լուսինն որ է վայրագոյն մոլորակ , յայնժամ խաւարի , երբ միջադրի երկիրն 'ի մէջ ինքեան և արեգականն ։

Բայց վերնագոյն մոլորակն 'ի վայրագունէն կարէ խաւարի ։ որպէս արեգակն որ է վերնագոյն մոլորակ , յայնժամ խաւարի՝ յորժամ լուսինն միջագրի 'ի մէջ ինքեան և մեղ , որպէս և երևի իսկ 'ի ժամնու խաւարանն ։

Բան ։ Լոյսն տայ դունոյն զգոյ գիտաւորականն ։
ԼԵ . Տայ զգոյ գիտաւորութենականն 'ի սեռի զգալոյ ։ Քանզի գոյն գիտաւորութենականն է՝ կրկին , այսինքն , 'ի սեռի իմացականի , և 'ի սեռի զգալոյ ։ Առաջինն ոչ այլ ինչ է , եթէ ոչ՝ նմանութի իմն , որ ընդ ժամանել լուսոյ իմացութեանն առնողականի 'ի վր երեակայութեանն՝ հոսի 'ի նոցունց՝ դալով առ կարելի իմացումն , և կոչի իմանալի տեսակ գիտաւորութենական . և կամ՝ գոյ գիտաւորութենականն 'ի սեռի իմացականի ։ Իսկ երկրորդն է՝ նմանութի ինչ , որ ընդ ժամանելն լուսոյ զգալոյ 'ի վր դունոյն՝ հոսի 'ի նոցունց , դալով առ յաջս մեր , և կոչի զգալի տեսակ գիտաւորութենական . կամ՝ գոյ գիտաւորութենական 'ի սեռի զգալոյ ։

Եւ զի ասի թէ լոյսն տայ դունոյն զսա , վասն զի թէ լոյսն ոչ ժամանիցէ առ գոյնն , ոչ կարէ գոյնն արտահոսել զսա ։

Բան ։ Հաղորդէ զնմա յատկութիւն ամենեցունց ։
ԼԵ . Արեգակն , առնու առինքն զյատկութիւն իւրաքանիւրոց մոլորակաց , և անցուցանէ զայնս առ լուսինն ։ Եւ վասն այն է՝ զի տեսն իմաստասէրք՝ թէ արեգակն ընդ մարդոյն ծնանի զմարդ . առ յոր թէպէտ նաւ այլք մոլորականք համընթանան , բայց ոչ կարեն միառ մի առնուլ ինքեանս զնաւս յատկութիւնս իւրաքանիւրոց մոլորականաց , և հեղուլ զայնս 'ի ստորինս . և թէպէտ լուսինն առնու յարեգականէն զնմա և հեղու , բայց առնու կրաւորաբար ։ Ուստի առաւել արեգական քան թէ լուսնոյն՝ ասի ծնանիլ ընդ մարդոյն զմարդ՝ յաղաքս գործոյն ներգործականն ։

Բան ։ Ընդ յառաջ ընթանալն քան զարեգակն , նոյն զի , և ընդ հետեւինն աճի ։
ԼԵ . Աստուատկաբեմք առնուլ զպտուղ ինչ կենի ։ Քանզի Քս խորհրդաբար է արեգակն , և նմա՝ ճշմարիտ հաւատարեալ

բառին : Ուստի , եթէ կամիս ըստ հոգւոյ անիլ պարտիս քի հետեւիլ իսկ եթէ ըստ օրինակի հարկ տայ յառաջիկ նկրտիս , փութանակի ՚ի շնորհաց զը կեալ նմաղիս : տես ուրեմն զհետեւմանէ բուծմն այն պիտոյ տուեմն , որոյ հետեւիլն է թաղաւորել :

ԴԼԷ.

Ա

Բանն : Զուրն ՚ի վերայ երկնից վերանայ : ԼԺ. Այսինքն , վերանայ ՚ի վերայ հաստատութեան , որ յերկրորդում աւուր արարեցաւ յայ : Այլ դարձանէ հաստատութէ , ասեմն ումանք ՚ի սրտոց հարց թէ ոչ է երկինն ասողալից , այլէ օգեղէն երկինն , զոր սք գիրն կոչէ հաստատութիւն , վասն խտտեան լոյ անդէն ամպոցն : Իսկ այլք ասեմն ասողալից երկինն է հաստատութիւն , զոր յիշէ սք գիրն :

Արդ՝ ոչք կաշուան զտաճիւն կարծիան , ասեմն զձուրն որ ՚ի վերայ երկնից բարձրանայ դոլ ջուր տարրական , որ միշտ ՚ի ձեռն գոյրոշեաց բարձրանայ ՚ի վերայ օդէ , զէն երկնի . և անտի ծնանին անձրեք :

Իսկ որք կաշուան զերկրորդ կարծիան , զձուրն որ ՚ի վերայ երկնից՝ ոչ այլ ինչ դոլ ասեմն եթէ ոչ երկինն ասողալից և և ստանաւտեսակ , որ է ՚ի վերայ աստղալից երկնի : Ուրեմն զգուշանալի է՝ զի մի՛ գուցէ երկինն ասողալից համարեցեալ լիցի դոլ հաստատութիւն այս , և ջուրն որ ՚ի վերայ հաստատութեան , դոլ ջուր տարրական և լուծական : Քանզի թէդէտ վերայ ասացեալ երկրքեան կարծիքն և ա՛ն են խոհեմք : Բայց բաղադրութիւնն ոչ . այսինքն , հաստատութիւն ասել զասողալից երկինն՝ ըստ միոյ կարծեացն , և զձուրն իմանալ դոլ տարրական և լուծական՝ ըստ միւսոյ կարծեացն . և օլաւծառնէ՝ զի անկարելի է՝ տարրականի ջրոյ թարց ծախեցման անցանել ընդ դաւառն հոյոյ . և թախանցաբար անցանել ընդ աստղալից երկինն (մինչ կարծրութի նորին արգելու) և կարծեալ այնպիսի հասական ջուրն , ՚ի վեր քան զայն , այնպիսի երկինն :

Դ. Բ. Ը. Ը.

Բ. Ը. Ը.

Բ

Բան : Է ասհմանելի օտար կոպարաւ , այլ ոչ յառկաւն : ԼԺ. Մինչ ջուրն ըստ ինքեան իցէ յերկր , և մնացող ՚ի յանտարութե իւրում , ոչ կարէ աւանդ զձե իւրով յեղեղուկութք . այլէ օսահմանելի , այսինքն , եղերելի և ձեւաւորելի՝ օտար կոպարաւ , այս է՝ ամպոյ , և կամ սառի կոպարաւն , վասն զի երբ ջուրն ամպանայ , կամ սառի , յայնժամ ձեւնայ և ընդունի զեղը և զօսահման :

Բան

Բան : Եւ նշանակէ զփոփոխումն թագաւորու
 [Թե : 18. Երբեմն նշանակէ, և ներրնդունակա
 բար : և ոչ միշտ՝ և հարկաւորապէս . զի [Թե
 այս՝ և [Թե հետեւեալք այսպիսիք՝ ներ այնմ գլխոյ ,
 են հաւանական կարծիք իմաստնոց , և ոչ ապացու
 ցական ստուգութիւք . և պատճառն է՝ զի համայնք
 թէուցիք վերնայնոց մարմնոց՝ ոչ են տոորւ մեք ,
 'ի ձեռն որոց կարիցեմք ստուգապէս գիտել զնո
 ցունց :

Բան : Եւ ոչ 'ի յերկինս՝ ըստ իւրում գոյացուցե
 18. Եւ իմանալն ըստ որում է՝ չափ իրաց փոփո
 խեւեաց , 'ի ձեռն այլայլութե , է՝ միայն յերկրի .
 բայց ըստ որում է՝ չափ տեղականի շարժման , ըստ
 տրամ միայն է՝ նաև յերկինս մարմնականս :

Բան : Եւ 'ի նմա հրեշտակք դարձան առ ամ :
 18. Բառս այս դարձան , երբեմն նշանակէ
 զգործ՝ միանգամ հեռացելոյ ուրուք յուսմբէ : որպէս
 ասի զանառակէ որդւոյն՝ դառնալ առ հայրն :
 Երբեմն նշանակէ զգործ՝ ոչ երբեք հեռանալոյն ու
 րուք յուսմբէ , որպէս երբ ասի . որպէս պտուղք
 չթանց առն իմաստնոյ՝ դառնան 'ի յինքն , այսպէս և
 չարաքանութիւնք՝ դառնան 'ի գլուխս չարախօսաց .
 իբրուց [Թե՝ խօսեցեալ չարն կամ բարին , ոչ հեռանայ
 'ի խօսողէն : Եւ երբեմն նշանակէ զգործ՝ ազատա
 բար ընտրութեանն՝ որով սկսանի որ դնալ առ ոմն .
 որպէս բազմիցս ասի 'ի սք գիրս , (զբազմաց որք ոչ
 երբեք հեռացան յայ) [Թե՝ դարձաւ առ Տր , յոմ
 սրտէ իւրմէ , այսինքն՝ ընտրեաց ծառայել ան , և յա
 բիլ 'ի նա : Արդ՝ ըստ առաջնոյ նշանակութեն՝ բառս
 դարձուին՝ ոչ երբեք պատկանի հրեշտակաց . զի բարի
 հրեշտակքն ոչ երբեք հեռացան յայ մեղքք . և չարքն՝
 [Թեպէտ հեռացան , բայց ոչ երբեք դարձան , և ոչ
 կարեն դառնալ : Իսկ ըստ երկրորդի , և երրորդի
 նշանակութեանց , դարձուին պատկանի հրեշտակաց
 բարեաց , որք ոչ երբեք հեռացան յայ . նաև աղա
 տաբար ընտրեցին յարիլ առ ամ :

Բան : Չմինն զինի միւսոյ : 18. Չայն՝ զորս 'ի
 ձեռն բաղմաց տեսակաց իմանալեաց իմանայ
 հրեշտակն 'ի բնականի ճանաչման , համանդա
 մայն ոչ իմանայ , այլ յաջորդաբար . իսկ եթէ իցեն
 այնպիսի բազումք , որք 'ի ձեռն միոյ իմանալոյ տե
 ւա

ԴԼԹ.

Ա

ԴԼԴ.

Ա

Բ

3. Խ. 34.
 Կ. 1.

ԴԼԴ.

Ա

սակի իմանին , զայնս ոչ իմանայ յաջորդաբար , այլ համանգամայն :

Բ

1. Բ. 64.

2.

Բան : Ոչ վասն անգանազանության միտելոյն առհարն և բարին : Լծ. Վարտէ իմանալ զայս՝ յետ միան դամ ընտրութեանն . քանզի կամք հրէշտակաց նախ քան զընտրութի բարւոյ և չարի , կարէին անգանազանապէս միտել առ բարին և չարն . իսկ յետ ընտրութեն , որք զբարին ընտրեցին՝ ոչ կարեն կամիլ զչար , և որք զչարն ընտրեցին՝ ոչ կարեն կամիլ զբարին :

Գ

Բան : Ընկալեալ զանմահութի : Լծ. Անմահութին կրկին կերպիւ առնանի . նախ վասն ամենակերպի անփոփոխութե , որով ոչ ինչ կերպիւ կարէ լինիլ անցումն ի յորպիսութէ յիմեքէ առ այլ որպիսութի , և ըստ այսմ կերպի , ըստ առաքելոյն , ամ միայն ունի զանմահութի : Էրկրորդ՝ առնանի միայն փոխանակ այնմիկ անփոփոխութեան՝ որով որ կեայ՝ ոչ կարէ մեռանիլ , անցանելով ի յորպիսութէ կենաց , ի յորպիսութի մահու , որ է ապականութի . և ըստ այսմ սահն անմահք՝ նաև հրէշտակք , և հոգիք մարդկանց : Արդ՝ զառաջին անմահութի թէպէտ ունին հրէշտակք , բայց ոչ բնութի , որպէս զամ , այլ ընկալմամբ : Իսկ զերկրորդն՝ ունին բնութի , զի բնական է նոցին ոչ մեռանիլ : Բայց դառնալն յովինչ՝ ոչ է մեռանիլ . վասն որոյ եթէ ամ թողցէ զնոսա , կարեն ոչնչա նալ , մինչ ոչ ունին բնութի զանմահութի , ըստ առաջնոյ եղանակին :

3. Բ. 30.

4.

ԴԼԺԲ.

Ա

Բան : Նշանակէ զկարգ , և այն բացարձակաբար ոչ է ի յերկս անձինս : Լծ. Կարգն երբեմն նշանակէ զառաջագոյնութի , և զյետնագոյնութի , զմեծութիւն , և զփոքրութի ոմանց , և այսպիսի կարգ է ի հրէշտակս , զոր անունմբ քահանայապետութեան , առնու սբն դիոնէսիոս . ուստի այսպիսի քահանայապետութիւն , և կարգ , ոչ է ի յանձինս ամայինս : Էլ երբեմն կարգն ասէ զայն որով մինն է ի միւսոյն . և կոչի սա կարգ բնութե . և այսու կարգաւ՝ ոչ լինի յառաջագոյնութի և յետնագոյնութի , մեծութիւն , և կամ փոքրութի . ուստի այսպիսի կարգ է ի յանձինս ամայինս , որպէս ասէ օգոստոնոս . զի ոչ է շփոթութի ի յանձինս ամայինս՝ այլ կարգ . քանզի որդի է ի հօրէ , և ոգին սբ յերկոցունցն , վասն որոյ ի բնա բանոջն ասի , այլ միայն է ի կարգի բնութե , այսինքն ի յամայինս է միայն կարգ բնութե :

Բան :

Բան : Ստեղծեցեալք յառաջ քան զամ ստեղծող
 ածս : 1Ճ. Գիտեի եւ աստէն . զի ըստ կարծեաց
 ոմանց վարդապետաց յունաց , հրեշտակք թէ-
 պէտ ոչ եղեն յախտենից , սակայն յառաջադոյն ստեղ-
 ծան ժամանակաւ քան զերեւելի աշխարհս . բայց ըստ
 կարծեաց վարդապետաց լատինացւոց , որ առաւել
 հաւանական է , համանգամայն ընդերեւելի արարածոցս
 ստեղծան . որոց ստեղծումն ըստ յետին կարծեացս՝
 իմանի անոճամբ երկնի . մինչ ասէ գիրն , 'ի սկզբանէ
 արար ամ զերկին եւ զերկիր , այսինքն , զհրեշտակս , եւ
 զնիւթ աշխարհի երեւելոյ :

Բան : Նախադիտակք հանդերձելոց : 1Ճ. Գիտե-
 լի է , զի կրկին կերպիւն լինի նախադիտել զհան-
 դերձեալն : Նախ 'ի գոյն իւր , որդոն , գիտել թէ՝
 վաղիւն պետորոս մեռանի . եւ այս է այնպէս գիտել ,
 որպէս եւ գիտէ որ զիւր ինչ ներկայ դոլ էակ . ուստի
 կողի այսպիսի գիտելս , գիտել զիրն 'ի գոյն իւր :
 Երկրորդ 'ի պատճառն իւր , որդոն , գիտել զպետ-
 րոս դոլ մեռանելոց 'ի վաղիւն , բայց ոչ 'ի գոյն , այլ
 'ի պատճառն իւր . զի գոյով հմուտ բժիշկ՝ ետես
 զճանտրութի հիւանդութեան , որ կարէ պատճառել
 զմահ 'ի վաղիւն : Արդ՝ առաջին կերպ նախադիտու-
 թեան՝ է յատուկ այժ , եւ ոչ պատկանի ստեղծող
 ուրուք , որպէս ասէ եսայի իբ . պտտմեղէք զայն որք
 դալոցք են , եւ յայնժամ ասացուք թէ՛ ամբ իցէք
 դուք : Իսկ երկրորդ կերպն՝ յարմարիլ կարէ ստեղ-
 ծողոց , եւ մանաւանդ հրեշտակաց , որք առաւել
 դոյով նրբահայեացք իմացութեք , ճանաչել կարեն
 զիրս ապագայս 'ի պատճառս իւրեանց :

Բան : Չառանձօտեան եւ զերեկոյեան : 1Ճ. Գիտեի
 է , զի վասն այն ոչ դնի 'ի բարի հրեշտակածա-
 նաչումն դիշերական , զի երեկոյեան ճանաչումն նո-
 ցին է ճանաչել զիրսն 'ի յատուկ բնութիւն իւրեանց .
 որք մինչ ճանաչեն՝ ոչ սկսեալն 'ի նոյն , այլ վերա-
 ծեն 'ի գոյութիւն . եւ այնպէս երեկոյական ճանաչ-
 ման նոցին՝ ոչ հետեւի դիշերական ճանաչումն՝ որ է
 սկսեալ 'ի ստեղծողածա . այլ հետեւի առանձօտեան
 ճանաչումն . զի երբ վերածեն զայնս առ ամային դո-
 վութիւն , տեսանեն զիրսն 'ի բանն այժ , որ է առանձ-
 օտեան ճանաչումն :

Գլ. Ժգ.

Ա

1. խ. 62.
պ. 3.

Բ.

1. խ. 57.
պ. 3.

Գ

1. խ. 38.
պ. 6.

ԳԼԺԳ. **Բ**ան : Սորա անմիջաբար միանան ընդ այ : ԼԾ. Ոչէ իմանալի թէ միայն սերօքէք անմիջաբար միանան ընդ այ , այսինքն , տեսանեն . քանզի աստ ան-

Ամիջաբար բառս այս առնանի փոխանակ առաւել մեր-
 1. խ. 12. ձաւորութեան , և առաւել տեսութեանն ըստ որոյ է :
 պ. 2. և 6. և դերադանցութի երանութեց՝ ըստ այնմ , ունի աստղ-
 քան զաստղ՝ առաւել է փառօք :

Բան : Մերձաւորագոյն միաւորին : ԼԾ. Այսինքն , նկատմամբ վայրագունից կարգօց . քանզի թէ պէտք երօքէքն ունին զդերադանց ճանաչումն զայ ,
 1. խ. 103. բայց ոչ առաւել քան զսերօքէս՝ որք են վերնագոյնք ,
 պ. 5. ուստի յաւելտ նկատմամբ վայրագունիցն պարտի իմա-
 նիլ այսպիսի առաւելութիւնս . զի համայնք վերնա-
 գոյնք՝ ունին զամ , զորունին վայրագոյնքն բայց ոչ հա-
 կադարձաբար :

Գան : Էն ազատք յամ բռնութեց : ԼԾ. Էն ազատք ի յղեցմանց առ արտաքին սպասաւորութիս . զի բառս այս բռնութի , դնի փոխանակ պարաւանդու-
 թէ առ արտադէպումն : Աստուատ կարէ իմանիլ թէ մինչ տէրութիւնն ոչ յղին առարտաքին սպասա-
 2. խ. 11. ւորութիս , յոյժ առաւել նաև վերնագոյն երեք
 3. 11. պ. 4. կարգքն . այսինքն , սերովքէք , քերովքէք , և աթոք ,
 ոչ յղին . որօքս և ասէ մեծն դիմենսիտ , այլ վայրա-
 գոյնք կարգքն հնգեքինք՝ յղին . բայց այսու ամի , որք
 յղին՝ ոչ հեռանան յայ . այլ որքան ի յոչ յղին , այնքան
 և ի յղին ներկայք են այ , և տեսանեն զնա :

ԳԼԺԵ. **Բ**ան : Իմարմանալոյն և ի չարջարանայն Բի գի-
 տացին հրեշտակք : ԼԾ. Գիտացին ի հասա-

Արակի , և ըստ գոյացուե եղելոյ , բայց ոչ յատ-
 կաբար զհամայնս թէութիս . և այս է որ ասի ի բնա-
 բանօն , ոչ գիտացին զվասն էրն , և զզիարդն :
 Էն այս ստորք է ըստ սրբոյն դիմենսիտի , զի նաև
 վերնագոյնք հրեշտակք ոմանք՝ յետոյ ուսան . ըստ
 Էսայ. 63. Էսայեայ՝ ուր հրեշտակաց հարցանողաց , ով է սա
 որ գայ յեղովնայ , պատասխանեալ լինի ի Քսէ , եւ
 որ ի սոսիմ զարգարութի , և այլն : Սակայն նաև այս է
 1. խ. 53. ճշմարիտ՝ զի զոր ինչ ճանաչեցին մարգարէք զՔսէ ,
 պ. 5. առաւել քան զնոսա ճանաչեցին հրեշտակք , ի
 ձեռն ամայնոց յայտնութեց :

Բան : Սպասաւորելն է գործ պաշտման , և աւե-
 տարանութեան , և յանձնեալ գործոյն : ԼԾ.
 Աստէն գիտէ ասել թէ սպասաւորութիւն է կրկին ,
 այս-

այսինքն , մինն աւետարանութե , և միւսն պաշտման ,
և յանձնեալ գործոյ : Արդ՝ սպասաւորութի պաշտ-
ման՝ նշանակէ զառաքեցումն , որ լինի 'ի ձեռն տե-
ղական շարժման : Իսկ սպասաւորութի աւետարա-
նութե , նշանակէ զառաքեցումն , որ լինի 'ի ձեռն
ազգութե նորոյ գործոյ 'ի ստեղծումաւ , որպէս յոր-
ժամ ոմն հրեշտակ ուղղէ զնոր գործ ինչ 'ի ստեղծու-
ածս , թարց տեղական շարժման ինքեան :

Ապա 'ի ձեռն սպասաւորութե պաշտման , առաքին
միայն վարձաբոյն հինգը կարգք . որպէս և ասացաք 'ի
գլխովն յառաջ ընթացի : Իսկ սպասաւորութե աւե-
տարանութե , առաքին չորք վերնադոյն կարգքն :

1. խ. 113
պ. 2:

Բայց զի յայտ լիցի , թէ զհարկ թուեալ սերօքէն
առ 'ի մարբեղ զընթուս եսայեայ (որպէս ասէ նշին
'ի Գ. գլուխն .) մինչ ոչ կարէր առաքիլ տեղական
շարժմամբ , տարտէ գիտել . զի զօրութիւ վերնա-
դուռնից՝ ամին առ վարձաբոյնս , զի և նոքա ամիցեն
առ յայս : Աստի՛ մինչ այսպէս յանձնի վարձաբո-
նից , զի գործիցեն զիմն զօրութե վերնադուռնից , կա-
րեն ազատաբար վարիլ 'ի գործն այն՝ անտեմբ վեր-
նադուռնիցն այնց՝ որոց զօրութե և հեղինակութեամբ
առնեն զգործս նոցին : Ասան որոյ մինն 'ի վարձաբո-
նից հրեշտակաց , կատարէր զպաշտօն իւր՝ զօրութե
սերօքէին որ բացայայտեալ էր նմառնել զայն գործ ,
այսինքն զէպծակունան մերձեցուցանել 'ի ընթուս
մարգարէին . ուստի և կոչեցաւ սերօքէ :

Բան : Ոչ անցանէ զմիջացաւ , այլ անդրալինի : ԼԵ.
Այսինքն . Մինչ աստ էր հրեշտակ որ , լինի
անդ , թարց անցանելոյ զմիջոցն : Բայց գիտելի է , զի
զայս ստութի հեղինակն անտեմնէ մոլորութի . սա-
կայն՝ կրկին կերպիւ կարէ ասիլ այս : Մասն՝ այսպէս ,
իբրեւ թէ ոչ է 'ի ներքոյ իշխանութեան հրեշտակին
անցանել զմիջոցն , այլ միշտ 'ի հարկէ անդրալինի , որ
արդարեւ է՝ մոլորութի : Երկրորդ՝ կարէ ասիլ այս
պէս . յիշատակութեան հրեշտակին է , երբ կամիցի
յուրեքէ յայլ ուր գնալ , անցանել զմիջոցն իւրով շա-
րժանակ շարժմամբն , և կամ ոչ անցանել , այլ ան-
դրալինի : Իւրեւ այսմ ասել ոչ անցանել զմիջոցն՝
ոչ է մոլորութի :

1. խ. 111
պ. 2:

ԳԼԺԶ.

Բան : Ի ճանապարհի որ առ վերին գաւառն :
ԼԾ. Այնք վերակացութիւք միայն դադարեացին՝
 որք վերածեն առ վերջին վախճանն . իսկ այնք
 որք պատկանին առ դործարկումն վերջնոյ վախճանին
 1. Բա. 108. այլք են պաշտօնք զինուորացի ի մարտի, և այլք ի
 Ե. 7. յաղթութե և ի խաղաղութե :

Բ

Բան : Կաւ ի մարդիք խախանեացին վերակացու
 թիւք : **ԼԾ.** Ոչէ խմանալի թէ նաւ նշանք սուս
 նորդութեան, և վերակացութե, որ է կրկին պա
 տիւն, խախանեացին . բանդի որք բարոք վերակացուք
 վերլ Յմ. Լեւալք են, երևեացին ի վերին գաւառն՝ (լստ առա
 Բա. 76. բելոյն), ունել զկրկին պատիւն, այսինքն, զոսկեղէն
 Ե. 7. փոքրիկ պատկին, վասն վարդապետութե իւրեանց՝
 որովք ուսուցին զստորագրեցեալս իւրեանց :

ԳԼԺԷ.

Բան : Եւ այն ան լուծանելի կարով : **ԼԾ.** Ան
 լուծանելի կաղս այս է՝ ներդործութե սէրն .
 որ լստ առաքելոյն ոչ երբեք անկանի . զի սէրն՝
 մինչ զօրութե միայն է նուաճք, կարէ անկանիլ, զի
 2. 2. Բա. ունոյն կարէ վարիլ այլայնովք իւրօք, որ ներհանի
 24. Ե. 11. սիրոյն . բայց մինչ ներդործութե է . այսինքն, ունոյն
 ներդործաբար վարի սիրով, ոչ երբեք անկանի . զի
 ներդործութեամբ սէրն ոչ ունի նինքեան զինն՝ որով
 անկանիցի :

Բ

Բան : Իսկոյն եղեն հաստատեցեալք : **ԼԾ.** Բառս
 այս իսկոյն, կրկին կերպիւ առնանի, մերթ բաց
 արձակաբար, փոխանակ թարց իմիք շարժողութեան
 ունելոյ զինն, լստ որոյ կերպի միայն զայն ասի ունել
 զերանութի . զի ունի բնականաբար, և ոչ կարօտի
 յառաջընթացի շարժման : Եւ երբեմն առնանի լստ
 իրիք նկատման՝ փոխանակ թարց բաղմաց շարժողու
 թեց ունելոյ զինն, և լստ արմ գնի անդէն՝ իսկոյնն .
 1. 2. Բա. 5. զի հրեշտակքն՝ միով միայնով շարժմամբ դործողութե
 Ե. 7. շահեցան զանոյն տեսութի, որ է երանութիւն . և
 ասին իսկոյն շահիլ՝ նկատմամբ մարդկանց՝ որք իձեռն
 բաղմաց յառաջընթացի գործողութեց ապա շահին .
 թէպէտ նաւ մարդն՝ կարէ երբեմն միով սիրով տե
 սակաւորեցելով շահիլ զկեանս յաւիտենական :

Բան : Զորոց պահպանութիւն բաց կայ հրեշտակն
ներգործութիւն : ԼԾ. Իբաց կայ ներգործութիւն ,
որքան առ յառաջացուցումն արդիւնաւոր դոր
ծոց առկեանն յաւիտեանական : Բայց որքան առ ի
յետք բարել զնոսա ի շարէն , զի մի այնքան վտան
գին , ներգործութիւն պահպանէ հրեշտակն , և ոչ
իբաց կայ :

Բան : Ք՞ ունէր կարգեալ հրեշտակ : ԼԾ. Ունէր
բառ որում մարդ ճանապարհորդ և չարարելի
հրեշտակս տահապանս , բայց ոչ որպէս զվերնադոյն
ինքեան , այլ ուն զսպասաւոր վայրագոյն . և այսպէս
ոչ միայն զմի , այլ զբազումս ունէր : Ըստ այնմ , մա
տեան հրեշտակք և սլաշտէին :

Բան : Եւ զուրո կարծիս բնական առարկութեց :
ԼԾ. Արդ , եթէ բարի հրեշտակքն իբաց հեր
քեն զայսպիսիս . ուրեմն դեք շարժեն առ յայս . վն
որոյ և ի սրբոց հարց՝ դեքն կոչեցան ուսուցիչք հե
րիտիկոսաց :

Բան : Զորժամ ի տեսեալ իրաց՝ յառնէ ի շար
ժումն զարմացման : ԼԾ. Անէ հանապազոր
դեան խօսակցութիւն երանեցելոց հրեշտակաց
ընդ այժ , զի հանապազ տեսանեն զմեծ , և ի տեսութե
նէն յառնեն ի շարժումն զարմացման :

Բան : Կամ յորժամ զբաղձանս իւրս ընծայէ նմա :
ԼԾ. Հրեշտակք սքք՝ յորժամ ոչ դիտեն զիմ
յիրաց դերբնականաց , և բաղձան դիտել , ընծայեն ,
այսինքն , ներկայացուցանեն զբաղձանս իւրեանց այժ
առ ի դիտել . որպէս աշակերտն մինչ տարակուսի զի
մեքէ , հարցանէ վարդապետին իւրոյ ներկայացուց
մամբ բաղձանին . և այսու ևս խօսին հրեշտակք :
ընդ այժ , բայց ոչ հանապազ , այլ յայնժամ , յորժամ
տարակուսին :

Բան : Միջնորդութիւն հոգևոր ճառագայթի :
ԼԾ. Այսինքն , կարդաւորեալ իմն կամաւ , ուն
զի այնպիսի յղացումն բացայայտիցի միւսոյն , առ որ
կամի , և ոչ այլում , և հոգևոր ճառագայթ ասի՝ կար
դաւորումն կամաց , զի նորօք այնպէս ուղղէ և եղբերէ
զիմացմունս իւր առ մինն , որ ոչ իցէ առմիւսն :
Ասան որոյ , նախկին հրեշտակն այնպէս կարէ խօ
սիլ ընդ վերջոյն՝ մինչ զի ի բնաւից միջականացն ոչ
իմանիցի :

Դ

Բան : Չար խորհուրդն ոչ կարէ մուծանել : Լծ. Մուծանելն զխորհուրդ է՝ եռակի , այսինքն , ստեղծելով 'ի ներքս . կամ բորբոքելով զարիւնն տալաւորել 'ի զգայութե . և կամ տալաւորել 'ի կամս : Չառաջինն՝ ոչ երբէք կարէ առնել դէն , և առ յայն ասէ բէթա , թէ դէն ոչէ արկանող չարեաց խորհրդոց 'ի ներքս : Չերկրորդն՝ կարէ առնել դէն , մինչ բորբոքիցէ զարիւն և տալաւորիցէ 'ի զգայութե , որոյ ոչ հաւանելով մանաւանդ արդիւնաւորիմք , քան թէ հետսիմք . և առ յայս ասէ դամակացին , թէ դէն է արկանող չարեաց խորհրդոց : Իսկ զերրորդն՝ ոչ կարէ առնել , այսինքն , ընդ բորբոքելն զարիւն տալաւորել 'ի կամս . վսղի կամս է ազատ . և 'ի հաւանինն ոչ բռնադատի յուսեքէ . և առ այս միտ ասէ բնաբանն , զհարն ոչ կարէ մուծանել , որ հաւաստութիւնն չար , այսինքն , ոչ կարէ առնել՝ զի կամս հաւանիցի չարին :

1.խ.111.
պ.1.

ԴԼ.Դ.
Ա

ԴԼ.Դա.

Ա
1.խ.60.
պ.1.

ԴԼ.ԴԲ.

Ա

Բան : Եւ ասէ 'ի կարգէ հրեշտակապետաց : Լծ. Ոչ իբրու թէ էր 'ի ստորնագունից , կամ 'ի միջակաց , ներ այնմ կարգին , այլ առաջին և պետ ամենից հրեշտակապետաց : 3.խ.30.պ.2.

Բան : Թէ դառնային սիրել զամբ : Լծ. Եթէ սիրիցէին զամբ հեղեալ սիրով , այսէ , հաճոյալ կան սիրով 'ի վեր քան զինքեանս , ելանէին 'ի վառս : Ասի հեղեալ սիրով , զի բնականաւ սիրով արդէն սիրէին , բայց այն ոչ էր բաւական առ ստացումս գերբնականի կեննի : Քանզի բնականաւ սիրով ոչ արդիւնաւորիմք , այլ 'ի ձեռն հաճոյարարի :

Բան : Ի գիտութե առ անգիտութի : Լծ. Յայնմանէ գիտութե անկաւ , զոր ունէր շնորհիւ : Եւ աստ գիտելի է՝ զի եռակի ճանաչմունք էին 'ի հրեշտական՝ նախ քան զանկումս , այսինքն , բնական 'ի ձեռն շնորհի հայեգողական , և 'ի ձեռն շնորհի արտօրական : Առաջինն որ բնական , անկմամբն նոցին ոչ բառնեցաւ 'ի նոցանէ . և առ յայս ասէ դիոնեօսիոս . թէ բնական պարգեքն 'ի դէս՝ մնացին ամբողջ : Երկրորդն որ 'ի ձեռն շնորհի հայեգողական , բոտ մասին ինչ բառնեցաւ , և բոտ մասին ինչ մնաց : զի հայեցողական ճանաչումս այս 'ի ձեռն շնորհի է ճանաչել զմանա զազունիս ամայինս 'ի ձեռն յայտնութեց ամայնոց : Արդ՝ այսպիսիքս որքան պիտոյ է՝ երբեմն յայտնին գիւտաց միջնորդութե հրեշտակաց

որքոց , և կամ 'ի ձեռն ոմանց ժամանակաւորաց եղե-
լոց , որք լինին դօրուծքն անձայնով . բայց յոյժ նո-
ալ և սակաւ քան զսոյնս՝ որք յայտնին սրբոց հրեշ-
տակաց , մանաւանդ մինչ տեսանեն ըն բանում :
Իսկ երրորդ ձանաղումն՝ որ է 'ի ձեռն շնորհի ախոր-
ժական , ամենևին բառնեցաւ 'ի նոցանէ . զի այսպիսի 1. խ. 64.
ձանաղումն է՝ յառաջ անօղ սիրոյն անձայնոյ : պ. 1.
Ուստի որքան առ յայսպիսի դիտութիւն՝ ասի 'ի բնա-
բանոյն , թէ անկաւ 'ի տգիտութի , և կամ թէ , կու-
րացեալ եղև 'ի ճշմարտութի :

Բան : Ամենեքեան միահաղոյն փակեողին 'ի դժոխս : ԳԼԻԳ.
ԼԺ. Բարեք ասէ ամենեքեան , զի ոմանք , նաև
այժմ ըստ տեղւոյն են 'ի դժոխս՝ առ 'ի տանջել
զնոյն այնց՝ զորս որսացին : Ասացի ըստ տեղւոյն .
քանզի ըստ պատժոյն՝ համայնք դէք զդժոխս իւրեանց
լոկեցուցանեն ընդ ինքեանց՝ ուր և երթիցեն : 1. պ.
16. պ. 4.

Բան : Այնքանք են 'ի յիւրաքանչիւր դասս դունդք :
ԼԺ. Աստ էն ևս իմա այնպէս , որպէս և ասա-
ցաք ներ այսմ գրոյս 'ի Գ գլուխն լուծմանց , զի այս
թիւ հրեշտակաց՝ ոչ դնի աստէն վասն բացորոյն-
ցեալ թռչոյ , այլ ըստ 'ի միք , այսինքն՝ զի այս թիւ
որ երևի մեզ բաղում՝ կարիցեմք սորօք մտածել՝ թէ
կարի բաղումք են թիւք հրեշտակաց , զի զայս և եթ
ունիմք յայ առ մեղ յայտնեալ , թէ կարի բաղումք
իցեն , բայց ոչ՝ թէ որքանք իցեն :

Բան : Ոմանք ասացին թէ երկու որմունք լինի . ԳԼԻԳ.
գին : ԼԺ. Ասելովն թէ ոմանք ասեն , ինքն ոչ
կամի հաստատուել . այլ համառօտութեան աղա-
դաւ ոչ արտաքսէ որոշակի . և վասն այն ոչ հաստա-
տէ զի այնպիսի կարծիքն է՝ ընդգէմ սրբոյն օգոտի-
նոսի , որ ասէ , 'ի յերկինս՝ հրեշտակաց և մարդկան ոչ
եղիցին երկու բնկերակցութիւք , այլ մի :

Բան : Բացատրի բաղում պատճառաւ : ԼԺ. Աս-
տէն սրարոէ գիտել . զի բաղումք հաւանա-
կանք պատճառք , թէպէտ մի առ մի կալեալ
ոչ եզրակացուցանեն հարկաւորապէս . բայց բնաւ
իմաստն՝ գոնեա եզրակացուցանեն . ուստի բաղմիցս
առածին յողովք բանք հաւանականք՝ զի ասացուցանի-
ցեն զմի իմն :

ՄԷԻԳ. **Բ**ան : Եւ այս երեկոյական ճանաչմամբ : ԼԺ.
Անպիսի երեկոյական , որում ոչ առաւօտեան ,
այլ գիշերական ճանաչումն հետեւի . զի դէք
Ա զոր ինչ ճանաչեն 'ի օտեղծութիւնս , ոչ վերաբերեն
առ ամային գովութի . այլ սեւեռին 'ի նոսրին , որոյ
ներհանէ 'ի բարի հրեշտակն : Տես ներ լուծմանց
գրոյս 'ի ժԳ. գլուխն :

Բան : Չբնական ապառնին : ԼԺ. Չայմանէ ևս 'ի
որպէս ճանաչին ապառնիքն , տես ներ լուծմանց
գրոյս 'ի ժԳ. գլուխն :

ՄԷԻԷ. **Բ**ան : Որպէս խրատէ զանհատատն մտանել 'ի
կարգ կրօնաւորաց : ԼԺ. Ատէն բացատրի
միայն չարկամբն սատանայի , և ոչ 'ի յառա
ջացումն չարկամաց նորին : Քանզի դէն 'ի
տեսնիցէ զբնութիւն ուրուք անհաստատ , և յորդորի
ցէ առկրօն ինչ , ոչ հետեւի 'ի յորդորեցեալն այն
յետոյ լինիցի կարգաթող , մինչ 'ի ձեռն կամաց , և
չորհիւ Տն , կարելի է լինիլ 'ի կրօնին յայնմիկ սԳ .
ուստի սբն 'ի օմնա 'ի յօսիւողուլոյ կոչեցեալ գիրո
խւր , զայմանէ բացատրէ այսպէս :
Տուեալ 'ի դէն յորդորեցէ զոր մտանել 'ի կրօն
ինչ , մինչ այնտէ նաև գործ բարեաց հրեշտակաց ,
ոչէ վտանգ մտանելն 'ի կրօն . զի այնու առաւել
հօկող լինի մարդն ընդդիմանալով հպարտութեան
որէ պատճառ կարգաթողութեան , բան 'ի 'ի մրե
ցեալ : Ուստի մարդն ոչ երբէք պարտի 'ի թողու
ղկամեցեալ բարին , վասն կասկածանաց աղաղայից
'ի յոր դոյ կարելութիւն 'ի բաց ընկենու զայն բա
րին . զի ծառայն չար , այսու մտօք ոչ էարկ 'ի սե
ղանաւորս զարծաթ Տն իւրոյ :

Բան : Ոմանք ասեն , 'ի 'ի յողթեցեալն 'ի մի մոլու
թեան , զյողթօղն ոչ կարէ փորձել : ԼԺ.
Միայն առ ժամանակ մի ոչ կարէ փորձել , և առ
այս միտ հեղինակն զայնս կարծիս ոչ հաստատէ
այլ միայն յիշէ . վասն զի դէն 'ի 'ի պէտ առ ժամա
նակ ինչ 'ի բաց կեայ , բայց միշտ կարէ դառնալ
բոտ այնմ դարձայց 'ի տուն իմ ուստի եհի :
Եւ բոտ այնմ , 'ի բաց եկաց 'ի նմանէ սատանայ՝ առ
ժամանակ մի :

է. խ. 114.
ք. 5.

Բան : Եւ ցանկացաւ ոչ գոյ ումբ հնազանդ : 1Ծ.

ԳԼԻԳ

Ոչ միայն նկատմամբ ստեղծուածոց , այլ և այլ :

Ա

Ձի որքան առ ստեղծուածս՝ ցանկացաւ գոյ պետ և գոյութիւն ամենից այլոց , և ոչ գոյ ստորեւ քան զոր : Եւ որքան առ նա՞ծ , ցանկացաւ շահիլ զերաշնութիւնն իւրով յատկաւ զօրութեւն , որ է յատուկ այլ , և այս է կատարեալ անհնազանդութիւն . զի մինչ ստորագրեցեալ ոմն էր , ոչ կարէր կամիլ առանց մեղաց , զերանութիւնն զայն ինքեամբ ունել . Թէ պէտ առ բերելի էր նմաւ այն , հեղինակութեւն այլ , որում (ըստ անսերմոսի) ժամանեալ իսկէր , եթէ առաջորութե այլ սպասեալ էր :

1. խ. 63.

պ. 3.

Բան : Ածակերպ շունչ կենաց : 1Ծ. Այսինքն ,

ԳԼԻԹ.

շնչելն այլ զհոգի՝ յերես նախկնոց մարդոցն , ոչ զայլ ինչ նշանակէ՝ եթէ ոչ՝ զստեղծելն զհոգի՝ ի նմին :

Ա

Բան : Կատարելի , և անկատար : 1Ծ. Ձի հոգին է՝ որպէս զկոփեալ տախտակ , նորում թէպէտ

ԳԼԼ.

ոչ ինչ է գրեցեալ ներգործութեամբ , բայց կարեն գրիլ համայնք . է ուրեմն որպէս զպարզ նիւթ ի սեռի իմանալեաց , և այնու , թէպէտ է անկատար՝ բայց մինչ կատարելի է , լինի կատարեալ ի յոնգունելն զոտեսակս իմանալիս . և այսոքիկք ասին նկատմամբ առ գիտութիւնս , և առ առաքինութիւնս , և ոչ առ բնական զօրութիւնս՝ ըստ որոց է միշտ կատարեալ :

Ա

1. խ. 34.

պ. 3.

Բան : Է՝ աստակրելի , և փոփոխելի : 1Ծ. Որքան հոգին է միաւորեցեալ ընդ մարմնոյ որ է մահկանացու , է՝ փոփոխելի , բայց ոչ յետ բաժանման ի մարմնոյն , և կամ յետ յարութեան , որ զգենու զմարմին :

Բ

գլխ. ԳԼԼԼ

խ. 93. պ.

1. խ. 64.

պ. 2.

Բան : Շունչ ըստ որում՝ շնչէ : 1Ծ. Բառս այս շունչ՝ գնի աստէն փոխանակ ոգւոյ , ըստ որոյ կերպի զհրէշտակաց ասի ոգի :

ԳԼԼԼԼ.

Եւ այս մասն այն , զի հոգի մեր ըստ այնմ որ ունի զանմարմին բնութի , հաղորդակցի ընդ հրէշտակաց որքան առ իմանալն , ուստի մինչ ասի անդ՝ շունչ , իմանի՝ ոգի . և մինչ ասի ըստ որում շնչէ , իմանի՝ ըստ որում ունի զիմացական գործողութիւն :

Ա

1. խ. 51.

պ. 1.

ԳԼՂԲ.

Ա

1. խ. 76.

պ. 3.

ԳԼՂԳ.

Ա

1. խ. 78.

պ. 3.

ԳԼՂԴ.

Ա

1. խ. 77.

պ. 3.

ԳԼՂԵ.

Ա

Բ

1. խ. 78.

պ. 4.

ան : Են մի էութի : ԼԾ. Միութիւն այս ոչ է իմանալի շեղծակութեան միութի , որպէս բազումք քարինք լինին մի քարակոյտ , այլ դերաբարձրական . ըստ ոյրում հոգին բանական պարտեակէ զգոյցականն , և զոնկականն . ըստ օրինակի ոսկեղէն դենարի միոյ որ դերաբարձրապէս պարտեակէ զյոյրոյս դենարս :

ան : Կրեն յիշանհատից , և ի տեսակաց : ԼԾ. Այսինքն , կրեն յիշաւարկայից՝ որք կայանան յիշանհատս , և անցուցանեն զգիտաւորութեանն տեսակս իւրեանց առ կարողութիւն : Եւ թէ զինչ իցէ գիտաւորութեանական տեսակն , տես ի վեր ի վեց գլուխն լուծմանցս :

ան : Են կրական զօրութիք . վասն զի զգամք ընդունելով ի ներքս : ԼԾ. Գորով կրականք , ոչ հետեւի , և ոչ է վարկելի , թէ զգայութիք յառաջադոյն կարգաւ բնութե ոչ ներկերողաւորին տեսալոք առարկայից , առ ի դործածել զներդործութիւնս իւրեանց առ ժամայն իրբու ներդործականք :

ան : Հասարակ զգայութի : ԼԾ. Գիտելի է , զբառս հասարակ , է կրկին , այսինքն , պատճառմամբ , և ստորոգմամբ : Առաջին կերպին հասարակ ասի այն՝ որ սլառմաւէ զբողոքման , և կամ է արմատ բաղմաց որք յառաջանան ի նմանէ . և ըստ այսմ՝ աստէն զգայութի ասի հասարակ : Երկրորդին կերպին , հասարակ ասի այն՝ որ ստորոգի զբաղմաց , որդին . կենդանին է հասարակ , որ ստորոգի զմարդոյ՝ զձիոյ , և զայլոց . և ըստ այսմ՝ զգայութիւնն ոչ ասի հասարակ՝ վասն զի է եղական ինն :

ան : Համեմատել զբազում զգացեալս առ իրեարս : ԼԾ. Զայնս զորս զգան այլք զգայութիք արտաքինք , սա համեմատէ առ իրեարս . և այս թէ նոյն զգայութիւնն զգանալանս իցէ զգացեալ , որպէս աչքն , զսպիտակն , և զսպիտակագոյնն . և թէ բազումք զգայութիք իցեն զգացեալք զգանալանս՝ ուղիւքն զանուշահոտութի , և բերանն՝ զբաղջրն :

Բան ։ Պահէ զմանուծի , նաև 'ի բացեալ գոյով
իրին ։ ԼՃ. Երևակայութիւն կարէ ներխուղել
և զբացակայսն . ապա թէ ոչ մինչ շարժումն
կենդանոյն հետևի 'ի յրմբամանէ , ոչ շարժեալին առ-
ինն բացակայ որ հարկաւոր ինքեանց , և այնպէս ապա-
կոտէին 'ի կենաց ։

ԴԼԷ

Ա

Բան ։ Ըմբռնել զգիտաւորութիւն՝ ոչ բանականին ,
այլ բնութե ։ ԼՃ. Այսինքն , բնականաւ ներ-
գրգմամբ կարծողականին՝ ըմբռնէ զգիտաւո-
րութիւն . և ոչ ընտրութե , որ վերաբերի առ բանն
որդոն , ոչևար 'ի բնութենէ իւրմէ գրգռեցեալ՝ Ըմ-
բռնէ զբան թշնամութեան , որ 'ի մէջ ինքեան , և
գայլոյն ։

ԴԼԸ

Ա

Բան ։ Յայնժամ ընդունի 'ի բանէն զհառաւորութեան
իրակելոյ՝ և գործելոյ ։ ԼՃ. Չհառաւորութեան առ 'ի
յիրակել , որ է բան խոկալոյ , տրամախոհութիւն
ու ունի յատկաբար , այլ բառ իրիք հաղորդութեան
բանին . զի յատկաբար խորհիլն է՝ յատուկ գործ
բանին ։

ԴԼԹ

Ա

Բան ։ Մանաւանդ արգելու զիմացութեան ։ ԼՃ. Տրա-
մախոհութիւն է սկիզբն սխալելոյ ըստ փիլիոսո-
փային , և մանաւանդ յայնժամ գործէ զսխալումն ,
երբ 'ի յիմացման մերում գոյ տպաւորեցեալ իրինչ
վերնային , և վի տրամախոհութի չէ ընդունակ այն-
պիսեաց իրաց , հակամարտի իմացման . և իմացումն
ոչ կարէ առածել զայն առ տրամախոհութիւնն , վի-
չին նմանք յօրինեցեալ պատկերաց տրամախոհութե .
և աստուած լինի բազմիցս սահեցումն մարդկանց , որ
պէս յայտ է 'ի հերձուածօղսն , որք զսխալեցա տրա-
մախոհութե իւրեանց կալնուն՝ փոխանակ իմացման ,
և ոչ կարեն եղծել բանիւ զսուտ պատկերս տրամա-
խոհութե . և այս , իբրու ոչ գոյով բանական չար ,
նաև սատանայ բազմիցս փոփոխէ զտրամախոհութիւն
հետևողաց իւրոց , և տպաւորէ 'ի նոսին դուռտ պատ-
կերս , որք ընդդիմանան տեսակաց տպաւորեցելոց 'ի
յիմացման , և այնու պատրէ ։

Իս. 110.

պ. 3. 4.

Բան ։ Եւ 'ի չողականն զգիտաւորութիւն տեսա-
կաց . ԼՃ. Բառս գիտաւորութիւն , առնանի
ապտէն , ոչ ըստ որում բանին , այլ ըստ որում
բնութե , ունչ և յիւեցաւ ներ գրոյս 'ի դլուխն լը , թէ
'ի բնաբանոյն , և թէ 'ի լուծման ։

ԴԼԻ

Ա

ԳԼՒԽԱ. **Բ**ան : Եւ կառավարին առաքինութեք՝ որք հիմնաւորին 'ի նոսա : ԼԺ. Յանկականն, և ջամմա կանն՝ թէպէտ ասանձադարին 'ի բանէն, բայց առաքինութեք որք 'ի նոսին լինին, կառավարին, այս ինքն, խաղաղեցուցանին, և 'ի յապտտամբեցմանէ արդեւանին . ապա թէ ոչ կարեն ընդդիմանալ երբեմն շարժման բանին, և ապտտամբիլ՝ ուն յայտ է 'յանձնն տարակացեալս յառաքինութեք :

ԳԼՒԽԲ. **Բ**ան : Այլ ոչ զվարձատրելիս : ԼԺ. Եթէ ստաղեալ ունակութիւն՝ մնան ըստ ինքեանց, ոչ ծնանին զներդործութիս վարձատրելիս : Բայց թէ 'ի փառս աջ, ուսումնասէր ոք ստանայ զուսակութիս լծիդայի, և կամ այլոյ մակացութե, արդարեւ այնպիսի ունակութիւն՝ կարեն ծնանիլ զվարձատրելի ներդործութիս . և այս թէ 'ի ստանալն, թէ 'ի կիր առնուլն, և թէ 'ի յուսուցանելն այլոց, որքան տուէ վերաճումն 'ի փառս աջ . և կայացումն 'ի սէրն . զի արտաքոյ սիրոյ չիք վարձատրութիւն դործոյ :

ԳԼՒԽԳ. **Բ**ան : Ըստ որոց հոգին ոչ միաւորի ընդ մարմնոյ այլ ընդ կիրաւորի զմարմինն : ԼԺ. Հոգին ըստ իմանալոյն, և կամելոյն՝ որքան առ դործողութեք, ոչ կիրաւնու զմարմինն իբրեւ զգործի, (թէ պէտ ըստ էութեանն իցէ տեսակ մարմնոյ գործիքականն) այլ միայն կիրաւնու որդէս զաւտրկայ . իսկ տրամախոհութի, և այլքն՝ կիրաւնու զմարմինն իբր զգործի : Եւ այն որ ասի, այլ միաւորի ընդ կիրաւորի զմարմինն . իմա այսպէս, այսինքն . այլ կիրաւնու զկիրաւոր մարմնոյն՝ ո՞րքոն, զտրամախոհութիւնն և զայս : Եւ այս լինի, որքան հոգին է նայս միկ կենի 'ի մարմնոյ . քանզի յետ անջատման մինչ է թարց մարմնոյ՝ իմանայ զիրս 'ի ձեռն ներհեղեալ տեսակաց . կամ նաև 'ի ձեռն աստէն ստացելոց տեսակաց, առանց դարձուցանելոյ զինքն առ երևակայմունս . և ոչ կարօտի կիրաւնոյ զինն 'ի մարմնակա նաց՝ ուն այժմ :

Բան : Անջատին զօրութիւնս այսոքիկ 'ի մարմնոյն ըստ էութե : ԼԺ. Մինչ զգայական և տնկական ուժգնութիւնք գերազանցաբար պարունակին 'ի յէութե հոգւոյն բանականի, իսկ հոգին՝ 'ի մահուն բաժանի ըստ էութե 'ի մարմնոյն, ուրեմն ըստ այսմ և

2. 2. խ.

2. պ. 9.

1. խ. 76.

պ. 1.

խ. 99.

պ. 1. 6.

նորին ասին բաժանելի ՚ի մարմնոյ մարդոյն ըստ էութեան : Բայց այսու ոչ հետեւի զի իցեն նորին անապականք . զի էութի բանականի հոգւոյն գերադան յապէս պարունակէ զայն՝ միայն որքան առ յայս , զի յետ վերստնելոյն զմարմին , կարէ վերստին ՚ի գործարկանէ զներգործութիս նոցին :

Ան : Զորժամ նոյն իմացումն ընդունի կատարելութեամբ զլոյս : Ընդունիլն կատարելապէս զլոյս է ստացեալ իմացումն , և ըստ փիլիսոփային , ստացեալ իմացումն է՝ յորժամ յետ հեռացմանց անցող տգիտութեց՝ շահեցեալ լինի գիտութիւն ամենից իմանալեաց , մինչև ցիմացումն գոյացութեանց անձատեցելոց ներդաճաբար : Իսկ ըստ անձաբանից՝ ստացեալ իմացումն է՝ երբ գերազանցելով զամբնական , ժամանէ մինչև զայն՝ որք են ՚ի վերջան զկարողութիւն բնութե , և այս առի գերազանցական իմացումն , և ՚ի վերուստ պայծառացեալ :

Ան : Զի կարողական իմացումն տեսականորէն լուսով առնողականի իմացման : Ը. Կարողական իմացումն մինչ տեսականորի լուսով առնողականի իմացման , լոյսն այն կոչի նմանութիւն առաջնոյ լուսոյ , և կամ նմանութիւն առաջնոյ ճշմարտութե : Իսկ առաջին լոյս , և կամ առաջին ճշմարտութիւն ոչ այլ ինչէ՝ եթէ ոչ այն՝ որով դատեմք զհամայնից իրաց : Ուստի մինչ հետեւի բնաբանն և ասէ , թէ ՚ի նմանութեան յայնմիկ ճանաչի անձ , ոչ պարտիմք իմանալ թէ ճանաչի իբրու որ . այլ թէ ՚ի նմանութե յայնմիկ ճանաչին գործքն այլ , ՚ի ձեռն որոց միտն բնականաբար շարժի առ ՚ի ճանաչել զանձ : Բանդի նաև ինքն լոյսն իմացման առնողի՝ ոչ ճանաչի իբրու որ , ապա յոյժ նուազ կարէ ճանաչիլ անձ նովա , իբրու որ :

Ան : Արդ՝ առնողական իմացումն է՝ որ արտաբարչէ , և այլն : Ը. Արտաբարչելն զտեսական յերեակայութե , և առնելն լուսով իւրով ընդհանրական , և զենելն ՚ի կարողական իմացումն ոչ այլ ինչէ , եթէ ոչ այս . զի մինչ առնողական իմացումն առնէ ՚ի վերայ երեակայմանց՝ ՚ի ճառագայթէ իւրմէ , և ՚ի յերեակայմանցն ծորի նմանութիւն ինն , դառնով առկարելի իմացումն . և այսու նմանութե կարելի իմացումն սկսանի ներգործութե իմանալ . զորձիւնակ , մինչ լոյսն արտաբին առնէ ՚ի վերայ գունոյն ,

ի ճառադայթէ նորին և ի գունոյն , ծորի նմանութի իմն դալով առ աչս , որով ներակերպի ալք՝ և սկանի տեսանել : Տես ի վեր , ի զլուխն լուծմանս :

ԴԼԽԵ.

Ա
1. Խ. 79.
Ա. 11.

ան : Տեսական , և գործնական իմացութիւք : ԼԸ Պարտէ իմանալ զայտալի զանազան ըստ բաննին միայն . իսկ ըստ էութե , կամ ըստ իրիննոյնացեալ . զի ի յիմացական զօրութեան հոգւոյն միայն առնողական , և կարելի իմացումն զանազանիս ըստ իրինն :

ԴԼԽԵ.

Ա

ան : Վախաշոտ մերձաւոր : ԼԸ. Չգայականութի մերէ որպէս զկին ոմն վախաշոտ . և ստոր նագոյն մասն բանին՝ գոլով չըջող շուրջ զմարմնաւորօք , այսինքն , գոլով իտկացող զմարմնաւորաց , զուգեալ է ընդ զգայականութե . այս է , գրագի եղեւէ նմա . և սակա այսր՝ բազմիցս շողջօրութի ի զգայութե կարկառմամբ ինծորոյ . այսինքն , հեշտութե և երբեմն սրտորի նովաւ որպէս եւայ օձինն :

Իւզի ի տողի բնաբանոցն դնի թէ , ստորնագոյն մասն բանի կոչի կին . և ի լուսանցն գրի թէ կոբաղմատոտկաբար , զայն սլարտիս կանուլ որ է լուսանցն . վասն զի կոչի բաղմատոտկաբար . այսինքն կոչի բազմօք անուամբք , որդոն , կոչի չըջող զմարմնաւոր իրօք . կոչի զուգեալ ընդ զգայականութե . և կոչի փաղաքչեցեալ ի զգայականութե : Դարձեալ գիտելի է . զի վերնագոյն և ստորնագոյն մասանց բանին տարբերիլն ըստ սլաշտման , է՝ տարբերիլ ըստ բանի՝ և ոչ երբեք ըստ իրինն :

ԴԼԽԵ.

Ա

ան : Ըարժողականաց զօրութեց և այլն : ԼԸ. Կամեցողականք զօրութիւք , աստէն ասին յոգնականաբար . բայց ոչ իմանի այնպէս զի իցեն ըստ իրինն բազուկք կարողութիւք կամեցողականք , այլ ըստ բանին միայն . զի կամեցողական զօրութինն մի է ի հոգին , բայց ըստ զանազանից նկատմանց՝ առնուղբաժանութեմն ըստ բանի միայն , որդոն , մինչ բաժանի կամքն ի բնականն , և ի յընտրողականն , բնական ասի նկատմամբ վախճանին . և ընտրողական ասի նկատմամբ միջոցացն որք են առ վախճանն :

Վասն զի կամքն զվերոյին վախճանն բնականաբար կամի . և զմիջոցն որք են առ այն՝ ընտրութե կամի : Որպէս և իմացական կարողութինն՝ բաժանի ի յիմանումն , և ի բանն . և ասի իմացումն՝ նկատմամբ առաջնոց

նոց սկզբանց , և բանն նկատմամբ տրամաբանութե , որով իմիր ծանուցելոյ խմանայ զայս ոչ ծանուցեալս զի իմացական կարողութիւն զառաջին սկզբունս ուր զաբար խմանայ առանց տրամաբանելոյ , և այնու ասի իմացութի . իսկ զեղբարացութիւնն տրամաբանելով խմանայ , և այնու ասի բան . ուրեմն նոյ իմացութի : և բանն ոչ են զանազան կարողութիւնք ըստ իրին , այսպէս և բնական կամք , և բնորոշական , նաև այլքն որք թուին ի բնաբանոյն , ոչ են զանազանք կարողութիւնք ըստ իրին : իսկ տրամաբանն որ բնոյ կարողութեց կամաց համաթուի , ոչ է կարողութի . այլ բնական ունակութի :

1. Իս. 83 :

պ. 3. 4.

Իս. 79.

պ. 12.

Բան : Որ ի մէջ այլոց յարժականաց է մեծադոյն : Լճ. Այսինքն . եթէ այլքն այնք խմանին կարողութիւնք վերաբերեալք առ կամքն , և ըստ բանին միայն զանազանեալք , ըստ այսմ կամքն ի մէջ նոցա մեծադոյն է միայն ըստ բանին : մինչ (որովէս ի վեր անացաք) նոյնք իցեն բնաւքն ըստ իրին : իսկ եթէ այլքն այնք խմանին կարողութիւնք վերաբերեալք առ իմացականութի , կամքն ի մէջ նոցին , այսինքն , նկատմամբ առ իմացականութի է մեծադոյն , և այս ըստ կերպի առնելոյն , զի շարժէ զամ կարողութիս հոգւոյն առ գործ : Ի այց իմացականութիւնն է մեծադոյն քան զկամքն , ըստ կերպի վախճանի , զի իմանեցեալ բարին է՝ առարկայ կամացն , և շարժէ զնա իբրու վախճան :

7. Ը.

Ա

1. Իս. 81 :

պ. 4.

Բան : Եւ ոչ երբեք պատահի մեղանել ըստ տրու զականին : Լճ. Այսինքն , զի որովէս շուրջ զառաջնովք սկզբանք տեսականաց ոչ է թիւրիլ ըստ փիլիսոփային , այսպէս ի յառաջին սկզբունս գործելեաց : Եւ եթէ որովէս իցէ այս ծանիր , զի առաջին սկզբունք տեսականաց են ըստ ինքեանց ծանուցեալք . որովէս այս , բոլորն է մեծ քան զմասն իւր : Եւ իմացութի մեր մինչ գիւմ առ ճանաչումն սոցին , ոչ երբեք սխալի . և ճանաչումն այսպիսեաց՝ կոչ բնական ունակութի . նաև ասի իմացութիւն :

7. Ը. ա.

Ա

Ի այց լինի երբեմն ի ճանաչման մերում սխալումն ի յառաջ ընթանալն , որ դոն . մինչ լինի վարկումն թէ պատու հաննիդ է բոլոր , և տունն իցէ մասն , և այնու եղբարացուցանիցի , թէ պատու հանն է մեծ քան զտունն , որ է ստու : Եւ յառաջ ընթանալս այս՝ լինի ի ձեռն բանի որ տրամաբանն . և վասն այնորիկ ի գործ

Ճանաչման՝ ոչ սխալի իմացութիւն , այլ բանն : Ըստ
այսմ օրինակի նաև առաջին սկզբունք գործելեաց են
ծանուցեալք ըստ ինքեանց , որդոն . ընդհանուր բա-
րին որ է վախճան և առարկեալ կամաց , ըստ ինքեան
է գրկելի , և չարն որ ներհակ նորին , մերժելի և
դարչելի . և կամքն մեր մինչ նկատէ զսոսին՝ ոչ երբեք
սխալի , որպէս զի զբարին մերժիցէ , և զչարն ընդ-
գրկիցէ , մինչ բնականաբար ՚ի չարէն դարչի , և առ-
բարին յօժարի : Եւ այսպիսի յօժարութիւն և դար-
չումն , առի բնական ունակութի , և կոչի տրտնջա-
կան : Բայց երբեմն լինի սխալումն ՚ի կամն մեր ՚ի
դնելն զմիջոցն , որով գիտէ ժամանել առ բաղձա-
ցեալ վախճանն . և խորշիլ ՚ի կասկածեալ չարէն . որ-
դոն , յորժամ թիւրաբար վարկէ՝ թէ ՚ի ձեռն զան-
կութեւ և փափկութեան մարմնոյ , և այլոց նմանեաց ,
կարէ խորշիլ ՚ի դարչեցեալ չարէն , և ժամանել առ
բաղձացեալ բարին , և այնու յարի առ յայնպիսիս՝
որք են ընդդէմ անձայնոց պատուիրանաց , յայնժամ
սխալի , և մեղանչէ . քանզի այնք միջոցք՝ ոչ են չարա-
կարգեցեալք առ ստացումն բարւոյն որում բաղձայ ,
այլ չարին յորմէ խորշի : Արդ՝ դնելն զմիջոցն առ
վախճան՝ ոչ է բնական կամացն որ վարի տրտնջակա-
նաւն , այլ ընտրողական կամացն որ վարի բանակա-
նաւն . ապա ուրեմն և մեղանչելն մինչ լինի ՚ի դնելն
զմիջոցս , ոչ լինի ՚ի ձեռն տրտնջականին , այլ ՚ի ձեռն
բանականին :

ԴԼԾԲ.

Ա

Բան : Նաև թէ լիցի սխալական՝ է՝ մեղք : ԼԾ. ԱԿ
այն է մեղք , զի ՚ի մոռի իւրում ունի վախճա-
նաբար թէ իցէ ընդդէմ անձային հրամանաց :
Ուստի եթէ ոք մոլորաբար պարտական դու գտտիցէ
զինքն՝ առ ՚ի առնել զինն , և կամ խորշիլ , թէ և
շուրջ զնորք ոչ իցէ հրաման անձային , այնպիսին
պարտականէ , զի կամ անսալով գիտնոց ՚ի վայր դի-
ցէ զմոլար խիղճն մտաց , և կամ ոչ բնաւ դորժիցէ՝
զընդդէմն . ապա թէ ոչ մեղանչէ , և այս այնպէս և
այնքան , որպէս և որքան վարկէ զայնս դու մեղք :
Բայց զգուշանալի է ստուէն ՚ի հակադարձէ սորին :
Քանզի եթէ ոմն յանդուգն՝ լայնացուցանելով զխիղճ
մտացն՝ այնքան լինիցի , մինչ զի նաև զանձային օրինօք
արգելեալսն՝ զանցառնիցէ թարց խղճիմտաց , և
ասիցէ ոչ դու մեղք վասն ոչ ունելոյն զխիղճ , այնպի-
սին ոչ միայն է մեղանչող այնու մեղքք զոր գործեաց ,
այլ

այլ և է հայհոյիլ . զի եղծմամբ անայնոց կանոնաց , զմիտս իւր միայն կացուցանել կամի կանոն դործոյ իւրոց : Յառացելոցս յայտ է , զի այնք իրք՝ որք անային , և կամ եկեղեցական օրինօք են արդէլեալք , կամ հրա մայեալք , ոչ են կախեցեալք ՚ի խղճէ՛ մտաց մերոց . ուստի թէ խղճիւ դործիցէ՝ որ ընդդէմ օրինաց , և թէ առանց խղճի , միշտ է՛ մեղք : Իսկ այնք իրք , որք են անդանաղանք , և օրէնն զոչ ինչ խօսի զնոցանէ , նոքին կախեցեալք են ՚ի խղճէ՛ մտաց մերոց , որպէս ուտելն զդոհեալ՝ էր անդանաղան . որոյ վասն ասէր առաքեալն պօղոս , թէ որ խղճիւն ուտիցէ՛ մեղք են նմա . զորս է թէ որ թարց խղճի ուտիցէր , ոչ էր մեղք :

Բան : խիղճմտաց է օրէն իմացմանս մերոյ : ԼԾ . Երբեք մեր պարտի ըստ այնմ վարիլ ըստ որում անօրինէ՛ խիղճն մտաց՝ որ ՚ի ձեռն օրինաց անայնոց է կայացեալ , և ըստ անայնոց կանոնացն կերպաւորեալ : Գարձեալ՝ մինչ ստորեւ բնաբանիս ասի խիղճ մտացն է բանական դատողականաց . իմանի այսպէս , իբրեւ թէ բանական՝ դատաբանականաց , այսինքն , բանական դատաստանարան . զի ՚ի նմին , և կամ ըստ այնմ լինի դատաստան : Բայց ՚ի յոմանս օրինակս փոխանակ բանականին դնի բնական . որ և մեկնի այսպէս . թէ է բնական իմն , նորում , և կամ ըստ այնմ լինի դատաստան : Եւ գարձեալ անդէն ՚ի բնաբանոյ՝ մինչ ասի խիղճ մտացն է ունակութի . իմանալի է այսպէս . իբրեւ թէ՛ տրտնջականն որ է պատճառ խղճի մտաց , է ունակութի . բանդի խիղճմտացն է ներդործութի իմն՝ յառաջացեալ ՚ի տրտնջականէն՝ որ է ունակութի : Ուստի դործն անունմբ պատճառին իւրոյ առնանի , որպէս և մերթ պատճառն անունմբ դործոյն :

Բան : Ենթադատէ համանգամայն , և ընտրէ անձնի խանականաւն : ԼԾ . Տեսակաբար ընտրէ ՚ի ձեռն անձնի խանականին . իսկ նախանիթա դրաբար՝ այսինքն , որոշելով զնախընթացն՝ ընտրէ ՚ի ձեռն շարաբերման բանին . ուստի ՚ի փիլիսոփայէն , ընտրութիւն անունանի իմացական բաղձան . ուրեմն ընտրելն իւրի կերպիւ է բանին և իմացականութե . և իւրի կերպիւ անձնի խանութեն :

Բ

1. Խա. 794
պ. 134

42. 874

Ա

1. 2. Խ. 13
պ. 1.

ԳԼԾԵ.

Ա

1.2.խ.11

պ.3.

խ.16.

պ.3.

Բան Որպէս զի որ զմայլլի ՚ի բարեաց ներկայից համանդամայն , և աղադայից : ԼԾ. Գիտեիք է , զի երկու են երամբ վայելողացն զբարին ներկայիս : Առաջինն են այնք՝ որք այնպէս վայելեն մինչ զի և զմայլին այնու , և զմայլին է վախճանաբար յալիլ ՚ի յայն՝ որով զմայլի : և այսպիսիքս մանաւանդ յօժարին մեղանչել քան զնիլ ՚ի բարեացն որովք զմայլին : Երկրորդն են այնք , որք այնպէս վայելեն զի միայն վարին այնու , այսինքն , միայն կիրառնուն դայնս , և կիրառնուն զբարին ներկայիս՝ ոչ այլ ինչ է , եթէ ոչ շարակարգել զայնս միշտ՝ որպէս զմիջոց առ վախճան . զի զայս ներբերէ քան կիրառութե . և այսպիսիքս մանաւանդ յօժարին զբարին ՚ի բարեաց ներկայից , որ է միջոց , քան թէ անցանել զօրինօքն մի , որ է վախճան : Ուրեմն , առաջին երամն որ է զմայլող , անկարելի է , զի համանդամայն զմայլիլի և ՚ի հանդերձեալն . իսկ երկրորդ երամն որ է կիրառնող միայն , կարէ զմայլիլ ՚ի յաղադայն :

ԳԼԾԶ.

Ա

Բան : Ի յոմանս ՚ի հարկէ ունի զինքն առ չարն : ԼԾ. Ոչ հարկաւորութիւն որ է բացարձակ . այլ թէական հարկաւորութիւն , որդոն , մինչ ոչ կա մին մկրտիլ միշտ մնան ՚ի մեղս որ է չար . ուրեմն մինչ կամք ոչ մկրտիլոյն դնի , ՚ի հարկէ հետեւի մնայն ՚ի մեղս . և այս է թէական հարկաւորութիւն . ուրեմն որ քանիցս հասարակաբար զայլս մեղս գործեն , աղատաբար առնեն , և ոչ ՚ի հարկէ , որով աղատութիւն , կայանայ և քան մեղաց : Ուստի հարկաւորութիւն բառն որ ՚ի բնաբանոյն , է նման այնմ , զոր ստաց Տր . հարկէ գալ գայթակղութե , իբրու թէ ընդ նախադնիլ չար կամաց մարդոյն ՚ի հարկէ հետեւի գայթակղութիւնն և վասն այնորիկ որք գայթակղեցուցանեն ոչ կարեն ջատաղովել զինքեանս , զի ինքեանք նախանկատ գրեցին զչար կամս , յորմէ ծնաւ հարկաւորութիւն : Ուստի և Տէրն իրաւաբար հետեւեցոյց զբան իւր , ասելով , բաց վայ մարդոյն , ՚ի ձեռն որոյ գայցէ գայթակղութիւն , և այլն :

Բ.

1.2.խ.5.

պ.4.

Բան : Բայց ՚ի յոմանս ՚ի հարկէ ունի զինքն առ բարին : ԼԾ. Ոչ է իմանալի հարկիւ բռնութե , զի ըստ այսմ բարի գործքն ոչ լինէին արդիւնաւորք , այլ հարկիւ վախճանին . զի այնպիսի սրբեցեալն յալ մեռից աստից մեղաց , այնպէս աղատաբար ՚ի ձեռն շնորհի հեշտամայ ի յնմ , որ է վախճան , մինչ զի ըստ վախճ.

վառայ տղասի կամաց իւրոց , ոչ կմարէ դարձուցանել զինքն յայլ ուր արտաքոյ ան . և որքան առ այս , ի հարկէ սաի ունել զինքն առ բարին :

Բան : Զ փոխաբերաբար սպասամորեացն իրե ԳԼԾԷ.
րաց : ԼԾ. Առնի է աստուածոս զստուղ ինչ կէ Ա
նի : Ասինքն , վասն տյնորիկ առաքեալն՝ կոչե
ղեկեղեցին խորհրդական մարմին , զի ի բնականէ
մարմնոյ մերմէ ուսանիցինք զգործածումն սիրոյ :
Քանզի փոխաբերական ծառայութիւն անդամոց՝ է
բանական ուսուցիչ սիրոյ հաւատացելոց . վասն զի
թէ մին վտանայ , որդոն , ոտն , առժամայն դիմեն
բնաւն ի ծառայել . զի բերանն պատմէ զնմանէ .
ալքն սլացեալ հայի . և ձեռն պատրաստէ զամ սկի
տոյս առ բժշկութի նորին . նոյն է բան , և ի փտա
նալն այլոց անդամոց : Դարձեալ , զի ինքն ձեռքն
որէ մերկ , հոգայ զգեստամորեղ զայլս , և մի ձեռքն
որ լուանայ զսկան , լուանան երկոքեան և զերեսն ,
և զոչ ինչ խնդրեն՝ եթէ ոչ զբարին միմեանց . և ի
ծառայելն՝ ոչ սպասեն իրերաց իբրու թէ այն արաս
ցէ , և ինքն ոչ . այլ իւրաքանչիւրքն համընթացաբար
յառաջեն , զորոց եթէ ի մասնաւորի գրեսցուք , զբ
լոր գրգատուն ինչ զարգարեսցուք . բայց մինչ այս
անկար է այսու բանականացուք , և ի սակաւուցս
զայս եղբակացուցեալ ասացուք . Թէ փոխաբերական
ծառայութի անդամոց մարմնոյն է՝ բանական գիրք
սիրոյ . որ կարէ բնթեոնանիլ այնքան ի տգիտէ , որ
բան յիմատենոյ :

Բան : Այնպէս պահեն զյօժարական հնազանդու
թի : ԼԾ. Արդ՝ յետ տեսանելոյն քոյ զգիրքն
սիրոյ ի մարմնոյդ բնականի , տես և այժմ ի նմին
զգիրքն հնազանդութե . զի ուսանիցիս , թէ ոմո՞ւ ունին
նոքա զինքեանս առ կամին , նոյնպէս և ամ հաւատա
ցեալք ուարտին ունել զինքեանս առ ամ , և ամ ստո
րագրեցեալք առ վերնագոյնս , մինչ են խորհրդական
մարմին Բի : Քանզի որպէս բնութիւն այնու հնա
զանդութե մնայ ի դոյն բնական , նոյնպէս , և հա
ւատացեալք , ի դոյն շնորհական : Արդ՝ ի յերկուց
գրեանցս զորս ստեղծողն եդ ի մերում բնութեան
լիցի մեզ մոռածել զերկուս :

Նախ թէ որքանիւ սաստկագունին բաղձանաւ կամի
ամ զերկուծի մեր , զի զայնս որք են առաւել հար
կաւորք հասարակաց փրկութե , որպիսի է սէրն և

հնազանդութիւն , եղ ղգիրս նոցին 'ի բնութեան
 իբրութե 'ի յանդոս ճանապարհաց . զորս ամ' ոք միշտ
 տեսանէ , և յար քնթեռնուկ կարէ թարց իրիք դրժ-
 շարութեան : Երկրորդ' թէ որքան մեղադրեցի-
 մարդն, որ զլի 'ի փրկութե 'իւրմէ, ոչ ունելով զփոյթ
 հայելոյ դարձալիս գրեանս . և զմեղադրութիս զայս'
 բացատրեաց ՏՐՆ, մինչ ասաց . ծառայ չար , 'ի բե-
 րանոյ բռնմէ դատեցից զքեզ . իբրութե ասիցէր ,
 'ի գործոց անգամոց քոց որ առ իրեարս , և առ
 կամքդ , դատեցից զքեզ . որ գոնեա նաև 'ի նոցանէ
 ոչ ուսար զկերպ սիրոյ , և հնազանդութե :

ԴԷԴ

Ա

Բանդի դժոճարութի գործոյն յաւելու 'ի
 վարձն : Ը. Կրկինէ դժոճարութի 'ի գոր-
 ծնէն , մինն 'ի կողմանէ գործոյն' մինչ իցէ ըստ
 ինքեան ծանր և դժոճարին : Եւ միւսն 'ի կողմանէ
 գործողին , մինչ գործողն գոյով թոյլ , թէ և գործն
 ըստ ինքեան ոչ իցէ ծանր , դժոճարութե գործէ :
 Արդ' առաջնով կերպիւ առեցեալ դժոճարութիւն
 յաւելու 'ի վարձն . մանաւանդ' թէ առնողն 'ի ձեռն
 ջերմութե սիրոյն' նոճաղեցուցեալ ևս իցէ զդժոճա-
 րութիւն . որպէս թեթեւք էին յաչս յակօքայ , աշխա-
 տութիք չորեքտասանից ամաց , քս սիրոյն ռաքե-
 լայ : Քանզի յատուկ է սիրոյն նոճաղեցուցանել զաշ-
 խատութի գործոյն : Իսկ երկրորդիւ կերպիւ առե-
 ցեալ դժոճարութիւն' ոչ յաւելու զվարձն , այլ մա-
 նաւանդ նոճաղեցուցանէ . զի դժոճարութի գործոյն
 որ է միայն 'ի կողմանէ գործողին , ցուցանէ զնոճա-
 րութի սիրոյն 'ի գործողն :

1.2. խ.

114. պ. 4.

ԴԷԿԱ.

Ա

Բանդի մարդոյն է հետեւիլ համեստութե :
 Ը. 'ի ձեռն բանի հետեւիլն համեստութեան ,
 է յատուկ մարդոյն . զի միայն 'ի բնութե շար-
 ժեալ , նաև ոմանք կենդանիք հետեւին համեստու-
 թե , որպէս կատուն որ ծածկէ զսողուն իւր . և առա-
 րակն , որ ընդ միոյ միայն զուգի 'ի կեանս իւր :
 Բայց զի սոցին քս օգտութեան իւրեանց դրդեցեալ
 'ի բնութեանէ , հետեւին . իսկ մարդն' վասն սիրոյ հա-
 մեստութե շարժեցեալ 'ի բանէ' հետեւի համեստու-
 թե , և ըստ այսմ միայն է' յատուկ մարդոյն :

Բան : Ստասաւորութիւն հրեշտակաց : ԼԾ. Ո՛չէ իմանալի թէ միջնորդութիւն հրեշտակաց կազմեաց ամ զմարմին ագամայ . զի ստասաւորելն հրեշտակաց՝ ոչ այլ ինչ էր , եթէ ոչ՝ նախահաւաքել զհօղն , զորս ամ անմիջապէս կերպաւորեաց ի մարմին նախկնոյ մարդոյն : 1. Բ. 91. պ. 2.

Բան : Եւ ոչ այնպէս շամանդաղ որպէս այժմ : ԼԾ. Թէպէտ՝ որպէս մեք , նոյնպէս և ադամ , ճանաչէր զամբ ի շամանդաղ , այսինքն , ընդ հայելեօք , որ է ճանաչել ի ձեռն տեղծողնաց . բայց ադամ ի յանմեղութեն յոյժ պայծառապէս տեսանէր քան զմեզ . վասն այն ասէ՝ ոչ այնպէս շամանդաղ որպէս այժմ : Ուստի մինչ ասի յոմանց թէ ադամ ի դրախտին տեսանէր զամբ . կրկին կերպիւ իմանալի է :

Նախ՝ այսպէս՝ այսինքն , մինչ ճանաչումն ադամայ բաղդատեալ առ մերս ճանաչումն է որպէս զարեգակն առ փոքրիկ իմն կայծ , հետեւի թէ մինչ մեք ասիմք ճանաչել զամբ ի տեղծողնաց , ադամ ասիցի բաղդատաբար՝ տեսանել . իբրու թէ քան զմեզ այն քան առաւել ճանաչել զամբ ի տեղծողնաց՝ որքան որ առաւել տեսանէ զիրն ի ձեռն բոլորի արեգական , քան զայլ որ՝ որ ի ձեռն միոյ կայծի փոքրիկան . և միայն ըստ այսմ ասի թէ ադամ միշտ տեսանէր զամբ ի դրախտին : Երկրորդ՝ այսպէս , այսինքն , թէ տեսեալ իցէ զամբ ըստ էութեանն , և ըստ այսմ անկարելի էր միշտ տեսանել զնա . ապա թէ ոչ ոչ կարէր մեղանչել . ասացի միշտ . զի թերևս միանգամ տեսեալ իցէ ի յառիշտակութե մինչ էարկ ամ զթլմութի ի վերայ նորին :

Բան : Մարմին նախկին ճնողաց միշտ պարտ էր անանիւ նովա : ԼԾ. Ո՛չէ իմանալի , թէ մի անգամ ուտելով ի ծառոյն կենաց՝ անմահանայր յանիտեան . այլ որպէս ասէ օգոստինոս , մի անգամ ուտելովն տեւէր ընդ երկար ժամանակս բացորոշեցեալս , և վերանդազիւր . և թէ կրկին առնոյր , տեւէր ևս այնքան ժամանակ , և այսպէս հետեւաբար առնով պահէր միշտ զկեանս . և ծառն այն՝ որ քան առ այս միայն անդանեցաւ ծառ կենաց . ապա թէ ոչ հետեւիւր անտեղիս այս , թէ հոռնաւորն , այսինքն՝ միանգամ առեցեալ պտուղն՝ պտտաւէր զանհունս , այսինքն , զյաւիտեանական կեանս :

Գլ. ԿԳ. **Բ**ան : Է առ ապահով տեղի : Լծ. Է առ զայնպիսի տեղի , նորում ոչ որոգայթ' և ոչ թշուառութիւն ինչ գտանիւր : Քանզի թէ արեւմտ զրախտն այն էր եղեալ 'ի վերայ երկրի , 'ի կողմն արեւելից , բայց գոյով բարեխառն , և վճիտ օդով , էր շտեմարան ամ ցնծութե : Բայց շիտեղի է զի հեղինակն ասէ 'ի վերջն այսորիկ դիտոյ , թէ զրախտն եղեալ է 'ի ներքոյ բոլորակի հասարակին . վասն որոյ միշտ հաւասար է անդ տիւն և գիշերն :

Իսկ այլք ոմանք ասեն , թէ 'ի ներքոյ բոլորակի հասարակին եղեալ երկիրն' ուր միշտ հաւասար է տիւն և գիշերն , է անմարդաբնակ , վասն տապոյ անբարեխառնի , որ թէ սոոյդ իցէ այս կարծիք , զրախտն ոչ է անդ . սակայն սոոյդ է այս , զի եթէ տեղին այն զի յաւէժական հաւասարութե տողնջեան , և գիշերոյ' իցէ բարեխառն' է անդ' և թէ ոչ է այլուր :

Բայց թէ զինչ իցէ գոյն 'ի ներքոյ բոլորակի հասարակին , և զհարգ լինին անդէն տիւն և գիշերն միշտ հաւասարք , ծանիր . զի բոլորակ հասարակին , է' բոլորակ իմն մոաճեցեալ 'ի յերկինս , զոր գիշերա հաւասար գիծն , ըստ հաւասար կիսոյ բաժանէ , և գիշերահաւասար գիծն է այն , նորում երբ արեւ գալն անկանի , տիւն և գիշերն լինին հաւասարք :

Ուստի տեղին այն որ է 'ի ներքոյ բոլորակի հասարակին , զգիշերահաւասար գիծն ունի 'ի վերայ գաղաթան բնակչաց իւրոց : Եւ աստուտ հետեւի , զի մինչ արեւակն իցէ 'ի գիշերահաւասար գծոյ , իցեն անգէն տիւն և գիշերն հաւասարք , որպէս են յայնժամ նաև 'ի մեզ . և զկնի նորա մինչ իջանէ արեւակն 'ի կողմն հարաւոյ , ոչ այնպէս հեռանալով 'ի նոցանէ ունի հեռանայ 'ի մէնջ , հետեւի ոչ կարծիլ անդէն աւուրն , օրպէս կարծի 'ի մեզ : Եւ մինչ արեւակն 'ի դառնալն իւր դայ 'ի վերայ գլխոյ նոցին , և սկսանի բարձրանալ 'ի կողմն հիւսիսոյ , ոչ մերձենայ առ նոսին' ունի մերձենայ առ մեզ , զի որոյ նաև յայնժամ ոչ երկայնանայ տիւն առ նոսին' ունի երկայնանայ 'ի մեզ :

Ասացի ոչ այնպէս հեռանալով 'ի նոցանէ ունի 'ի մէնջ . զի արեւակն , մինչ սկսանի հեռանալ 'ի մէնջ անդր քան զգիշերահաւասար գիծն , ոչ միայն հեռանայ ըստ վերին ճանապարհին իւրոյ , ընդ որս անցանէ շուրջ զկէսաւուրք , այլ նաև թաղչի ըստ ստորին մասանց ճանապարհի իւրոյ , ընդ որս անցանէ 'ի ծագիւն , և 'ի մտա

մտանեւն, և աստուածո հետեւի, զի ղեւն և զմուտ որ
 ըստ ինքեան՝ ոչ տեսանիցեմք. և այնպէս կարծի օրն
 առ մեզ: Բայց ի յայնց բնակչաց, թէպէտ մինչ արե-
 դակն ի գիշերահաւասար դժէն իջանէ առ հարաւ,
 հեռանայ ըստ վերին ճանապարհին իւրոյ. բայց ոչ
 թաքի ըստ ստորին մասանց ճանապարհին իւրոյ.
 ուստի ընդ ելանեւն արեգական ի վերայ բեւեռահատ
 կիսագնդոյ երկրին՝ առժամայն տեսանեն, և զմուտ
 յայնժամ տեսանեն՝ յորժամ մտանէ ի ներքոյ նոյնոյ
 կիսագնդոյն, և ոչ անագան, կամ կանխաւ. և աս-
 տուստ հետեւի, զի նաւ յայնժամ իցէ առ նոսա հա-
 լասարու թի տունջեան, և գիշերի: Եւ եթէ ասի-
 ցեա՛ թէ թեքեալ է յայնժամ արեգակն ի կողմն հա-
 րաւոյ, և հեռացեալ ի գլխոյ նոցին, զի արդ տեսանի-
 ցեն զըստինքեան մուտն և ղեւն արեգական, որով
 լինի տիէն և գիշերն հաւասար: Պատասխանեմք ան-
 զի նաւ ի մեզ մինչ հաւասար է տիէն և գիշերն, թե-
 քեալ է արեգակն առ հարաւ, և հեռացեալ ի գլխոյ
 մերմէ, բայց տեսանեմք զըստինքեան մուտն և ղեւն,
 և այնու լինի մեզ տիէն և գիշերն հաւասար. ուրեմն
 նոյնպէս և առ նոսա ի ժամանակին այնմիկ մինչ հե-
 ռանայ, այնպէս տեսանեն զըստ ինքեան ղեւն և զմուտն,
 ուն և տեսանեն, մինչ ոչ հեռացեալ: Ի արձեալ ի
 վերանոյր ասացաւ, թէ արեգակն ընդ բարձրանայն
 քան զգիշերահաւասար դիժն, ոչ մերձեանայ առ նոսին
 ուն առ մեզ. քանզի ընդ անցանեւն զգլխով բնակչաց
 այնմ երկրին, և ի դալն առ հիւսիս դրէ թէ սկսանի
 հեռանալ ի նոցանէ և մերձենալ առ մեզ. բայց հե-
 ռանայ միայն ըստ վերին ճանապարհին ընդ որս անցա-
 նէ չուրմ զկէս աւուրք. և ըստ ստորին մասանց ճա-
 նապարհին ընդ որս է եյն և մուտն, ոչ թաքի ի նո-
 ցանէ. ուստի նաւ յայնժամ մնայ անդէն տիէն և գի-
 շերն հաւասար: Բայց ի մեզ սկսանի օրն երկայնա-
 յալ, զի գոլով մեր ի կողմն հիւսիսոյ՝ արեգակն յայնմ
 ժամանակի հոյսի առ մեզ. և այնու ղեւս նոյրն կան-
 խաւ, և զմուտն անագան տեսանեմք, այսինքն, մինչ
 ոչ է ելեալ ի վերայ կիսագնդոյ բեւեռահատի, տեսա-
 նեմք ելեալ, և մինչ մտեալ է՝ տակաւին տեւել տեսա-
 նեմք ի մեզ: Եւ պատճառ սորին է՝ զի երկիրն է ուն
 զգուռն, և մերս բնակուելի է ի մի կողմն դնոցն,
 այսինքն, ի հիւսիս, և նոցայն է ի միջին տեղում
 դնոցն, որոյ վասն, երբ արեգակն մերձի առ մեզ, մինչ նկատ
 մամբ

մամբ բնակչաց այնմ երկրի ոչ է ծագեալ, երևի ծագեալ առ մեզ . և ներհակն սորին լինի՝ երբ արեգակն իջանէ՝ ի վայր քան զգիշերահաւասար գիծն առ հարաւ : Եւ յայտնապէս երևի սոյնս թէ մեք իցեմք առ հիւսիս , զի բարձրացեալ երևի մեզ բևեռն հիւսիսային , և ամենևին թափուցանի ի մէջ բևեռն հարաւային : Իսկ բնակչաց այնմ երկրին , երկրքեան բևեռքն ևս երևին յաւելո՝ առանց իրիք բարձրութե : Եւ աստ զխտելէ՝ զի այն ասի բոտ ինքեան ել և մուտ արեգական . մինչ ելանէ արեգակն ի վերայ բևեռահատ կիսագնդոյն , և մուսնէ ստորև նմին : Եւ այն ասի բևեռահատ կիսագնդն՝ ի վերայ որոյ բնակողքն զերկոսեան բևեռան միշտ տեսանեն առանց իրիք բարձրութե . և անդէն է միշտ տիէն և գիշերն հաւասար , և նաէ որ ի բնաբանոյն անոճանի երկիր ի ներքոյ բոլորակի հասարակին եղեալ :

ՔԼԿԶ

Ա

1.2.խ.74
պ.3.

Բ

ան : Որոյ ոչ լինի հաւանումն : ԼԾ. Այսինքն , նաև ոչ թողառողութի . քանզի եթէ որ ունիցի , (զորօրինակ) զգործութի պտունկական խորհրդոյ , և ոչ տայ զհաւանութի , բայց նաև ոչ ընդդիմանայ , այլ թող տայ մնալ խորհրդոյն այնպիսոյն փորձութիւն ոչ է նիւթ առաքինութե , այլ մեղաց :

Ուրեմն բաց ի յոչ հաւանելոյն , ընդդիմանալ ևս պարտիմք , մինչ ի ձեռն բանին պարաւանդիմք դոյ հսկողք : Ուստի նաև առաջին շարժումն որ է մեղք ներելի , ոչ միայն յայնժամէ մեղք՝ յորժամ արթումն է բանն , այլ նաև յայնժամ՝ երբ ոչ հսկէ , մինչ առ բան ներելի մեղաց , բաւական է նաև ոչ զսպելն զառաջին շարժումն :

ան : Նաև զմարթելիս ոչ է պարտ առնել : ԼԾ. Եթէ իցէ մեզ ստոյգ , թէ սատանայ վասն իւրոյ չարի վախճանի՝ առ ի որսալ զմեզ , յորդորէ առայս ինչ իր , թէ և իցէ պատկանաւոր , ոչ պարտիմք առնել զի մի երևիցուք նմա լսել : Իսկ եթէ ոչ իցեմք ստոյգ , թէ յորդորումն արդեօք ի դիւէն իցէ , կամ յայն , յայնժամ ոչ է պարտ թուլանալ մեզ ի յառաջ գրեցեալ բարոյն , քանզի ՏԲ մեր՝ մինչ յորդորեցաւ ի դիւէն առնել զքարինսն հաց , վասն այն ոչ արար զի ստոյգ գիտէր զչար վախճան դիւին : Եւ զայսմանէ տես , ի ինչ գլխով լուծման այսորիկ գրգռոյն :

Վախճան լուծմանց՝ երկրորդի գրգռոյն :

ԼՈՒԾ

Լ ՈՒ Ն Ս ՈՒ Ն Կ

Երրորդի դրոշմ :

Որ յաղագս ասականութե մեղաց :

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ :



Ա : Այս քան զամ , ԼԺ. Այս
լինքն , այն որ այնպէս հեշտանայ 'ի ԴԼԺ
ստեղծուածս՝ զի 'ի ձեռն այնորիկ հեշ
տութե ոչ անցանէ և ոչ դիտէ անցանել
զօրինօք Տեառն , հեշտանայ այս քան
զամ :

Բ ան : Առնէ անարդ : ԼԺ. Մեղքն ոչ միայն , ԴԼԺ
առնէ անարդ ըստ այնմ որ յօդէ զմեղուցեայն
'ի ջոկս անարդեցելոց , այլ և առնէ անարդ 'ի
մէջ ամենից կենդանեաց : Քանզի ըստ փիլիսոփային ,
մարդ՝ կեցօղ 'ի ձեռն բանի , և անուաղոյն կենդանի .
և ոչ դոյ յուրեղոյն կենդանի՝ քան զկենցաղավարեալն
ընդդէմ բանի . և թէ մարդն խստասրտաբար 'ի բա
նէն խոտորի , ոչոք չարագոյն դաղան քան զայն
դուանի :

Բ ան : Անարժան վարձուց : ԼԺ. Ոչ միայն վար
ձուցն որ յերկինս , այլ և անարժան ամբարեաց
երկրայնոց , այս է , լուսոյ արեգական , բաղքութեան
ճաշակեաց , և այլոց բնաւից բարեաց . և ոչ առ
ճառնէ՝ զի բնաւք բարիք այնպիսիք , առ բարի դոյն
մարդոյն շարակարգեցան . ուստի մինչ վառութեանայ
մարդն լինի անարժան ամենիցն . և առ այս ասաց
օգոստինոս՝ մեղաւորն ոչ է արժանի հաղին զոր ուտէ :

Բան

ԳԼԴ

Ա

Բան : Եւ այս վասն պակասութե բարւոյն բնա-
կանի : ԼԾ. Չբարին բնական , իմա զայն՝ որ է
'ի մարդն . քանզի որպէս սրնթաց թուչին ար-
ժողոյն է բարի բնական 'ի յարժողում . այսպէս և
կարգաւորութե բանի կեալն մարդոյն է բնական բարի
'ի մարդն . ուստի ամ մոլութի ; այնու է մոլութիւն ,
զի է ընդդէմ բնութե մարդոյն՝ որոյ յատուկ է վարիլ
'ի ձեռն կարգաւորութե բանի . և առ այս միտ՝ մեղքն
կոչի մոլութի , վասն պակասութե բարւոյն բնականի :
Վասն որոյ առէ դիտնէսիտ . բարին մարդոյ է բանիւ
վարին նորին . իսկ չարն մարդոյն է կեալ արտաքոյ
բանին :

ԳԼԵ.

Ա

Բան : Ոչ արարողական . այլ պակասական : ԼԾ.
Կամքն ըստ որում պակասի 'ի յուղղութեան
բանին , և 'ի յօրինացն ամայնոց , և անտուստ
մեղքն յառաջանայ , ասի պատճառ մեղաց պակասա-
բար . բայց ըստ որում նկատի ներդործութի մեղացն ,
որդոն , ընթանալն առ 'ի սպանանել , և շարժել
զսուրն 'ի վերայ պարանոցի սպանեցելոյն , ըստ այսմ
կամքն է ըստ ինքեան պատճառ , զի այնք դործք՝ յա-
ռաջանան 'ի կամացն ուղղապէս . իսկ անկարգութե
այնմ ներդործութե , դնի կամքն պատճառ ըստ պա-
տահման միայն :

1. 2. խ. 75

գլ. 1.

ԳԼԶ.

Ա

Բան : Սէր հեշտութեց արխարհիս , սակայն այսր
քան զամ : ԼԾ. Չգուշանայի է ստտէն . զի մի՛
կարծիցի թէ սէր հեշտութե , կամ յամեն 'ի
հեշտութե , մինչ ոչ յառաջանայ 'ի դործն , միշտ է
ներելի , քանզի երբեմն լինի մահուչաւ , որպէս յոր-
ժամ տայ որ սուրի խորհրդոյ հեշտութե , և յամէ
'ի նսին հաւանելով , թէպէտ ոչ ունիցի զգիտումն
առնելոյ զարտաքին դործն : Չորօրինակ , յորժամ
խորհի որ զսպանմանէ թշնամոյն իւրոյ , և հան-
դերձ հաւանութե հեշտանայ այնու խորհրդով , թէ
և ոչ ունիցի զգիտումն արտաքին դործով սպանանե-
լոյ , մեղանէ մահուչաւ . նոյնպէս իմա և զպոռնկա-
կանէ խորհրդոյն , և զարտահայեցութե , զջօղա-
մանէ , և վնասակցութե , (մինչ սորօք ևս լինիլ կա-
րեն հեշտութիք) նաև զայլոց նմանեաց :

1. 2. խ.

74. պ. 8.

Եւ պատճառ առացելոցս է՝ զի հեշտութին զարտա-
քին դործն ունի ինքեան փոխանակ առարկայի . վասն
որոյ մինչ հանդերձ հաւանութե լինի հեշտութիւն
'ի խորհին զիմեքէ , 'ի հարկէ դոյ ևս համահաճու-
թի

Թի առ արտաքին գործն այնորիկ խորհրդոյ ըստ ինքեան , Թէ և ոչ կացուցանի 'ի մտի առ 'ի կատարել :
Բ մարհէ : ԼԾ. Աստէն ոչ դնի հայցական խնդիրն , Թէ զո , և զինչ արհամարհէ . և այս վասն այն է , զի զո և իցէ բարի որ մտածիլ կարէ : այնպիսի մեղաւորն արհամարհէ : Ուստի , դիւր փոխանակ հայցականին զօրէնս անձային դիւր զօրէնս մարդկային . դիւր զիրաւունս բնութե , դիւր զհետեւումն բանին . դիւր զանսալն վերնադունին , դիւր զօրինակս արանց բարեաց , դիւր զկանոնս հարցն արբոց : դիւր զհրաման սիրոյ . դիւր զպատճէր երկիւղին . դիւր զիրտոտ եղանակին . դիւր զզարաւանդութի ուխտին . դիւր զհոյս ընկալեալ շնորհացն . դիւր զամօթ մարդկային . դիւր զերկիւղ զեհեհնոյն . դիւր զմտածումն անաչառ ատենին . և դիւր զո և իցէ բան բարի որ շարժել կարէ առ ան , զհամայնս արհամարհէ մեղաւորն որ հասեալէ 'ի խորս մեղաց . և այս այն է՝ որ ոչ կամի ուղղել զինքն ըստ այ , և ըստ օրինաց նորին . այլ յամառեցեալ կեայ 'ի խստութե խրում :

ԳԼԵ.
Ա

Բ ան : Միջնորդութե մարմնոյ , և ցանկութեամբ ծնանելոյ : ԼԾ. Զուգամտք առն և կնոջ ծնանել լուին՝ անցանի սկզբնական մեղքն 'ի ծնեղեայն : բայց գիտեմք , զի եթէ զօրութե Թոյլատուութեն այ , պատահիցի առն և կնոջ ուրուք՝ 'ի զուգամանն զոյինչ անկարգութի ցանկութե զգալ , այնու ոչ հետեւի , զի զաւակն Թարց սկզբնական մեղաց ծնանիցի . բանդի մինչ ոչ գոյ սկզբնական տրդարութին (զի լուծեցեալ եղև այն 'ի ձեռն ագամայ) ամենեքեանք որք 'ի սերմէ եղանին՝ ենթարկին սկզբնական մեղաց , բաց 'ի յերանուհւոյ կուսէն որ աղատ մնաց առանձնական շնորհիւ : Զի առ բան սկզբնական մեղաց , որ է ունական ցանկութի կայացեալ յայսմիկ՝ զի բաղձանն զգայական ոչ ենթարկիցի բանի , բաւական է պակասութի սկզբնականի արդարութե , ուրեմն 'ի յայնպիսւոյ զուգման , մինչ ոչ գոյ սկզբնական արդարութի , 'ի հարկէ անյուցանի սկզբնական մեղքն՝ առ ծնեցեալ զաւակն :

ԳԼԸ.
Ա

1.1. Խ.
31. ալ. 4.

Բ

Բան : Ոչ ինչ կերպիւ պարտի համարիլ այ դնե-
 խուծի հոգւոյն : Լծ . Արդարեւ անկարելի է նե-
 խուծին գոյ յոյ . քանզի նա որ է ամենաբարի , զամ-
 զոր առնէ է՝ բարի , արդ՝ անմեղի ստեղծեցելոյ հոգ-
 ւոյն միաւորիլն ընդ մարմնոյն է՝ բարի , և թէ հե-
 տեաբար ասականիցի վասն մեղաց զանկուծք ծնե-
 լոյն՝ այսու ամ ոչ է պատճառ աշականութեն այնո-
 քիկ . ապա թէ ոչ՝ համայնք մեղք որք դործին ՚ի
 մարդկանց (զորքաւ լիցի) վերատրեւ լինէին այ , զի
 նա ստեղծեաց զամ՝ մարդ . և զիտաց զի մեղանչելոցք
 էին : Ուստի՝ վասն այսպիսեացս , առ ՚ի կարկել զե-
 բանս բարբանջողաց , ասելի է վերկուս :
 Եւրիս՝ զի այնու առաւել երևի ամային բարութի . և
 թէ ասիցես զեալիդ . այս է , զի ամ թէպէտ տեսա-
 նէ զայնս որք արհամարհելոցք են զինքն , և անցա-
 նելոցք զօրինօք իւրովք , բայց այսու ամի տակաւին
 ստեղծէ զնոսին , պահէ ՚ի դոլն , տայ զլոյս բանի , ըն-
 ձեռէ զնորս , և առատի զպատուէրս առ կեցու-
 թի նոցին , որպէս զի այսու ցուցանիցէ զինքն այնպիսի
 ամենաբարի՝ մինչ զի , նաև այսպիսեաց թշնամեաց
 ինքեան՝ առնէ զբարի . յորմէ կարես մտածել զայս ,
 այօինքն , զի եթէ այնքան բարի է ամ , մինչ զի նաև
 թշնամեաց իւրոց՝ ոչ դադարի ՚ի բարերարելոյ , ասա
 քրքան չար է նա՝ որ խորհի առ եղծումն այնպիսւոյ
 ամայնոյ բարերարութե : Երկրորդ՝ զի չարութիւն
 ստեղծումն ունի հունաւորք . իսկ իմաստութիւն և
 բարութի այն անհուն . արդ՝ եթէ վասն հետեւեալ
 չարութեց մարդկանց , զանցառնիցէր ամ զկարգաւ
 իմաստութե իւրոյ , և լռիցէր ՚ի բարութե իւրմէ . ոչ
 ստեղծելով զհոգիս , և կամ ոչ պահելով ՚ի դոլն , յայն-
 ժամ անհուն իմաստութի , և բարութին այ յաղծիւր
 ՚ի հունաւոր չարութեց մարդկանց : Ասանորոյ բա-
 րի է ամ , զի ետ մեղ զլոյս արեգական . բայց եթէ ոք
 այնու լուսով խաւարեցուցանէ զաչս իւր , յաղաքս
 յիմարութե նորին՝ ոչ պատշաճի այ լռել ՚ի պահելոյ
 զարեգակն ՚ի դոլն . լստ այսմ իմա և զբնաւից բա-
 րեացն այ , որք եղանին յոյ առ բարին , և մարդիք
 կարեն չարութե վարիլ նոքօք :

1.2. իս.

33. պ. 1.

Բան : Ասի մոլութի, զի է պականութի բնական
բարեոյն : ԼՃ. Սկզբնական մեղքն նիւթականա
բար առեալ, կոչի մոլութի. և ոչ տեսակաբար
Քանզի սկզբնական մեղքն, որ ՚ի մկրտեցելոյն բառ
նի ըստ պարտաւորութե դատապարտութե յանիտե
նականի, և մնայ ըստ պատժոյ լուցկին և դործոյ առ
յարժումն զանկութեան, այս մնացեալս՝ երբեմն կոչ
մոլութի, և երբեմն մեղք, ըստ առաքելոյն . և այս
ոչ վասն այն ստի մեղք, զի զրկէ ՚ի շնորհաց, այլ ըստ
որում թէ պատճառեցեալ է ՚ի մեղաց, և կամ յօժա
րեցուցանէ առ մեղս . որպէս և հարց սքք, ՚ի ժողովե
տրեւէն թինոյ վճռեցին . ուրեմն ըստ այսմ ևս իմա
ցեալ լինի՝ կոչին մոլութի, այսինքն, նիւթ մոլու
թե, և յօժարեցուցիչ առնա :

ԴԼԹ

Ա

Բան : Այլ կրողականք, և նիւթականք առ այնս՝
որք են շնորհաց, և փառաց : ԼՃ. Ոչ է իմա
նախ թէ անձնիշխանութի մեր բաղարձակա
բար առեալ, նիւթականաբար և կրողականապէս է
առ բարին շնորհաց, այլ իմն համեմատաբար, այս
ինքն, մինչ դժոճարութե յարի առ հոգևորս, և
զիւրասահէ առ ժամանակաւորս, բաղդատելով այն
դժոճարութիւն՝ առ յոյս դիւրասահութի, ասի նիւթա
կան, և կրողական առ հոգևորս :
Քանզի մինչ շնորհն անձային տանի զմեզ առ բարին
շնորհաց, անձնիշխանութի մեր ոչ բարի բռնութե,
զի այնու իցէ բաղարձակաբար նիւթական, այլ համ
ընթանայ ընդ շնորհին . սակայն ոչ այնպէս դիւրու
թե, ուր առ ժամանակաւորս, և առ այս բաղդատե
ցեալ՝ ասի նիւթական :

ԴԼԺ

Ա

Բան : Յամեն ՚ի մարմնական հեշտութիւն : Զայս
մանէ տես նայածի լուծման, ՚ի յերկու, և ՚ի
վեց դիտով :

ԴԼԺ ա

Ա

Բան : ՚ի մանկունս յետ մկրտութե, նախ յառնեն
ներելիք : ԼՃ. Վս այն ասէ յետ մկրտութե,
զի ՚ի յոչ մկրտեցեալ մանկունն՝ նախ յառնեն
մեղք զանցառութե, որ է մահուչափ : Քանզի ընդ
հասանիլ ՚ի յառն ընտրութե, նորում դործն մեղաց առ
մեղս համարի . իսկոյն պարաւանդին դարձուցանել
զինքեանս առ անձ, ճշմարիտ հաւատով և սիրով . և
զայս ոչ առնեն նորին . վասն որոյ նախ դործեն զայս
մեղք զանցառութե, որ է մահուչափ : Իսկ ՚ի մկրտե
ցեալ մանկունն կարեն յառնել նախ ներելիքն, նկատ
ՕՕ մահ

ԴԼԺ բ

Ա

1.2.10.
89.պ.6.

մամբ այնց մեղաց՝ որք լինին 'ի ձեռն գործոց , և կարեն յառնել նախ մահուչափքն զանցառականօք մեղօք . զորօրինակ , եթէ ընդ հասանիլն յամս ընտրութե , զանց արասցէ մանուկն դարձուցանել զինքն առած , առ 'ի ձանաչել և սիրել զնա , ըստ այսմ՝ նախ գործէ զմահուչափն . իսկ եթէ լցուսցէ զհրաման ճաշակման և սիրոյ , բայց նախապէս գործ իցէ զթեթև ինչ պակասութի , որքոն , խօսիցի զսուտ ինչ որ ոչ իցէ 'ի մեծա ուրուք , ըստ այսմ , նախ գործէ զներք լիս : Դարձեալ , զի ըստ հասարակական ընթացիցն , 'ի ներելեաց յառաջացեալ լինի առ մահուչափ մեղս . և վասն այն կարէ ասիլ՝ թէ յառնեն նոխս ներելիքն :

Բ

ԼԾ. Իմանի այս հաճութիւն որ է վախճանական . բանցի որդարու եթէ առ ներելի , և կամ առ անզանս , զան ինչ հեշտութի , այնքան հաճեալ իցէ ոք , մինչ զի վասն նորին պատրաստ է անցանել զսիրտն աչ , և զծանր պատճիրանօք նորին , առնէ համահաճութիւն այնու զմահուչափ մեղս , թէպէտ գործեցեալն իցէ ներելի , կամ անզանազան : Իսկ եթէ համահաճութի ոչ է ըստ ապացելոյ կերպիս վախճանաբար , այլ եկեթ վախճանի , յայնժամ մինչ գործն է՝ ներելի հաճիլն ևս 'ի նմին է՝ ներելի , և մինչ գործն է անզանազան , հաճիլն ևս է՝ անզանազան : Զասացելոցս երևի՝ թէ հեշտանալն , կամ հաճիլն 'ի գործ ինչ որ ոչ է արդելեալ 'ի յօրինաց , որքան և իցէ , ոչ կարէ գոյ մեղք մահուչափ , եթէ իցէ ենթ վախճանի , այսինքն , եթէ այնպէս իցէ , զի ընդ տեսանելն թէ մեծաւ վախճանին՝ առժամայն 'ի բաց թողու , և հրաժարի . ասացի եթէ գործն ոչ իցէ արդելեալ , զի անային օրինօք արդելեալ գործն , թէ և առանց հեշտանալոյ գործ իցէ ոք , է՝ մեղք :

1.2.10.
88.պ.5.

ԴԼԺԴ.

Ա

3.10.87.
պ.2.

ԼԾ. Եթէ և լիցէ ուղղեցեալ առայն շարժումն զղման : Եթէ յատկապէս առ նոյն ջնջելի ներելի մեղքն՝ ոչ իցէ ուղղեցեալ : Ուստի յայտ է զի ներգործական զղմումն , թէ և հասարակաբար ուղղեցի առ ներելի մեղս՝ բաւական է առ ջնջումն . բայց ունական զղմումն ոչ է բաւական՝ յորժամ է միայն . ապա թէ ոչ որք էին 'ի շնորհս ոչ կարէին ունել զներելի մեղս :

Բան : Եւ այս ասացեալ եղև 'ի հնոց : ԼԾ. Ի մէջ Բ

հնոցն (որք ասացին ոչ լինիլ 'ի քաւարանն արձակուան 'ի մեղաց ինչ) այլ միայն 'ի սրտոժող (սքն օգոստինոս ոչ համաթոնի : զի այլ միօք ասաց օգոստինոս , և այլ միօք ասացին այլք հինք ոմանք :

Ուստի նայսմիկ խնդրոջ՝ ոչ տարաձայնին սքն օգոստինոս , և սքն դրիդոր :

Բան : Կերպարանաւ բարւոյ պատրուակեալ խաբեն : ԼԾ. Այսինքն , սուտ կերպարանաւ բարւոյն խաբեն : Աստուտ իմա , զի ըստ դիտնէ սիոսի՝ չարն է տկար և անկար . վասն որոյ զգետաւորի սուտ կերպարանօք բարւոյն զի դոնեայ այնու ընդունեցեալ լիցի :

Բան : Զի մարմնական հեշտութիւն են մեղ բնա կանք : ԼԾ. Բանիւ հեշտութե են բնականք , բայց ոչ բանիւ անկարգութեն . քանզի թէ անկարգ հեշտութիւն իդէին բնականք , մինչ բնութիւն ոչ է արդիւնաւորութի , կամ անարդիւնաւորութի , ոչ լինէին անկարգ հեշտութիւն մեղք , որ է սուտ : Բայց զի 'ի մեղ ներածեցեալ եղև անկարգութիւն . ուստի եթէ ընդդիմանամք անկարգութեն , արդիւնաւորիմք . և եթէ հետևիմք , մեղանչեմք :

Բան : Կամիլ ումք զչար , և ոչ զբարի : ԼԾ. Կամիլ ումք զժամանակաւոր չար 'ի չարութե , և կամ վասն չարի , է դուստր նախանձու . բայց եթէ դատաւորն կամիցի ումք անօրինի զչար մահուն , և այս 'ի բարի նախանձու իրաւանցն , և վասն բարւոյ հասարակին , և ոչ կամիցի նմա զբարին կենի , աստուտ ոչ հետևի յանցանք ինչ . ըստ այսմ իմն և զայլոց նմանեաց : Ասացի ժամանակաւոր , զի եթէ որ կամիցի զչար ուրուք մարդոյ , և կամ ոչ կամիցի զբարին , և զայս նկատմամբ կորստեան հոգւոյն , ոչ դոն , կամի զի այն որ 'ի դժոխս իջէ , և կամ կամի զի մի՛ փրկեցի , զայնպիսւոյն ոչ այլ ինչ ասի՝ քան թէ դոյ դև մարմնաւոր :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

Բան : Կամ առ դատաւորն կացուցեալ 'ի ներքոյ այ : ԼԾ. Իբրութե ասէ , դատաւորն որ 'ի ներքոյ այ , է այն՝ որ ըստ իրաւանց դատէ . արդեթէ դիտիցես զոք այնպիսի դատաւոր , որ վասն սիրոյ քո 'ի կողմ քո է 'ի դատելն , և կամ ներհակ ոտ խին քո , մի՛ դիմեր առ յայնպիսին , զի ոչ զանազանի այն :

այն՝ յայտնանէ , մինչ անձամբ քով լինիս վեժխնդիր :
որ է դործ բարկութի :

Բ

Բան : Զերկրորդն պարտաորի թողուլ : ԼԾ.
Պարտաւորի վասն հարկաւորութե կեցութե ,
տալա թէ ոչ , դնէ զինքն 'ի ճանապարհի կորստեան .
ուստի պարտաւորութիս այս՝ որով պարտի որ թո-
ղուլ այնմ , որ խնդրէ զներումն՝ այնքանէ , որ քան
տարաւանդի որ՝ ոչ առեւ զսիրելին :

Գ

Բան : Որ խնդրէ զթողութի անկեղծ սրտիւ : ԼԾ.
Եթէ թշնամին մեր իցէ 'իմջ քաղաքի , և կամ
հասարակութե ուրուք , թէ և ոչ երբէք խնդրեալ
իցէ 'ի մէնջ զներումն , և կամ կեղծիւ խնդրեալ , տա-
կանին 'ի բարերարելն մեր այնմ քաղաքի , և կամ հա-
սարակութե , ոչ կարեմք տրտաքսել զնա 'ի հաղոր-
դակցութե այնմ բարոյն . նաեւ ոչ կարեմք դադարել
'ի բարերարելոյ զքաղաքն՝ պատճառաւ թշնամոյն մերոյ
որ 'ի ներքո , և այս վասն հարկաւորութե կեցութե
հոգւոյ մերոյ : Զի այլ աղք՝ ոչ կարեմք կեցուցեալք
լինիլ : Նոյնպէս իմա և զայս , զի թէ և միայնակ իցէ
թշնամին մեր յուրեք , և ունիցի զձանր հարկաւորու-
թի . որ դոն , է քաղցեալ և չունի զհաց . ե՛ մերկ՝ և
չունի զհանդերձ , այնպիսոյն թէ և ոչ երբէք իցէ
խնդրեալ զներումն , և կամ կեղծաւորութի խնդրեալ ,
տականին պարաւանդիմք օժանդակել . և տալ զպէտա-
րտ եղանակաց վերոյ ասացելոյ :

2.2.խ.

25.պ.8.9

ԳԼԺԵ.

Ա

Բան : Զի այնու հոգին ունի զտաղտկութիւն առ-
ամ հոգւոր դժուարինս : ԼԾ. Եթէ առ այն
պիսի բարին ևս է տաղտկացեալ , որ է հարկա-
ւոր առ կեցութին . յայնժամ ճուլութին է տեսական ,
և է մեղք մահուհարի . զի հակադրի սիրոյն այ :

Բայց քանզի 'ի սիրելոյն ումեք դոք , և կամ 'ի տաղտ-
կանալոյն , հետեւին սիրելութիք , և կամ տաղտկա-
թիք զայնց՝ որք են զնովա : արդ՝ եթէ սիրես զմո՛ ,
հետեւին և սիրելութիք զայնց՝ որք են զնովա , որ
դոն , զժամասացութե 'ի դատոյն . զստատաւորութե
'ի պատարաքին , զկատարելոյ զժամն կանոնական , և
զայլոց նմանեաց : Իսկ եթէ տաղտկանաս 'ի սիրելոյ
զմո՛ , հետեւին և տաղտկութիք զայնպիսեօքն . որոց
'ի յառաջնոյն՝ ունիս զնշան կեցութե , այսինքն , 'ի սի-
րելոյդ , և առանց տաղտկութեան առնելոյդ զայնս .
և յերկրորդէն՝ զնշան կորստեան , այսինքն , 'ի տաղտ-
կա

2.2.խ.25

պ.3.

կարար առնելոյդ . քանզի տաղտկութիւն զիրօք անայն
նովք , ոչ կարէ ջատագութիւն ինչք պատճառօք :

Բան : Աւելորդ ուտելուն : **ԼՃ.** Աւելորդ ուտելուն յետ ծոմոյն է կրկին . մինն է , զի գորով
դահեալ զծոմ , բնականաբար ուտէ առեւել քան
զայն , եթէ չիցի ծոմ . և ըստ այսմ ոչ աղականի
ծոմապահութիւն . և ոչ նոճապի արդիւնն : **ԳԼԻԲ.**
Իսկ միւսն է՝ զի ըստ ախորժակին դուով մոլեալ ՚ի
յուտել զբաղմանս կերակուրս յորովս , և յետ ծոմ
մոյն ուտէ անդրքան զչափն իբրութե զբորր աւուր
ուտելին , ՚ի միւսմ նոճապի ուտէ . և ըստ այսմ կերպի
առեւորդակերութիւն , աղականէ զծոմապահութիւն : **Ա**
Բայց որ նախքան զծոմապահութիւն բոն զինքն այն
պիսեօք կերակրովք , զի մի՛ կրեսցէ զնոճաղութիւն
՚ի ծոմապահութեան , այսպիսին նոճաղէ միայն զար
դիւնն :

Բան : Որ է պարզ պառնկութիւն : **ԼՃ.** Ատենի գի
տելի է , զի եթէ ոք , նաև ոչ գիտիցէ զպառն
կութիւն գոյ մեղք մահուչափ , և գործիցէ ,
տակաւին է մեղք մահուչափ : Եւ պատճառն՝ զի ՚ի
յայտաբան տգիտութիւն անմեղադրելի . քանզի
ոչ կարէ առնել զմարդն անմեղադրելի . քանզի
ոչ միայն պարտականք եմք ոչ առնել զայն զոր արդէ
լեաց անձ , և առնել զոր հրամայեաց , այլ և պարտականք
եմք գիտել՝ թէ զինչ են զորս արդէլեաց , և ո՞րք են
զորս հրամայեաց :

Բան : Մնաստութիւն , ըստ սեռին է ներքին : **ԳԼԻԲ.**
ԼՃ. Այն սնամաստութիւն է ներքին , որ ոչ է
նոյն ընդ հպարտութե , քանզի երբեմն բառս ,
սնամաստութիւն , ՚ի տեղի հպարտութե առնանի , որ
նայտիկ տեղեոյ ոչ է առեցեալ . փասն որոյ ստէ թէ
ըստ սեռին է ներքին . իսկ թէ փոխանակ հպարտու
թե առնանիցի , է՛ ըստ սեռին մահուչափ , որպէս և
հպարտութիւն :

Բան : Թէ այսպիսիքս եղիցին կարգեալ առ ՚ի լի
նիւ պատճառ մահուչափ մեղաց : **ԼՃ.** Մինչ որ
առ ՚ի որսալ զհոգիս այլոց զարդարիցէ զինքն՝ յայն
ժամ է մեղք մահուչափ . և այսու ոչ իմանի , թէ
միայն յայնժամ է մեղք . քանզի բազմիցս հանդիսի
մեղանել ՚ի ձեռն զարդուց՝ նաև առանց չար դիտա
ւորութե . որդոն , երբ ոմանք ՚ի կանանց՝ զանազան
դեղօք զաչս և զերեսս խորեանց դեղզեղին , նաև

զստինս իւրեանց լըբաբար ձեւացուցանեն , և անդր քան զլաթն՝ զանաղանիւք զարդիւք այնպէս զինեն վնքեանս , մինչ զի ՚ի տեսողան՝ զշարժումն պատճառեն , այնպիսիքն բաղմիցս մեղանէն . մերժ մահու չափ , և մերժ ներելն . ուստի խառտովանահարք պարտին արգելուլ զայնպիսիս , և ոչ թող տալ նոցա վասն ոչ ունելոյն նոցին զչար գիտաւորութի որսալոյ զհոգին : Բանդն յորժամ գործ ուրուք է՝ մերձաւոր որոգայթ կորստեանն ընկերին՝ պարանանդն թողուլ զայն գործ , մինչ գործն ոչ է հարկաւոր առ կեցութի հոգւոյն և կամ մարմնոյն . իսկ այնպիսի թախարկօղ զարդքն՝ զոչ ինչ հարկաւորութի ունին . ուրեմն պարանանդին թողուլ :

Գ Բան : Վասն արգելման վերնագունին : ԼԾ. Եթէ օրէն և կանոն մեծաւորաց արգելուցու զո՞ և իցէ զարդ՝ յայնժամ կիրառնուլն զայն , լինի մեղք . թէ զարդն գեղեցկացուցանող իցէ , և թէ ոչ : Եւ մեծութի , կամ փոքրութի աստիճանի մեղացն իմանի յաստիճանէ արգելմանն :

Դ Բան : Եւ կամ քարչի արտաքոյ բանին իւրոյ : ԼԾ. Այնքն , մինչ գործ ինչ է մեղք , (ո՞րդոն , կամիլ ուրուք զչար՝ որ է բոտ սեռին մահու չափ) յայնժամ քարչի արտաքոյ բանին իւրոյ , երբ գործէ ոք զնոյն գործ՝ այլով բանիւ , որդոն , դատաւորն կամի զմահ դատապարտեցելոյն որ է չար . բայց ոչ կամի բանիւ չարին , այլ բարին նախանձով իրաւանց . և այսու կամիլն զչար մահուն որ էր մեղք , քարչի արտաքոյ բանին իւրոյ վասնդի կամեցեալ եղև վասն սիրոյ իրանանց . և ոչ վասն ստուելոյն զսպանեցեալն :

Ե Բան : Հանդերձ յօժարութե վրէժխնդրութե : ԼԾ. Թէ ընտրութե հանդերձ իցէ վրէժխնդրութի , և թէ յանկարծ չարժեալ ՚ի բնութե , միտ ունի զմեծագոյն քրոգայթս . ուստի զայսմանէ տես ՚ի վեր ներ լուծմանցս , ՚ի թէ գլուխ :

Զ Բան : Որ հեղձուցանէ զմիտս ՚ի հոգածութե ինքեան : ԼԾ. Որպէս փուշ սերմանեալ ՚ի մեջ ցորենոյ , հեղձուցանէ զցորենանս , այսպէս և մերս մը տաճմունք զկեցութե հոգւոյ մերոյ , են որպէս զցորենան սերմանեալ ՚ի քսէ . ըստ այսմ ել սերմանացան ՚ի սերմանել . և փարթաւութիք ախարհիս որք դան ՚ի վերայ մեր՝ են որսալ զփուշս , որք եթէ սիրիցին զմայլողաբար՝ արմատանն ի յանդատանի մտոց մերոց :

րոց և ՚ի հարկէ հեղձուցանեն զքնանա մոռամունն
մեր՝ որք են զհեցութե հոգւոյ մերոյ, և այնպիսաբար
ունենն զաւելորդս՝ լինի մեղք մահուչափ . և այս
վճիռ անական է . և ոչ մարդկային . զի Տէրն առա-
կեաց զայս, նաև մեկնեաց ասելով . իսկ որ ՚ի մեջ
փշոց սերմանեցաւ նոքա են, որք իբրև լսեն զքանն
այ, բայց դան պատրանք մեծութե, և հեղձուցանեն .
իւստի զգուշանալի է ստեղծ . զի որպէս զունեցեալ
ոչ սիրիցի, և ոչ իբրև զգերի ՚ի քնակի պահիցի, այլ
որպէս զբաշխելի սիրիցի, և այնու աղքատացն Քի
առատաբար հաղորդիցի . քանզի որ իշխէ արծաթոյն,
սիրէ զբաշխումն . իսկ որ իշխի յարծաթոյն՝ սիրէ
պղծահումն :

Բան : Կարի իմն և վերջնական ցանկութե . ԼԵ.
Եթէ որ վախճանաբար յենուգու ՚իսէր կերակ-
րոյն է մեղք մահուչափ . և պատճառն է՝ զի որքան
և իցէ գործ ինչ անկանազան, երբ վախճանաբար սի-
րիցի, այսինքն, այնպէս՝ մինչ զի պատրաստ է անցա-
նել զօրինօքն այ, քան յետս կեալ անտի . մերժմամբ
անստիփոխ բարոյն, գործն լինի մեղք մահուչափ .
Եւ զայսպիսեաց կալ ընդ հանուր կանոն՝ զայս, գործք
մերք, կամ են բարիք, կամ չարք, և կամ անզանա-
զանք : Եթէ են բարիք, որքան և հաճեսցուք ՚ի նա
և յարիցուքէ բարի : Իսկ եթէ են չարք, և այն եր-
կեակ է, այսինքն, կամ մահուչափք են և կամ ներե-
լիք . եթէ մահուչափք իցեն, թէ սիրով և յօժարու-
թե՞ յարկմբ առ յայն, և հաճիմք ՚ի հեշտութե, և
թէ տաղտուութե և առանց հեշտութե գործիցեմք,
միշտ են չարք և մահուչափք . Իսկ եթէ գործք մերք
ներեւի չարք իցեն, նաև այս է կրկնակ . այսինքն,
կամ վախճանաբար յարկմբ և հեշտանամք ՚ի նա, և
կամ ենթ վախճանի . եթէ վախճանաբար, յայնժամ
նաև այն լինի մահուչափ . և եթէ ենթ վախճանի՝ մնայ
ներեւի : Բայց եթէ գործն իցէ ըստ ինքեան անզա-
նազան, յայնժամ կամ հեշտանամք ՚ի նմին անկարդա-
բար և ենթ վախճանի, և ըստ այսմ է ներեւի . և
կամ հեշտանամք և յարկմբ ՚ի նա վախճանաբար, և
ըստ այսմ է մահուչափ . և կամ հեշտանամք և յարկմբ
՚ի նա բանաւորապէս՝ թարր իրիք անկարգութե, գո-
լով պատրաստք թողուլ իսկոյն՝ եթէ հակադիրցի
իմք բարւոյ, և ըստ այսմ ամենևին է առանց մեղաց :

բանդի գործն՝ է անդանազան, և անկարգութի ինչ՝ ոչ պարտիտեսաց զնա:

Ը

Բան: Այլ և սնանի տեսութե: Լծ. Որպէս ՚ի սրտի ծնանի և սնանի ցանկութի, այսպէս և հայեցմամբ ՚ի դեղս կանանց. ուստի ասէ օգոստինոս. բազմանք ցանկութե, ոչ միայն ՚ի ձեռն ատործման և շոշափման այլ և ՚ի ձեռն հայեցման իրակի:

Ուստի որք հայիքդ անպարկեշտ աչօք, դուք ձեզէն ասէք դու ձեր անտարկեշտ մտօք. քանզի աչք անպարկեշտ, է կարասկտ սրտին անպարկեշտ:

Եւ մինչ առ իրեարս նաև համբացեալ լեզուափոխաբերաբար հայիք, այնու զտրտս անպարկեշտս իրերաց բաւականաբար ծանուցիք. և ըստ ցանկութե մարմնոյ իրերօք առ հեշտութի բորբոքեալ, ամի չեալ մնացիք: Ազդ՝ որպէս ի սմին, նոյնպէս և ՚ի շոշափման, վասն անմաքրութե, և սպախանութեան մարմնոյ, ոչ մնաց որջախոշութի, այլ փախչի:

Միւր.

Ա

Բան: Սակայն վասն չարութե միայն ընտրէ: Լծ. Ընտրել զինմ վասն չարութե, մտածի ըստ երկուց: Եթա, այսպէս, զի յորժամ ընտրէ որ զինմ գործ ընդդէմ անձային օրինաց, որ չէ ՚ի տկարութե, կամ ՚ի տգիտութե, այլ է ստոյգ գիտութե, ասի ընտրել վասն չարութե. և այս լինի, կամ վասն հասանելոյ իրիք բարւոյ, առ յոր յարեցեալ է վախճանաբար, և կամ վասն զերծանելոյ յիմեքէ ցաւոյ, յորմէ դարչեալ է վախճանաբար: Երկրորդ՝ այսպէս, իբրութե ընտրիցէ որ զինմ գործ ընդդէմ անձային օրինաց, որ ոչ ՚ի տկարութե և ոչ ՚ի տգիտութե, ոչ վասն հասանելոյ իրիք բարւոյ, և ոչ վասն խորհեցման ՚ի չարէ, այլ պարզապէս վս չարութե, որ կեայ ենթ տեսակի չարի, և ըստ այսմ, ոչ որ կարէ գործել զինմ վասն չարութե. ուստի մինչ ասի թէ մեղքն որ գործի վասն չարութե, է ընդդէմ օգւոյն սրբոյ, պարտի իմանիլ ըստ առաջնոյ կերպին, զի ըստ երկրորդին՝ ոչ երբէք հանդիպի վասն որոյ ասէ դիոնէսիոս, թէ ոչ որ կարէ գործել զչարն սոսկ դիտմամբ չարի զի միշտ ընտրի չարն ենթ բանի բարւոյն, և այնու գործի: Եւ թէ ընդէր ըստ առաջնոյ կերպի ընտրողքն՝ ասին ընտրել վասն չարութե, այս է պատճառն. զի որպէս հեռացեալն ի լուսոյ՝ խաւար ասի, և ներհակեցեալն քաղցրութե՝ դառն, այսպէս հեռացեալն ՚ի բարութենէն անձայնոյ, և ներհակեցեալն

բաղ.

քաղցրութեան նորին, չար և դառն ասի : Արդ՝ որք
 վախճանաբար յարին առ բարին անցական՝ և վախ-
 ճանաբար փախչին ի նեղուէց, արդարեւ հեռացեալք
 են ի բարութենէն անծայնոյ, և ներհակեցեալք քաղց-
 րութե նորին քանդի եթէ ունիցէին ի սրտի իւրեանց
 զմասն ինչ ի բարութենէ, և կամ ի քաղցրու-
 թենէ անծայնոյ, դուով նոքիմք բաւականացեալք և
 բարեխառնեցեալք, ոչ վախճանաբար առ ժամանա-
 կաւոր բարիս յարէին, և ոչ վախճանաբար ի յաւոյ
 փախչէին : Ավախճանաբար փախչող ի նեղութեանց
 իմա զայն՝ որ այնպէս մերժէ զնեղութիս՝ մինչ զի
 ընտրութե մտացն յոժարի անցանել զճանր օրինօքն
 այ, քան թէ նեղի իւրի : Արդ՝ մինչ սոքին այսու
 չարք ասին, նկատմամբ սոցին ընտրելն ևս զիմ, վասն
 չարութեան ընտրել ասի, և կամ մեղք չարութե, և
 ընդգէմ՝ ոգւոյն սրբոյ : Ուրեմն վերամայ թէ մեղքն
 ի տգիտութե յայնժամ լինի, երբ ոչ ոչ գիտէ զիմ
 դոյ մեղք՝ և դորժէ. և ի տկարութե յայնժամ լինի
 յորժամ ի կրից զգայականութե յաղթեցեալ դորժէ
 զանապատշաճ, զորս ոչ դորժէր՝ եթէ յատկի ընտ-
 րութե կամացն ենթարկիցիւր ինպէս. որպէս որ
 յանկարծ կորզմամբ յաղթեցեալ ի կրից բնութե բար-
 կանայ իսկոյն. և նշան դոյն ի կրիցն է այս՝ զի ընդ
 անցանել չարժմանն այնորիկ, ցաւի՝ զի արար. և ոչ
 աստորժի : Իսկ ի չարութե և ստույգ դիտութե յայն-
 ժամ դորժի, յորժամ, ոչ ի տգիտութենէ, և ոչ ի
 տկարութե, այլ ի յանկարգութենէ անձնիւն կա-
 մացն լինի, ոնչ ի վեր ասացաք. զի վախճանաբար յա-
 րի առ ժամանակաւոր բարին, և վախճանաբար խոր-
 չի ի ժամանակաւորաց նեղութեանց. որք արդարեւ
 են անկարգ. զի մինչ առ յաւիտենական բարին վախ-
 ճանաբար յարին՝ ամենեւին՝ ունի զքան կարգին, ի
 հարկէ ներհակն նորին՝ ունի զբոլոր բան անկար-
 գութեան :

1-2-խ 78
 պ. 1.

Բան : Երկիւղ ծառայական : ԼՃ. Կրկին կերպիւ
 իմանի ծառայական երկիւղն. մինն է՝ որով եր-
 կնի որ միայն ի պատժոյն, և վասն այն յետս
 կեայ ի մեղաց, քայց կամք մեղանդելոյն ի նիւթս. և
 սա կոչի ծառայականութի երկիւղի, և է մեղք :
 Իսկ միւսն է՝ որով երկնի որ ի պատժոյն և զսպէ
 զինքն ի մեղաց նաեւ սրտիւ. և կամ ընտրէ առնել
 զբարին, ոչ միայն վասն երկիւղի պատժոյն, այլ նաեւ
 կա.

ԳԼԻԳ.

Ա

կամաւ . և առ կոչի յատկապէս երկիւղ ծառայական և չէ մեղք . ուստի 'ի բնաբանոջ եղեալ երկիւղն ծառայական խնանի ըստ առաջնոյ կերպի . վասն որոյ և համադասի 'ի թիւն մեղաց :

Բ

Բան : Ստերքմուծի : ԼԾ. Ճանկր' զի ստերքմ' նուծիւնն նորում' նիւծոյ և իցէ, որպիսի կերպիւ և իննիցի, այսինքն, թէ հարկադրեցեալ յուսեքէ, թէ 'ի մէջ խաղի և ծաղեր, թէ վասն սովորութեան բերանոյն, թէ վասն օգտութեան և բարերարելոյ ուրուք, և թէ վասն այլոց ո' և իցէ պատճառաց, միշտ է մեղք մահուլափ . զի անկարելի իմնէ' կոչել զամբ և կամ զամբայնան վկայ ստուծեան, և այն դոլ առանց մահուլափ մեղաց :

Գ

Բան : Երգել զերգս աշխարհականս : ԼԾ. Զաշխարհական երգն 'ի մէջ ամայնոց երգոց խառնել և երգելն' համադասի աստէն 'ի թիւն մեղաց, և է մեղք . և այն թէ ինքն չարագրեցեալ աշխարհական երգն, խառն ընդ ամայնոյն երգիցի, և թէ միայն այնու ձայնիւ և դունով' երգն ամային երգիցի : Եւ պատճառն է' զի միտք ըսողացն 'ի ձեռն այնպիսեաց եղանակոց և գունոց' ոչ չարժի առ ամայինս, այլ առ յունայնութիս աշխարհի . և չարագրոյն աննից է' յորժամ գարշելի և ցոխաբան երգոց գոյնքն, և եղանակքն առնանիցին' որք առաւել ընդդէմ' այ, 'ի ցանկութի' ակստից չարժեն, քան առ ջերմեռանդութիս հոգևորս և ամայինս .

Դ

Բան : 'Ի յերգս ամայինս առաւել ջանալ պաճուճել զձայնս : ԼԾ. Որք երգեն զերգս ամայինս, առաւել և պարաւանդին ուղղել զմիտս իւրեանց առ ամ մտադրաբար երգելով, քան զձայնն զարդարելով : Իսկ այնք որք զմիտս մարդկանց դիտելով բոլորովն տան զմիտս իւրեանց առ 'ի պաճուճանս ձայնից, և հունոց, վասն հաճոյանալոյ ըսողաց, այսպիսիքն զմասն իւրեանց ընդ կեղծաւորս եղեալք են . վասն որոյ և համադասին 'ի թիւն մեղանշողաց :

Ե

Բան : Չեռնամուխ լինիլ 'ի դործս' առ որ չէ բաւական : ԼԾ. Որք զպաշտօն ինչ ջանան առնել' առ որ ոչ են բաւական, մեղանշեն . և մանաւանդ է մեծագոյն և մահուլափ մեղք' յորժամ պաշտօնն պատկանի կամ առ 'ի դոլ ուսուցիչ ամբաբանութե' կամ լինիլ հոգաբարձու հոգեաց, այս է դոլ հովիւ հօտի . կամ դոլ խոստովանահայր . և այլք' անմեք' կամ լինիլ բժիշկ

և օշարար՝ այսինքն երակ հատանող, և այլք նմանք . քանզի որք չեն բաւականք, և միւսն զինքեանս առ յայսպիսի պաշտօնս, դրէ թէ ներադնեն զինքեանս նիմք կացութե, որով բազմիցս զոգրիս մարդկանց, և կամ զմարմնս, խողխողիցեն . քան զոր ոչ ինչ չաբազոյն գոլ կարէ:

Բան: Յառաջել քան զփորձութի: 18. Որ գրգռէ զինքն ի մեղք՝ այն յառաջէ քան զփորձութիս, որ է յոյժ գարշելի: Վս՝ զի եթէ պարաւանդիմք ամրազուցանել զմեզ, նաև յայնժամ, երբ փորձութիւնն ինքեամբ հասցէ, ապա որքան պարաւանդիմք ոչ գրգռել զմեզ, և զայս իմա վասն գրգռման թէ առ ցանկութի, թէ առ նախանձ, թէ առ ատելութի, և թէ առ այլս մեղս:

Բան: Մեղք զանցառութեան: 19. Ի մեջ մեղաց՝ որք ասին մեղք զանցառութե, դոն բազումք որք մահուչափք են. որ դոն, ոչ սիրելն զձեռ, ոչ պատուել զծնողն, և այլք նմանք. ուստի զգուշանալի է, զի իմարութի մարդկանց ոչ կամի ճանաչել թէ զանցառութե մեղքն՝ իցեն մեղք, և բազմիցս մահուցուք. այլ կարծեն թէ միայն այնք գործք իցեն մեղք՝ որք արարողապէս լինին գործեցեալք: զորօրինակ՝ վարկեն թէ յայնժամ միայն մեղանշեմք, յորժամ զեղբայր մեր ատեմք, և կամ վնասեմք. բայց երբ ոչ ատիցեմք, ասկայն զանցառնիցեմք սիրել, և զպակասութի նորին ընդ, ոչ մեղանշեմք, որ է սուտ. զի ունիմք զստորասական հրտման, առ ի սիրել: և զբացասական առ ի ոչ ատել, ուստի ոչ ատելոյն, զմի հրամանն միայն ընդմեջ. բայց թէ՛ նաև սիրիցեմք, ապա և զմիւսն ընդմեջ: Ըստ այսմ իմա և ի վերայ այլոց բնաւից. և զգուշացիր. զի ՏԹ մեր՝ ոչ միայն զայդին որ եքեր զփուշ փոխանակ խաղողոյ՝ պատժեացայլ նաև զճառն՝ որ ոչ տայր զպտուղ բարի՝ հատանել և ի հուր արկանել վճռեաց. ուրեմն, ոչ միայն խորթլ ի չարէն, այլ նաև զբարին առնել պարաւանդիմք. զի ոչ որ միայն խոտորի ի չարէն՝ կեցցէ, այլ որ՝ նաև զբարին գործէ՝ կեցցէ:

Վախճան լուծմանց՝ երրորդի գրգոյն:

Լ ՈՒ Ն Մ ՈՒ Կ Կ

Զորորդի գրգոյն:

Որ յաղաչս մարդեղութեն քի:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ:

ՉԼԷ

Ա

3.10.30.

պ.3.



Ան: Խօսէր ընդ նմա հոգևոր զրուցատրութիւն: ԼՃ. Այնպիսի հոգևոր, որ բացատրէր զմարմնաւոր. զի երանութիւն կոյսն զմարմնաւոր խօսակցութիւն հրեշտակին, հասկացաւ ի ձեռն լուսաւորութե իմացականին, մինչ հրեշտակն խօսէր, նաև լուսաւորելով զիմացականն:

ՉԼԷ

Ա

Բան: Բայց աղօթական, և դոհադողական բանք երկար: ԼՃ. Ուսանիլ պարտիմք ի կուռնէն. զի և մեք զժամանակաւորաց լինիցիմք յոյժ սակաւախօս. իսկ դոհադողաց և զանայնոց, այսինքն ի մեծացուցանելն զանձ, և ի դոհանայն զնմանէ՛ երկարախօս: Ոչ սողաքէն նաև բնութի ուսուցանէ, զի զըզու մեր ի բերանոջ մերում, ի վերուստ կողմէ ելծող արձակ, և ի ստորին կողմէն կցեալ. զի այնու զվերնայնոց բացարձակաբար և միշտ խօսիցիմք. իսկ զստորայնոցս սակաւ, և միայն վասն հարկաւորութեց պիտոյից:

ՉԼԷ

Ա

Բան: Քանզի լինիլ մայր այ՛ է այնքան մեծադոյն պատիւ: ԼՃ. Այնքան անհուն է արժանատկատուութիւն այս, մինչ զի ոչ կարէ սոսկ ստեղծուած որ՛ լինիլ լաւագոյն քան զկոյսն մարիամ. և պատճառն է. զի ուն՛ ոչ կարէ գոլ որ լաւագոյն քան զանձ, այսպէս և ոչ որ սոսկ ստեղծուած կարէ լաւագոյն գոլ քան զմայրն այ՛. ի միտ անձ, զի ոչ միայն ասեմք էն ոչ գոյ նմանն՛ կամ լաւագոյնն. այլ էն՛ նաև ոչ կարէ գոլ:

Բան:

Բան : Չի մարդն 'ի բնական, և 'ի դրաւորական
օրինաց յառաջագոյն նկուն լինիցի : 1Ճ. Տեսա
նելով զի ոչ արդարանայ 'ի նստին , և [Թէ ար
դարանային ոմանք՝ այն ոչ էր 'ի յօրինաց , այլ 'ի հա
ւատոցն Բի , որ դաւոցն էր . և այս յայտէ այնու , զի
արդարացեալքն 'ի յօրենս հինա՝ ոչ կարէին մտանել
յարբայութիւնն , զի տակաւին ոչ էր եկեալ Քս :
Եւ առ յոյս ասէ առաքեալն , եթէ յօրենաց անտի
իցէր արդարութի , ապա Քս զուր մեռաւ . իբրու
թէ ասիցէ , եթէ օրէնն կարիցէր արդարացուցանել ,
ոչ էր պիտոյ դաւուստ փրկին մերոյ :

ԴԼԷ.

Ա

1.2. 10.28

պ. 1.2.

Բան : Այլ ոչ կարէր խոնարհիլ մինչև 'ի չարա
բանս : 1Ճ. Այլ կարէր լինիլ իրն 'ի կողմանէ
իւրմէ , և ոչ [Թէ ամ զասն պակասութեան դո
րութեանն ոչ կարէր : Ուստի որքանիցս լինի բան
ինչ՝ որ զհակասութիւն ներփակէ , մանաւանդ ասե
լի է [Թէ անկարելի է լինիլ իրն այն , 'ի կողմանէ իւր
մէ , քան [Թէ ասել՝ ամ ոչ կարէ առնել . զասն զի ամ
'ի կողմանէ իւրոյ կարողութե , զամ կարէ . բայց հա
կասականքն 'ի կողմանէ ինքեանց՝ ոչ կարեն լինիլ :

ԴԼԷ.

Ա

1. 10.2.

պ. 4.

Բան : Ոչ ումեք վայելէր յաւէտ : 1Ճ. Թեպէտ
հօր , և կամ որդոյն սրբոյ ևս վայելէր մարմնա
նալ , զի ոչ դոյր անպատկանութի ինչ , բայց յաւէտ ,
այսինքն , առաւել որդւոյն վայելէր՝ քան հօր , և ող
ւոյն սրբոյ :

Բ

3. 10.3.

պ. 8.

Բան : Փոփոխումն ոչ լինի 'ի կողմանէ որդւոյն ,
այլ 'ի կողմանէ առեցելոյն : 1Ճ. Մինչ 'ի
ստեղծումաճս լինի միաւորութիւն երկուց , 'ի
հարկէ լինի ևս փոփոխումն երկոցունց . քանզի մինչ
ոչ են միաւորեցեալք՝ են այլք , և յետ միաւորու
թեանն այլք . և պատճառն է՝ զի ստեղծումաճս դո
ւով հունաւոր որքանիցս հանդիպիցի նմա նոր ինչ
փոփոխի այնու : Բայց ամ , որպէս անհուն է դո
րութեամբ , այսպէս և անփոփոխելի նկարեան ին
քեան . վասն որոյ 'ի միաւորութեան քանին ընդ
մարմնոյ , ոչ ինչ փոփոխութիւն եղև 'ի կողմանէ բա
նին այլ՝ այլ 'ի կողմանէ առեցեալ մարդկութեն , որ
եթէ ոչ իցէր միաւորեալ՝ էր այլ , և մինչ է միաւո
րեալ է այլ , այսինքն՝ առաւել բարեգոյն :
Իսկ բանն այլ , [Թէ մինչ ոչ էր մարմնացեալ , և [Թէ
յետ մարմնանալոյն , ամենեւին նոյն է :

ԴԼԷ.

Ա

Ուստի

3. խ. 1.
պ. 1. և
խ. 2.
պ. 6.

Ուստի յառկապէս խօսելով՝ ասի՝ Թէ բանն է առ զմարդկութի, և միաւորեաց ընդ ինքեան. իսկ մարդկութիւնն առնանեցաւ, և միաւորեցաւ ընդ բանին, որով և իմանի Թէ փոփոխումն ոչ ինչ կերպիւ լինիլ կարէ՝ ի կողմանէ որդւոյն այ, որ է առօղ. այլ ի կողմանէ մարդկութե՝ որ է առեցեալ :

ՖԼԵ

Ա

Բ ան : Քս ըստ այնմ որ մարդ՝ ոչ է անձն : ԼԾ. Մարդկութի Բի ոչ ունի զիւր յատուկ մարդկային և զստեղծեցեալ անձնականութի, այլ զածային և զանստեղծ. և այս վասն միաւորութեան ընդ բանին, վասն որոյ ի Քս, է միայն մի անձնաւորութի, և այն ամային և եթ : Ուստի մինչ հարցեալ եղև Քս ի հրէից, Թէ ով ես, պատասխանեաց, նախ զի և խօսիմն իսկ ընդ ձեզ. արդ՝ ո՞վն, ի հարցման

յոհ. 8. 25,

նշանակէ զանձն, և պատասխանին լինի առայն՝ զանձնէ. և մինչ հրէայք զանձնէ մարդկայնոյ հարցանէին, ուրեմն և Քս զանձնէ մարդկութեանն պատասխանեաց, նախ զի և խօսիմն իսկ ընդ ձեզ, բառինս, նախ, եցոյց Թէ ոչ ունի զանձն մարդկային զորմէ հարցանեն, այլ անձն մարդկութեանն է անձն ամային որ է նախ, այսինքն, սկիզբն և պատճառ ամենից. և ասելովն զի խօսիմն իսկ ընդ ձեզ, զուգանէ Թէ ըստ մարդկութեա որով խօսիմ իսկ, այսինքն, ճշմարտապէս՝ մարմնաւոր խօսակցութե՝ ընդ ձեզ, ոչ ունիմ զանձն մարդկային և սկսեցեալ, այլ զամային՝ որ է նախ, և սկիզբն ամենից :

Բ

Բ ան : Ուր և ի մեզ իսկ նիւթ ծննդեան է արիւնն : ԼԾ. Այսինքն, ի մեզ նիւթ ծննդեան է անմաքուր արիւն՝ անմաքրոյ կնոց. բայց նիւթ մարմնոյն Բի, է ամենամաքուր արիւն՝ ամենամաքրոյ կուսին :

ՖԼԵ

Ա

Բ ան : Նսեմացաւ լոյսն : ԼԾ. Բառքս այսորիք. նսեմացաւ, բաղցեաւ, մեռաւ. Թաղեցաւ, և այլք նմանք, որքան ասին զՔսէ, պարտին միշտ իմանիլ ըստ այնմ բնութե, որով կարեցի եկրել զայնս, այսինքն, ըստ մարդկութեան. բանգի եթէ ըստ ամութեանն իմանիցին այնպիսիքն, հետեւի զի կամ ստաբար ապիցին այնք զՔսէ, և կամ ամութիւն Բի ելեալ իցէ ի բանէ իւրմէ, այսինքն, ոչ իցէ ամային բնութի. բանգի ամային բնութեանն անկարեցի է նսեմանալ, բաղցնուլ, և այլք սոյնպիսիք, մինչ ոչինչ կիրք անկանիլ կարէ ի նա, վասն գոլոյն ուարդ և ամենամաքուր ներգործութի : Եւ ոչ կարէ ասիլ Թէ սքան,

քանչևեօք կրեաց ըստ անուծեն . զի ոչ առնէ ան
զսքանչելիս առ ի յեղծել զիւր ինքն , այսինքն , առնել
զի կրօղ լիցի իւրն բնուի , որ եթէ ճշմարտապէս կրի-
ցէ՝ ոչ է անայն բնութի , և եթէ առ երևոյթս միայն ,
այս ոչ է ճշմարտապէս կրել :

Ուրեմն հարկաւորապէս հետեւի , զի ան կրեալ իցե-
րստ առեցելոյ մարդկայնոյ բնութեանն , որով կիւրքն
ևս ճշմարիտք լինին , այսինքն , խաչիւն , մեռանիւն ,
և այլն , և մարդկայնոյ բնութեանն ևս՝ ոչ հակամար-
տին կիրքն , մինչէ ենթակայ կրից և զաւոյ :

Բայց զի ոչ ասեմք թէ մարդկութիւն Բի կրեաց ,
այսինքն , խաչեցաւ , մեռաւ , և այլն :

Այլ ասեմք թէ Քս ըստ մարդկութեն կրեաց . և կամ
ասեմք , ան մարմնով կրեաց : զի մինչ մարդկութիւնն
Բի ոչ ենթակայցաւ մարդկային անձամբ , այլ
անձայնով , հարկաւոր է զի ենթ անողան անձին առա-
տրիցի գործն և կիրքն . բայց այնպէս՝ զի նոյն անձն
մինչ ունի զերկուս բնութիւնս , իմանիցի ըստ այնմ
բնութե կրել որով կարէ . որպէս երբ ասի՝ տէտրոսն
մեռաւ , պարտի իմանիլ թէ մարմնով մեռաւ , զի այ-
նու միայն կարէ մեռանիլ՝ մինչ հոգին է անմահ :

Եւ հակադարձաբար , մինչ ասէ Քս զինքենէ՝ թէ
յառաջքան զինիւն աբրահամու եմ ես , պարտի իմա-
նիլ ըստ անայնոյ բնութեան , որովհետեւ մարմինն
Բի ունի զսկիզբն ի կուսէն . ըստ այսմ օրինակի իմա
և զայլս նմանս :

Բան : Իսկ առ ի կատարումն ընդհանրից , վայե-
լէր անէլ ի ներքս և զտրորդ եղանակն :

Ը. Բարեք ասէ առ ի կատարումն ընդհա-
րին . որ ոչ միայն վասն ընդհանրի բաժանմանն իմա-
նի , այլ նաև վասն ընդհանրին՝ որ է մարդն . քանզի
մարդն գոյով փոքրիկ աշխարհ , է իբրու զընդհանուր
ինչ , ի կատարումն որոյ ներածեցեալ եղև չորրորդ
եղանակս , այսինքն զի լինիցի ծնունդ ի կողմէ՝ առանց
առն , որով և եթ համալցեալ կատարիցի փրկութիւն
մարդոյն :

Բան : Բնաւորեալ գործին պատրաստեաց զնութն
Ը. Ատուտ իմանի թէ ամենօրհնեցեալ կոյսն՝
է ճշմարիտ մայր այ , քանզի որպէս ի մեզ մայրն որ
միայն զնութ ապտրաստէ , և զհոգի զաւակին ոչ
տայ յինքենէ , ասի ճշմարիտ մայր մարդոյ , զի զանձն
մարդոյ ծնանի , այսպէս և ամենեւրանեցեալ կոյսն , որ
միայն

ԳԼԴ.

Ա

Բ

միայն ղնութ պատրաստեաց , և զամուծին խառնէ ինքենէ ոչ ետ՝ ասի Ճմարտ մայր այ . զի զանձնամօսին ծնառ . ապա թէ ոչ ուրեմն և մարքն որք ՚ի մեզ , ոչ կարէին տակ մարք մարդկանց , այլ անասնոց . զի զմարդն ըստ հոգւոյն ոչ յղանան և ծնանին , այլ ըստ մարմնոյ : Վասն որոյ՝ կարկեցցին բերանք նեստորականաց՝ որք վասն այսմ , զի կոյսն զամուծի ոչ յղացաւ , ուրանան ղնա գոլ մայր այ . որոց ասելի է , թէ ուրեմն և մարք ձերք ոչ են մարք բանականաց , զի զբանականութի ձեր ոչ յղացան , այլ մարք անասնոց , որպէս իսկ էքք անասուն այդու բանին . ուստի առաջարկութի ձեր միշտ է սուտ . բայց հեռուեալն բարւոք վայելէ ձեզ . զի որպէս զկոյսն վասն ոչ յղանալոյն զամուծին՝ դաւանիք մարդածին , այսպէս , և զմարտ ձերս՝ վասն ոչ յղանալոյն զբանականութիւն ձեր՝ ստորաւէք գոլ անասնածին , որովք եղբակացուցանիք գոլ անասունք . բայց մինչ ոչ վայելէ մեզ որդեացս եկեղեցւոյ գոլ անասուն , դաւանիմք զկոյսն մարիամ գոլ ամածին . թէպէտ ոչ յղացաւ զամուծին :

ԳԼԺԱ.

Ա

Բան : Տռեալ ձրի , և ոչ ըստ մերոյ արժանաւորութե : Ը . Ասինքն , մերս արդիւն , և կամ արժանաւորութի , ոչ պատճառեաց զգալուստն Բի . քանզի մեք ղներհակն արդեանց ունեաք , այս ինքն զմեզ , և զանօրէնութիս . որք մանաւանդ էին խախանիք դարտեան նորին՝ և շնորհաց : Աստուատ կարեմք մտածել զէրկուս . նախ զայս , զի թէ նա անկարօտ գոյով կատարելութեան , սիրեաց զթշնամիս իւր , նաև մինչ էին ՚ի թշնամութե , ապա որքան տարտ իցէ մեզ՝ որք եմք կարօտք կատարելութե , սիրել զթշնամիս մեր՝ նաև մինչ են ՚ի թշնամութեան : Երկրորդ՝ մտածել թէ որքան բարեգութիցէ ամ . քանզի՝ թէ մինչ դեռ փախչեաք ՚ի նմանէ՝ այսքան սիրեաց զմեզ , ապա որքան սիրեսցէ , մինչ հեռուեալ ինքեան տեսցէ զմեզ :

ԳԼԺԲ.

Ա

Բան : Զայնժամ թաղեցեալ : Ը . Արարողութիք հնոյ օրինին մեռեալք են ՚ի կողմանէ մերմէ այնու , զի ոչ պարտիմք վարիլ արարողութիք հնոյ օրինին : Մեռեալք են և ՚ի կողմանէ ինքեանց այնու , զի զոչ ինչ օգտութի առ բերեն : Սուտի առ առաքեալն . խախանեալք էք ՚ի Բսէ , որք կամիք օրինեք արդարանալ , այս է , արարողութիք հնոյ օրինին :

ԵԷ

Եւ պատճառն է, զի որպէս ընդ ծագիլ լուսոյ արեւ
գահան, եթէ որոնիցի նաև ճշադ առ ի տեսանել, և
ուրանայ զդոյս արեգական, այսպէս ևս՝ մինչ ունիլ
մէք զճմարիտ գտուն այ պատարադ և որջակէղ ի վե-
բայ սրբոյ սեղանոյ, եթէ որոնիցեմք զենուլ զանա-
սունս, առ ի հաշտութի ընդ այ, այսէ ուրանալ
զգորութի պատարադին, որ է բաւական հաշտարար
ընծայ այ : Ըստ այսմ իմա և զայլոց արարողութեց
հնոյ օրինին, որոց հետեօղքն ի Բնէ խաշանին :

Բան : Թէպէտ բառնայր զսկզբնական մեղս : ԼԾ.
Երեք կերպիւն կարէ մտածիլ զԹխատութե-
նէն որ բառնայր զսկզբնական մեղս :

Առաջինն է՝ բառնալ ըստ գործոյ գործեցելոյ, որպիս
է մերս մկրտութի. և ըստ այսմ կերպի ոչ բառնայր-
ուստի և գտտապարտեցեալէ այսպիսի կարծիքն ի
սրբոց հարց, և ի սիւննոդոսաց : Երկրորդն է՝ զորս
ասեն ոմանք թէ վարդապետք, թէ բառնայր միայն
ըստ յատկի գործոյ գործողին, եթէ Թխատեցեալն
իցէր չափահասակ. իսկ եթէ իցէր երեսայ, բառնայր
հաւատով և ջերմեռանդութե հնոյ եկեղեցւոյն՝ որ
լցուցանէր զպակասութի յատկից գործոց երեսայիցն,
և այս ի ձեռն հաւատոց ապագայ Բի :

Երրորդն է՝ զորս ասեն այլք վարդապետք, թէ բառ-
նայր Թխատութին զմեղս սկզբնական այսու, զի երբ
առ դնիցիւք ինքն, առժամայն և անձային զօրութին
ներկայանալովն նորին՝ բառնայր զսկզբնական մեղս :
Ուստի յառաջնոյ կարծեացն խորշելէ՝ զի է ընդդէմ
սրբոց հարցն. իսկ յետին երկուց կարծեաց՝ որում և
իցէ հետևին չէ մնասակար : Թէպէտ երկրորդ-
կարծիքն իցէ առաւել բարեգոյն, այսինքն ասել թէ
բառնայր ըստ գործոյ գործողին. բայց ի յերեսայիցն
հաւատով եկեղեցւոյն :

Բան : Ետ ջուրցն զօրութի վերստին ծննդեան : ԴԼ. ԺԴ.
ԼԾ. Ամենից ջուրց որք են բնական ջուրքեա ԴԼ. ԺԴ.
զօրութի մարբերոյ դժոգիս, կոչմամբ անոռան
ամենաարեղ երրորդութե : Ասացի բնական ջուրք,
զի արհեստիւ չինեցեալքն, և կամ յաւելորդաց կենդա-
նեաց յառաջացեալ ջուրքն՝ ոչ կարեն դու նիւթ մկր-
տութե. որ դոն, վարդեջուրն արտասուքն՝ և այլք
ճմանք սոցին. զի մին է արհեստական. և միւսն յաւե-
լոճաճ կենդանոյ : Իսկ բնական ջուրք են՝ ջուրք աղ-
բերաց, դետոց, անձրեաց, ջերմկաց, և ծովու :

ԳԼԺԴ.

Ա

3. խ. 6.
պ. 6.

3. խ. 4.
պ. 1. 9.
խ. 7. պ.
13.

Բ

2. խ. 7.
պ. 12.

ան : Շնորհ առանձնական անձին ճահաւորեաց
զմարդկային բնութի Բի : ԼՃ. Եղական շնորհս
այս՝ որ կոչի ստուէն շնորհ առանձնական ան-
ձին , ոչ պարտի իմանիլ թէ ունեաց զայն մարդկու-
թիւն Բի , նախքան զմիաւորիլն ընդ բանին , և կամ
'ի միաւորիլն եղև միջական , այլ իմանիլ պարտի ըստ
այսմ , իբրու թէ շնորհս այն՝ եղև որպէս հետևող
գործ՝ միաւորութե , ըստ այնմ օրինակի , որպէս ճա-
ռագայթն հետևի արեգական . իսկ զի ասի , թէ շնորհս
այն ճահաւորեաց զմարդկային բնութի Բի , առ-
միաւորութի բանին , և այս ոչ կարէ գոյ նախ քան
զմիաւորումն , որպէս ասացաք , աւտի թէ որպէս
պարտի իմանիլ ճահաւորելն՝ գիտելի է , զի որպէս
զուսեբէ՛ որ ներգործութե է հարս թաղաւորի , և
ներգործութեամբ զարդարեցեալ՝ կարեմբ ասել թէ
զարդք այդոքիկ՝ առնեն զդա արժանապէս հարս թա-
ղաւորի , և հետևաբար կոչեմք զայն զարդս՝ ճահա-
ւորիչ առ 'ի գոյ հարս թաղաւորի . (որով ոչ իմանի
թէ նախ քան զգոյն հարս թաղաւորի , ունեաց զայն ,
այլ վասն գոյնն հարս թաղաւորի հետևեցաւ այն)
այսպէս և զուսակական շնորհն Բի , ասեմք ճահաւո-
րիչ առ միացումն , թէպէտ և իցէ հետևող գործ
միաւորութե , և ոչ իցէ նախ քան զմիացումն :

Բ ան : Ոչ թէ չափով տայ , զի բոլորովին է տունեալ :
ԼՃ. Այնպէս ետ՝ որպէս էր պատկան միաձնի
որ 'ի հօրէ : Ուստի պայծառադունեղ արեգակն 'ի
վարդապետան , սԲ թամայ , խօսելով տեսակաբար զայս-
մանէ շնորհէ , առէ , ամային զօրութիւն թէպէտ կա-
րիցէ առնել զինն շնորհ մեծադոյն քան զուսական
շնորհն Բի , բայց ոչ կարէ շարակարգել զայն՝ առ-
առաւել մեծադոյն ինչ , քան զմիաւորումն անձնա-
կան , որ ընդ այ : Ուստի 'ի բանէ յայտմանէ հետևի ,
թէ շնորհն Բի ի՛նչիք կերպիւն է հուսաւոր , զի ամ
կարէ առնել զշնորհս մեծադոյնմ քան զայն . և ի՛նչք
կերպիւն անհուն . զի ոչ կարէ ամ շարակարգել զայլ
ինն շնորհ՝ առ յայլ ինն լաւադոյն և մեծադոյն . քան
զի վախճան շնորհաց է միացումն բանականի՝ ստեղծ-
ւածոյ առ ամ . արդ՝ ոչ կարէ ստեղծուածն միանալ
ընդ այ անդր քան զանձնաւորական միացումն , ուրեմն
մինչ շնորհն Բի , շարակարգեցաւ առ անձնաւոր
միացումն ընդ այ , 'ի հարկէ հետևի , զի ոչ կարիցէ
գոյ այլ շնորհ ինչ՝ որ անդրքան զայն շարակարգիցէ

առ

առ յայլ լաճադոյն ինչ: Արդ՝ որպէս ասացաւ շնորհն
 Բի դոլ անհուն՝ բանիւ վախճանին , նոյնպէս նաև
 կարէ ասիլ դոլ անհուն բանիւ գործոյն . քանզի նոյն
 շնորհն Բի , ըստ որում առատանայ 'ի յանդամն իւր ,
 և կոչի շնորհ գլխոյն՝ կարէ գործել զանհունս . այս
 ինքն , արդարացուցանել զանհուն աշխարհս՝ թէ
 իցէին : Քանզի Քն ասի լի շնորհօք , ոչ իբրև զայլս
 սքս , այլ իբրև զմիածնի , և այս այնպէս ըստ որում
 լիութեն ցուցանէ զոչ երբեք պակասումն 'ի յարգա-
 լացուցանելոյ զայլս . յորոյ լիութենէն մեք ամենեքին
 առաք շնորհս . և թէ իցէին անհուն մարդիկք ,
 կարէին առնուլ և նոքա ամենեքեան : Եւ որքան առ
 այս՝ ասի թէ ամ ոչ ետ նմա չափով . իբրու թէ , ոչ
 ետ այնպէս՝ զի միայն զայսքանս անձինս կարիցէ ար-
 դարացուցանել , այլ այնպէս՝ զի որքանք և իցեն կա-
 րիցէ , նաև թէ իցէին անհունք : Յասացելոցս հաւա-
 բեան . զի շնորհն ունակական որ է 'ի Քն , թէպէտ
 իցէ մի ըստ էութեն , բայց զանազանի ըստ բանին .
 և կոչի շնորհ եղական , կամ առանձնական անձին ,
 ըստ որում է միայն 'ի Քն : Կոչի շնորհ միաւորութե ,
 ըստ վախճանին , այսինքն՝ ըստ որում ճահաւորէ
 զմարդկութիւն առ միացումն բանին : Եւ կոչի շնորհ
 դիւոյ , ըստ ուրում առատանայ 'ի յանդամն իւր :
 Եւ այսպէս՝ նոյն մի շնորհն ըստ էութե , բանիւ էա-
 կութե որ ըստ ինքեան , է հոնաւորեալ . իսկ բա-
 նիւ վախճանին , և գործոյն որ է ըստ իրիք , է ան-
 հուն :

յօհ. 1.

յօհ. 11.

3 խ. 7.
 պ. 10.
 11. 12.

Բան : Ճանաչումն զգայական , որ է 'ի կողմանէ
 մարմնոյն : Լծ. Այսինքն , ճանաչումն զգայ-
 կան է սկզբնաբար 'ի մարմնոյն . զի ամ փորձե-
 լախն , կամ ստացական ճանաչումնք , ծագին 'ի զգայ-
 ութեց : Բայց այսու ասութիւն , թէ այսպիսի ճանա-
 չումն է 'ի կողմանէ մարմնոյն , ոչ հետեւի թէ ոչ իցէ
 'ի հոգւոյն Բի , քանզի ամ ստացեալ ճանաչումնք
 ձեմարտապէս գոն 'ի հոգւոյն Բի :

Դ. ԺԵ.

Ա
 1 խ. 9.
 պ. 4.

Բան : Այլ ոչ ունելի զճանաչումն ստացական ու-
 նակութիւն : Լծ. Այսինքն , որպէս որ 'ի ձեռն
 խրատու ուրուք ստանայ զգիտութի , կոչի ունող զձա-
 նաչումն ստացական ունակութիւն , այսպէս և որ 'ի
 ձեռն յատկի գտման իւրոյ 'ի զգայեաց առարկայից՝
 ստանայ զգիտութի , կոչի ունող զճանաչումն ստացա-
 կան ունակութիւն : Արդ՝ Քն ըստ առաջնոյ կերպին՝

Բ

3.խ.12.
պ.3.4.

որպէս և սակ բնաբանն , ոչ ունէր զճանաչումն ստա-
ցական ունակութե . զի ոչ ուսաւ յուսմքէ , ոչ իմար-
դոյ , և ոչ ի հրէշտակէ . իսկ ըստ երկրորդի կերպին՝
ունէր քս զճանաչումն ստացական ունակութե . զի
ուսաւ ի զգալեաց , ի ձեռն յատկի դաման իւրոյ :

Գ

Բան : Թէպէտ գիտէ զամ զոր գիտէ ամ : Լծ.
Գիտութե տեսութե , գիտէ հոգին Բի զայն
ամ , զոր գիտէ ամ : Եւ աստ գիտելէ , զի հոգին
Բի ունի զգիտութի բնական , զոր ստացաւ ի զգա-
լեաց աւարկայից . և ունի զգիտութի պարզեաց , որ
ներհեղաւ ի հոգին Բի յոյժ առատապէս քան զամ
սքս . բայց այսոքիւք գիտութեք ոչ իմանի գիտել
զամ զոր գիտէ ամ : Այլ բնականաւ գիտել զհա-
մայնս որք վերաբերին առ բնականն . և հեղականաւ
գիտել զայնս բնուս , որք վերաբերին առ հեղականն .
բայց զի հոգին Բի ունի և զերանական գիտութի ,
որ է ի տեսութե բանին . և այսպիսի երանական գի-
տութիս է եւակի , մին է՝ որ գիտութի տեսութեան
ասի . և այսու գիտութե ճանաչին ամ գոյօղք , այս
ինքն , որք գոն ներգործութե , և կամ ելոցք են ներ-
գործութե : Եւ միւսն է՝ որ գիտութի պարզի իմա-
ցութե ասի , նկատմամբ ստեղծումաց , և այսու գի-
տութե ճանաչին կարելիքն՝ որք Թէպէտ ոչ ելանե-
լոցք են ի ներգործութե , բայց ներգիտին ի կարող-
ղութեան ստեղծումաց : Իսկ այլ միւսն է՝ որ գիտութի
պարզի իմացութե ասի , նկատմամբ առ ստեղ-
ծողն . և այսու գիտութե ճանաչին կարելիքն որք ոչ
են ելանելոցք ի ներգործութե . բայց ներգիտին ի
կարողութեան ստեղծողին այ : Արդ՝ առաջնով և
երկրորդիւ երանական գիտութե՝ն՝ հոգին Բի գիտէ
զամ զոր գիտէ ամ . բայց երրորդին ոչ :

Տուցանի . զի առաջնով երանական գիտութե՝ն՝ որ է
գիտութի տեսութեան , եթէ ոչ ճանաչիցէր հոգին
Բի զհամայնս գոյօղս որք են , և կամ ելոցք են , երա-
նութի նորին ոչ էր կատարեալ . և պատճառն է՝ զի
Թէ երանեցեալ զք ոչ ճանաչիցէր ի բանի՝ զայնս ամե-
նայնս որք վերաբերեցին առ որպիսութի իւր , ոչ էր
երանութի նորին կատարեալ : Արդ՝ Թէպէտ առ որ-
պիսութի ուրուք սրբոյ ոչ վերաբերիցին համայնք
գոյօղք , բայց առ որպիսութին Բի վերաբերին հա-
մայնք՝ որք են , և կամ ելոցք են ներգործութեամբ ,
և ամենայնք խոխմունք և կամեցողութիւ նոցին , որք
եղեն :

եղեն՝ և կամ երոջ են . բանդի նաէ կացուցեալ դա-
տաւոր համայնից . և նմա ծուներ կրկնի յամ երկեա-
ւորաց և երկրաւորաց , ուրեմն 'ի հարկէ հետեւի՝ զի
գիտիցէ՝ Քս զայնս համայնա՝ որք են և երոջք են ,
որով կատարեալ ասիցի երանութի իւր . ուստի ասէ
յօհան , նա գիտէր թէ՛ զինչ իցէր ընմարդում , որ ոչ

յօհ. 5.

խմանի միայն ըստ այնմ որ ամ , այլ նաև ըստ այնմ
որ մարգ , մինչ որդի մարդոյ է որ դատէ :
Եւ գիտութիս այս՝ որ կոչի գիտութի տեսութեան՝
ըստ սրբոյն թօմայի , 'ի յամ է անհուն . վասն զի մինչ
բնական ատեղծուման տեւէ 'ի յաւիտեան , խորհուրդք
նորին և մտածմունք կարեն բազմապատկիլ 'ի յան-
հունս : Եւ մինչ 'ի յամ իցէ անհուն , հետեւի զի և 'ի
հոգին Քի գիտութիս այս իցէ անհուն , մինչ այսու

1. խ. 14.
պ. 12.

գիտութի գիտէ զամ , զոր գիտէ ամ :
Յասացելոցս երևի , թէ՛ նաև երկրորդ երանական
գիտութին Քի , ըստ վերոյսացեալ եղանակին է
անհուն . և պատճառն է . զի վերաբերի առ Քս նաև
այս , որպէս զի գիտութի պարզի իմացման , գիտիցէ
զհամայնս կարելիս , այսինքն , զմտածմունս , և զկամեցո-
ղութիս , և զայլս իրս ներփակեցեալս 'ի կարողութեան
ատեղծուման որք են անհունք վասն զի որպէս ասա-
ցաւ , է դատաւոր նոցին , և գլուխ : Աստի նաև ըստ
այնմ գիտութեան՝ գիտէ զամ զոր գիտէ ամ . բայց
գիտութիքս այսոքիկ 'ի յամ՝ են անհունք բանիւ էակի ,
և բանիւ գիտութեան . զի ամ ինքեամբ տեսանէ .
իսկ 'ի հոգին Քի են անհունք միայն բանիւ գիտութի ,
և ոչ բանիւ էակին . զի ինքեամբ ոչ տեսանէ :

Եւ որքան առ յայս՝ իմանի ասացեալն 'ի բնաբանոյթի
գիտութին Քի ոչ է ամենազօծիտ ուղ զատուածոյն :
Իայց երրորդ երանական գիտութին Քի է հունա-
ւոր . ոչ միայն բանիւ էակին , այլ և բանիւ գիտու-
թեան . զի գիտութի պարզի իմացութե , հոգին Քի
ոչ գիտէ զհամայնս կարելիս որք ներփակին 'ի կարո-
ղութեան այ . զի այս է յասուկ ան , և ոչ վերաբերի
առ որովորութի Քի ըստ այնմ որ մարգ , մինչ այս
պիսի գիտութիս է ըմբռնել զեութի ամային . ուստի
սրբան առ այս՝ ոչ իմանի , ասացեալն 'ի բնաբանոյթի . թէ
գիտէ զամ զոր գիտէ ամ : Եւ զայսմանէ տես 'ի վեր ,
'ի յառաջին գիրս լուծմանց . 'ի 21 գլխոյն :

3. խ. 10.
պ. 2. 3.

ան : Որ ոչ միայն մարդ էր՝ այլ և ան : ԼԾ.
ԴԼ. ԴԴ. **Ր** Այսինքն, արդիւնաւորիւր Քս իբրև զմարդ .
 և տայր զգորութի իւրոյ մարդկայնոյ դործողութեանց որպէս զան . որով մարդկային դործողութիք իւր անհնապէս արդիւնաւորեւին : Քանզի դործողութիք, և կրողութիւնք մարդկութեանն Քի , էին դործողութիք և կրողութիւք անձին՝ որ էր ճշմարիտ ան : 3. խ. 19. պ. 1. 3.

ան : Ի Քս կրկին էին կամք : ԼԾ. Մինչ ՚ի Քս
ԴԼ. ԴԵ. **Ր** են կրկին իմացութիք, այս է, անձային՝ որ է անհոռն , և մարդկային որ է հոռնաւոր , հարկէ՝
 և զինկցին ևս երկու կամք , այս է՝ անձային , և մարդկային . բայց ՚ի միջ երկուց կամացս՝ ոչ ինչ ներհակութիք կամեցմանց եղև , այլ միշտ մարդկային կամս հետեւիւր անձայնոյն :

ան : Զայն որ նմա վերաբերիւր առնուլ : ԼԾ.
ԴԼ. ԴԶ. **Ր** Է առ զայն անձ՝ որք էին հետեւեալք ՚ի հասարակական մեղաց բնութեան՝ և ոչ էին հակառակք գիտութե և շնորհացն Քի , որդոն , քաղցնուլ , ծարաւիլ՝ և այլք նմանք՝ որք են հետեւեալք ՚ի մեղացն ազամայ , և չեն ներհակք գիտութեան , և կամ շնորհաց : Ուրեմն զոր ինչ էառ Քս , վասն փրկութեան մերոյ էառ . և զորինչ ոչ էառ՝ վասն փրկութեան մերոյ ոչ էառ , ըստ որոյ կերպի և դու՝ զորինչ առնես՝ վասն սիրոյն Քի արասցես . և զորինչ դանցառնիրցես՝ ՚ի փառս Քի դոյ տեսցես :

ան : Իյաչան զբղնուին արտասունաց : ԼԾ. Քս
ԴԼ. ԴԸ. **Ր** ՚ի չարչարիլն իւր արտասունաց , վասն երկուց , այս է՝ վասն կսկծալի չարչարանացն որով յոյժ ցաւիւր . և վասն տեսանելոյն զցանադնութի մօրն իւրոյ՝ զոր ՚ի վերքան զամ ստեղծունւածս քաղցրաբար սիրէր : 3. խ. 46. պ. 5. 6.

ան : Ոչ արդարութի իմն իրաւ համարէր՝ զինանեղն սլառժեսցի : ԼԾ. Այսինքն , եթէ բռնաբար լիցի պտոժուին , ոչ ոք արդարութի համարի իրաւ . բայց զի Քս կամաւ իւրով չարչարեցաւ վասն փրկութե մերոյ , որով արդարութին այլ իրաւ համարեցաւ : Ատուտ կարեւր իմանալ թէ նաև մեք ոչ վասն հարկին միայն , այլ նաև յատկաւ կամաւ պարտիմք ընդդրկել զն Քի զչարչարանս , և զցաւս :

Բան : Վասն անիրաւ պատճառաց : ԼՃ. Պատմ. ԴԼ. Դաւ. Զառք ի կողմանէ հրէից, որոց վասն չարչարիցին զԲս, էին անիրաւք . բայց պատճառքն որք ի կողմանէ հօր այ, որոյ վասն թող ետ չարչաւ ընդ ոչ էին անիրաւք . այլ ճշմարիտք և իրաւք : 3. խ. 47. պ. 2. 3. 6.

Բան : Առճակեաց Բս դամենեանն, որք էին ընդունակք արդեանց իւրոց : Արդ ի բաւնէ յայտմանէ հետեւի՝ թէ քս մինչ աղատեաց զԲս հարսն ի լիմնօսէն, աղատեաց և զամ հոգիս, որք էին ի բաւարանի . քանզի բնաւքն էին ընդունակք արդեանցն քի . բայց զխտելիէ, զի ոմանք վարդապետք նկատեալ զողորմութիւն այ, ասեն թէ յայն ժամ ամենեքեան որք էին ի բաւարանի՝ զերծան, զի էր օր ողորմութեան . իսկ ոմանք՝ նկատմամբ արդարութեանն այ, ասեն թէ միայն զերծան այնք՝ որք արդէն մաքրեցեալք էին :

Բան : Ի տեղիս այս էջ քս : ԼՃ. Բս իրականաբար էջ հոգւոյն ի լիմնօս հարցն սրբոյ . իսկ ի յայլս անդիս՝ էջ ըստ դործոյն . այսինքն, ըստ դործոյ յանդիմանելոյն, և այս նկատմամբ դատաւարտեցելոց : Ըստ դործոյ միսլութարութեան, և այս նկատմամբ մանկանց մեռելոց ի սկզբնական միջոց : Ըստ դործոյ յայտնութե միաւացն, և այս նկատմամբ այնց՝ որք էին ի բաւարանի :

Բան : Թէպէտ հոգին և մարմինն, միաւորեալք էին ընդ բանին : ԼՃ. Չգուշուծք զխտելիէ՝ թէ զիարդ պարտին իմանիլ ասացեալքն ի սրբոց հարց, թէ ամուսնին քի ոչ է անժատեցեալ ի մարդկութենէն, ի յերիս աւուրս մահունէն քի . քանզի թէպէտ հոգին և մարմին միաւորեալ առնեն զմարդն, և քս ի յերիս աւուրս մահունէն ոչ էր մաքր, սակայն հոգին և մարմին նաև յիրեբաց այնպիսաբար բաժանեալ մինչ զի ամուսնինն ընդ երկուցն ևս իցէ չկարէ ասիլ մարդկութիւն : Ըստ որոյ կերպի առին սք հարցն, և ասացին թէ ամուսնին ոչ երբէք բաժանեցաւ ի մարդկութենէն : որ է նման այսմ արուսթէն թէ ամուսնին ոչ բաժանեցաւ ի հոգւոյն և ի մարմնոյն քի, ի յերիս աւուրս մահունէն, նորում անժատեցեալք էին յիրեբաց հոգին և մարմին :

ԴԼԻԿ.

Ա

Բան : Նախ՝ մարիամու մաղդաղենացւոյն : ԼԺ. Աստէն գիտելի է , զի Քս վասն երկուց իրաց երևեցաւ յետ յարութեանն , այսինքն , վասն հաստատելոյ զմիտս աշակերտաց , զի մի՛ երկբայիցին զնմանէ . և վասն մխիթարութե : Արդ՝ թէպէտ քո՛ նախապէս յետ յարութեանն երևեցաւ ամենասիրելւոյ մօրն իւրոյ , վասն մխիթարելոյ զյաւազնեալ սիրտն նորին . որպէս գրէ սքն վինչէնցիոս , և սրբուհին պրիճիթա , սակայն ասի նախ երևիլ մաղդաղենացւոյն՝ նկատմամբ նոցին , որոց երևեւոցէր առ ի հաստատել զմիտս : Իսկ սք կոյսն՝ ոչ երբեք ունէր զերկբոյութի , ուստի ի սեռս նոցին ոչ կարէ հա մաթռիլ՝ որպէս զի նկատմամբ առ կոյսն՝ ասիցի՝ նախ երևիլ մաղդաղենացւոյն : Վասն որոյ վերամնայ , թէ բացարձակապէս առեալ , նախ երևեցաւ սրբազունէր մօրն իւրոյ՝ առ ի մխիթարել . և ապա երևեցաւ մաղդաղենացւոյն՝ առ ի հաստատել . և ապա այլոց . իսկ ի մէջ առաքելոց՝ նախ երևեցաւ պետրոսի՝ վասն գոյոյն գլուխ , և ապա այլոց . որպէս և գրէ պօղոս՝ թէ՛ նախ երևեցաւ պետրոսի , և ապա այլոց առաքելոց՝ ըստ գրոց. այսէ՛ վասն համանշանելոյն սրբոց գրոց՝ զնա գլուխ :

Բ

Բան : Զարեաւ ամբողջապէս : ԼԺ. Այսինքն՝ ունէ լով զայն ամ , որ ինչ պատկանի առ մարդկային բնութիւնն , այսինքն , զոսկերս , զարիւն , զեղնդունս , զհերս , և զայլս բնաւս որք պատկանին առ ամբողջութի ճշմարտի մարմնոյ մարդկայնոյ : Յ. խ. 54. պ. 3.

ԴԼԻԿ.

Ա

Բան : Որ յայնժամ յանձնեցաւ նոցա , այսինքն , առաքելոց : ԼԺ. Մինչ ասէ սաղմոսերգուն , թէ համբարձաւ ամ օրհնութք , և Տէր մեր ձայնիւ փողոց . քի՛ համբառնալն փողով վերաբերի առ յառաքեալս , զի ի համբառնալն ասաց նոցա , երթայք յաշխարհ ամ և բարոգէցէք . իբրու թէ սկսաւ յայնժամ հնչեցուցանել զփողսն՝ որք են առաքեալքն . որք յայնմ հետէ՝ սկսան բարոգել . և ընդ ամ երկիր եհաս բարբառ և ձայն փողոցն քի . ուստի ասէ լով թէ փողով համբարձաւ , իմանի այժ՝ թէ զքաբոցէն՝ առաքելոց յանձնելով համբարձաւ :

Բան : Այլ համբառնալն՝ յատկապէս յարմարի նմա
բայտ մարդկային բնութեն : ԼՃ. Բառս այս՝ յատ-
կաբար , դնի ի բնաբանովն առ ի տարբերութի բա-
ռիս պատճառաբար : Վանդի քս համբարձաւ բայտ
մարդկայնոյ բնութեն՝ յատկաբար , և բայտ անայնոյն՝
պատճառաբար . վասն զի բայտ անութեն քս ոչ փոխե-
ղտեղին . ուստի և յատկաբար ոչ ասի համբառնալ բայտ
անութեն՝ բայց պատճառաբար ասի , զի պատճառե-
ղհամբարձումն իւր՝ որ բայտ մարդկայնոյ բնութե , ի
ձեռն որոյ միայն փոխե զտեղին : Ուստի ասե օգոս-
տինոս , ի մէնջ յառաջացաւ՝ զի որդին այ ի խաչէն
կախեցաւ . իսկ յինքենէ և եւթ զի ի յերկինս համ-
բարձաւ :

Բան : Իսկ ստեփաննոս ետես զնա կանգնեալ : ԼՃ. **ԴԷ**
Մինչ ասի , քս նստեալ , կամ կանգնեալ , իմանի
բայտ պաշտօնին բի . քանզի պաշտօն դատաւո-
րին՝ պահանջէ զի հանդարտաբար նստեալ լիցի , առ
ի բնեւ զիրաւունս : Իսկ պաշտօն օգտակարապէս
օգնողին՝ պահանջէ զի կանգնեալ լիցի , իբրեւ պատ-
րաստ առ յօգնութի : Ուստի աւետարանիչն մարկոս ,
կամէր յուցանել զԲս յետ համբարձմանն գոլ դա-
տաւոր , որ դատելոցէ զամ մարդիք . մն որոյ գրեաց
նստաւ ընդ յաջմէ հօր : Իսկ ստեփաննոս կամէր յու-
ցանել զԲս օգնական ինքեան՝ և պատրաստ առ ի
կաղղութեւ զինքն , ուստի ասե՝ տեսանեմ զՅս զի կայ
այսինքն է կանգնեալ :

Աստուան լուծմանց չորրորդի Գրգոյն :

Լ ՈՒ Ն Մ ՈՒ Ն Վ

Հինգերորդի գրգոյն :

Որ յաղաղս սրբալարութե շնորհաց :

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ :

ԳԼԲ

Ա

1.2. խ.

109. ա. 6.

խ. 112.

ա. 3.



Ան : Եւ այս է առնել մարդոյն որ ինչէ յիւրն կողմանէ : 18. Ի ձեռն ձրիակա նի շնորհի՛ պատրաստի մարդն առնել որ ինչէ յիւրն կողմանէ , զի կարիցէ ընդունիլ զհամայարար շնորհն՝ որով արգարանայ . և ոչ ինքեամբ :

Քանզի եթէ որ առանց ձրիական շնորհի՛ կարիցէր զինքն պատրաստել բաւալինի արդարանալ , հետեւիւր՝ թէ արդարութի իւր ոչ էր յոյ , այլ յինքենէ . որ է ընդդէմ առաքելոյն որ ասէ , այլ բաւականութի մեք յոյ է :

Բ

Բան : Եւ քանզի հոգին ունի ըստ բնութեն զկարողութիւնն , և այլն . այլ ոչ ունի զճանաչումն ճշմարտութեան , և զկարգ սիրոյ՝ եթէ ոչ ի շնորհաց 18. Ունեցեալ կարողութիւնն է այս՝ զի մարդն բնականաբար յօժարի առ ի ճանաչել և սիրել զամ իմեր քան զամ , ըստ որում՝ ամ է ընդ հանրական բարի , յորմէ կախի ամենայն բնական բարի . և այսպիսի կարողութիւն թէ ի կացութեան անմեղութե բնութե , և թէ մանաւանդ ի կացութե ապականեցելոյ բնութեան , տակաւին ոչ ի գործ արկանի առանց ամայնոյ օգնականութեան : Իսկ ոչ ունել զճանաչումն ճշմարտութեան , և զկարգ սիրոյ՝ է այս . զի մարդն և 1. խ. նաև ի ձեռն դժուարութե , ոչ կարի միայն ի յիւր 12. ա. 12. ոչ բնականացն առանց շնորհի ճանաչել զամ հաւատով , և կամ սիրել հեղեալ սիրով , ըստ որում՝ ամ է այնպիսի բարի՝ որ դերբնականաւ երանութե երանացուցանէ զմեզ . այլ կարիցէ մարդն զայս՝ միայն ի յու

յուռնակական շնորհացն ալ . ուրեմն այսպիսի ճանաչումն ճշմարտութեան որ է 'ի շնորհաց , ոչ է ո՛ր իցէ ճանաչումն , այլ այն՝ որով նախարդիւնաւորեցեալ ինի վերջին վախճանն :

Բան : Շնորհ որ է նշան շնորհաց : 1Ժ. Այսպիսի սի շնորհս կոչի յոմանց շնորհ ձրի տոճեալ , և առաքեալն զայսմանէ շնորհէ ասէ : ոմանց տրեցեալ է բան գիտութե , և այլն : Իսկ որք զայսպիսի շնորհն կոչեն ձրի տոճեալ շնորհ , նոքին զշնորհն զայն որ 'ի վերոյ կոչեցաւ ձրի տոճեալ շնորհ , ասեն՝ ձրիական օգնութի :

Բան : Շնորհն զգործս մեր առնէ վարձատրելիս : 1Ժ. Նկատմամբ յաւիտենականի կենին՝ առնէ զգործս մեր վարձատրելիս : Ասի նկատմամբ յաւիտենականի կենին : զի նկատմամբ ժամանակաւորաց , նաեւ առանց շնորհաց եղեալ բարի գործքն՝ առնեն զգործս մերս վարձատրելիս , այսինքն , թէ պէտ այնպիսի գործքն՝ ոչ են օգուտք առ 'ի շահիլ զկեանս յաւիտենականս , բայց օգուտք են առ 'ի շահիլ զժամանակաւորս . նաեւ տրամադրեն ինիք կերպիւ առ շնորհ , և սովորեցուցանեն առ յայս գործս բարին : Իւրեմն 'ի շնորհաց եղեալ բարի գործքն՝ օգտեն առ կեանս յաւիտենականս . իսկ առանց շնորհաց եղեալքն՝ թէպէտ որքան առ այն ոչ օգտեն . բայց նկատմամբ ժամանակաւորաց՝ չեն անօգուտք : 1.2.խ. 114.պ. 10.

Բան : Չոր ոչ որ չարաչար կարէ առնուլ 'ի կիր : 1Ժ. Առաքինութիւնն չարաչար ոչ 'ի կիրառնանի յոմեքէ՝ ըստ բանի սկզբանց . զի առաքինութիւնքն ոչ երբեք ինին սկզբունք չարեաց , մինչ են ճշմարիտ առաքինութիւք . ուստի և ունողն ոչ կարէ չարաչար առնուլ 'ի կիր : Բայց եթէ առաքինութիւքն իմանիցին իբրեւ առարկայք խորհելոյ՝ և մտածելոյ , կարեն չարաչար 'ի կիրառնանիլ յոմեքէ : այսինքն , կամ յայնց՝ որք զճշմարտե հաւատոյ իմանան չարապէս , և զառաքինութիւ խոկան թիւրապէս , և այս առեւել զգործս առաքինութե . և կամ յայնց՝ որք մտածելով զառաքինութիւս իւրեանց՝ հպարտանան , և այսու զառաքինութիւն 'ի կիրառնուն չարապէս . բայց 'ի յայսպիսիս՝ առաքինութիւն ոչ է լբբու զսկիզբ , այլ ուն զառարկայ :

ԴԼԴ

Ա
1.2.խ.
107.պ.6

ԴԼԴ

Ա

ԴԼԵ

Ա

1.2.խ.35
պ.4

ԳԼԴ.

Ա

Յ. 2. Բս.

112. Կ. 5.

ան : Աներկևանութե : ԼԺ. Ոմանք որք են կա-
տարեցեալք ի յառաքինութե անուանին աներ-
կևանք , այս է : ոչ ունողք զկատարած թէ կարի-
ցէ հանդիպիլ նոցին կորուստ : Բայց գիտեցի է՝ զի
լատ վարկման միայն կարէ որ ասիլ աներկևան . և ոչ
ստուգութե Զորհի կամ հախասահմանութեան , և
կամ յարատեութե . զի ոչ որ կարէ դոյ ստոյգ՝ թէ
իցէ ի շնորհի , կամ թէ իցէ նախասահմանեցեալ ,
և կամ թէ յարատեիցէ ի յառաքինութե , եթէ ոչ
այն միայն , որոյ ի ձեռն յատկի յայտնութեան անձայ-
նոյ ծանուցաւ . որովս եղև առ առաքեալն պողոս :

ԳԼԵ.

Ա

ան : Զի մի՛ լինիցի տարածայնութիւն ի յերա-
նակելն : ԼԺ. Տարածայնութիւն ի բարեգոր-
ծելն , յայնժամ լինի յորժամ ոչ իցէ համեմա-
տութի միոյ բարւոյ գործոյն՝ ընդ միւսոյն . ոչ ուն-
մինչ ուն աղօթէ ջերմեռանդաբար , և հիւանդ որ
աղաղակէ զօգնութիւն ինչ ի նմանէ , եթէ աղօթօր
անկոյթ առնիցէ զծառայելն հիւանդին , զի մի՛ յետ
մնասցէ յաղօթից , լինի տարածայնութիւն ի բարե-
գործելն . զի ըստ սաստկութե սիրոյ աղօթիցն եթէ
իցէր ճշմարիտ , պիտոյ էր լինիլ համեմատաբար՝ և
սաստկութի սիրոյ բնկերին :

ԳԼԶ.

Ա

Յ. 2. Բս. 65

Կ. 4.

ան : Որ ունի զմինն ունեացի և զամենեւեան
ԼԺ. Եթէ առաքինութիւն առնանիցին ըստ կա-
տարեալ բանից իւրեանց՝ որք են ի շնորհաց ,
և արդիւնաւորեն առ կեանն յաւիտենական , է այն
պէս՝ զի որ ունիցի զմի առաքինութիւն ունեացի և
զայլ բնաւ : Բայց թէ առաքինութիւն ինչ յառ-
կաբար խօսելով ոչ իցէ կատարեալ , և կամ արդիւն
սեւոր առկեան յաւիտենական , այնպիսի առաքինու-
թիւնն կարէ ունիլ յաւանքէ՝ առանց ունեւոյ զայլ
առաքինութիւնս . որովս յայտ է ի յայնս՝ որք ունին
զճշմարիտ հաւատ՝ և զլոյս , բայց ոչ ունին զսէր .
նաև մերթ են ի մեղս մահուցաբա . և հաւատն այն
պիսեաց , կամ յոյսն՝ ոչ կարէ ասիլ թէ չէ հաւատ և
յոյս ճշմարիտ . այլ թէ է՝ ճշմարիտ , բայց յատկա-
բար խօսելով անկատար առաքինութի , և անար-
գիւնաւոյ :

Բան : Իսկ անձային առաքինութիւնն ոչ են 'ի մեղ
ստանալով : ԼՃ. Աստուծոյն անձային առաքինութիւնն
ոչ միայն իմանին երեք անձաբանական առաքինութիւնն
որք են , հաւատ , յոյս , և սէր . այլ նաեւ այնք ամե-
նայնք բարոյականք առաքինութիւնք , որք յոյս ներհե-
ղանին , որպէս խոնարհութի . համբերութիւն : և
այլք նմանք . քանզի հաւատ յոյս և սէր , ասին ան-
ային առաքինութիւնք , լիսն երկուց . նախ զի յոյս
հեղանին . երկրորդ՝ զի զամբ ունին անմիջաբար առ
արկայ ինքեանց . իսկ այլք բարոյականք առաքինու-
թիւք , ըստ որում հեղանին յոյս , ասին անձայինք . և
ըստ որում գործին բնականաւ զօրութիւն , ասին ստա-
ղականք :

Բան : Միայն ան ներգործէ 'ի մարդն զառաքի-
նութի : ԼՃ. Իմա զմիայն ներգործելն այլքրբութե
առանց մարդոյ գործողի՝ բայց ոչ առանց
մարդոյ հաւանողի . քանզի թէպէտ ան միայն է՝ որ
ներգործէ 'ի մեղ զառաքինութիւն , բայց 'ի մէջ ևս
հաւանիլ պիտոյ է՝ որով գործիցի առաքինութիւնն :
1.2. խ. 55. պ. 4.

Բան : Զգար մեղաց՝ փոխէ 'ի բարին շնորհաց : ԼՃ.
Փոխէ ըստ այնմ , ըստ որում շնորհն յաջորդէ մե-
ղաց . և ոչ թէ մեղքն փոխի 'ի շնորհս , կամ պատիժն
'ի փառս :

Բան : Անդ է աղատութի : ԼՃ. Մինչ ասի թէ
առաքինութիւնն առնէ զմարդն աղատ . և կամ
ուր շնորհ՝ անդ է աղատութիւն , իմանի միայն
աղատութի 'ի մեղաց , և աղատաբար ծառայելն այլ ,
և ոչ թէ գոլ աղատ 'ի պահելոյ պատուէր ՏՃ :
Եւ այս յայտէ 'ի ստեղծման , զի ան թէպէտ զարա-
րեալ մարդն արար սնձնիշխան և աղատ , բայց այնու
ոչ եթող զնա ինքնադուխտ , և առանց պատուիրանի .
այլ ետ նմա զպատուէր , զի իւրով աղատական կա-
մօքն հնազանդեալ պատուիրանին՝ արդարանայցէ ,
մինչ բնութիւն հնազանդին՝ ոչ է արդիւնաւոր :
Քանզի ստեղծեալն ճշմարիտ աղատութիւն՝ կայա-
նայ 'ի յաղատաբար հնազանդիլն այլ , և վերանադուխտ
իւրոյ . իսկ առտ աղատութիւնն՝ 'ի յիւրում ինքնա
զնութեան . ուստի ան որպէս 'ի ստեղծման ետ
զանձնիշխանական աղատութի առ յայս վախճան , զի
աղատաբար հնազանդիցին ինքեան , նոյնպէս և 'ի
վերանորոգութեանն , Քմ ետ զշնորհս , և արար
զմեզ

Բ

1.2. խ.
65. պ. 1.

ԴԼԹ.

Ա

Բ

ԴԼԺ.

Ա

զմէ՛ղ աղատու, զի աղատաբար հնազանդիցիմք ինքեան, և հարսին իւրոյ եկեղեցւոյ : Յասացելոցս՝ բարեպէս իմանի մեկնութի այնմ բանի առաքելոյն՝ որ ասէ՝ արդարոց ոչ դոն օրէնք, այսինքն, որք ՚ի ձեռն շնորհացն Քի աղատեցեալք արդարացան, ՚ի վերայ նա զին ոչ դոն օրէնք ստուերականք, այսինքն, թիւտաթի կամ զենուլ զանասունս, և այլք նմանք. այլ կան իմք նոցին օրէնք լուսոյ. որք են ամ սլատուհիւանք՝ և իրատք Քի :

Քի՛թա.

Բան : Իմանալի է համեմատաբար : Լծ. Առաջ թէն թէ համեմատաբար ասի կոյնն արժանաւորեցաւ կրել յինքեան զՔս, ոչ իմանի թէ ՚ի ձեռն շնորհաց ոչ արժանաւորեցաւ : Բանդի ամէն օրհնեցեալ կոյնն՝ ըստ որում մտածի ՚ի շնորհս՝ կարէ դրականապէս ասիլ, թէ նա սլատուածապէս արժաւաւորեցաւ ՚ի ձեռն շնորհաց՝ կրել զՔս նինքեան :

Ա
3. խ. 2.
գլ. 11.

Բ

Բան : Անյատկապէս առեալ լինի արժանաւորութիւնն այն, ուր ասի, բարեբախտ յանցանք : Լծ. Այսինքն, զի ըստ ինքեան անբարեբախտ է յանցանքն. վասն որոյ անյատկապէս ասի բարեբախտ. և մինչ ասի՝ նկատմամբ փրկողին ասի՝ որ ՚ի յայնպիսի ջորէ մեղացն, ելուղեաց զայս բարի, այսինքն, վասն բառնալոյ զնա, եղև մեղ եղբայր՝ առնելով զմարմին մեր. և վասն մահացուցանելոյ զնա, եղև մեղ կեանս, կախիլով ՚ի խաչէն :

Քի՛թա.

Բան : Զի ոչ ումեք այսպիսեացս ուրացեալ լինի շնորհ : Լծ. Որ արարեալ է՝ որ ինչ է յիւրն կողմանէ, և պատրաստեալ է զինքն, այնպիսւոյն ոչ բացասացեալ լինի շնորհն. բայց այսու զի նոյն պատրաստութիւնն իցէ ՚ի ձրի շնորհացն ւն, (որ և կոչի ձրի օգնականութիւն ւն) որով ամ լիցի նախապէս տաբար շարժօղ և նախկին պատճառ շնորհաց. ապա թէ ոչ անձնիշխանն լինի նախկին : Բանդի՝ եթէ առանց ամային օգնութեն՝ կարիցէր կամքն առնել որ ինչ է յիւր կողմանէ, և ամային շնորհն արդարացուցիչ՝ ոչ բացասիցիւր յայնպիսւոյն, յայնժամ նախկին պատճառ փրկութե մերոյ լինիւր ՚ի մէնջ. ընդդէմ մարդարէին որ ասէ՝ կորուստքո ՚ի քէն է ինչ բայց փրկութի քո միայն յինէն : Ուստի նախկին պատճառ շարաբերման շնորհաց է յայ. իսկ նախկին պատճառ պակասեցման շնորհաց է ՚ի մէնջ, ուն և ասացաւ ՚ի վեր, յերկու գլխով լուծմանս ենթացին :

1. 2. խ.
12. պ. 3.

Բան :

Բան : Քանզի ոչ բայիւք , այլ մակբայիւք արժա-
նաւորիւք : ԼԾ. Եթէ բարի գործն՝ եղանակաւ
իւրով գործիցի՝ ունի զմակբայն որով արժանաւոր-
իւիւք . որքոն , եթէ որ տայ ուրուք զողորմութիւն . Թէ
և առատապէս , և յօժարութե , և այն ոչ իցէ ՚ի սի-
րոյն նոյ , և կամ առ ՚ի բառնալ զթշուառութիւն աղ-
քատին , ողորմութիւն այն ոչ ունի զեղանակ իւր . զի
գրէ Թէ արտաքոյ բանին իւրոյ է՝ մինչ բան ողորմութե
ունի՝ զի առ ՚ի բառնալ զթշուառութիւն շարակար-
գիցի : Նմանապէս՝ եթէ որ ՚ի քարոզէլն կամ ՚ի լսելն
զբանս անձայինս , և ՚ի յայս իրս նմանս , հեղաբայս
և տաղտկութե վարիցի , Թէպէտ և գործիցէ բայիւք ,
այսինքն լսիցէ , և խօսիցի զանձայինս , բոյց ոչ գործէ
մակբայիւք . զի տաղտկութիւնն ներհակի եղանակի
այնպիսեաց գործոց . քանզի իւրաքանչիւր գործ բա-
րի , որպէս զի մնասցէ ՚ի քալ իւր բարի , պահանջէ
զի եղանակաւ իւրով գործիցի՝ որպէս զի իցէ բարի :
Ուստի ասէ երեմիա . անիծեալ է որ գործիցէ զգործ
Տն հեղբութե , այսինքն , որ գործիցէ զգործ Տն
Թարց պատկանաւորեցելոյ եղանակին իւրոյ . որպէս
ասէ մեկնիւն : Ուստի հետեւի , զի ոչ պահէ ան-
գործս մեր , առանց եղանակին իւրոյ : Ասան որոյ
պապ ոմն իմաստասէր՝ առ յայս . Թէ ան ոչ է վար-
ձատրող բայից , այլ մակբայից :

Բան : Զնորհն ուղղէ զանձնիշխանութիւն : ԼԾ. ԴԼԺԴ.
Այնպէս ուղղէ , զի անձնիշխանութիւն ոչ իցէ
իւրու սոսկ կրաւորական , ոչ նկատմամբ առ
յայս շնորհս՝ և ոչ նկատմամբ առ նախկին շարժումն
որ յայ շարժի և պատրաստէ զինքն առ յայտպիսի
շնորհ . քանզի անձնիշխանութիւն մեր՝ այնպէս ունի
զինքն առ ան , և առ շնորհն , մինչ զի կարիցէ գոր-
ծակցիլ շարժողին այ , և ուղղողի շնորհին , և կարիցէ
ընդդիմանալ . որպէս և վճռեցին սբ հարքն սխնհո-
ղոսին տրեւէն Թիւնոյ :

Բան : Արդիւնն կայանայ առ անձնիշխանութիւնն՝
առ ի թօրէն : ԼԾ. Անձնիշխանութիւն միայն առ ի Թ
է արդեան , և ոչ պատճառ . զի եթէ իցէր պատճառ
լինիւր բաւական , և այլ ինչ ոչ էր պիտոյ առ գործն
արդեան . և մինչէ առ ի Թ միայն՝ ուրեմն պիտոյ է և
առաքինութիւն . ուստի ասի ՚ի բնաբանոջն՝ Թէ առ
առաքինութիւնն կայանայ տեսակաբար . իւրու Թէ՝
զի առաքինութիւնն տեսակաւորելով զկամս , ելու-
իւք :

զանիցէ անտի զարժումն առաքինութեան : Եւ 'ի շարժման առաքինութե, կայանայ էտկանաբար . վասն զի յորժամ անձնիշխանութիւնն 'ի ձեռն շարժման առաքինութե դործէ, յայնժամ էականապէս կայանայ արդիւնն : Եւ առ շնորհ կայանայ արմատաբար, և գործադրաբար . վասն զի եթէ անձնիշխանութիւնն ոչ իցէ տեսակաւորեալ շնորհիւ, համայնք շարժմունք առաքինութեց ևն որպէս զիջեալ ածուխ, և մնան անարդիւնք : Իսկ առարտաբին դործն՝ կայանալ ասի դործիքականաբար . զի արտաբին դործն է՝ իբրև դգործի անձնիշխանութեանն՝ որով անձնիշխանութիւնն ելուզանէ զարդիւնս : Բայց դիտելի է, զի թէ անձնիշխանութիւնն 'ի ներքուստ ունիցի զբարի յառաջադրութի ինչ, և այս հանդերձ առաքինութեամբ, և շարժմամբ առաքինութե, և շնորհք, և արտաբին դործն ոչ լինիցի՝ վասն ոչ հանդիպելոյն, տախալին այնպիսի դործն ներքին՝ է արդիւնաւոր . և պատճառն է, զի այնպիսին զարտաբին դործն ևս առնէր՝ եթէ հանդիպիցիր :

ԹԼԺԴ.

Բան : Իսկ հոգևոր դործն, ոպ քարոզութիւնն՝ ոչ կարէ վերաբերիլ առ ժամանակաւոր վախճան :

Ա

ԼԵ. Ոչ միայն քարոզութի, այլ ո՞ր և իցէ դործ հոգևոր, այսինքն, պատարադել, ձեռնադրել, մկրտել, զնստտոկանութի լսել, 'ի մէջ թշնամեաց զնստադութի առնել, և այլք նմանք հոգևորք իրք, ոչ կարեն վերաբերիլ առ ժամանակաւորս, այսինքն, դաշամբ և գնով դործիլ և մատակարարիլ, և պատճառն է, զի ոպ հոգին ոչ է ստորև մարմնոյ, այսպէս և հոգևորքն՝ ոչ կարեն դնիլ ստորև գնոյ, և մինչ դնին, յայնժամ գրէ թէ անարդեցեալք լինին հոգևորքն :

Բայց այսու ոչ իմանի թէ աշխարհականքն ոչ պարականդին տալ զողորմութիւն սպասաւորաց եկեղեցւոյ, և կամ ընդ զպէտս նոցին . քանզի ասէ առաքեալն, եթէ մեք ձեզ զհոգևորն սերմանեցաք, մեծ ինչ է՝ եթէ դուք զմարմնաւորն . իբրու թէ ասիցէ . եթէ մեք ձեզ ձրիաբար շնորհեցաք զհոգևորն, դուք ևս պարտիք ձրիաբար տալ զողորմութի, առ 'ի ընդ զպէտս կարեաց եկեղեցականաց :

Բան: Զի գոյացական վարձուն այնքան արժաւորի մարդ միով գործով, որքան հաղարաւ: **ՄԼԺԷ.**

ԼԸ. Պատճառ սորին է այս. զի գոյացական վարձն տուեալ լինի վասն բարի գործոց, ըստ որում բարին այն է ի սիրոյ, թէ գործն մի իցէ, և թէ հաղար: Իսկ սրտառհաճան վարձն տրի՝ նկատմամբ սեռի գործոյն: Ուստի որ սակաւ սիրով, սլահիցէ զհրամանս, նաև զնորասն, զսակաւ գոյացական վարձս առնու քան զայն՝ որ իձեռն մեծի սիրոյ պահեաց միայն զհրամանս. թէպէտ սա ունեցի զսրտահաճան վարձս՝ վասն պահանս խրատուն՝ զոր ոչ ունեցի միան: Նոյնպէս և ոմն մարտիրոս՝ եթէ ունիցի զնոճաղ սէր՝ քան զոմն խոտովանող, նոճաղ ունեցի զվարձ գոյացական քան զնա. թէպէտ ունեցի զպատահական վարձն մարտիրոսութե, զոր ոչ ունեցի խոտովանողն: Նաև գիտելի է. զի մարդն ի ձեռն իւրաքանչիւրոյ արդիւնաւորի ներգործութե, արժաւորի աճման շնորհաց, և կատարման շնորհաց. բայց աճման շնորհաց յայնժամ, յորժամ բաւականապէս է արամադրեցեալ ի ձեռն քերականութե սիրոյ. Իսկ կատարման շնորհաց յայնժամ արժանաւորի յորժամ մեռանի ի շնորհս. քանզի կատարուին շնորհի է մօտն կենին յաւիտենականի, նորում ժամու՝ ոչ ինչ բիծ մեղաց, կամ պատժոց՝ դուանի ի մարդն: **ՄԼԺԸ.**

Բան: Են հաճոյականք ի ձեռն տեսակաւորող շնորհի: **ԼԸ.** Առաքինութիւն հաճոյականք սահն, ըստ որում ինքեանք են հաճոյք այ, և զգործողն հաճոյացուցանեն այ: Բայց առայս՝ զի առաքինութիւն իցեն հաճոյականք՝ հարկաւորէ շնորհ տեսակաւորող, ուն առ ի գոյ մարդոյ հարկաւորէ հոգի կենդանացուցանող զմարմին: **ՄԼԺԹ.**

Բան: Իսկ իկարոնալականն՝ անդրադարձեալն շնորհի: **ԼԸ.** Իկարոնալական առաքինութիւն, ունալութիւնքն ծնանին ի ներգործութեց, սակայն իմանալի է այս՝ ի ստացական բարոյական առաքինութիւն. քանզի ի յայնս բարոյական առաքինութիւն, որք յատուծուստ հեղանին, ունալութիւնքն ծնանին զներգործութիւն, ուն և ասացան զերից անայնոց առաքինութեց: **ՄԼԺԺ.**

ԳԼԺԸ.

ան : Զոյսն մինչև յերկինս բնկերակցի : ԼԾ.
 Այսինքն , այնպէս՝ զի ոչ մտանէ 'ի յերկինս , այլ
 միայն մինչև 'ի մուտն բնկերակցի . քանզի սէրն
 միայն է՝ որ մնայ 'ի վերին դասաւորն ընդ սրբոյ 'ի
 յարքայութեն :

ԳԼԺԹ.

ան : Զի լինիցի հաստատեցեալ բարի դործով : ԼԾ.
 Հաւատն որ ոչէ հաստատեցեալ բարի
 դործովք ոչէ բաւական առ փրկութիւնն .
 ուստի բազումք որք ունեն զհաւատս , ոչ միայն առ
 'ի հաւատալ , այլ նաև 'ի դործել զքանկելիս 'ի ձեռն
 հաւատոյ , ոչ ունելով զգործս բարիս՝ դատապարտե-
 ցան . ըստ այնմ , ՏՐ , ՏՐ , ոչ յանուն քո մարդա-
 րեացաք . և յանուն քո դևս հանաք , և այն . որոց
 պատասխանելոց է ՏՐ , ոչ երբեք դիտելի զձեզ . այս-
 րեքն , թէպէտ դիտելի և հաստատելի զքանկելիս ձեր ,
 բայց ոչ զձեզ . ուստի սոսէ օգոստինոս , այնոքինք ,
 այսինքն , մարդարեւութիք , և սքանչելագործութիք
 եմ մեծադոյնք . բայց եթէ ես զայնս ունիցիմ թարց
 սիրոյ՝ ոչ ինչ եմ ես , և ոչ նոքին որք են մեծադոյնք :
 Աւստի յայտէ՛ զի ըստ առաքելոյն յափօքայ՝ հաւատք
 առանց դործոյ մեռեալք են :

Բ.

ան : Հաւատն այն ոչ ունի զվարձս՝ որոյ մարդ-
 կային բանն տայ հմտանալ : ԼԾ. Էթէ որ միայն 'ի
 բնականաց պատճառաց շարժեալ հաւատայ , ոչ ունի
 զվարձ . բայց որ 'ի յմծայնոց դրոց շարժեալ հաւա-
 տայ , և միշտ պատրաստէ հաւատալ ըստ որում մծ
 յայտնէ , և ոչ ըստ որում բնական հմտութի իւր ,
 այնպիսին էթէ յայ , և 'ի հաւատացելոյ ճշմարտութի
 շարժեալ հնարեցոյ՝ զբանս մարդկայինս համաձայնս
 հաւատոյ , առ 'ի հաստատիլ 'ի նախառնեցեալ հա-
 լատն , կամ նաև զայս հաստատել , յայնժամ՝ բան
 մարդկային ոչ նոճազեցուցանէ զաղդիւնս հաւատոյ .
 այլ է նշան մեծադունի արդեան . ըստ որում յայտէ
 'ի սԲ վարդապետսն՝ որք գրեցին զմծաբանութէ , և
 'ի նմին զբազումս բանս հաւատոյ՝ ոչ միայն 'ի ձեռն
 վկայութեց սԲ դրոց , այլ նաև 'ի ձեռն բնականաց
 բանից՝ հաստատեցին :

2. շ. 10. 2

պ. 10.

ԳԼԻԴ.

ան : Հաւատք քո կեցուցին զքեզ : ԼԾ. Իմանի
 այսպէս , այսինքն , որ առանց հաւատոյ է՝ ոչ
 կարէ փրկիլ , և ոչ իմանի թէ սոսկ հաւատով
 լինի կեցութի . որպէս և մինչ սոսէ Տէրն , թողեալ
 լիցին սմա մեղք իւր՝ վասն զի յոյժ սիրեաց , ոչ իմա-
 նի ,

նի, զի թէ առանց հաւատոյ ևս իցէ սէրն, և մեղքն
 թողանի, այլ այնպէս՝ իբրութե ասիցէ, եթէ սէր
 ոչ իցէ՝ ոչ թողանի մեղքն: Այնպէս՝ և երբ ասէ
 աւետարանն, որ հաւատոյ և մկրտեացի՝ կեցցէ. ոչ
 իմանի թէ որ միայն հաւատոյ և մկրտի՝ թէ և ոչ
 ունիցի զսէր՝ կեցցէ, այլ այսպէս իմանի, իբրութե
 ասիցէ՝ որ թէ և ունիցի զգործ բարի, բայց ոչ հա-
 լատայ՝ և ոչ մկրտի, ոչ կեցցէ. որպէս և ասաց յայլ
 ուր, թէ որ ոչ հաւատայ՝ դատաւարութեցի:
 Ուստի զգուշանալի է՝ զի մի՛ ՚ի ձեռն այսպիսեաց բա-
 նից վարկիցեմք՝ թէ միայն հաւատով, կամ միայն սի-
 րով, և կամ միայն խոնարհութե փրկիլ կարեմք. այլ
 զսցայիսիս պարտիմք հասկանալ այսու կերպիւն իբրութե՝
 եթէ և զամ՝ ունիցիմք՝ բայց ոչ զսէր՝ ոչ ինչեմք.
 կամ եթէ զամ՝ ունիցիմք, բայց ոչ զհաւատ, ոչ ինչե-
 մք. ըստ այսմ՝ իմա և զայլոց: Զործօրինակ, թէ
 ասեմք թէ սրտիւն է մարդն կենդանի, ոչ իմանի թէ
 միայն սրտիւն, մինչ լեարդն ևս է հարկաւոր առ
 կեանն, այլ իմանի՝ թէ թարց սրտի ոչ կարէ մարդն
 մնալ կենդանի: Ասան որոյ և զիւրաքանկւորոց հար-
 կաւորաց մասանց՝ կարեմք ասել, թէ նովաւ է մարդն
 առողջ, և թարց նորին մեռեալ. այսպէս ևս զհա-
 լատոյ, կամ զսիրոյ, և կամ զայլոց հարկաւորաց
 առաքինութեց խօսի սք դիրն: Ուստի կարեմք ասել
 թէ որ միայն ոչ հաւատայ, դատաւարտի. բայց ոչ
 անգրադառնայ այս, որպէս զի ասիցեմք, թէ որ միայն
 հաւատայ՝ փրկիլ. և պատճառն է, զի միայն հաւատա-
 րով թէպէտ կարէ ընդունիլ որ զսքանչեւագործու-
 թի. ըստ այնմ՝ բայց միայն հաւատայ, և կեցցէ մա-
 նուկն քո, (այսինքն, հրաշիւք առողջացի) բայց ոչ
 կարէ միայն հաւատալովն փրկիլ: Իսկ անդ՝ ուր ասէ
 առաքեալն թէ սրդարութիւն է ՚ի հաւատոց, և ոչ
 ՚ի գործոց օրինաց, առնու զհաւատն որ ՚ի ԲՅՅ
 հանդերձ սիրով, և այլովք բարեք գործովք. և ոչ
 ՚ի գործոց ասէ, այսինքն, ոչ ՚ի հնոյ օրինացն մօսիսի:
 Եւ դարձեալ՝ մինչ ասէ առաքեալն, թէ հաւատաց
 արբահամ յանձ, և համարեցաւ նմա յարդարութի. և
 յետոյ ասէ՝ ոչ եթէ վասն նր՝ միայն, այլ վասն մեր՝
 որոց համարեցդէ՝ որք հաւատամք յայն՝ որ յարոյց
 զԅ. պարտ է իմանիլ այսպէս, այսինքն, որպէս աբ-
 ռահամու յարդարութի համարեցաւ հաւատն, նոյն
 պէս և մեզ համարի՝ որք հաւատամք յայն՝ այսինքն,

1.1. խ.
1.1.1. պ. 4.
2.2. խ.
2.2.1. պ. 3.

Նշան՝ հայր , որ յարոյց զՅՍ : Արդ՝ տես, զի ոչ ասե
թէ՝ այ՝ հաւատալով . կամ զան՝ հաւատալով , համա
բեցաւ յարգարութի , այլ ասե՝ հաւատաց յան՝ . զի
հաւատալն ի՛յնձ , նշանակե՝ հանդերձ սիրով և դոր
ծովք բարեաց յարիւն ի՛նա . իսկ հաւատալն զան՝
նշանակե՝ հաւատալ թէ՝ գոյ ան՝ . և հաւատալն այ՝ ,
է՝ հաւատալ բանից նր՝ , որք կարեն գոլ թարց սի
րոյ . իսկ հաւատալն ի՛յնձ , է՝ միշտ ընդ սիրոյ՝ և
այլոց բարեաց դործոց . որովք և է՝ տեսակաւորե
ղեալ , և արդարացուցանե՝ այնու :

Բ

Բան . Արդ այսորիկ փրկին արդեամբք հիման հա
ւատոյ : ԼԺ. Եթէ ինտեւալն , այսինքն՝ խոտն
և եղէգն , են մեղք ներելիք և կամ պատիժք թողե
ցելոց մահացունաց մեղաց , փրկին արդեամբք հիման
հաւատոյ տեսակաւորեցելոյ . զի ներելիքն կարեն գոլ
ընդ սիրոյ՝ որ տեսակաւորե՝ զհաւատն : իսկ եթէ չի
նտեւալն են մեղք մահուչափք , մինչ սիրով տեսա
կաւորեալ հաւատն ոչ կարե՝ գոլ ընդ մեղաց մահա
ցունաց , արդեամբք հիման անտեսակի հաւատոյ ոչ
կարեն փրկիլ : Աստի յայտնապէս երևի , զի որք ի՛
մահուչափ մեղք մեռանին թէ՛ պէտ ունիցին զհաւատ ,
բայց գոլով անտեսակ , և առանց սիրոյ ոչ ինչէ :
Իսկ որք առանց մահուչափ մեղաց մեռանին , ունին
զհաւատ տեսակաւորեալ սիրով . ուստի արդեամբք
հիման հաւատոյ փրկին հրովքաւարանին , ի ներե
լեաց մեղաց , և ի պատժոց մահացունաց :

Գ

Բան : Եւ ներգործութիւնքս այսորիկք են յանձն
ի յիսնականէն : ԼԺ. Մինչ տաին թէ՛ ոմանք
ներգործութիք հաւատալոյ , և կամ այլոց աւարի
նութեց են յանձնի յիսնականէն , միշտ իմանալի է՝
թէ՛ նախ՝ անձնի յիսնականէն ինչ շարժեցեալ ի՛յնձայնոյ
ձրի օգնականութեան . ուստի ասե՝ ջերմիմոս . բոտ
այսմ ասիմք անձնի յիսնակ , ուն զի միշտ կարօտքիցեմք
անձայնոյ օգնականութի :

1.2. խ.
1.2.1. պ. 4.

ՄԼ. իա.

Ա

Բան : Զթողութի մեղաց այնք որք են յեկեղե
ցւոյ : ԼԺ. Որք ուղիղ հաւատով մկրտեցեալք
են ներգործութիք , և կամ հրով , և ըղձիւ , են
յեկեղեցւոյ . ուստի հարկաւոր է հաւատալ զթողու
թի մեղաց միայն վասն այնք , որք են յեկեղեցւոյ .
զի արտաքոյ եկեղեցւոյ կաթուղիկէ՛ն՝ ոչ երբեք լինի
թողութի մեղաց : Եւ արտաքոյ եկեղեցւոյ են այնք ,
որք կամ ոչ մկրտեցան , և կամ վասն տեսականի հե
րե .

րեալիկութե , որ հանդերձ գիտութիւն , յատկապէս ինքեց հարց դատաւարութեալ արտաբնեցան յեկեղեցոյ , որպիսիք են լծեքականք , և արիտասիրեք :

Բան : Եւ այս երեք վերջին աստիճանքս՝ վերաբե-
րին առ ամուլթի : 18. Սրբօք գործք ամուլթեն
յատկաբար ծանուցանին մեզ . ի գործոց որոց՝ նախ
կինն պատկանի առ դռն բնութե . վասն որոյ անդէն
եղեալ մասն է՝ զատեղմանէ : Երկրորդն՝ պատկանի
առ դռն շնորհաց , ուստի անդէն եղեալ մասն է՝
զամենից իրաց որք վերահային առ սրբացոցանին
մեր : Իսկ երրորդն՝ պատկանի առ դռն փառալ , և
վասն այն է՝ զի անդէն եղեալ մասն է՝ զյարութենէ
մարմնոց , որ լինի մանաւանդապէս վասն փառաւորե-
լոյ զնորեալսն :

Բան : Ի սահմանս այս՝ ոչ առեալ վնի անպշու-
տական ստուգութի : 18. Իրանի ոչ առնանի
ստուգութի՝ ի կողմանէ անձնիշխանութե մե-
րոյ . բայց ի կողմանէ ինքեան յուսոյն է՝ ստուգու-
թի : Եւ պատճառն է , զի անձնիշխանութիւն մեր՝
կարէ պահանիլ յերանութե , և աստուած է կապածն
ուստի և ասէ բնաբանն՝ թէ է ստուգութի կարծեաց
այսինքն , նման կարծողն : Բայց ի կողմանէ շնորհաց
և ամենակարողութեանն այլ , և ի կողմանէ արդեանցն
է ստուգութի . վասն զի ի կողմանէ սոցա ոչ վնի , զի
ոչ առ անորդիցեն առկեանն յաւիտենական . ուստի
նկատմամբ սոցա՝ հաւատարմի յուսացողին ոչ ինչ է
կարծիք : Սակայն նաև այս ստուգութի ոչ է հաստատ
ստուգութի մարդկայնոյ բանի՝ ըստ ինքեան մտածե-
ցեալ , այլ է ստուգութի բանին՝ որ ի վերուստ հա-
ւատով է պայծառացեալ : Որով բանիւ , ոմ զյոյզմ
որք ի վերջան զգայութիւն մեր են՝ օժանդակութիւն
այլ ընդունիմք , և հաւատամք . նոյեպէս և այնու բա-
նին (նախ ասացեալ կերպիւն) աներկբայապէս յու-
սամք . և որքան առ այս խմանի՝ ասացեալն առաքե-
լոյն , թէ յոյսն ոչ երբեք ամաւեցուցանէ :

Բան : Անխորձ յապականութե : 18. Սէրն շնոր-
հական , իրանի անխորձ է յապականութե ի կող-
մանէ ինքեան . ըստ առաքելոյն . թէ սէրն ոչ
երբեք անկանի : Քանզի սէրն ի կողմանէ իւրմէ ունի
զի միշտ աճեացի : Իսկ զի երբեմն ապականի ի մեզ
այսէ ի կողմանէ անձնիշխանութեան մերոյ . որ նա
4 ելովն ի մեզս մահուցանս՝ կորուսանէ զսէրն . և առ

Բ
2.2.10.10
պ 3.

ՔԼԻԲ
Ա

2.2.10.10
13.պ.4.2

ՔԼԻԴ
Ա

2.2.10.10
24.պ.11.

« ասէ առաքեալն . զի ուշ կացէք » , զի մի՛ ոք սա
կառնցի 'ի շնորհաց :

Դէլ Դգ .

Ա

Բան : « ասէլ սիրէ մարդ զինքն բնական սիրով
զամբ զամբ » ԼԺ . Թէպէտ մարդն ըստ որում
ապականեալ է բնութեմ , սիրէ զինքն բնական
սիրով առաւել քան զամբ՝ զի մոլորի 'ի բանե' որ ցու
ցանէ , թէ ընդհանուր բարին առաւել սիրելի է քան
զմասնաւորն , բայց ըստ որում մարդ՝ և կամ ըստ
որում 'ի կացութե բնութե ամբողջի՝ յորս այնպիսի
մոլորութիւն ոչ լինիւր՝ ոչ սիրէ զինքն բնական սիրով
առաւել քան զամբ : Քանզի թէպէտ 'ի կացութեան
առականեցելոյ բնութե ոչ կարէ մարդն սիրել զամբ
առաւել քան զինքն՝ թարց շնորհաց . բայց 'ի կացու
թե բնութեան ամբողջի՝ կարէր համաբնական սիրովն
Չի բնական սիրով իւրաքանչիւր ստեղծուած , իբրու
ստեղծուած , ինքեան յարմարեցելով սիրելութեն ,
սիրէ զամբ որպէս զընդհանուր բարի , առաւել քան
զինքն , թարց ունակս կան շնորհի : Իսկ սիրել զամբ
առաւել քան զինքն՝ իբրև զառարկայ երանութեան
նաև ոչ հրեշտակք կարացին բնականաւ սիրելութեմ
այնպէս սիրել . վասն զի առ յայս՝ պահանջի հեղեալ
1. խ. 60.
պ. 3.
1. 2. խ.
309. պ. 3. սէր , որով ոք սիրեացէ զամբ որպէս զընդհանուր
ինքեան 'ի վեր քան զինքն , և զամբ ինչ :
Ուրեմն բնական սիրով սիրի ամբ որպէս զընդհանուր
բարի . և հեղեալ սիրով որպէս զբարի երանա
ցուցիչ :

Բ

Բան : Վասն իւրոյ բարերարութե : ԼԺ . Բառս
այս , վասն , ոչ ասէ ստոյ զվախճան . այլ զբան
սիրոյն 'ի կողմանէ սիրողին : Քանզի յայնժամ ասէ
զվախճան , յորժամ սիրէ ոք զամբ վասն բարերարու
թեանն՝ զորս ընդունեալ է ինքն , և կամ ընդունելոյ
է , և ոչ այլպէս . որոյ նշանն է այս՝ զի եթէ ոչ ըն
դունիցի զբարերարութիւն ինչ , դադարի և 'ի սիրոր
Եւսէրս այս՝ ոչ է ուղիղ , զի ոչ սիրի բարերարն զի
1. խ. 60.
պ. 3. դոյն բարերար , այլ վասն ընդունման ուրուք զբա
րերարութի : Իսկ յայնժամ ասէ բառս , վասն , զբան
սիրոյն 'ի կողմանէ սիրողին , յորժամ սիրէ ոք զամբ
վասն բարերարութեան ըստ որում տեսանէ պէտքա
րի՝ և այնու բարերարող , և ոչ ըստ որում թէ ինքն
ընդունի զբարերարութիւնն . ուստի՝ թէ և ոչ երբեք
ընդունիցի ինքն՝ տակաւին սիրէ , զի տեսանէ զնա
բարի , և բարերար . և այսու միայն բարերարութիւն
սի .

սիրեցելոյն՝ լինի բան և արմատ սիրոյ 'ի սիրողն յոր
մէ շարժի 'ի սիրել . և այսու կերպիւն ասի 'ի բնաբա-
նոցն . վասն իւրոյ բարեբարութե : Տես 'ի վայր , 'ի
իմ . գլխով լուծմանցս :

Բան : Ածէ 'ի կատարումն : ԼԾ. Սէրն անէ **ԳԼԻԵ.**
զմարդն առ կատարելութի . սակայն որքանիցս
մարդ որ է նայամիկ կենի , տակաւին դոյ նմա
անդրադոյն կատարելութի . և ոչ կարէ ասիլ թէ մինչ
հասանիցի յայս ինչ աստիճան սիրոյ՝ ոչ կարէ յառա-
ջանալ այնուհետեւ : Ուստի որքան և իցէ որ կատա-
րեալ 'ի սէրն , կարէ առ անդրադոյնս տարածել զինքն , 2.2.խ.
որոյ վասն սէր մեր անուանի ճանապարհ , ուր և յիշէ 24.պ.2.
բնաբանն :

Բան : Տեսակ առաքինութեց : ԼԾ. Սէրն ասի
տեսակ առաքինութեց իբր արտաբանան , և ոչ **ԳԼԻԿ.**
ներքսական . և պատճառն է . զի սէրն է տե-
սակ նաև առաքինութեց՝ որք են 'ի յիմացման . ո՛ր
գոն , հաւատոյն , (թէպէտ ինքն սէրն իցէ 'ի կամն)
արդ՝ եթէ սէրն իցէր տեսակ ներքսական յայնժամ
ընդ բացահեռանայն իւր , մեղեալ հաւատն 'ի յիմաց 2.2.խ.23
ման՝ ոչ լինէր ճշմարիտ հաւատ , որ է ընդդէմ սրբոյ պ 3.
Ժողովոյն տրեւեմութեոյ :

Բան : Կալժիր զսէրն , և արա զինչ և կամիս : ԼԾ.
Արա զորինչ և կամիս՝ որք իցեն կորուստ որե-
ցեալք առ ամ , և ոչ զորինչ և կամիս բացար- **ԳԼԻԵ.**
ձակաբար , այս է . ուսել , բնութիւն և այլք նմանք .
բանդի կանխով զսէրն , ոչ կարեն անմեղադրելիք լինիլ
անկարգաւորեցեալ դործքն , և համ արգիւնաւորիլ .
զի ճշմարիտ սէրն՝ ոչ զանկարգութի ինչ բնք ինքեան
կամի , և ոչ զանկարգ գոն բացաբաւնայ 'ի դործոց :
2.2.խ.24.պ.11.

Բան : Ոմանք փորձիւն դիտեն ունել զսէր յին **ԳԼԻԵ.**
բեանս : ԼԾ. Գիտեն փորձիւն , կրկին է . մինն
է բացարձակ՝ որով ոչ ինչ տարակուսութի մնայ
և ըստ այսմ կերպի՝ ոչ ոք կարէ գիտել զինքն գոլ 'ի
սէրն , բայց միայն թէ ամ իցէ յայտնեալ նմա . որպէս
սղոզոսի : Իսկ միւսն՝ նմանական . աս է , դիտէ զինքն
գոլ 'ի սէրն՝ ոչ բացարձակ փորձիւն , այլ զնման ինչ
դործոյ սիրոյ տեսանելով 'ի յինքն . ո՛րդոն , տեսանէ
զի միշտ զբարիս դործէ , և զմայլն ամ , և այլք նմանք :
Եւ ըստ այսմ իմանի փորձիւն գիտեն , զորս ասէ բնա-
բանն : Բայց այսորեւք ոչ լինի բացարձակ փորձ ,
Գ 4 այլ

2.2.խ.
112.տ.5

այլ նմանական . զի սոքին կարեն յառաջանալ նաև 'ի բնականէ սիրոյն ալ , որ ոչ է շնորհական . որպէս 'ի վեր , 'ի ի՞նչ գլխով լուծմանցս ասացաւ : Արդ՝ մինչ գործ ինչ՝ յերկուց պատճառաց ևս կարէ յառաջանալ , ոչ կարեմք տուգապէս բացորոշել առ մինն . իսկ այնպիսի բարեգործութիւն կարեն 'ի շնորհական, նաև 'ի բնական սիրոյ յառաջանալ . ուրեմն ոչ կարեմարդ որ ինքեամբ բացարձակ փորձէ՛լ դիտել զինքն՝ թէ ունիցի զսէր շնորհական :

ԴԼԻԲ.

Ա

Բան : Է վարձկանական : ԼԾ վարձկանական սէրն կրկին է . մին է՝ որով որ սիրէ զամբ վասն ընդունելոյն 'ի նմանէ զբարի ինչ , և այս այնպէս՝ մինչ զի եթէ ոչ ընդունիցիւր զբարին ոչ սիրէր . և այսպիսի վարձկանական սէրս է՝ չար . զի նախապետական վասնձան այսպիսոյ սիրոյ՝ է բարին ստեղծուածոյ : Իսկ միւսն է՝ որով որ սիրէ զամբ նախապետաբար վասն բարութե ինքեան ալ , և երկրորդաբար սիրէ զնա , զի զբարի ինչ ընդունիցի 'ի նմանէ . և սէրս այս՝ թէսէս իցէ՛ վարձկանական՝ բաց ոչ է չար , այլ բարի . ապա թէ ոչ՝ մեղանշէլն այնոքիկբ որբ երկրորդական նկատմամբ , վասն յաւիտենականի վարձուց սիրելին զամբ , և յար գործէլն զբարիս . որ է ընդգէմ ժողովոյն արեւելնթ ինոյ :

ԴԼԸ

Ա

Բան : Եւ 'ի նոյն աստիճանի : ԼԾ Չնոյնութիւն համեմատաբար խմանայէ . քանզի որպէս ըստ կարգի սիրոյն յառաջագոյն բերի որ առ յատուկ հոգի իւր՝ քան առ հոգին ընկերին , այդպէս՝ նախկնաբար առ յատուկ մարմին իւր , քան առ մարմին ընկերին : Բայց գիտեցի՛ք՝ զի եթէ լինիցի դիպումս ինչ 'ի ձեռն որոյ պարսւանդիցի որ նախ կամիլ ղկեցութի ընկերին , յայնժամ 'ի հարկաւորութե սիրոյ պարսւանդի դնել զմարմին իւր վասն կեցութե ընկերին : Սակայն թէ չիցէ այսպիսի ինչ , և կամաւորապէս դնէ որ զմարմինն վասն կեցութե ընկերին , այս պատկանի առ կատարելութի սիրոյն :

Բ

Բան : Մարդն բնական սիրով առաւել ղինքն սիրէ քան զամբ : ԼԾ Չլուծումն այսորիկ բանի՝ տես 'ի վեր . 'ի լուծման սոյնոյ դրոշմ , 'ի դուռն իդ , ենթոյքին :

Բան :

Բան: Վասն սիրոյ թ շնամեաց ծանխ' ր: Չայս մա-
նէ տես 'ի վեր, 'ի լուծման երրորդի գրգոյն:

ԴԼԼԲ
Ա
Բ

Բան: Սիրել զթ շնամին' է' յայտնադոյն նշան սի-
րոյ: ԼՃ. Ոչ է բացարձակ յայտնադոյն' որպէս
զի որ տեսանելով զինքն թ է սիրել զթ շնամին' անդուտ
աներկբայ լինելի զնորհականէ: Իրոյն իւրոյ' որ առ-
ած: այլ է համեմատական յայտնադոյն: Քանզի մինչ
սիրելն զբարեկամն է կարի իմն նսեմ' նշան' ունեւոյ
զէրն շնորհական, հետեւի թ է սիրելն զթ շնամին' ոչ
իցէ այնքան նսեմ: ուստի այս համեմատեալ առ յայն,
ասի յայտնադոյն: և պատճառ ասացելոցս է' զի ոչ որ
մայդ ինքեամբ կարէ դիտել ստուգիչ զինքենէ' ու-
նել զսէր շնորհական: Ոչ և սացաք 'ի վեր 'ի իւր
գիտոյ, 'ի լուծման սոյնոյ գրգոյս:

Բան: Արդ' կարոտինալական առաքինութիւն: ԼՃ.
Բայտն կարոտինալական, որ է ծղնական: յար-
մարապէս պատկանաւորեցաւ անդ բարեբաբար
ասիլ զառաքինութեց մարդկայնոյ: Վասն զի որպէս
դուռն չրժի 'ի ծղնոյ, և 'ի նմին կայանայ, այսպէս և
կեանք մարդոյն' չրժի և կայանայ 'ի յառաքինութիւնս
ունաւո նախապետականադոյնս: Արդ' թ էպէտ նաւ
հնազանդութիւնն իւր կերպիչ, այսինքն նկատմամբ
Ժուժկալութեն' ասի նախապետականադոյն, և այնու
կարէ կոչիլ կարոտինալական: բայց չորք առաքինու-
թիւնքն, այսինքն, խոհեմութի, ողջսխոհութիւն:
արիութի, և արդարութի, ոչ բոտ նկատման իրիւր,
այլ բացարձակաբար են նախապետականադոյնք: և
այլք ամենեքեանք որք նկատմամբ իրերաց ասին նա-
խապետականք' վերածին առ սոսա, քն առ բացար-
ձակ նախապետականս:

ԴԼԼԴ
Ա

1.2. խո
61. 14. 2.

Բան: Ոչ բոտ կարծեաց բաղմաց: ԼՃ. Որ միայն
բոտ կարծեաց բաղմաց դատել զիրեն, և ոչ հայի
'ի բնութիս իրաց, է անխոհեմ: Ասացի միայն
բոտ կարծեաց, բանդի եթէ զարժանադատողութիս
իրաց' 'ի բնութեց նոցին ևս առեալ կռէ, և այնու
իմանայ զուղղութի կարծեաց բաղմաց, և ապա հե-
տեւի, յայնժամ եղանի խոհեմ: Աստուտ իմանի,
թէ պարտ է զի 'ի ձեռն լուսոյ բանին հսկողք եղի-
ցուք, և ոչ յենլով 'ի վերայ եղեղնաճախճայն դաւա-
ղանին, այսինքն, առակին որ ասի' ձայն Ժողովրդեանն
է ձայն սոյ, թմրիցուք, և կուրութի հետեւողք երի-
ցուք:

ԴԼԼԵ
Ա

ցուր : Քանզի ձայն ժողովրդեան յայ՝ շարժեցելոյ՝ է ձայն այ՝ . և ոչ ձայն ո՛ր և իցէ խաժամուժ ժողովրդեան յայլմէ ուստեքէ շարժեցելոյ՝ է՝ ձայն այ՝ :

ՔԼԷԷ

Բան : Զերկրաւոր աղահուժիս : ԼՃ. Զայնպիսի աղահուժիս՝ որք յետս դարձուցանեն զմարդն՝ ի յօրինացն այ՝ , և ի պողոյ երանութե՛ն , կատարեալ ողջախոհքն ոչ միայն սանձահարեն , այլ նաև մուսցեալք իսկ են : Եւ աստ գիտելի է , զի ողջախոհութի նախապետաբար և յատկապէս ըստ փիլիսոփային , է շուրջ զցանկութե՛ք , և հեշտութե՛ք՝ ըստ յօշափականին . որ է ըստ կերպրոյն՝ և ըստ զուգմանն բայց շուրջ զընկէք , և զայլովք իրօք , է երկրորդաբար : Ասան որոյ ողջախոհութիս՝ նախապետաբար հեռացուցանէ զմարդն ի յօրկրամեղութե՛ն , և ի բըջախոհութե՛ն . և երկրորդաբար՝ ի յաղահուժե՛ն որ է ցանկութի ընկոյ՝ և փարթամութե՛ն :

2.2. իս.

141. պ. 4

ՔԼԷԷ

Բան : Ըն զարհուրիլ ընդ հեռանալ հոգւոյն ի մարմնոյն : ԼՃ. Ըստ փիլիսոփային , արիութիւն մանաւանդապէս է շուրջ զմահո՛ւամբ ի պատե՛րազմի ուստի թէպէտ ինչք կերպիլ արիութիւն ասի տանելն ո՛ր և իցէ վշտաց , և նեղութեց , ըստ աստիճանոց իւրեանց , սակայն բացարձակ արիութիւն է՝ տանելն մեծադուռեղից չարչարանաց . իսկ ը որոց մանաւանդադուռեղ ահա ելի է՝ մահն :

ՔԼԷԷ

2.2. իս.

133. պ. 4

ՔԼԷԷ

Բան : Պահել իւրաքանչիւր ումք որ ինչ իւրն է : ԼՃ. Առդարութիւն՝ իւրաքանչիւրոց որ ինչ նոցին է՝ պահել զի իցէ նոցին . և այս կրկին կերպիլ , այսինքն , յատկապէս , և վերածականապէս : Զատկապէս , ո՛րդոն , եթէ իրաւունք ինչ , կամ ողատիւ , կամ համբաւ , կամ ինչք , և կամ ո՛ր և իցէ բարիք , են ուրուք , արդարն ոչ երբեք ջանայ զի մի իցէ նմին , և ոչ յափշտակէ զի սեփականիցէ ինքեան , այլ պահպանէ ևս՝ զի բարին այն մնացէ այնմ՝ որոյ է : Եւ այսոքիկ այնքան առ ամ , որքան առ ընկերս . որպէս յայտ է ի մասանց արդարութեանն՝ որք վերաբերին առ ամ , և առ ընկերն : Վերածականապէս , որդոն , եթէ ոմանք բարիք չիցեն ընկերին յատկապէս , բայց զի ի ձեռն առաքինութե՛ն յօժարիմք թէ իցէին նոցա , յայնժամ միջնորդութե՛ն յօժարութեան , վերածին բարիքն առ ի ինկիլ բնկերին . և յորժամ տամք նոցին՝ է գործ արդարութե՛ն . զի զայնս որք են նոցին՝ տամք նոցին : Զորօրինակ . յորժամ ոմն փարթամ

Թամ տեսանիցէ ղկարօտեալ աղքատ ք, և ՚ի յառաքինութե շարժեալ յօժարիցի թէ ոչ կարօտիցիւր աղքատն այն, յայնժամ որքանք դրամք որք են պիտոյք առ ՚ի լնուղ ղնորին կարօտութիւն, նոյն քանք 2.2. խ. 52 դրամքն որք ՚ի փարթամն են աղքատին այնորիկ, և մինչ պ. 11. 12 արդարութիւն է՝ հատուցանել իւրաքանչիւր ումէք որինչ նոյայն է պարտին նայն քան դրամքն տրիւ աղքատին: Էւ աստուած է, ղի առատաբարոյութին, ողորմութիւն, և բարերարութիւնն, ընդ մասանց արդարութե համաթռեցեալք լինին, քանզի վերածականապէս առեալ, մինչ ողորմութիւն ՚ի մեծատանձ յումէք տրի աղքատին՝ այն տրի աղքատին, որ խսկ էր աղքատին:

Բան: Եօթն են պարդեք: 18. Աստիկ պարդեք որք աստէն համաթռնին, հարկաւորք են առ կեցութի ու և իցէ մարդոյ ունողի զայնս. և թէ պէտք քաց ՚ի յեօթեանց պարդեալք՝ դոն և այլք պարդեք ոգւոյն սրբոյ, որպէս մարդարկութիւն, և այլք նմանք, սակայն՝ ոչ համաթռնին ընդ սոցին, ղի չեն շարակարգեցեալք առ հարկաւորութի կեցութե եղականի մարդոյ ունողի զայնս, այլ առ ՚ի բացայտութիւն ոգւոյն, և կամ առ ՚ի յօգուտ սոցոց: 1. 2. խ. 68. պ. 2. 4.

Բան: Չորս ոչ շնորհ ոգւոյն սրբոյ համակրէ ընդ ինքեան: 18. Երբ մարդկային, կամ աշխարհական երկիւղն է՝ մեղք մահուցաւ, շնորհ ոգւոյն սրբոյ ոչ համակրէ ընդ ինքեան. իբրու թէ՛ այնպիսի երկիւղն ոչ ունի զմասն ինչ ընդ ոգւոյն սրբոյ. բայց յորժամ է՝ մեղք ներելի, յայնժամ կարէ դոլ ընդ շնորհաց ոգւոյն սրբոյ. ղի ներելին ոչ մերժէ ղշնորհն: 1. 2. խ. 89. պ. 1.

Բան: Չոր ոչ որ բարեպէս առնու ՚ի կիր: 18. Ոչ որ ծառայականութե նորին, և կամ այնու ծառայաբար վարելով՝ բարեպէս առնէ. քանզի որ ծառայաբար միայն երկնի, յորմէ և իցէ չարէ մինչ խորշի, ղկամս իւր ՚ի չարն այն սեւեռեալ ունի: Ուստի լիւրիքոս տաղաչափն ասէ՝ ՚ի սարսամանէ պատժոյն՝ ատեցին չարքն զմեղանչէն. և այս իմանի որքան առարտաբին ներդործութիւնն. ղի որքանս առ ներքինն, ընդ դրկեալ են զչարն: Բայց ղիտե լի է՝ ղի որ վասն երկիւղի պատժոյն առնէ զզջուսն, և ղկամս իւր հեռացուցանէ ՚ի մեղաց, այնպիսին՝ ոչ

պա

ԳԼԸ.

Ա

ԳԼԸ.

Ա

ԳԼԸ.

Ա

1.2. / 10.19
պ. 4.

ԳԼԽԱՎ.

Ա

պախարակի , այլ է ընդունելի . և այս Թէպէտ կոչի
անկատար զգլուծն , սակայն մինչ ունիցի զյոյս Թողու
Թէ , 'ի ձեռն խորհրդոց եկեղեցւոյ արդարացուցեալ
լինի : Ուստի բոլոր բան պակասութե ծառայական
երկիրւոյն կոյանայ 'ի սմին , եթէ որ զկամս իւր սևե
ռեալ ունիցի 'ի մեղս , և միայն վասն երկիրւոյն պատ
ժոյն 'ի բաց կայարտաբնականաց ներդրածութեանց
մեղաց : Տես 'ի վեր , երեք դիրք , գլուխ ի դ
ան : Եւ զմիւսն առ պատիժն : ԼԾ. Սկզբնա
կան երկիրւոյն մինչ հայի նաև առ պատիժն
առանց ծառայականութեան , ըստ որում 'ի
վեր' արդէն ասացաք , է' բարի և օգտակար . զի մինչ
զկամս մեր ոչ ունիմք սևեռեալ 'ի մեղս , այլ հեռա
ցուցեալ 'ի մեղաց , Թէ և վասն երկիրւոյն պատժոյն
խոտորիցիմք 'ի չարէ' և առնիցեմք զբարի' արդիւնա
ւորիմք զվարձս ամայնով ողորմութե . ուստի սք
ժողովն տրեւեմք Թինոյ , նոյնպէս զայնս' որք առեին
ոչ ինչ դոլ զապաշխարիլն վասն երկիրւոյն պատ
ժոյն :

ԳԼԽԲ.

Ա

ան : Այլ սակայն պատահմամբ : ԼԾ. Այսինքն ,
որդիական երկիրւոյն գոյացաբար ունի , զի վասն
սիրոյն այ խորիցի 'ի մեղաց : Բայց որպէս
պատահմունքն հետեւին գոյացութեան , այսպէս ևս
հետեւի որպէս պատահումն , զի նաև զգուշանայցէ 'ի
պատժոյն : Սակայն այնպէս է' զի Թէ նաև պատիժ
ոչ հետեւիցիւր մեղացն' տակաւին խորշը 'ի մեղաց ,
զի մի' բարկացուցանիցէր զանձ :

ԳԼԽԳ.

Ա

ան : Եւ հաւատարմութե և ուսուցի : ԼԾ. Այս
ինքն , այսոքիւք տրին պատկառանք սք գրոց ,
զի հաստատապէս հաւատայցեմք , զգուշութե
պահիցեմք , այս է , զի զիւր ինչ աւելի ոչ առադրի
ցեմք նմա , և կամ զինն ոչ նուազեցուցանիցեմք ան
տի : Եւ հաւատարմապէս ուսուցանիցեմք , այս է ,
մեկնիցեմք , և հասկացուցանիցեմք ժողովրդեան . և
այսպիսի հաւատարմութիւն կայանայ 'ի սմին , զի 'ի
մերոցն ոչ չարժիցիմք 'ի մեկնելն զսք դիրք . այլ միայն
'ի բանէն զոր հնչէ սք դիրք , և բացատրէ սք եկե
ղեցին : 'ի մերոցն յայնժամ չարժիմք , յորժամ 'ի
նախանձու , կամ առ 'ի կացուցանել զմերն ասա
ցեալ , կամ առ 'ի հնարել զնորադոյնս կրօնս , կամ
առ 'ի ցուցանել զմեզ դերազանց քան զայս . և կամ

առ 'ի եղեւզ զբանս թշնամոյն մերոյ՝ շարժիցիմք առ 'ի մեկնել զքի գիրս, որով և իսկ ոչ կարեմք նկատել զորինչ ցուցանէ բանն, և ընդունի սքե եկեղեցին. այլ լատ որում պահանջէ մերն յօժարութի առ 'ի լնուզ զմոլեկան տենցն մեր: Իսկ 'ի բանէն միայն յայնժամ շարժիմք, յորժամ յետ բաւական ունման, և կառարեալ աղատութե 'ի վերոյ ասացելոց մոլութեցն, նախանկատմամբ գիտաւորութե սքե եկեղեցւոյ՝ մեկնիցեմք, և ուսուցանիցեմք զսք գիրս, ենթ համահաւանութե, և վճուոյ սրբոյ եկեղեցւոյ: Արդ՝ առաջ նով կերպիւն՝ շարժեցան հերետիկոսքն, զի լատ որում պահանջէր մոլութի նոցին, մեկնեցին զսք գիրս. և մոլորեցուցին զբաղումն. և այնու անհաւատարիմք դտան սք գրոց: Իսկ երկրորդիւ կերպիւն՝ շարժեցան հարքն սքք, զի գոլով աղատք 'ի մոլութեց, և շարժեալք 'ի բանէ սք գրոց, մեկնեցին և ուսուցին, լատ գիտաւորութե սրբոյ եկեղեցւոյ. և ենթ վճուոյ, և սրբագրութե հայրապետին հաւանայ, յաջորդի սրբոյն պետրոսի ընդհանրականի հովոնին եկեղեցւոյ, եղին զհամայնս մեկնութիս, և զվարդապետութիս իւրեանց, և այնու հաւատարիմք դտան սք գրոց:

Բան: Ուսուցանէ ուղղապէս կենցաղավարիւ: Բան: Այսինքն, ուսուցանել՝ ոչ թէ զայլս, այլ զիւրինքն՝ զի ուղղապէս կենցաղավարիցի:

Ուստի գիտութիւն յայնժամէ պարզ և ողւոյն սրբոյ՝ յորժամ գիտողն, այնու նախ զիւրինքն ուսուցեալէ ուղղապէս կենցաղավարիւ, և ապա զայլս: Իսկ գիտութիւն այն՝ որով որ զայլս միայն ուսուցանէ բարեք կեալ՝ բայց ոչ երբեք զինքն, այնպիսի գիտութիւնն ոչ կարէ կոչի պարզ և ողւոյն սրբոյ: Աստուստ հետեւի, զի բաղումք որք ոչ ունեցան զգիտութի ուսուցանելոյ զայլս, բայց ուսուցին զինքեանս ուղղապէս կենցաղավարիւ, ունեցան այնու զգիտութե պարզ և և բաղումք որք զայլս ուսուցին, զինքեանս ոչ ուսուցանելով առ բարին, զրկեցեալք դտան 'ի պարզ և գիտութե: Ուստի ոչ որ միայն բարեպէս ուսուցանէ արդիւնաւորի, այլ որ ուսուցանէ զմծայինս, և ուսանի, զպարզ և գիտութե ունի:

Գլխի:

Ա

ԴԼԽԷ.

ան : Եւ ընտրութի տմանց դժուարին դարձոցա
 ԼԾ. Ընտրութի դժուարին դարձոց է կրկին .

Ա

մինն է զայնց՝ որք կարգաւորեցեալք են առ
 կեանն յաւիտենական . և այսպիսեաց ընտրումն , այս է՝

2.2.խ.52
 պ.1.4.

զայսպիսեաց քաջապէս խորհիլն , է սարգև ողւոյն
 սրբոյ . որ ասի խորհուրդ : Իսկ միւսն է զայնց՝ որք

1.մակ.2.

ոչ են շարակարգեցեալք առ կեանն յաւիտենական , այլ
 առ բարւոք կեցութի կենի . և այսպիսեաց ընտրումն

այս է՝ զայսպիսեաց քաջապէս խորհիլն՝ ոչ է սար
 քև ողւոյն սրբոյ , զի այսպիսի խորհրդականութիւն

կարէ լինիլ նաև ի ձրի տունեալ ընտրէ . որպէս ասի
 մակարայեցւոց . ահա ըմբռնեալք այր ձեր այր քաջ խոր
 հրդական :

ԴԼԽԸ.

ան : Ճանաչի ի ձեռն կրթութե : ԼԾ. Իմաս
 տութե՛ն որ է սարգև ողւոյն սրբոյ , ճանաչին

Ա

անայինքն ի ձեռն կրթութե . այս է՝ ի ձեռն
 փորձի , կամ ճաշակման . ուստի հետեւի թէ ստացա

կան իմաստութե ոչ ճանաչին անայինքն փորձի ,
 կամ ճաշակմամբ . զորորինակ՝ ունողն զունակութիւն

առաքինութեան՝ մինչ դատէ զառաքինութե , և կամ
 խափ , փորձիլ և ճաշակմամբ մտածէ զայնց . իսկ որ

ունեւոր միայն զբարոյական դիտութի , դատէ զառա
 քինութեանց՝ և ճառէ զներդործութեց առաքինու

թեանց , թէ և ուղղապէս ճառիցէ՝ սակայն այնու ոչ
 մտածէ զառաքինութեց փորձիլ , և ճաշակմամբ :

Ուստի հետեւի թէ այսպիսին ըստ ամի ոչ դատէ
 զառաքինութե . քանզի անգէտ է զհամեղութենէն .

1.կոր.2.

բայց որ փորձիլ դիտէ՝ ըստ ամի դատէ . որոյ վասն
 ասէ առաքեալն . հոգւոյն դատէ զամ :

Եւ դիտենսիոս ասէ՝ երիօգորոս է դիտուն , ոչ միայն
 ուսանող , այլ և կրող զանայինս . և վասն այնէ՝ զի

1.խ.1.

պ.6.

առ բազումս դիտունս որք եղեն միայն ուսանողք ,
 ասելոց է Տրն , ոչ դիտեմ զձեզ ի բաց կացէք մշակք

անիրաւութե . և այլն :

ԴԼԽԹ.

ան : Թէպէտ իցեն ութն ըստ էութե : ԼԾ. Ի
 ճանաչն են եօթն , վերջին երանութիւն որով լի

Ա

նի ութն գոյով հաստատիչ և փորձիչ եօթեանցն
 դրէ թէ՝ տայ զգոյ նոցին , և այսու սովորեցաւ ասիլ

էութի . որոյ վասն ասի թէ ութն են ըստ էութե ,
 այսինքն , ըստ այնմ որ էացեալք երևիցին . քանզի

յայնժամ է որ ճշմարիտ աղբատ , հեղ , սգաւոր , և

այլն

այլն, յորժամ վասն բանի հալածանաց՝ ոչ բացահե-
ռանայ յայտպիսեաց առաքինութեց. այս է, եթէ վասն ^{1.2. Խ. 69}
դոյլն աղքատ, հեղ, սքաւոր, և այլն, հալածիցի, ^{սլ. 3.}
յոժարութե ընդունիցի զայն առանց թուլանալոյ՝ ի
բարեացն որոյ վասն հալածի: Եւ թէ ասիցես, ըն-
դէր սքն զուկաս միայն զչորս երանութիս գրէ. այս է
պատճառն. զի Քն յայնժամ խօսէր զայնս խաժամուժ
ամբոխից. և զոր զայնս խօսէր սո աշակերտան, գրէ
մատթեոս: Իսկ խաժամուժ ամբոխքն՝ իչորս իրս կայա-
ցեալ գիտէին զերանութին. քանզի ոմանք ասէին
կայանալ ի փարթամութեան. ընդդէմ որոց ասաց՝
երանի աղքատաց: Ոմանք ի յուսեին, և ի բնական առա-
տապէս. ընդդէմ որոց ասաց. երանի որք քաղցեալք
իցեն: Ոմանք դնէին ի մարմնաւորի ուրախութե, և
ցնծութե, ընդդէմ որոց ասաց, երանի այնց որք լան:
Եւ ոմանք դնէին ի յարտաքին ընդունելութե, և պա-
տեոյ. ընդդէմ որոց ասաց. երանի է ձեզ յորժամ
ատիցեն զձեզ՝ և այլն: Դարձեալ եթէ ասիցես, ի
սք գիրս գոն նաւ այլք բաղումք երանութիք. ու-
րեմն ոչ են ութն միայն՝ այլ յոլովք: Պատասխանեմ
թէ նոքին ամենեքեանք վերաբերին առ սոսա. և ոչ ^{1.2. Խ}
աճեցուցանեն զթիւն, սլ. 4. ան, այն զոր ասէ յթ ^{69. սլ. 3.}
երանի առն որ խրատի ի ՏԷ, վերաբերի առ երա-
նութի սոց: Եւ այն զոր ասէ սաղմոսն՝ երանեալ է
այր որ ոչ դնաց ի խորհուրդս ամբարշտաց, վերա-
բերի առ երանութի սրբութե սրաին. լոս այսմ
խնա և զայրոց ամենից:

Բան: Որք ոչ ունին, և զամ ունին: ԼԺ. Ոչ ու ^{ԴԼ. ԽԲ.}
ներոյն զամ ինչ ունելն է՝ այս, զի ճմարիտ աղ-
քաւորն Բի, մեծ իմն բաւականութի ինքեանց ^Ա
համարին զաղքատութի իւրեանց. և անդր քան զհա-
մայնս գանձս աշխարհի, ըղձակերտեն զայն. և առա-
ւել խնդան զի են աղքատք, քան թէ իցէին փար-
թամք. և առաւել արարին, և երկնին ի փարթա-
մութե, քան թէ փարթամքն ի յաղքատութե:
Ճմարիտ աղքատքն խոյ. ան ի փարթամութեց. զի
ոչ այնու կեալ, այլ մեռանիլ համարին. իսկ փար-
թամք հրճոնին ընչիւք, զի այնու կեալ համարին որովք
բազմիցս մեռանին: Եւ թէ որք իցեն խոհեմք ի սո-
ցունց, յայտէ ի վարուց հարցն սրբոց. որք գոլով
խոհեմագունեղք՝ ընտրեցին զաղքատութի. որ գոն.
սք անդունիսս աբբայն. սք բէնէդկերտոս. սք հիւա-
րիոս:

բիտս , սք տօմէնիկոս . սք ֆրանչիսկոս՝ և այլք բազումք , որք կարէին ունել զփարթամութիւն , բայց խոտեցին : Աստուտ բարոյք եղբակացուցանի , զի թէ զոչինչ ունեղքն զամինչ ունին . ուրեմն ունեղք զփարթամութի , զոչինչ ունին : Քանզի որքան բազմանայցեն դրամքն փարթամաց՝ այնքան ևս ամին կարօտութիւք ընդ նմին . և ոչ կարեն բաւական ինքեանց համարիլ զայնս զորս ունին : Որոյ վասն, զկերակուր, և զհանգերէ զորս աղքատքն հանդարտութք ունին , նոքին չարակրութք , և ցառով զայնս միայն՝ և ոչ զիմն աւելի քան զայնս ընդունին :

ԴԼԽԹ. **Բ**ան : Որ ոչ զգայ զգաւնութի ոգւոյ : ԼԺ. Ու զգալն՝ կրկին է . մին է՝ որով ամենեւին ոչ զգայ զգաւնութի , և այս յարմարի մարդոյ՝ ոչ աստ , այլ ի վերին գաւառին . իսկ միւսն է՝ որով նուազեալ է զգացումն դաւնութե ի ձեռն շնորհաց , և համեմատելով առ բարկացողս որք առաւել զգան զգաւնութի , ասի ոչ զգալ զգաւնութի . և ըստ այսմ կերպի իմանի ճշմարիտ հեղոց ոչ զգալն զգաւնութի :

ԴԼԺ. **Բ**ան : Է միայն սիրոյն : ԼԺ. Սգալ զարէն՝ զի փ՝ զրկեցուք այնու ի սիրելոյն՝ յառաջանայ ի սիրոյ . զի սէրն առնէ սգալ , և սիրէ զսգալ , և հրճուի զսգոյ . և որքան առաւել հրճուի՝ այնքան առաւել սգայ . և որքան առաւել սգայ՝ այնքան առաւել հրճուի . զի այսպիսի տրտմութիս ըստ առաքելոյն՝ գործէ զկեանս . որպէս և աշխարհի տրտմութիս զմահ : Արդ՝ մինչ սուքն գործէ զկեանս՝ հրճուի սգացողն , և մինչ հրճուի՝ առաւել սգայ , զի առաւել գործեսցէ սուքն զկեանս հրճուելիս : Ուստի սք օգոստոնոս , միշտ ապաշխարելով ցամէր . և վասն ցաւելոյն հրճուէր :

ԴԼԺա. **Բ**ան : Պարունակէ զհաւատ , զյոյս , և զսէր : ԼԺ. Արդարութիւնն առնանի աստ իբրու ընդ հանրական իմն՝ պարունակօղ զհամայնս . բայց զի նախապետաբար պարունակէ զհաւատ՝ զյոյս , և զսէր , և երկրորդաբար զայլս համայնս առաքինութիւնս . վասն այն յիշումն լինի միայն զերից , որով ցուցանիցի նախապետականաբար զայնս պարունակել և երկրորդաբար զայլս համայնս :

Բան : Ողորմութիւն է՝ որով երկրաւորութե շահին
երկնաւորք : 15. Թէպէտ նաև այլովք առա- ԴԼԾԲ.
քինութեք շահիլ կարեն երկնաւորքն, բայց ինչք Ա
կերպիւ ՚ի համայնս առաքինութիս դռանի բան ողոր-
մութե, վասն այն դնի այնպէս. զորքորինակ, մինչ սի-
րէ ոք զամ, Թէպէտ բացարձակաբար ոչ երևի ան-
դէն բան ողորմութե, բայց գոյ ինչք կերպիւ. բան
զի որ սիրէ զամ, ողորմի հոգւոյ իւրոյ լցուցմամբ
կարօտութեան նորին : Մամնապէս մինչ համբերել ոք
բարկութեան ուրուք, ողորմի նմա, զի այնու շնո-
ւանէ զբարկութիւն իյրնկերն. և այսպէս յայտէ ՚ի
յայտ ամն առաքինութիս, յորս դռանի ողորմութի,
կամ առ հոգի իւր, և կամ առ բնկերն :

Բան : Եւ մաքրի սիրտն : 15. Աստէն սիրտն առ ԴԼԾԳ.
նանի փոխանակ բանականի մատին. ՚ի յոր է Ա
իմացութի, և կամք : Առք՝ այսու երանութե
իմացութիւն ՚ի մոլորութե մաքրի, և կամքն ՚ի շար 1.2. Դ. 7.
ախորժմանց. որով իմացութիւնն հաւատով լնանի. Ա. 2.
լստ այնմ որ ասի ՚ի դորժոց, հաւատով սրբեալ Դորժ. 15
զսիրտ նոցին : Իսկ կամք սիրով լցեալ լինի՝ լստ Եբր 2.
առաքելոյն որ ասէ՝ առանց սրբութեան ոչոք տեսցէ
զամ :

Բան : Եւ Թէ իցէ այլ ինչ անդոր է : 15. Եթէ ԴԼԾԴ.
առ յայլ իմն անդր բան զայս տարածիցեմք զնա Ա
զաղութիւնն է անդոր. ոյ՛դոն, եթէ ասիցեմք
տաղցութ մարմնոյ զոր խնդրէ, զի խաղաղութի լիցի,
և ոչ զպատերազմունս յարուսցէ, անդոր է այս. նաև
այլք նմանք համայնք. ուստի ճշմարիտ խաղաղութի
՚ի յաղթութեան ախորին կայանայ, և ոչ ՚ի հետեւ
մանն :

Բան : Չի ՚ի վեր բան զխաղաղութի՝ ոչ է այլ առա- ԴԼԾԵ.
քինութիւն : 15. Ի ժամանակի յաջողութեան Ա
ոչ է այլ առաքինութի ՚ի վեր բան զայն. բայց
՚ի ժամանակի հալածանաց, համբերելն խնդութեամբ
տաննից փորձութեց, է մեծադոյն բան զամ :
Եւ կամ Թէ լստ այնմ որ է վախճան առաքինու-
թեան, ոչ է ՚ի վեր բան զխաղաղութիւն այլ առաքի- սաղ. 147
նութի. լստ սաղմոսին որ ասէ, որ եդ զսահմանքո
՚ի խաղաղութե :

74. Ծ զ. Բ ան: Ի ձեռն հոգևոր զգայութեց: ԼԾ. Որպէս մարմնաւոր զգայութիւն ունին դառարկեալս, այսինքն, աչքն զգոյնաւորն. ականջն՝ զհնչումնաւորն. և այլն: Նոյնպէս Ի ձեռն նմանութեց մարմնաւորաց հոգին իմանայ զզանազան փափկութիւնս Ի յիրաց հոգևորաց, որք զանազան կերպիւ առարկին նմա, որպէս երևի դրեալ Ի գիրս երգոց երգոյն. նորում փեսայն զհարսէն, և հարսն զփեսայէն խօսի զտոոց հոգևորէ, զձայնէ. զբաղցրութիւն, և զսցլոց որք դիւրասցէս իմանին, եթէ խորհեցեալք լինիցին: Եւ որքան առ այստիսիս՝ ասին հոգևոր զգայութեց:

74. Ծ է. Բ ան: Եւ արդ՝ պտուղ հոգւոյ են այսոքիկք: ԼԾ. Որքին, այսինքն, երկոտասան պտուղքն, ոչ միայն են պտուղք, այլ և արդիւնաւորք. բան զի մէք Ի ձեռն այնց դործոց արդիւնաւորաց, արդիւնաւորիմք. զի նորքին, այսինքն, խնդութիւն, խաղութիւն, համբերութիւն, և այլքն՝ են դործք մեր: Եւ եթէ ոք ասիցէ՝ թէ ինեղկայ կեանս՝ դործք մերք են միայն պտուղք սիրոյն, և ոչ արդիւնաւորք, այն պիտին անկանի եւթ նզովից սքլ ժողովոյն տրեւէն թիւոյ: Ուստի դիտելի է. զի դործք մերք չեն միայն պտուղք սիրոյ, այլ և արդիւնաւորք. բայց այս է, զի այլով բանիւ ասին պտուղք, և այլով բանիւ արդիւնաւորք:

74. Ծ Ե. Բ ան: Պատկառանք: ԼԾ. Այսինքն, արտաքին արարողութիւն կեկեղեցւոյ որ առատրի նյ, կոչի պատկառանք. իսկ ներքինն որ է հաւատն՝ այնու երկրապագէ հոր՝ հոգւով և ճշմարտութիւն: Ուստի՝ որպէս որ ոչ ունի զհաւատ ներքին, զպատկառանս տալով նյ արտաքուստ՝ ոչ օգտէ, այլ մեղանջէ, նոյնպէս՝ որ հաւատրի ունել զհաւատ, և զարտաքին արարողութիւն կեկեղեցւոյ՝ որով տրի պատկառանք նյ՝ մերժէ, այնպիսին ոչ օգտի՝ այլ անօրինի: զի որ զպատիւն և զպատկառանս՝ նյ առատրեցեալս մերժէ և եպերէ, այնպիսին նաև զնձ մերժէ. և որ զնձ մերժէ, զիսիւ նյ հաւատացող զինքն առէ: Ուստի՝ որպէս ըստ առաքելոյն՝ որ ոչ սիրէ զՏՊ ՅՍ, է՝ նզովեցեալ, նոյնպէս և որ մերժէ, և կամ ծաղր առնէ զպատկառանս նյ առատրեցեալս, այսինքն, զարարողութիւն կեկեղեցւոյ՝ է նզովեցեալ:

74. Ծ Զ. Բ ան: Պատկառանք: ԼԾ. Այսինքն, արտաքին արարողութիւն կեկեղեցւոյ որ առատրի նյ, կոչի պատկառանք. իսկ ներքինն որ է հաւատն՝ այնու երկրապագէ հոր՝ հոգւով և ճշմարտութիւն: Ուստի՝ որպէս որ ոչ ունի զհաւատ ներքին, զպատկառանս տալով նյ արտաքուստ՝ ոչ օգտէ, այլ մեղանջէ, նոյնպէս՝ որ հաւատրի ունել զհաւատ, և զարտաքին արարողութիւն կեկեղեցւոյ՝ որով տրի պատկառանք նյ՝ մերժէ, այնպիսին ոչ օգտի՝ այլ անօրինի: զի որ զպատիւն և զպատկառանս՝ նյ առատրեցեալս մերժէ և եպերէ, այնպիսին նաև զնձ մերժէ. և որ զնձ մերժէ, զիսիւ նյ հաւատացող զինքն առէ: Ուստի՝ որպէս ըստ առաքելոյն՝ որ ոչ սիրէ զՏՊ ՅՍ, է՝ նզովեցեալ, նոյնպէս և որ մերժէ, և կամ ծաղր առնէ զպատկառանս նյ առատրեցեալս, այսինքն, զարարողութիւն կեկեղեցւոյ՝ է նզովեցեալ:

Բան : Մարմնոյն Բի իմացեալ ըստ ինքեան , ԼԾ.
Ասինքն , իմացեալ ըստ մերոյ մտածութե , յոր
ժամ մտածեմք ըստ ինքեան մարմին : Քանզի 'ի կողմանէ
իւրմէ' մարմին Բի ոչ երբեք եղև միայն ըստ
ինքեան առանց անձայնոյ անձին :

Բան : Եթէ ոչ իցէ ձեացեալ իբր զիս : ԼԾ.
Ասինքն , եթէ ոչ իբր զիս իցէ ձեացեալ ,
և ոչ պատկեր Բի , կամ խաչի իցէ 'ի նմին նկարեցեալ ,
յայնժամ պարտի վերնագոյն պատկը : Բայց թէ իցէ
ձեացեալ որպէս զիս , կամ ունեալ զնկարումն ինչ
խաչի' և կամ պատկերին Բի , պարտի յայնժամ ան-
ային պաշտօն : Ատուտ իմանի' թէ խաչն' ըստ որում
պատկեր խաչեցելոյն Բի պաշտի , և ոչ ըստ որում
նիւթ ինչ կազմեալ . ուստի որպէս պատկերի ծնն-
դեանն Բի , նորում ԳՍ իբրև զմանուկ նկարի , պաշ-
տելութե անձայնով երկրպագեմք , այսպէս և խաչին
և որպէս 'ի յայնմ պատկերով որպէս զծնեցեալ երկր-
պագի և պաշտի , այսպէս և 'ի նմին' որպէս զխաչե-
ղեալ :

Բան : Իսկ պատկերաց պարտի նոյն երկրպագու-
թի : ԼԾ. Հարկաւոր է' զի զպատկերս սրբոց ալ
նու պատուով պատուեցեմք , որով և զսքս սյ . ոչ
ասէ սքն բարեղ կենարացին . ընծայեցեալ պատկըն
պատկերին , առ ինքն նախատիպն պատկերին վերա-
բերի . զնոյն ասացին և հարք սքն ժողովոյն նկիկոյ .
և սքն յօհան ոսկեբերան , աթանաս , և կիւրեղ , և
այլք համայնք հարք սքն : Բայց գիտելի է' զի ներ-
գլխոյս այսորիկ են չորք եղերք , այսինքն , պարզ
պատկը , վերնադոյն պատկը , անձայն պաշտօն , և
երկրպագութի : Պարզ պատկըն , տրի սրբոցն սյ ,
կամ պատկերաց նոցին , և նշխարաց : Եւ գերազանց
պատկըն' տրի մարմնոյն Բի մտածեալ ըստ ինքեան ,
և մասի խաչադիպտին' որ չէ ձեացեալ իբրև զիս ,
և ամենօրհնեալ կուսին մարիամն : Իսկ պաշտելու-
թին որ է անձայն պաշտօն , տրի սյ , և մարմնոյ Բի
մտածեցեալ 'ի յանձին անձայնոյ' յոր և իսկ է' միշտ . և
խաչին Բի , որ է պատկեր նոյնոյ Բի խաչեցելոյ . և
համայնից պատկերաց Բի , թէ ծննդեան' թէ յարու-
թե , և այլոց . նաև պատկերաց ամենասք երրոր-
դութե , մինչ հարկաւոր է' զի զոր ինչ տամք տեարց
պատկերաց , զնոյն ևս տայցեմք պատկերաց նոցին :
Իսկ վասն բառիս այս երկրպագութի' ծանիր , զի

Քիւ, և կամ պատկեր իւր, և կամ խաչ իւր, և կամ մարմին և արիւն իւր՝ մինչ երկրպագի, այն է անձային երկրպագութի. և նոյն է ընդ պաշտելութե, զի այսու, տոեղձնաճն ստորարկէ զինքն՝ իւրոյ ստեղծողին. ուստի և ծաւնր կրկնեալ լինի՝ առ ՚ի դանաղանութի այլոց, որք ոչ երկրպագին անձային երկրպագութի: Իսկ մինչ խոնարհեցուցմամբ գլխոյ երկրպագին պատկերք սրբոց, այն է երկրպագութի պատուոյ. և նոյն է ընդ պարզ պատուոյն, զորմէ ՚ի վեր ստացաք: Եւ մինչ առաւել խոնարհեցուցմամբ գլխոյ երկրպագի պատկեր ամենեւանեցեալ կուսին, այն է երկրպագութի դերազանց պատուոյ. և նոյն է ընդ վերնագոյն պատուոյն զորմէ ստացաք:

ՔԼԾԾ.

Ա

ան: Կամ իբր տուեալք, և կամ իբր ներածնեալք: Ը. իբրու տուեալք՝ են համայնք արարողականք, և դատաստանականք, որք յատկապէս կոչին մօսիսական օրէնք. զի միայն ՚ի ձեռն մօսիսի տրեցան խրայելական Ժողովորեան. զորս պարաւանդէր մինչև ՚ի դալուստ շնորհաց օրինին:

ՏԼԾԼ.

Ի. Բ. խ.

100. պ. 11

Ուստի այժմ՝ որպէս ոչ պարաւանդէ զմեզ, նոյնպէս և զհրէայսն: Իսկ իբր ներածնեալք՝ են բարոյական պատուիրանքն՝ որք պարունակեն զտանձնեան, բաց ՚ի պարագայէ շաքաթուն. և ասին ներածնեալք, զի բնականաբար են դրեցեալք ՚ի սրտի մերում ըստ առաքելոյն, և իբրութե ճնեցեալք ՚ի ներքս մտաց մերոց. և այսոքիկ տեւեն ՚ի յաւիտեան: Ուստի անձնութեան, ՚ի բարեղէն տախտակով գրեալ ետ մշակի, զի մնալոց էր յաւիտեան: Իսկ զարարողական օրէնն՝ ետ գրել ՚ի մագաղաթով, զի չէր մնալոց ՚ի յաւիտեան:

ՔԼԿ.

Ա

ան: Ոչ են յանդիմանելիք բրիտոնեայք: Ը. Լսան այն ոչ կարէ որ յանդիմանել զբրիտոնեայս վասն երկրպագութե պատկերաց, զի մինչ պատկերին Քի երկրպագեմք անձային երկրպագութի, ոչ դիտեմք տալ զայն նիւթոյն՝ յորմէ կաղմեցեալ է պատկերն, այլ դիտեմք տալ այնմ որոյ յառաւն տալաւորեցեալ է պատկերն. ուրեմն Քի երկրպագեմք որ է ան: Եւ մինչ երկրպագեմք պատկերաց սբց, ոչ երկրպագեմք անձային երկրպագութի, այլ երկրպագութի պատուոյ, և կամ վերնագոյն պատուոյ, և զայս ես՝ ոչ տամք նիւթոյն, այլ այնմ որոյ է պատկերն: Ուրեմն բարեպէս կատարեմք զհրամանն

մանն Տն, որ ասէ, Տն այլ բում երկրպագցես, այս է՝
 անային երկրպագութե. և զնա միայն պաշտեսցես,
 այս է՝ պաշտօնին անայնով:

Բան: Հրեայքն զնեան: 18. Սոքին կռապաշտք
 կոչին վասն այն, զի նեանն ոչէ փրկիլ՝ այլ մօր-
 րեցուցիլ. արդ՝ ունի ի ժամանակի նեանն դռանն-
 զնալ հրեայքն ներդործութե երկրպագանելոցք են
 նեանն, և ելոցք են կռապաշտք, այսպէս և ի ներ-
 կայիս եղեալ հրեայքն՝ ուխտին և յառաջադրութե
 երկրպագեն նմա. զի միշտ սպասեն բաղձանօք դա-
 լտեսան նորին, և յորում պահու եկեսցէ՝ պատրաստք
 են երկրպագել նմա:

Բան: Եթէ ոչ զոր ինչ երեւակայութիւք և կար-
 ճիւք իւրեանց կերպաւորեն: 18. Հերետիկոսք
 հոգոն, արիւնտք, և սաբեղանոք՝ իւրք կերպիւ
 ասին կռապաշտք. զի արիտս պաշտէր զայն՝ որ ունէր
 զտրիս անձինս և զերիս բնութիս. իսկ ճշմարիտ անձն
 ոչէ այնպէս, այլ երեք անձինք և մի բնութի. ուրեմն
 զճշմարիտ անձն ոչ պաշտէր, այլ զայն՝ զոր երեւ-
 կերպութի իւր կերպաւորէր: Զնոյն իմա զսաբե-
 լիտէ՝ որ ոչ հաւատայր զերրորդութիւն անձանցն. այլ
 ասէր զոչ մի անձն միայն ի յերրորդութե:

Բան: Իւշտան ցոյցք հայհոյութե: 18. Ոչ ամ-
 թէ իսկապէս իցեն հայհոյութիւք, այլ թէ երեւին
 այնպիսի երգմունքն որպէս զնշանս, և կամ
 զցոյցս հայհոյութե, կամ անպատկառութե. զի թէ
 պէտք բանն ան գոլով մարմնացեալ ունի զգլուխ, և
 զալիս, բայց անպատկառութիւ երդունիլն ի յայնս:
 Իսկ եթէ իբրով անմարմնոյ այլ առատրելով որ
 զգլուխ, և զալիս՝ երդնուցու, այնպիսին է իսկական
 հայհոյիւ:

Բան: Պարսպիւն առ ան աղօթելով: 18. Այս
 ինքն, յաւուրս տօնից, և կիրակելի, պարտինք
 պարսպիւն առ ան, տեսանելով զպատարադոս,
 և լսելով զքարոզութիս, և զբանս անայինս:
 Սակայն՝ որք միայն մարմնով ներկայ դռանին պատա-
 րագագ, և կամաւորութե թող տունեալ մտացն՝ ցնդին
 ի ժամանակաւորս՝ և ի յունայնս, և ոչ զնեն ուշ աղօ-
 թիցն, այնպիսիքն ոչ ասին պարսպիւն առ ան, այլ
 հաւատարմ են այնոյ՝ որք ոչ գոլով յեկեղեցւոյն, դոր-
 ծեն զալսաբանական դործս իւրեանց. և կամ են նոյն
 ջեալք ի մէջ եկեղեցւոյն: Ուստի՝ այնպիսիքս ոչ

վճարեն զպարտս իւրեանց՝ որ քանիցս առնեն կամաւորապէս : Բայց եթէ յախճայ ցնդի միտն՝ վճարի պարտն :

Բ

ան : Ի ծառայական գործոց : ԼԾ. Ատելով թէ պարտէ դադարիլ ի ծառայական գործոց, իմա ծի թէ աղատական գործքն, որ դոն, գրել զամօթին բանս վասն ինքեան, և հնչեցուցանել զերդէհօնս՝ և այլ նմանք՝ ոչ արդէլանին : Կաւ պատրաստել զդէ զօրէս հիւանդաց, և կամ հարկաւոր աշխատանք առ կեցութիւն ինքեան, կամ ընկերին ոչ արդէլանին ի յաւուրս տօնից. որ դոն, եթէ հրայրեցութի գոյ, և կամ փախուստ յերեսաց թշնամոյն, կարեն աշխատիլ առ ի փախուցանել զինչս իւրեանց՝ կամ ընկերին. ըստ այսմ իմա և զայլոց նմանեաց :

ԴԼԿԴ.

ան : Հնազանդութիւն : ԼԾ. Հնազանդութիւն այլ տոյ է իւրաքանչիւրոց հարանց՝ ըստ իրաւանց նոցին ի ներքոյ այ՝ Ուստի եթէ մարմնաւոր հայրն, և կամ հոգեւորն՝ հրամայիցեն զինն ընդդէմ այ, ոչ միայն ոչ եմք պարտական հնազանդիլ, այլ և պարտականք եմք ոչ հնազանդիլ : Բայց մինչ ընդդէմ այ ոչ հրամայեն զինն, այլ իւրաքանչիւր հարք ըստ յատկացելոց իրաւանց իւրեանց հրամայեն, (ի ձեռն հրամանիս այս՝ որ ասէ, պատճենս զհայր քո) պարանդիմք հնազանդիլ :

2.2. իւ.
104. պ.
1.2.

ԴԼԿԴ.

ան : Ամենայն շարժումն բարկութե : ԼԾ. Այլ շարժումն բարկութե որ է անկարգ, և առանց պատճառի՝ արդէլանի. իսկ ոչ այնպիսի բարկութի, որ ոչ ի յախտից՝ այլ ի յիրաւանց շարժի դատաւորն, և պատժէ զտոբադրեցեալսն իւր : Ուստի մինչ ասէ ՏԻ, որ բարկանայ եղջօր իւրում ի տարապարտօւց, պարտի իմանիլ այսպէս, այսինքն, տարապարտօւցէ բարկութիւնն երբ կամ ոչ գոյ պատճառ բարկանալոյ որք են յանցանքն, և կամ թէ արէտ գոյ պատճառն բայց բարկացողն ոչ է դատաւոր աշխատում բարկանայ : Ուրեմն զի մի լիցի բարկութիւնն մեղք, երկու պահանջին, այսինքն, պատճառ՝ որ է յանցանքն, և ի շիւանութիւնն որ է դատաւոր գոնն :

Բ

ան : Ըստ համարեալ եղանակին : ԼԾ. Ասի ըստ համարեալ եղանակի՝ Նկատմամբ մարմնաւորի աղանման. բայց նկատմամբ հոգեւորի սպանութեան, սպան զբարձրիակս այլոց՝ որով հոգիք մարդկանց սպաւնա :

նանին , և ըստ ինքեան հոգևոր տղանութի , և երբեմն է մեծադոյն մեղք՝ քան զմարմնաւոր տղանութիւն :

Բ Ասան այն յղէ անդ՝ զի մի՛ զնոյնս կրկնեացէ աստուքանդի համայնք գործք բղձախոհութե , արդէ լանին 'ի ձեռն հրամանիս այս՝ որ ասե՛մ մի՛ շնար :

Ուստի զգուշանայի է 'ի հրէական մեկնութենէն՝ որք ասեալին , ան՝ արդեւեաց զնալն , և ոչ զսրտիւ ցանկալն : Ընդդէմ որոց ասաց Տր՝ , բայց ես ասեմ՝ , այսինքն , մեկնեմ զնոյն հրամանն , զի նաև այն՝ որ հայի 'ի կինս առ 'ի ցանկանայոյ , անդէն շնացաւ 'ի սրտի 'իւրում : Ուրեմն Տրն մեր մեկնեաց՝ թէ բնաւ գործք բղձախոհութե արդեւանին այնու հրամանան :

Բ ասն : 'ի հնազանդութե : Լծ. Ասան այն իսրայելացիք մինչ 'ի ձեռն հնազանդութե այ՛ , յափշտակեցին զնչս եղիպտացոց՝ ոչ եղև մեղք , զի ան՝ եր բաղարձակ Տր ան՝ իրաց աշխարհի : Ուրեմն եթէ ոք ոչ իցէ Տր իրաց , ոչ կարէ հրամայել բառնալ . նաև ոչ վասն հնազանդութե ուրուք որ չէ Տր իրին , կարէ ոք բառնալ զիրս ուրուք , ուչ և յայտ է :

Բ ասն : Լռել զճշմարտութի 'ի հարկաւոր ժամանակս : Լծ. Հարկաւոր ժամանակն է այն , զի կամ երդողեալէ ոք ոչ ասել զիր իմն զոր գիտե : և կամ վերնադռնի հրամանն տայ լռել . կամ պաշտօն իւր հրամայէ զի լռեսցէ : և կամ խնդմանաց հրամայէ՝ դիտելով զի եթէ ոչ լռիցէ յայնժամ 'ի խօսելոյ զճշմարիտն՝ ծնանին մեծամեծք չարիք :

Բայց որք երդմամբ կոխն 'ի վկայութի , ոչ կարեն լռել 'ի խօսելոյ զճշմարիտն . զի հետեւի անտուտ ստուծի երդման : Նմանապէս դատաւորն ոչ կրցէ լռել զճշմարտութի , մինչ անտուտ հետեւի թիւրութի 'ի դատաստանի . նմանապէս ամբաստանողն 'ի դատաստանի՝ մինչ պարտական է առ դատաստանն խօսիլ զճշմարիտն՝ ոչ կարէ լռել , և պատճառն է՝ զի եթէ այսպիսիք 'ի յայնպիսում՝ դիպողամօջ լռիցեն , երևին խօսիլ 'ի միւս կողմն՝ որ է սուտ :

Բ ասն : Ոչ արդեւեալք լինին յօժարութիւնս այնք : Լծ. Այսինքն , յօժարութիւնս որքան առ լռիցիկն՝ որ կոչի նախկին առաջին շարժումն , ոչ է մեղք յատկաբար՝ , վասն այն ոչ արդեւանի : Բայց բաղձալն բաղձանօք զգալականութե՝ յառաջն :

1.2.խ.74
 պ 8. լուծ դեանն , վասն անհոգութեանն զորս եթող յառաջեղ դեանն է մեղք . սակայն եթէ իցէ այսր քան զհաւանութեանն բանի է ներելի . և եթէ հաւանութեամբ բանին՝ յայնժամ է մահուչափ՝ եթէ իցէ բաղձանն զմահուչափից : Չայսմանէ տես ՚ի վեր , ՚ի յերրորդ գիրքն , ՚ի Ժ գլուխն , և ՚ի լուծմունքն նորին :

ԳԼ. ԿԺ. **Ա**մն : Այլ աւետարանական յանելու ՚ի վերայ և զխրատոս : 18. Բարեղք ասէ թէ յանելու ՚ի վեր , զի աւետարանական օրէնն՝ բաց ՚ի խրատուց՝ յանելու ևս ՚ի վերայ հրամանացն՝ զանանս հրամանս . ըստ այնմ , որ արձակէ զկին իւր՝ չնայ . և այլք նմանք : Քանզի Քս ոչ միայն տրեցաւ մեզ որպէս զերկիչ , այլ և որպէս զօրէնադիր , որպէս զի հնազանդ իցուք հրամանաց նորին . ուստի անհնազանդ դուանկիւն առ օրէնն նորին , ոչ է թեթեւ ինչ , այլ պարտաւորող առ մահուչափ մեղք՝ և առ կորուստ : Իսկ թէ ասիցես , Քս զբազումս բանս եղ ոչ զգարչ խրատոս՝ պատշաճաւորեալ առ կառարելութի , որպէս այն , եթէ կամիս կառարեալ լինիլ երթ վաճառեալ զինչս քո և տուր աղքատաց . կամ որ հարկանէ զծնօտքո՝ դայր՝ ձո , նմա զմիւսն , և այլք նմանք բազումք . ուրեմն զսակաւս հրամանս յանել : Պատասխանեմ առ այդ՝ թէ Քս ոչ ետ զինն խրատոս այնքան լոկ մինչ զի ինիք կերպիւն ոչ կարիցէ լինիլ հրամանս . քանզի զայն զոր ասաց Տր , որ արձակէ զկին իւր՝ չնայ . և զոր ասաց , թողուցու իւրաքանչիւրք զյանցանս եղբօր իւրոյ՝ ՚ի սրտի իւրում , և այլք նմանք , էին պարզ հրամանք : Իսկ զայն զոր ասաց՝ եթէ կամիս կառարեալ լինիլ վաճառեալ զինչս քո և տուր աղքատաց . և զոր ասաց՝ ուրանալ զանձն և բառնալ զխաչն . և զոր ասաց , են ներքինիք որք զանձինս իւրեանց տրարին ներքինիս , որ կարողն է տանիլ տարցի , և այլք նմանք , էին պարզ խրատոս . բայց կրօնաւորաց ուխտողաց զաղքատութի , զհնազանդութի , և զողջախոհութի , եղեալք են հրամանք : (Չի ճշմարիտ աղքատն զօրինչ ունի : Էլ ճշմարիտ հնազանդն՝ մահացուցմամբ ճանաչման և յօժարութե իւրոյ , ուրացեալ է զանձն , և բազմեալ է զխաչն զի համբերէ տանջանաց՝ ՚ի մահացու ման այնց՝ որք են անձին իւրոյ , այսինքն , ճանաչման , և յօժարութե : Քանզի անձն մարդոյ զերկուս ունի , որք են աղետ աշոյիք ինքեան , այս է՝ զճանաչումն , և զյօժարութի , որք մահացուցանին ՚ի ճշմարիտ հնազան .

զանդան , իսկ Ճմարխո որջախոհն՝ արարեալէ զինքն ներքինիս) Եւ զայն զոր առաց Տր , սիրելիք զթշնամիս ձեր . և զոր առաց , որ խնդրէ 'ի քէն' տուր . և կամ՝ որ հարկանէ զճնտ քո՝ դարձն նմա զմիւսն . սպին ըստ իրաց ինչ՝ են հրաման , և ըստ իրաց ինչ՝ խրատ : Քանզի զթշնամիս մեր ոչ առել և զկորուստն ոչ խնդրել , և նմին ներքին անորժմամբ զբարին կամի՝ պարտաւորիմք 'ի հրամանէ : և երբ խնդրէ անկեղծ սրտիւ զթողութի՝ զարտաքին սէրն ևս ջուշանել , 'ի հրամանէ պարտաւորիմք : իսկ մինչ ոչ է խնդրեալ զթողութիւն , զարտաքին սէրն մեր ջուշանել նմա , և ընդ բարեկամս մեր խառնել 'ի խրատուն ունիմք , զորս եթէ առնիցեմք , շահիմք զկատարելութի խրատուն : Այնպէս և որ խնդրէ 'ի մէնջ 'ի հարկաւորութե վերջնոյ , կամ մեծադուռնեղի , 'ի հրամանէ պարտաւորիմք տալ նմա զպատոյս՝ զն մի՝ մեռի . և կամ վնասիցի վասն կարօտութե . իսկ մինչ առ 'ի բարեպէս ասլիկն իւր խնդրէ , եթէ տայցեմք՝ այն է կատարելութի խրատուն : իսկ 'ի դիպոճածոջ նորում հարկանի ճնտ մեր , վասն հաւատոյ և կամ վասն դործոյ բարեոյ՝ եթէ ոչ իցեմք պատրաստք զն զմիւսն ևս մատուցուք , եթէ պահանջեցի (առ այս՝ զն մի՝ խափանիցիմք 'ի հաւատոյ , և կամ 'ի հարկաւորաց դործոյ բարեաց) մեղանչեմք . ուստի նկատմամբ այսպիսեաց դիպոճածոյ՝ մատուցանելն զմիւսն (այս է յօժար լինիլ 'ի մատուցանել) է հրաման : իսկ 'ի դիպոճածոջ նորում թէ նաև ոչ մատուցի միւսն , մեղք ինչ մահացու ոչ հետեւի , յայնժամ մատուցանելն զմիւս ճնտն , է կատարելութեան խրատուն . ըստ այսմ իմանալի է և զայսն . զի խրատքն Քի ըստ իրաց ինչ՝ են խրատք , և ըստ իրաց ինչ՝ հրամանք :

Բան : 'ի պատճառէ մեղացն : ԼԺ. Այսինքն , յայնց որք են առիթք մեղանչելոյ , պարտիմք խորշիլ՝ տակայն եթէ չեն տոխոզք՝ այլ թոյլք , 'ի խրատութե պարաւանդիմք խորշիլ . բայց եթէ են տոխոզք՝ և այն առ մահուցալիս , իբրու 'ի հրամանէ պարաւանդեալ՝ պարտիմք խորշիլ . որդոն , որ պահէ 'ի տան իւրում զկին վաճառա՝ որ միշտ դրդուէ զինքն , ենթահրամանի պարաւանդի հանել 'ի տանէ . և կամ ինքն հեռանալ 'ի նմանէ : Ուստի բանն այն , թէ ակն քո դայթակղեցուցանէ զքեզ՝ խելան , առ այնպիսին է՝ հրա-

հրաման, և ոչ խրատ : Նոյնպէս և առ յայն է հրաման՝ որք դորձեալք են զինքեանս՝ զի եթէ առ յայն կին զնստցին, և խօսեսցին ընդ նմա, ոչ կարեն զբարեկէ զինքեանս, այլ անկանին 'ի մեղս' [է և կինն զիցէ գրգռող : Բայց զխոհել է, զի եթէ ոք իցէ ընկերակից ուրուք, 'ի հարկաւորութե' պաշտօնին, և կամ կաջութեանն, և վասն իւրոյ սակաւասիրութե, և կամ անհամբերութեան՝ լինիցի 'ի մեջ ինքեանց' կախ, և տրտունջ, և այնու մեղիցէ, այնպիսին պարանգի զինքն ուղղել, և տանել ընկերին համբերութե, զի մի՛ մեղիցէ. և ոչ [է զընկերն՝ առ իմ համարելով մեղաց, 'ի պաշտօնէն' և կամ 'ի կաջութեանէն' հրաժարիցի. զի ոչ է չարեօք խորշել 'ի չարէն, այլ բարեօք. և ոչ է պարտ լինիլ շոյալ՝ զի մի լինիցի ժլատ. և կամ լինիլ առ բարին ծոյլ և վշատ, զի մի գուցէ լինիցի հպարտ :

ԴԼ. Դ.

Ա

Բան : Այլ [է պահեստէ զայն առանց հրամայելոյ, միայն սոսկ ստելոյն, է՛ մեծադունի կատարելութեան : ԼԾ. 'ի կողմանէ սասուկութե սիրոյն' է մեծ կատարելութի, հնազանդիլ սոսկ ասութեան մեծաւորին. իսկ 'ի կողմանէ սեռի գործոյն, մեծ արդիւնաւորութի է հնազանդիլն հրամանին. որպէս և յայտ է 'ի հակադարձն. քանզի եթէ սոսկ ասութեան ոչ հնազանդիցիմք ունիմք զսակաւ մեղադրութիս. և եթէ հրամանին ոչ հնազանդիցիմք, ունիմք զմեծադունեղ մեղադրութիս. ուստի հետեւի՝ զի որքանիցս վասն հրամանի առնեմք զիմն, մեծապէս արգիւնաւորիմք 'ի կողմանէ սեռի գործոյն, քան [է առնիցէպք սոսկ առելոյն : Եւ որքանիցս վասն սոսկ ասութե հնազանդիմք առաւել արգիւնաւորիմք 'ի կողմանէ մեծութեան սիրոյն, և ոչ 'ի կողմանէ սեռի գործոյն : Որպէս և ցուցանէ սք [ծումս, 'ի գոճօրիպէտ կոչեցեալ գիրս իւր. 6. 11.

Բ

Բան : Յանկալ ընտրութե առ 'ի կատարումն, է՛ մահուալի : ԼԾ. Ոչ միայն որ հաւանի գործոյ շնութե 'ի սրտի իւրում, մեղանէ մահուալի, բայց Տն բանի, որ հայի 'ի կին առ 'ի ցանկանայոյ՝ անդէն շնացաւ, այլ նա՛ւ այն մեղանէ մահուալի՝ որ հաւանի 'ի սրտի իւրում միայն հեշտութե գործոյն առանց կամելոյ զգործն : Եւ այս 'ի յերրորդ գիրս, 'ի Դ, և 'ի Ժ ա գլխոյն՝ կոչեցաւ, յամեցեալ հեշտութի :

Բան : Եւ այս ըստ սիրոյ աստորժակին՝ է հրաման : Գ
 Զայսմանէ տես 'ի վեր . 'ի յանցեալ դիտել՝ ենթադրին :

Բան : Այլ կատարելոցն հրաման : ԼԾ. Այսինքն՝ Դ
 կատարելոցն՝ է՝ մեծագոյն խրատ՝ նկատմամբ անկատարից . ուստի համեմատաբար խօսելով զմեծ խրատն հրաման կոչէ . և կամ թէ տատեն կատարեալն առնանի փոխանակ ուխտողաց . իբրու թէ ասիցի , ոչ անդրէն խնդրելն՝ է խրատ տկարաց . այսինքն , ոչ ուխտողաց զայսպիսի կատարելութի . և է հրաման կատարելոցն , այսինքն , այնց՝ որք ուխտեցին զայսպիսի կատարելութիս : Քանզի որ խրատ միայն է՝ ըստ նոյնոյ դիպունաճոյ ո՛չ կարէ դոյ միայն խրատ առտկարս , և հրաման առ կատարեալս . այլ կարէ դոյ խրատ՝ առ ոչ ուխտեալն , և հրաման՝ առ ուխտեալն : Ասացի ըստ նոյնոյ դիպունաճոյ , զի եթէ այլազանիցին դիպունաճքն՝ այլազանի և բանն որ դռն եթէ 'ի անդրէն խնդրելն զմերն 'ի յառողէն , որ կամ գողութեամբ էառ՝ և կամ փոխ էառ , այնպէս լիցի սուօղն՝ զի առեցեալն ոչ է մնացեալ 'ի ձեռն իւր , այլ միայն օր առօր աշխատեալ՝ հաղիւ վատասկի զբաւական տարուստ ինքեան , և ընտանեաց , 'ի յայտպիսի դիպունաճոյ , թէ առ տկարս՝ և թէ առ կատարեալս՝ է՝ հրաման զի մի՛ անդրէն խնդրիցի յայնպիսոյն , և կամ դնելով 'ի բանտի ստիպիցի վճարել :

Ապա թէ ոչ լինի մեղք մահուցալ՝ ընդդէմ բանին Քի որ ասաց , որ առնու 'ի քէն՝ մի՛ յետս սղահանջեր . որ 'ի յայնպիսեոջ գիպունաճոյ է՝ հրաման : Ուստի կարի մոլորեալք , և վատթարագոյնք քան դճրեայս , և գնեթանոս են այնպիսիք բրիտոնեայք , որք 'ի յաղքատաց սլարտականաց ինքեանց սղահանջեն զվճարումն պարտուց . և չարագոյն քան զմա՛ , երբ 'ի բանտի ևս դնեն : Եւ աղքատք ասին այնք՝ որք կամ զղինչ վատասկին , և զոլինչ ունին , այլ մուրա նալով ապրին . և կամ վատասկին՝ միայն հաղիւ քաւական ինքեանց , և ունին 'ի տան զկահս՝ առ հարկաւոր պիտանաւորութիս ինքեանց . որ դռն , ունին զմահիճա՛ ուր ննջեն , ունին զսանս՝ ուր զկերակուրս եփեն , և ունին զհանգերձս՝ որով զինքեանս ծածկեն , և այլք նմանք : Ուստի , որ զայսպիսի հարկաւոր կահս տալով վաճառել , և կամ զօրստօրական ապրուստի վատասկին 'ի ձեռացն քարելով , սղահանջէ

Չէ՛ զվճարումն պարտուց՝ այնպիսին ո՛չ միայն ոչ ունի զօրէնս Քի՛, այլ նաև ոչ զհեծանոսի . ուստի իրաւի մատթարադոյն բան զհեծանոսս ասի :

Ե

Բան : Իսկ ոչ երդնուլն առ կատարելութիւն խրատուն : ԼՃ. Երդմունքն կամ լինին 'ի յամ՝ , և յամայնս . և կամ 'ի ստեղծուածս , որդոն , յերկին , և յերկիր , և 'ի դուռն իւր : Առաջինն որ 'ի յամ՝ , և յամայնս՝ երեք կերպիւ լինի . պոխնքն , կամ ստուծք , կամ ճշմարտութե՛ 'ի հարկաւոր և 'ի դէպ ժամանակի , և կամ ճշմարտութե՛ թարց իրիք պիտոյից՝ վասն սովորութեան բերանոյն : Առաջինն՝ յայտնապէս է մեղք մահուչափ , զի հրամայումք ոչ երդնուլ ստուծք : Երկրորդն՝ է՛ բարի , նաև պատճիրան՝ առ 'ի փառս անուան այ , և աճայնոց՝ պոխնքն , խաչի , աւետարանի , և այլոց նմանեաց , որպէս զի 'ի հարկաւոր ժամանակի՝ առ 'ի հաստատել զճշմարտութի , երդնուցումք յամ՝ , և յամայնս : Իսկ երրորդն՝ ոչ է՛ ծանր չար , նաև ոչ բարի . և որքան առ այս՝ ոչ երդնուլն վերաբերի առ կատարելութի խրատուն , և բան Տն որ ասէ՝ ամենեւին մի՛ երդնուլ , է՛ խրատ՝ միայն որքան առ յայս երրորդ կերպս երդման : Իսկ երդումն որ լինի 'ի ստեղծուածս , նաև այս կրկին է , պոխնքն , կամ ստուծք երդնու ոք , և կամ ճշմարտութե՛ : Եթէ՛ ստուծք , այն է մեղք մահուչափ . զի բան Տն որքան առ յայս է՛ յատկապէս հրաման . և մանաւանդական դիտումն Քի նայնիկ բանով երևի որքան առ այս : Քանզի չարամեկնիւքն հրէից՝ զբանն այ զոր ասացեալ էր , մի՛ երդնուցուս սուտ յանուն Տն այքո , մեկնեալք էին այսպէս , իբրու թէ՛ զսուտ երդումն անուամբն այ ոչ է պարտ առնել . բայց թէ՛ անուամբն ստեղծուածոյ լիցի՛ չէին , և այսու 'ի յերկինս , և յերկիր , և յեմ՝ , երդնուլն ստուծք առանց խղճմտաց . նաև 'ի դուռնս իւրեանց երդնուլն ստուծք՝ որպէս նաև մինչև զարդ՝ ունին հրէայքն զնոյն սովորութի , և ոչ համարին դոլ մեղք : Ուստի Տր մեր՝ որ ինքն է ճշմարտութի , և ճշմարտութեան բացատրիւ , ընդդէմ՝ այնպիսւոյ աղանդոյն ստաց , յառաջնում ասացաւ մի՛ երդնուցուս սուտ յանուն այքո . զորս դուք մեկնէք , թէ՛ միայն յանուն այքո մի՛ երդնուցուս զսուտ , յորմէ թիւրաբար եզրակացուցանէք , թէ՛ 'ի ստեղծուածս երդնուլ զսուտ չէին : Բայց էս ասեմ՝ և մեկնեմ՝ , թէ՛ ամենեւին յիրիւզ մի՛

Տէ՛ր երդնուլ զսուտ . ոչ յերկինս՝ զի թէպէ՛տ ստեղ-
 երձած է, զորս դուք ոչինչ համարիք, բայց չէ՛ ոչինչ՝ զի
 բթժու է այ՛. իսկ երկիրն պատռնանդան , և այլն :
 իսկ սասցեալ մեկնութիս , յայլոց բանիցն Քրիստոս
 դանի . զի ասէ՛ ՚ի մատթէոսի ինք , առ հրէայս , զի ասէք՝
 որ երդնու ՚ի սեղանն՝ չէ ինչ , բայց որ երդնու ՚ի պա-
 րարագն՝ որ ՚ի մի նորա է՝ արժան է . յիմարք և կոյրք
 զինչ մեծ է պատարադն , եթէ սեղանն՝ որ սրբէ զպա-
 տարադն : Ի՛նչ քանզի հրէայքն միայն զպատարադն
 համարելով ամօային , իսկ զսեղանն՝ ոչ զսոսկ ստեղ-
 ծուած , ասէին թէ որ ՚ի սեղանն երդնու ստուծք՝
 չէ ինչ . բայց որ երդնու ՚ի պատարադն ստուծք , է
 ինչ . և եթէ երդնուք վասն ապագայից իրաց իցեն՝
 առ ՚ի առնել զինն , և երդնուեալ իցէ որ ՚ի սեղանն՝ ոչ
 է հարկ հատուցանել վերդումն , կատարելով զսու-
 տացեալ բարին . զի սեղանն ոչ է Տնական , և ամօային .
 բայց եթէ երդնուեալ իցէ ՚ի պատարադն , արժան է և
 հարկ , զի լցուցանիցէ զստուումն , առ հատուցումն
 երդման . զի ասէ դիրն թէ հատուցես Տն վերդումն
 բո , և պատարադն Տնական է , և ամօային : Իսկ Տրմեր
 յանդիմանեաց զնս , ասելով . թէ նաև սեղանն որ սրբէ
 զպատարադն՝ է Տնական և ամօային . ուստի նաև ՚ի
 նմին ոչ է պարտ երդնուլ ստուծք : Էւ սեղանն՝ որ է
 սրբող պատարադի , եթէ սրբող ևս ոչ իցէր , ոչ էր
 արժան երդնուլ ՚ի նմին ստուծք : Զորոց յայտնապէս
 երեւի թէ բան Տն որքան առ յայտնիսիս՝ է հրաման :
 Իսկ եթէ Ճմարտութե երդնուցու որ ՚ի ստեղծուածս ,
 որդոն , յերկին , և յերկիր , և կամ ՚ի գլուխ իւր ,
 նաև պատմիս երդումն ոչ է պատկան . զի ըստ առա-
 բելոյն՝ մարդիք որ ինչ ՚ի վեր քան զինքեանս է՝ յայնս
 երդնուն . արդ՝ մինչ Ճմարտութին հաստատել իցէ
 ՚ի հարկաւ որ դիպունւածով՝ բարւոք է զի յամ , և յամ-
 օյինս երդնուցումք , բան թէ ՚ի ստեղծուածս . զի ՚ի
 Ճմարտ յերդմանն՝ դոյ փառք անունն այնմ՝ յորս
 լինի երդումն . իսկ բարւոք է թէ ամ , և ամօայինքն
 փառաւորիցին , բան թէ սոսկ ստեղծուածք . ապա
 ուրեմն բան Քրի , ամենեւին մի երդնուլ , որքան
 առ այսպիսիս երդումն առեալ , որ է Ճմարտութե
 երդնուլ ՚ի ստեղծուածս , է խրատ առ կատարելու-
 թիւն : Զասացելոցս հաւաքեա , զի սուտ երդումն ,
 թէ յամ և յամօայինս , և եթէ ՚ի սոսկ ստեղծուածս՝
 հրամանաւ արգելանի :

Իսկ

իսկ Ճմարիտ երգումն 'ի յամ՝ , և յամայինս՝ 'ի հարկաւոր ժամանակի ոչ ինչ կերպիւ արգելանի . զի այնու , անունն այժ անարգի , այլ մանաւանդ փառաւորի : Եւ Ճմարիտ երգումն 'ի յամ՝ , և յամայինս թարգ հարկի՝ և պիտոյից , 'ի ձեռն խրատու արգելանի : Բայց Ճմարիտ երգումն 'ի սոսկ ստեղծուածս թէ 'ի հարկաւոր , և թէ 'ի յոչ հարկաւոր ժամանակի , 'ի ձեռն խրատու արգելանի :

2

Բանս 'ի յուղղութի գիտաւորութեան , և կամ վախճանի : Լծ. Ասինքն , թէ պէտ որքան առ յայս իցէ խրատ , զի մի զարգարութիս մեր 'իցոյցս մարդկան առնիցեմք , ունելով զգիտաւորութի , և զվախճան ինչ ներելի մեղաց . բայց որքան առ յայս է հրաման եթէ որ վախճանաւ , և գիտաւորութե մահացունաց մեղաց՝ առնիցէ զարգարութին 'իցոյցս մարդկան , որդոն , վասն փառաց , նորում վախճանաբար հեշտանայ . և կամ վասն խաբելոյ զոք առ 'ի ծանր մեղանս : Քանզի այսպիսի կեղծաւորութիս է՝ մեղք մահու չափ . և հրամանաւ արգելանի :

Վախճան լուծմանց հինգերորդի դրոշմն :

ԼԼԼ

Լ ՈՒ Ծ Մ ՈՒ Կ Կ

Ս ԵՆԵՐՈՐԴԻ զՐԳՅՆ :

ՈՐ յԱՂԱԳՍ զՅՐԱԹԵ՛ ԽՈՐՀՐԴՈՅ :

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ :



Ան : Ըստ սրբարարութե աներեւոյթ իմն շնորհաց տաճողական : ԼԺ. Այսինքն , սրբարարութե նշանակողական . քանզի նախ բնութե նշանակեն զսրբացումն մեր . և յետոյ պատճառեն զնորհս :

Եւ մինչ առ սրբացումն մեր՝ պահանջի չարչարանքն Քրի իբրեւ զարդիւնական պատճառ , շնորհս՝ որպէս զտեսական , և փառքն ուն զվախճանական , յայտէ՝ զի ո՛ր և իցէ սրբազնութիւն նորոյ օրինիս՝ նշանակէ զերեսեանս զայստօրի . այսինքն զչարչարանս Քրի իբր անցեալ , որոյ նկատմամբ ասի նշան վերայիշողական . իսկ զնորհս՝ իբր զներկայ , (զոր չարաբերէ յինքենէ գործիքականաբար) որոյ նկատմամբ ասի նշան ցուցանողական . և զիստօրիբրեւ զապագայ՝ նկատմամբ որոյ ասի նշան նախադուշակական :

Բան : Որք են զբանէ խորհրդոյն՝ նեղագոյն , և յատկապէս առեալ : ԼԺ. Այսինքն , յատկապէս են զբանէ ամ խորհրդոյ , և ո՛չ միայն ոմանց խորհրդոյ . ուստի որք այլտղէս խօսելով ասիցեն զոմանց միայն՝ դատապարտեցեալք լինին . ըստ վճռոյ սրբոյ Ժողովոյն տրեւեթինոյ :

Բան : Զորժամ քարոզեաց զապաշխարութի : ԼԺ. Բն քարոզելով զապաշխարութիւն յորդորեաց առ խորհուրդ ապաշխարութե զամենեւեան . զի այնու ազատութեաց եկեղեցւոյ յայտնիցեն զմեղս խելանց , որք են նիւթք արտօրիկ խորհրդոյ : Իսկ տալովն զիշխանութի թողոյ զմեղս , կացոյց զխորհուրդն ապաշխարութե տեսակաբար . զի բան ար :

Ճակ

74. 7.

Ա

3. 10. 50.

պ. 3.

Բ

74. 7.

Ա

3. 10. 80.

պ. 1.

10. 85. պ.

1. 2.

306.20.

ձակման է տեսակ այսմ խորհրդոյ : Ուրեմն զնախնոր է ձայնաւոր բանիւ յայտնել զմեզնս, կացոյց Քս^ի քարոզելն զսպաշխարութի . և զտեսակն՝ որ է աբ. ձակումն, կացոյց, ի տալն զնշխանութի արձակելոյ . ըստ այնմ, որում թողուցուք՝ թողեալ լիցի :

Բ

Բան : Եւ զնաց ի հարսանիս : ԼՃ. Քս^ի ոչ միայն այսու դործով, զի զնաց ի հարսանիս հաստատեաց զպսակն, այլ նա և բանիւ հաստատեաց, և կացոյց . ըստ այնմ՝ թողցէ այր զհայր և զմայր, և երթիցէ զհետ կնոջն, և եղիցին երկօքեանն ի մարմին մի : Ասացի հաստատեաց, զի նախ ևս գոյր խորհուրդ պատկին, և Քս^ի հաստատեաց, զի մնացէ : Ասի ևս՝ թէ կացոյց, բանզի ի հնումն եղեալ պատկն՝ ոչ շարաբերէր զշորհ սրբացուցիչ ի գործոյ դործեցելոյն, որպէս զպսակ նորոյս օրինի . ուրեմն ուրան առ այս՝ զպսակն շորհաբեր՝ ի Քս^ի է նորապէս կացուցաւ :

Գ

Բան : Զգրոշմն կացոյց զնելով զձեռն ի վրտապոյց : ԼՃ. Քս^ի գոյով ինքն հեղինակ, և աղբււր օծութե՝ թարց մեռոնի զնելով զձեռն ի վերայ տղայոց ցուցանէր, և կացուցանէր զգրոշմն : Իսկ առաքեալքն թէպէտ ոչ էին հեղինակ, և աղբււր օծութե, բայց նաև նոքա գրոշմին թարց մեռոնի . զի յայնժամ մինչ զնէին զձեռս իւրեանց ի վերայ մկրտեցելոցն՝ ոգին սբ երևեալբար իջանէր . և այս էր հարկաւոր ի ժամանակին այնմիկ առ ի հաստատութի հաւատոյն նորապէս սկսեցելոյ : Իսկ յետ որոյ հաստատեցաւ և ապաւառացաւ հաւատն Քի, ոչ էր հարկաւոր երևելաբար իջումն ոգոյն սրբոյ, այլ բաւ էր աներևոյթն, ուստի նաև առաքեալքն մերթ ի կիր առին զմեռոն, որպէս ասէ սբն դիոնէսիոս . և այնպէս աւանդեցին եկեղեցւոյ՝ զի սրբադործեցեալ մեռոնաւ սկսանիցի լինիլ գրոշմն . որպէս զի գրոշմոն մինչ զսբ մեռոնն խաղաձև նշանաւ դիցէ ի ձակաւ գրոշմեցելոյն, կոչմամբ անունն սրբոյ երրորդութե, ոգին սբ աներևութաբար իջցէ ի վերայ գրոշմեցելոյն :

3. Խ. 72.

պ. 2.

ԴԼԴ

Ա

Բան : Այլ զի ի նոսին պարունակի շորհ դոյացաբար, և ներդործի պատճառաբար : ԼՃ. Իմանալի է միայն զնախապետականէ պատճառէն՝ ըստ որոյ կերպի ոչ ներդործի . բայց ըստ կերպի դործիքականի պատճառի, ներդործի շորհ ի խորհրդոյ, և պարունակի ի նոսին յորմէ յայտնապէս երևի թէ

Թէ խորհուրդք նորոյս օրինի պատճառն զնորհ
գործիքականաբար, և հետեւաբար պարունակեն զը-
նորհ ըստ հոսական և անկատար գոյոյն . և գոյ ինո-
սին զյրաթի պատճառելոյ զնորհս . ասեմ զյրաթի
գործիքական՝ որ ունի զգոյ անգրանցանող իմիջն առ-
միւն, և անկատար :

Բան : Եւ պակասութի ոչ է ի կողմանէ իւրմէ .
18. Հնորհն ի ձեռն խորհրդոյ միշտ տրիամե-
նից ի կողմանէ մի, և խորհրդոյ . բայց ընդունողն՝
մերժելովն ոչ ունի . ուստի ոչ է իմանալի՝ իբրութե
մծ ոչ տայ միշտ, և կամ ոչ տայ ամենից . զի այսպի-
սի կարծին՝ դատապարտեցեալ է ի սրբոյ ժողովն
տրեւեմութիւնս :

Բան : Առանց մամ կեղծաւորութե : 18. Ըստ օգոս-
տինոսի, կեղծաւոր ասի՝ որ ոչ հաւատայ . որ ար-
համարէ . որ այսպէս հաշակէ զխորհուրդս՝ ոչ
պահելով զկանոնեալ օրէնս առ յայն . և որ մատչի
առանց ջերմեռանդութե : Ուստի որպէս չորիւքս
այսոքիւք ինի որ կեղծաւոր՝ այսպէս և ներհաղթ չու-
րիցս՝ արժանապէս հարկի առ սբ խորհուրդս :

Բան : Հնորհն տեսակաբար : 18. Անուամբ շնոր-
հին՝ ոչ միայն իմանի ներհեղեալ օրակութիւնն
այն՝ որ տեսակաբար ներ յենու ի հոգին . այլ և ար-
դիւնաւորական պատճառն շնորհին՝ որ է չարչարանքն
Քի . ըստ որում շնորհն այն տրի մարդոյն արդեամբ
չարչարանաց Քի . Թարց որոյ՝ ոչ որ որում հաղոր-
դին այսպիսիք արդիւնք, կարաց, կամ կարէ, և կամ
կարացէ դոյ արդար : Դարձեալ, զբանն զայն որ
ասի ի բնաբանութն՝ Թէ կատարումն պատուիրանաց
արդարացունէ, իմն զնախապատրաստութի մեր .
իբրութե կատարումն պատուիրանաց նախապատ-
րաստէ առ յարդարութի . և այս պահանջի հարկա-
ւորապէս ի չափահատակիցն :

Բան : Առ սակաւ սակաւ ըստ պատժոյն : 18.

Խորհուրդ ասպախարութե մինչ ասի՝ Թէ բժշ-
կէ ըստ պատժոյն սակաւ առ սակաւ, իմանալի
է միշտ ըստ ժամանակաւոր պատժոյն :

Բանդի նկատմամբ յաւիտենականի պատժոյն բժշկէ
միանգամայն և իսկոյն . որպէս և վնասաց սբ ժողովն
տրեւեմութիւնս :

ԳԼԴ

Ա

ան : Ի հաւատացելոց և յանհաւատից : ԼԺ. Ա
տէն զերկուս իրս պարտ է գիտել : Նախ զի
մինչ ասէ թէ կարէ յամենից մատակարարիլ
գիտացուք զպատկանաւորեալսն . որ հոն , մկրտու
թիւնն յամենից կարէ . բայց պատարագէլն՝ ի բահա
նայից միայն , թէ և ուրացեալք իցեն . իսկ ձեռնա
դրելն՝ յեղիսկոպոսաց միայն : Երկրորդ՝ զի մինչ ասի,
թէ ի բարեայ՝ և թէ ի չարեաց , թէ ի հաւատա
ցելոց , և թէ յանհաւատից՝ կատարիլ կարէ խոր
հուրդ , պարտ է գիտել՝ զի եթէ ունիցին զգիտաւո
րութի կատարելոյ , ըստ գիտաւորութե եկեղեցւոյ
հանդերձ նիւթով , և ձեռով զոր կացոյց եկեղեցի , կա
րէ կատարիլ . ապա թէ ոչ , ոչ կատարի :

ԳԼԵ

Ա

ան : Եւ միոյ նիւթոյ , և վասն նոյնոյ պատճա
ռի : ԼԺ. Ի վերայ միոյ նիւթոյ մերձաւորի
նչ կրկնի խորհուրդն . բայց ի վերայ միոյ նիւթ
ոյ հեռաւորի՝ կարէ կրկնիլ ի խոստովանութեան .
բանիլ ի խորհուրդով աղաչաւորութե հեռաւոր նիւթն
է մեղքն , և մերձաւորն է ներկայապէս ասելն զայնս՝
յականջս խոստովանահօրն . ուստի թէ պէտ վասն միոյ
և նոյնոյ ատութեն որ է հուպ նիւթ՝ ոչ կարէ կրկնիլ
տրձակումն , բայց ի վերայ միոյ մեղաց կարէ կրկնիլ
զի երբեմն ոմանք վասն բանաւորաց պատճառաց
զխոստովանեալն ի յանցեալ ժամանակով կրկին խոս
տովանին . և յայնժամ՝ կրկնի ի վերայ միոյ նիւթոյ
հեռաւորի . և աստէն նոյն պատճառն ոչ է՝ զի յետին
խոստովանութիւն վասն ջերմեռանդութե , և կամ մե
այրոյ պատճառի է :

ԳԼԵ

Ա

ան : Բայց այս ոչ խնայեալ լինի զթիւստութե :
ԼԺ. Օրինական խորհուրդքն ոչ արդարացու
ցանէին ըստ գործոյ գործեցելոյն . բայց թիւս
տութին որ չէր ի յօրինաց՝ զնմանէ ևս իմանի թէ ոչ
արդարացուցանէր ըստ գործոյ գործեցելոյն . սակայն
վասն այն ասէ հեղինակն թէ այս ոչ իմանի զթիւս
տութենէ , զի այլք խորհուրդք հնոյ օրինին զոչինչ
օգուտ գործէին , եթէ ոչ իցէր ի յընդունողսն յա
տուկ ջերմեռանդութի , որ է յատուկ գործ գործո
ղին . իսկ թիւստութին ոչ գոյով առնեալ ի յօրինաց ,
բանայր ի տղայոցն զսկզբնական մեղս , և ապր զբ
նորս . և այս ոչ ի ձեռն յատկի ջերմեռանդութե , որ
ոչ գոյր ի տղայսն . այլ ի ձեռն ջերմեռանդութեան
եկեղեցւոյ հնոյ օրինին որ լցուցանէր զպակասութե
նո

նոյնն . և այս լինելի՝ զի ոչ դոյր այլ հնար փրկութե
երեսայից : Եւ առ յայս ասի՝ ի բնաբանոյն՝ թէ զայս
ոչ առնէին օրինականքն , այսինքն , առանց յատ
կի ջերմեամեղութեան , օրինական խորհուրդք ոչ
կարէին արդարացուցանել . բայց թլիառութիւնն ոչ
դուրմ յօրինացն՝ կարէր ի ձեռն ջերմեամեղութեան
հազարակին արդարացուցանել զերեսայս : Տես ի
վեր , ի դերզն չորրորդ , ի գլխին Ժք , ենթ բենին

3. խ. 70.
պ. 4.

Բ ան : Զայնական արտայայտումն : Լծ . Զօրում
և իցե լեզուով հարկաւոր է զի նոյն հասկացումն
լինիցի ընդ ձայնին արտայայտելն զձեռն :

ԴԼԹ

Ա

Քանզի ըստ օգտաւնասի , բանքն դործարկեցեալք
լինին ի խորհուրդսն , ոչ զի ասացեալք լինին , այլ զի
հաւատացեալք լինին , այսինքն , ոչ ըստ արտաբանա
նայ հնչմանց բանիցն , այլ ըստ հասկացմանց բանից :

Բ ան : Առանց պակասութե , և կամ առաւելութե :
Լծ . Իր ի մկրտելն մուանայցէ ասել՝ ես , կա
տարի խորհուրդն . բայց եթէ մուանայցէ ասել՝ զքեզ ,
ոչ կատարի նոյնալէս և որ ոչ արտաբերէ զնախդիրս
զայս , չի , ոչ կատարի . որպէս , եթէ ասիցէ՝ անուն
հօր , և այլն . զի հարկաւոր է ասել յանուն :

Բ

3. խ. 60.
պ. 8.

խ. 66.
պ. 5.

Ըստ այսմ իմա և զայոց բառից հարկաւորաց . որոց
սակասութեն խափանի խորհուրդն :

Բ ան : Պակասեցուցանելով , յաւելլով , յետ և յառաջ
գնելով , և փոփոխումաք : Լծ . Պակասեցուցանե
լով՝ որպէս լինի՝ արդէն ասացաւ : Իսկ յաւելլով խա
փանի՝ եթէ որ ասիցէ , ես մկրտեմ զքեզ յանուն հօր
մեծի , և որդւոյ փոքրի : Եւ կամ ասիցէ՝ ես մկրտեմ
զքեզ յանունանս հօր , և որդւոյ , և որդւոյն սրբոյ :

Գ

Եւ այլք նմանք : Իսկ եթէ որ ասիցէ , ես մկրտեմ զքեզ
յանուն հօր հօրի , և որդւոյ միածնի . և սրբոյ ող
ւոյն մխիթարչի , թէպէտ մեղանէ տգասաւորն զի այ
լոյլէ զեացուցմունս եկեղեցւոյ , բայց կատարի խոր
հուրդն : Ըստ այսմ իմա և զայս նման : Բայց յետ
և յառաջբութե խափանի՝ յորժամ ասէ՝ որդւոյն սրբ
յանուն ես որդւոյ մկրտեմ զքեզ հօր :

3. խ. 60.
պ. 8.

Քանզի աս
ալէն ոչ նշանակի բան ձեռն կարգաւ : Ըստ այսմ
իմա և գնմանս : Իսկ եթէ ասիցէ՝ մկրտեմ զքեզ՝ ես՝
հօր և որդւոյ և որդւոյն սրբոյ յանունն , ոչ խափանի
խորհուրդն , սակայն մեղանէ տգասաւորն :

Բայց թէ 'ի ձեռն փափոխման' որպէս խափանի գրե-
ղեալ է 'ի բնաբանոցն' տես անդ:

7

Բան: Հաւատ մկրտեցերոյն: Լծ. Մկրտութիւն առ-
նէ զերկուս իրս, այսինքն, ապաւորէ զկնիքն, և
մուծանէ յերկինս: որքան առ առաջինն ոչ պահանջի
ուղիղ հաւատ. զի նաեւ կեղծաւորութեւ, և կամ ո՛ր և
իցէ մահուչափ մեղօք մկրտեցեալն՝ ընդունի զկնիք,
մինչ կամառ խնդրէ զմկրտութի, և ունի զգիտաւո-
րութի մկրտիլոյ. բայց որքան սա երկրորդն, զի մու-
ծանիցի յերկինս՝ պահանջի ուղիղ հաւատ, առանց ամ
կեղծաւորութեւ, 'ի չափ հասեալսն: Քանզի եթէ
թիւրահաւատ որ կեղծաւորութեւ խաբէլով՝ թէ ուղ-
ղապէս հաւատայ, մկրտիցի, թէպէտ ընդունի զկնիք
բայց ոչ շահի զմուտն արքայութեան. ուստի եթէ
զկնի մկրտութե մեռանիցի՝ իսկոյն իջանէ 'ի գոփոս:

3. խ. 68.

պ. 7. 8.

Ե

Բան: Ազատէ 'ի յարտաքին ապաշխարութե': Լծ.
Վր գործեցեալ մեղաց որ է նախ քան զմկրտու-
թիւնն, ոչ գնի ապաշխարանք. զի մկրտութիւն բաց
'ի բառնարոյն զսկզբնական մեղսն, բառնայ նաեւ զներ-
գործականս՝ հանդերձ պատժալն: Բայց եթէ մկր-
տեցեալն իցէ գողացեալ զիր ինչ, և կամ եղծեալ
զհամբաւ ուրաք՝ հրամայի նմա զի դարձուցէ յետս.
քանզի կամքն պարտի դադարիլ 'ի մեղաց. և մինչ կա-
րէ՝ և ոչ հատուցանէ, երեւի կամքն մնայ 'ի մեղս:

3. խ. 68.

պ. 5. 6.

74. Ժ.

Բան: Զառաջանան մկրտութեան: Լծ. Նախ քան
զմկրտութիւնն, կամ նաեւ այնք որք յետ մկր-
տութե, որ ինչ արարողութիւք լինին, մինչ ոչ
է երեխայն 'ի վտանդի մահու, պարտին կարգաւ կա-
տարիլ. բայց եթէ իցէ 'ի վտանդի մահու, պարտ է
շուտով մկրտել զերեխայն՝ միայն արտաբերելով զձե
բանին, 'ի ընտլն զուր: Էշ յետոյ եթէ ապրիցի
ողայն՝ պարտ է զբազաթողեցեալ արարողութիւն, կա-
տարել 'ի վերայ նորին ըստ կարգի, առանց ընկղմելոյ
'ի ջուրն, և առանց արտաբերութե ձեռոյ. զի մի կրկ-
նիցի մկրտութիւն:

Ա

74. Ժա.

Բան: Իսկ երկու 'ի կողմանէ ընդունողին, այս-
ինքն, Զակտուն, 'ի յորում պարտի լինիլ մեռու-
նելն. և զի իցէ մկրտեցեալ: Լծ. Աստէն հեղի-
նայն վասն այն ոչ գնէ զհարկաւորութի դիտաւորու-
թե 'ի յընդունողն, զի նախապէս ասացեալ էր 'ի թ,
պիտոջ, թէ պահանջի դիտաւորութի նաեւ 'ի յայն՝ որ
մկրտի. և նոյն բան է զդրոշմն ևս: Ուրեմն միշտ
և

Ա

և ի հարկէ , ի չափ հասեալն պահանջն դիտաւորու
թի . քոնեայ հասարակաբար . զի դիտեսցէ զայն՝ զոր
առնէ եկեղեցի . նմանապէս և ի սպասաւորն պահան
ջի : Ուստի հետեւի թէ ի ընդունողէն զգրով , երեք
պահանջին :

Բ ան : Ոչ լինէր անդ փոխումն դոյացութե : Լծ.
Ի յօգուտ այնպիսի չար վախճանաւ պատարա
դողին՝ պարտի իմանիլ ոչ լինիլն փոխման . բայց
ի կողմանէ ինքեան փոխման դոյացութե , լինի փո
փոխումն . վասն զի մինչ արտաբերի ձև բանին ի քա
հանայէն՝ ի վերայ հացին դիտաւորութե փոխելոյ ,
և ոչ վասն ծաղր առնելոյ , փոփոխումն լինի ի հար
կէ , և ոչ կարէ խափանիլ վասն չարութե քահա
նային՝ որ ունի զչար վախճան , այսինքն , վնասել զՏէր
հացիցն : Ասացի և ոչ վասն ծաղր առնելոյ , զի եթէ
ոմն ուրացող քահանայ՝ առաջի անհաւատից՝ վասն
ծաղր առնելոյ պատարադիցէ , արդարեւ յայնժամ՝ ոչ
լինի փոփոխումն . զի ոչ զդիտաւորութի վախճանին
ունի , և ոչ զդիտաւորութի կատարման սրբաշնութե :
Քանզի Քժ կացոյց զայս խորհուրդ առ ի կատարիլ ,
և առ ի յօգուտ եկեղեցւոյն : Ուստի որ ունի զեկ
տաւորութի առ կատարումն սրբաշնութե , բայց ոչ
ունի զդիտաւորութի վախճանին՝ որ է օգուտն հա
ւատացելոց , կատարէ զսրբաշնութիւն . սակայն մե
ղանչէ ինքն չարաչար , զի փոխմանակ դիտելոյ զբարի
վախճան , դիտեաց զչար վախճան : Իսկ որ ոչ զեկ
տաւորութի կատարման ունի , և ոչ զդիտաւորու
թի վախճանի , ոչ բնաւ կատարէ զխորհուրդն զի
բոտ նմի ներհանի դիտաւորութեն Քի :

Բ ան : Ոչ պակասի վասն այսորիկ դոլ արիւն : Լծ.
Դիտե՛ ասել զայս՝ զի եթէ մի կաթ գինի , կամ
ջուր՝ պատահմամբ անկանիցի ի սկիհն ի մէջ արեան
ի հարկէ ի միում մասի արեանն անկանի . ուստի ի
յայնս մասունս ուր ոչ հարկեցաւ՝ անդէն ոչ դադարիլ
դոլ արիւն . բայց ի յայս մասնիս ուր հարկեցաւ ,
դադարիլ դոլ արիւն , զի վերանկեալ կաթն կրանէ
զայս մասնիկ : Արաւէս յայտէ նաեւ այսու . զի եթէ
վերանկեալ նիւթն յոլով իցէր քան զբոլոր արիւնն՝ որ
դոյր ի սկիհն , բոլորն դադարիւր դոլ արիւն . և ոչ
կարէր իւրաքանչիւրն պահել զոտեսակ իւր . զի դոլով
յեղեղուկ՝ չփոթին . և սակաւն կրանի ի յոլովիցն :

Բայց դիտելէ , զի թէպէտ սակաւ արիւն ընդ բա
ՏԸ 3 զում

74.ԺԲ.

Ա

3.խ.64.
դ.10.
խ.74.
դ.2.

Բ

3.խ.77.
դ.8.

զուտ գինւոյ խառնեցեալ՝ դադարի դու արիւն , բայց սակաւ գինին ընդ բազում արեան խառնիլով՝ ոչ դադարի դու գինի , այլ միշտ մնայ գինի , և ոչ երբեք վասն կանեցեալ գորցն լինի արիւն , և սխառման է , ոչ այն ինքն չէ սրբագործեցեալ :

Գ

Բան : Ի՜նչ է ինչ անդ իր միայն : Լծ. Խորհրդաւոր մարմինն Քի որք են հաւատացեալք է՝ ՚ի հաղորդութեանն ունի իր միայն : Եւ վասն այն ասի իր միայն , զի ճշմարիտ մարմինն Քի , նկատմամբ հաւատացելոյ ասի խորհուրդ , զի նշանակէ զհաւատացեալս . և նկատմամբ տեսակի հացի , և գինւոյ , ասի իր . զի տեսակ հացին և գինւոյն՝ նշանակելով զմարմին Քի ասին խորհուրդ : Ուստի մարմինն Քի է իր՝ գոյուն ենթ տեսակի հացի , և գինւոյ . և է խորհուրդ՝ նշանակելուն զհաւատացեալսն : Ուստի և ՚ի բնաբանոյն ասի . քանզի այն է իր առաջնոյն , (այսինքն , տեսակի հացին , և գինւոյն՝ որ է խորհուրդ միայն) և խորհուրդ երկրորդին , այսինքն , հաւատացելոյ՝ որք են մարմին Քի : Եւ հաւատացեալքն վասն այն կոչին խորհրդաւոր մարմին Քի , զի ճշմարիտ մարմինն Քի նշանակէ խորհրդաբար զնոսին . ըստ այնմ որ ասէ առաքեալն , մարմին Քի , որ է եկեղեցի :

ԴԼԺԴ.

Բան : Բայց ոչ ՚ի վեր քան զմնացումն : Լծ. Թե՛

Ա

պէտ նաև այս՝ զի են անդ պատահմունքն թարգ ենթակայի , բացարձակաբար առեալ են ՚ի վեր քան զմնացումն , բայց բաղդատելով առ այն զեբոյր Քսէ ենթ մոգբրիկ տեսակի հացին , որ է յոյժ առաւել ՚ի վեր քան զմնացումն , ասէ զմիւսոյն թէ ոչ է ՚ի վեր քան զմնացումն . իբրու թէ ասիցէր՝ այս՝ սակաւ է ՚ի վեր քան զմնացումն , քան զմիւսն :

ԴԼԺԵ.

Բան : Արժանապէս ճաշակողքն : Լծ. Այնքան

Ա

հարկաւոր է ընդունիլ և հաւատալ թէ արժանապէս ճաշակողքն հանդիպին բազում բարեաց , և շահին զպտուղս թողութե մեղաց , և աճման շնորհի , մինչ զի որք ոչ հաւատացեն այսպէս՝ դատապարտեցեալք են ՚ի սրբոց սինհոդոսաց , և դատեցեալք ընդ հերետախոսան՝ որոց բաժինն է լինն հրոյ :

ԴԼԺԶ.

Բան : Իսկ թէ ունի պարտէ մատիլ առ հաղորդութի : Լծ. Զոր ինչ խօսի զմատուցողաց առ հաղորդութի , առաւել քան զայնս՝ պարտի ունել

Ա

պատարագողն . զի ոչ միայն ճաշակէ , այլ նաև սրբագոր

ԴԼԴԷ.

Ա

ան : Թէ մահացուցեալ գործքն որպէս կենդանան : ԼԾ. Բարոյք ասէ մահացուցեալ գործք, և ոչ մեռեալք : զի զբարի գործս գորս մարդն գործէ յայնս ժամանակս՝ յորս ոչ է 'ի մեղս մահու չափս, են կենդանիք : և եթէ յետոյ մեղանկիցէ մահու չափ մեզօք, սկսանին բարի գործքն կենդանիք՝ մահացուցանիլ այսմիկ : Իսկ եթէ որ գործիցէ զբարի գործս 'ի ժամանակին այսմիկ՝ յորս է 'ի մահու չափ մեղս. բարի գործքն այնք՝ ոչ յաւաճածին կենդանիք, այլ մեռեալք : և ոչ ասին մահացուցեալք՝ մինչ ոչ եղեն երբեմն կենդանիք : Ուստի մինչ վարդապետի թէ բարի գործքն կենդանանան երբ ապաշխարէ տէր գործոյն, միշտ իմանալի է զայնց բարեաց գործոց, որք էին երբեմն կենդանիք, և յետոյ մահացուցեալք, և ոչ երբէք զայնց բարեաց գործոց՝ որք իբրև զմեռեալ զանակ ծնանքանցի այնք յախտեան ոչ կենդանանան : Իբարձեալ զխաւիէ, զի մահացուցեալ գործքն 'ի ընդունման ամայնոյ բարեհաճութեանն են կենդանիք, և ոչ միշտ կենդանիք են այսմիկ : Վասն որոյ ոչ երբէք ասին մահացուցանիլ՝ կամ վերստին կենդանանալ ըստ իւրեանց ինքեանց, այլ այսմիկ, այսինքն, որքան առ այս մարդ :

ԴԼԴԸ.

ԱՅԻԱԸ.

ԴԼԻԵ.

Ա

Բ

ան : Ի՛նչ այս թարց արհամարհման կրօնին : ԼԾ. Վասն զի եթէ որ արհամարհելով զկրօն զղջայ 'ի մեղաց' ոչ երբէք լինի նմա թողեալ. և պատճառն է՝ զի զղջումն միայն հանդերձ ուխտիւ խոստովանելոյ է՝ դեղ, և արդիւնաւոր : Իսկ որ մերժէ զխոստովանելուն և միայն զղջայ, մերժելովն մեղանէ նորապէս : Եւրեմն մինչ որ թարց ուխտի խոստովանելոյ զղջայ, ոչ զղջայ արդիւնաւորապէս, այլ մեղանէ նորապէս, եթէ խոտիցէ զխոստովանելուն :

ան : Ըստ այնմ որ հնար ոչ է օգուտ : ԼԾ. Բառս այս ոչ է օգուտ՝ պարունակէ և զայս թէ նաև է՝ զնասս : քանզի այն որ ասի՝ թէ աղատի 'ի հրամանաց' իմանի որքան առ արտաքին ատեան եկեղեցւոյ : Վասն որոյ, որ ունի զմեղս ինչ մահացու, և անտի ոչ զղջացեալ, և զայն ոչ խոստովանեալ, խոստովանի միայն զայս մեղանս, այնպիսին 'ի խոստովանութեանն գործէ զնոր մեղս սրբապղծութե. և այսպէս խոստովանութի իւր ոչ միայն է անօգուտ, այլ և վնասաւ կայս :

Բան : Իսկ եթէ ոմանք մեղք մոռանեցեալք եղին :
 ԼՃ. Եթէ որ առանց ծուլութե , և անհոգութե
 քննեաց զինքն՝ նախ քան զխոստովանութիւն՝ զի
 ՚ի միտս իւր բերցէ զմեղանս , բայց այսու օմի տա-
 կաւին մոռանեցան մեղք ոմանք ՚ի խոստովանութեն ,
 այսպիսիս ոչ վարկանի կիսատեալ զխոստովանութի .
 զի յակամայ է մոռացումն . ուստի առ յայսպիսի մո-
 ռացումն , ասէ խոստովանահայրն ՚ի բանի արձակ-
 մանն , Թողութի շնորհեսցէ օմ յանցանաց քոց , խոս-
 տովանեցելոց , և մոռացելոց , և այլն : Բայց եթէ
 որ ոչ ունիցի զիոյժ քննել զինքն , և ոչ ունիցի զքան
 վերայիշելոց զմեղանս իւր , և այսու վասն անխոյժութե
 քննմանայ , այնպիսին պարտի կրկնել զխոստովա-
 նութիւն , եթէ մոռանեցեալ մեղքն իցէ մահացու :
 Բայց աւաղ անհոգութեց մարդկանց , զի վասն ան-
 յաւորաց առից և տրոց ունին զվշտողութիւնս իբրեւ
 զծախ , և թէ չիցեն բաւական պահել ՚ի միտի զամ ,
 դրեն նաեւ ՚ի թղթոյ , զի մի գուցէ մոռանիցին .
 բայց զմեղացն գործեցելոց՝ զորոց զհամարն պարտին
 տալ առաջի խոստովանահօր , ոչ երբեք ունին զիոյժ ,
 զի և զայնց հոգ տարցեն պահել ՚ի միտի , և կամ հա-
 մանշանել յուրեք զի մի մոռանիցին :

Բան : Որ միայն լսելովն զխոստովանութի կարէ
 լնուլ զոտեղի քահանային ԼՃ. Բարւոք իմա զայս
 որ քան առ լսելն միայն . և ոչ որքան առ ար-
 ձակումն . զի աշխարհականն յոյնչ հարկաւոր ժամա-
 նակի կարէ առնել զայս պաշտօն , ոպ զի արձակեսցէ
 զոր . բայց զսելն միայն զորմէ դնի աստ՝ իմա իբրու
 վթարման և զմիջնորդ , այսինքն , եթէ քահանայն
 ոչ իցէ ներկայ լսէ աշխարհականն , և յետոյ երբ դը-
 տանէ զքահանայ պատմէ նմա , զի նա արձակեսցէ .
 սակայն նաեւ այս ոչ է հարկաւոր , մինչ այսու ոչ լինի
 խորհուրդ ապաշխարութեան , եթէ արձակելի անձն
 ոչ է ներկայ . վասն զի քահանայն ներկայաբար ոչ
 արձակէ զնա , ասելով՝ ես արձակեմ զքեզ . և թէ
 առիցէ զնա արձակեմ , այլայլի ձևն : Եւ որքան վերջմանս
 առ յայս իմանի ասացեալն՝ ՚ի բնաբանոցն թէ ոմանք խ. Ն. պ. 2
 ասեն ոչ է պարտ խոստովանել աշխարհականի մինչ ոչ
 գոյ քահանայ , այլ պարտ է նոյ խոստովանել :
 Որոց ասողաց պատճառն է այս , զի այնու ոչ լինի
 խորհուրդ ապաշխարութե , որովհետեւ ապաշխա-
 րողն ոչ է ներկայ առաջի քահանային : Բայց սակայն
 ՚ի զի .

ԳԼԻԵ.

Ա

՚ի դիպողածոջ յորժամ հիւանդ որ մերձ ՚իմահ ոչ ունիցի զբահանայն ներկայ, և ասիցէ զմեղս իւր աշխարհականն , վասն կասկածանաց՝ զի մի՛ դուցէ կապիցի լեզուն մինչև ՚ի դալն քահանային , յայնժամ եթէ քահանայն ՚ի դալն իւր կապեցեալ լեզունով գտցէ զհիւանդն , լսելովն զմեղս հիւանդին ՚ի յաշխարհականէն յայնմանէ , կարէ արձակել զհիւանդն . և լինի խորհուրդ . զի արձակելի անձնէ ներկայ, և մեղքն յայտնեցեալ է քահանային ՚ի ձեռն միջնորդին : Եւ որքան առ այս՝ իմանի բան բնաբանիս՝ որ ասէ՝ որ միայն լսելովն կարէ լնուլ զտեղի քահանայի :

ԳԼԻԷ

Ա

Ի կել զխոստովանութի , այնքանէ հարկաւոր զբանի խորհրդոյն , մինչ զի յայտնող քահանայն՝ ոչ միայն մեղանչէ ծանրադռնեղ մահացու մեղք , այլ և կոչի եղծող , և քակտիչ խորհրդոյ ապաշխարութի : Վասն որոյ յաւիտենականաւ դատադարձութեամբ է դատապարտելի , և ոչ երբէք այնուհետեւ ՚ի քահանայադորձութե թողլի : Ուստի նաև հրամանաւ վերնադռնին՝ ոչ կարէ յայտնել զխոստովանութի . և այս իմանի վասն ո՛ր և իցէ վերնադռնի բաց յայ՝ միայնոյ : Իսկ եթէ բռնաւոր որ ստիպիցէ զքահանայն ասել զլուեայն ՚ի խոստովանութե , թէ և մեռանիլ հասանիցի ինքեան՝ պարտական է մեռանիլ՝ և ոչ ասել . և թէ զերդումս յառաջադրիցեն նմա , պարտական է երդնուլ և ոչ ասել : Եւ թէ ոչ իցէ սուտ երդումն՝ երբ երդնուցու ոչ գիտել զմեղացն՝ զորս լուաւ ՚ի խոստովանութե , յայտ է այտու . զի քահանայն ոչ լսէ զմեղս խոստովանողին ինչ զմարդ՝ այլ որպէս զամ . իսկ ամ ոչ յայտնէ , և ինքն յայնժամ մինչ հարցանի՝ ոչ է ամ , այլ լոկ մարդ . ուրեմն ոչ գիտէ : Բանդի ամ ոչ յայտնեաց ինքեան , և ինքն իբրև մարդ՝ ոչ լուա , զի ա՛րդ կարիցէ լինիլ գիտող . վասն որոյ մինչ երդնու ոչ գիտել , ճշմարտապէս երդնու : Եւ եթէ ասիցես՝ հաւատով այսպէս գիտէ քահանայն թէ իբրև ամ լուա , և գիտաց , բայց ՚ի ներքս իւր միշտ ունի՝ թէ ինքն գիտէ զմեղքն , և զիա՛րդ մինչ երդնու ոչ գիտել է ճշմարիտ երդումն : Պատասխանեմ օրինակաւ , մեք ամենեքեանք քրիստոնեայքս հաւատով ունինք , թէ սրբադնադորձեցեալ հայն , և զինքն է՝ ճշմարիտ մարմին և արիւն Բի , թէպէտ զգայութե մերոյ երևիցի տակաւին հաց և զինի . ըստ հա

համոյն՝ հոռոյն՝ և դռնոյն, բայց եթէ երդնուլ հարկ լիցի, յայնժամ ճշմարտագէտ երդնումք, երբ հետե իցիմք հաւատոյ, և ամիցեմք մարմին և արիւն, քան թէ հետե իցիմք զգայութեան և ամիցեմք հայ և դի նի . ըստ այսմ իմն և զնոստովանութի . զի խոստովանահայրն ոչ պարտի հետե լիլ զգայութեն՝ այլ հաւատոյն, մինչ ստուգութի հաւատոյն ՚ի վերէ քան զստուգութի զգայութի, և մտազ մերոց : Աստուտ հետե լի ուրեմն, զի որ լուա զմեզս ուրուք ՚ի խոստովանութեան, նաև զնշան ինչ ոչ կարէ ցուցանել զայնմանէ առ արտաքս, ոչ ՚ի գործս և ՚ի բանս իւր, ոչ առ խոստովանորդին իւր, և ոչ առ յայլ ոք :

՚ի գործս և ՚ի բանս իւր՝ այսպէս . եթէ քահանայն միայն ՚ի խոստովանութի իմացաւ զխոստովանորդի իւր դոյ զաղրագործ, կամ դոյ, կամ ռխակալ և այլք նմանք . և նախ քան զայն գիտէր զնա այր երկիւզած ալ, որոյ վասն պատուէր զնա, և գովէր, ոչ կարէ այլայլել զգործն պատուոյ, և լսել ՚ի գովութի :

Առ խոստովանորդին՝ այսպէս . եթէ իմացաւ ՚ի խոստովանութեն զանհաւատարմութի ինչ խոստովանորդայն առ ինքն, և նախ ունէր զնա որպէս զհաւատարիմ բարեկամ ինքեան և զիրեկն, ոչ կարէ քահանայն յետ այնորիկ վարիլ ընդ նմա ալ ընդ ոչ հաւատարմութեամբ ըստ այսմ իմն և զնմանեաց :

Իսկ առ այլ ոք՝ այսպէս, եթէ խոստովանորդին որպէս զհաւատարիմ մտանէր և ելանէր ՚ի տան ուրուք, և քահանայն լսիցէ ՚ի խոստովանութե, թէ նա առնէ զանհաւատարմութի ինչ ՚ի տանն յայնմիկ, կամ դողաւորով, և կամ այլով անաւակութի, ոչ կարէ զգուշացուցանել զտունն զայն, տալով զնշան ինչ, թէ մի թոյլ տայ մտանել և ելանել ՚ի տան ձերում, այն ինչ մարդոյ : Աստուտ իմն ով քահանայ, զի ոչ գիտես զմեզս ուրուք որպէս զմարդ . զի մեզքն խոստովանեցեալք լինին ալ արձակողին, և արձակին յայ . ուստի և ՚ի յարձակմանդ մինչ ատես՝ արձակեմ զքեզ յամ մեղաց, և այն, ՚ի գիմացն ալ ատես . և ոչ ՚ի գիմաց քոց . քանզի ոչ ոք կարէ թողուլ զմեզս, բայց միայն ամ . վասն որոյ՝ եթէ ունիցիս զքեզ գիտող զմեզս խոստովանորդայոյ որպէս զմարդ, հետե լի թէ ունիս ևս զքեզ արձակալ՝ որպէս զմարդ . և առ քեզ ճշմարտի ասացեալն հրեից՝ զինչէ որ խօսի սա զհայ հո

հոյու[թի], ով կարէ [թողուլ զմեզս՝ եթէ ոչ միայն ան-
Ուրեմն ոչ ունիս զայլ հնար՝ եթէ ոչ զայս, զի զմեզս
խոստովանորդւոյդ՝ մտքք կամօք ամենեւին անգիտա-
ցես . իսկ այնք որք են ՚ի դպայութեդ ընդդիմացես :

Բ ան : Ընդունելութե շնորհի : ԼՃ. Մինչ ատէ
[թէ փոխարինանն հանգիպիմք ընդունելութե
շնորհի, և այլոյ բարեաց, պարտ է իմանիլ
յայնժամ, յորժամ զփոխարենն՝ այսինքն, զապա-
խարանք վճարեմք՝ մինչ եմք ՚ի շնորհս . որէ ասել
մինչ եմք առանց մահուչափ մեղաց . ապա [թէ ոչ
վճարմամբ ապաշխարութեան ոչ հանգիպիմք ընդուն-
ման շնորհաց, ոչ [թողութե պատժոց, և ոչ մաքրու-
թեան մնացորդաց մեղաց : Այլ միայն վճարեմք ար-
տաքին ատենի եկեղեցւոյ : Ուստի հետեւի՝ զի եթէ
ոք զապաշխարանս իւրոյ մեղաց վճարեցէ մինչ է ՚ի
գիւղցւմնոր մահուչափ մեղս, և մեռանիցի [թարգ զլճման,
խաւսւոյ, և ընդ իջանէն ՚ի դժոխս վասն այնմ՝ նորոյ մեղացն՝ տա-
նի ընդ ինքեան և զպատիժսն նախկնոյ մեղացն [թ-
ղեցելոյ ՚ի խոստովանութեան, և այնու ևս տանջի :
Քանզի [թէպէտ վճարեաց ՚ի կենդանութեն՝ բայց գո-
լով ՚ի մեղս մահուչափ՝ մեռեալք էին վճարմունքն
այնք, և առ յոչինչ պէտս օգուտք :

Բ ան : Վերաբերի առ արդիւնաւոր կեանս :
ԼՃ. Աստէն ևս իմա ըստ արդէն վերոասա-
ցելոցս . քանզի եթէ իցէ վճարողն զփոխարեն
պատժոյն՝ ՚ի շնորհս, վերաբերի այն առ արդիւնա-
ւոր կեանս, նաև առ ՚ի [թողութիւն պատժոց :
Աստուտ իմանի [թէ սրբոյ ապաշխարութիւն ունէր
դերկոսեանն ևս . զի գոլով ՚ի շնորհս՝ ապաշխարու-
թե իւրեանց աճեցուցանէին զարդիւնս, յաւելլով
՚ի գանձս եկեղեցւոյ, ուր գանձեցեալք են արդիւնքն
Քի . նաև վճարեին անձային արդարութեանն՝ զոր
վշտացուցեալք էին երբեմն : Ուստի առաքեալն
պօղոս մինչ չարչարելովն ապաշխարեի՝ այն էր վճա-
րողական, զի ունէր զգիտաւորութի վճարել այնու
վասն մեղացն՝ որով վշտացուցեալ էր զան :
Ուստի ասէր . զի հալածեցի զեկեղեցին այ, վասն
այն կամիմ վշտանկիլ . էր նաև արդիւնաւոր, վասն
որոյ և ասէր, այլ ես զպակասութի չարչարանացն
Քի ՚ի մարմնի իմում կրեմ, վասն մարմնոյ նորս, որ
է եկեղեցի, իբրու [թէ ասիցէր, ես ևս զարդիւնս
չար-

չարչարանաց իմոց առադրեմ' ի վերայ արդեանց
չարչարանացն Քի, վասն եկեղեցւոյ, այսինքն՝ զե
լինիցի գանձ յեկեղեցւոջ, յորմէ ՚ի ժամանակի հար-
կաւորութեան, տրամաբաշխեցէ զայն ծայրագոյն
հովիւն եկեղեցւոյ, ամենից հաւատացելոց :

Էւ այս է ներդրութի զորս տայ պատն հաւանայ առ ՚ի
թողութի պատժոց մեղաց, կատարելապէս զղջացեալ
հաւատացելոց :

Բան : Առանց ամենայն նախապատրաստութեան
կարէ : Ը. Կրկին է նախապատրաստութիւն,
այսինքն, նախընթաց . և համընթաց . արդ-
եմ կարէ առանց ամենայն նախընթացի պատրաս-
տութեան արդարացողցանել . բայց զհամընթաց պա-
տրաստութիւնն պահանջէ . և այս յայտ է ՚ի յառա-
քեալն պողոս . զի չունէր զնախընթաց պատրաստու-
թիւն, քանզի գնայր ՚ի դամապիտ' առ ՚ի հալածել
զեկեղեցին Քի . բայց երբ կոչեաց զնա Տէր, և
լուաւ զձայն, թէ զի' հալածես զիս սաւուղ' ոչ պա-
տասխանեաց կամիմ հալածել, և հալածեմ, այլ
ասաց, Տէր, զիս գինչ կամիս առնել, այսինքն, որ
պէս կամիս' ցոյց տուր ինձ՝ զի արարից . և այս էր
համընթաց նախապատրաստութիւն, թարց որոյ ոչ
կարէր արդարանալ : Ուստի յայտ է՝ զի շնորհն յետս
դարձուցանէ զհամընթաց պատրաստութիւնն արդա-
տաբար յետս դարձուցանէ յայ, առ տեղեղճաւծս .
Իսկ նախապատրաստութիւն մեր առ եմ է՝ զի ՚ի
ձեռն կամաց շարժիցուք առ աստուած հաւատով,
և բողբոմին դարչնցուք ՚ի յամենից գործոց մե-
ղաց :

Բան : Զի ներքին մեղքն ոչ բառնայ զունակու-
թիւն առաքինութեան : Ը. Այսինքն, ոչ
բառնայ զսէրն . և այնու մնայ ունակութիւն
առաքինութեան . ասացի ոչ բառնայ զսէրն այ . քան
զի եթէ բառնայցէ մեղք ինչ զսէրն այ, այն ոչ կա-
րէ գոլ ներքին, այլ մահուչափ :

ԳԼԷ

Ա

12. 10

112. 10. 2

և 10. 113

պ. 3. 4. 5.

ԳԼԷ

Ա

ՔԼԸԳ.

Բան : Արական սերն : ԼԾ. Առ տպանորումն կերպ կարգին հարկաւոր է զի ընդունօրն լինիցի արու : զի կինն ոչ է ընդունակ կերպ կարգին . ոչ քահանայականին , և ոչ աւաջնոյ կամ երկրորդի , և այլոց աստիճանաց կարգին . ուստի որք վարկեն թէ կանայք կարեն աւանդ զինն աստիճան թէ փոքր և թէ մեծ , ենթ նշովոյ արքոյ սխնհոթոսաց ան կանին : Վասն որոյ եթէ եպիսկոպոս որք յանդգնեալ տայցէ զաստիճան ինչ կուսի , կամ կնոջ ուրուք , ոչ երբեք տպաւորի կնիք :

ՔԼԸԵ.

Բան : Զօանն ոչ ասասցեն հեղաքար : ԼԾ. Այնք ասեն հեղաքար զօանն իւրեանց , որք ոչ կամաւ , և յօժարութե , այլ իբրու զհարկադրեցեալ ասեն . կամ ծայրատելով , և կիսատելով ասեն , և կամ մինչ ի յատենի ասեն . ինքեանք վասն ծուլութե ոչ յօժարին ասել այլ կամին զի այլք ասիցեն և ինքեանք լսելով վճարիցեն . և կամ թէ ինքեանք ասիցեն առանց ջերմեամեղութեան իբրու ի բերանոց թափեցեալ ասեն . և կամ վասն ձանձրանալոյ այնքան փութով եղբերէ ջանան մինչ զի անդր քան զսոսն շուտափութութեամբ ասեն , և այնու զմանս տունս սաղմոսաց թողեալ , զերդ շարականացն սկսին . ըստ այսմ կերպի իմանալի է և զայլոց նմանեաց , որք առ հեղաութին պատկանին : Արդ եթէ ի հեղապէս ասելն մեղանի , ապա որքան յայնժամ երբ վասն անհոգութե , և ծուլութե ժամ ինչ զանց առնիցի , և ոչ ասիցի . և կամ բոլորն թողանիցի , որ է յայտնապէս մեղք մահուչափ :

ՔԼԸԶ.

Բան : Խորհուրդն զի մի քականցի : ԼԾ. Թէ պէտ վասն ոմանց պատճառաց կարէ լինիլ բաժանումն ի մեջ պատկեցելոց , բայց ոչ երբեք կարէ լինիլ բախումն . զի օրինաւոր պատկեցելոյ մեծ խորհուրդ , այսինքն նշանակող զՔն , և զեկեղեցի , ոչ երբեք կարէ բախիլ . և ոչ որ ունի զիջանութի բախելոյ : Ասացի կարէ լինիլ բաժանումն վասն ոմանց պատճառաց . զի բաժանումն է որով ամուսնիք միայն զատին յիւրեաց ըստ բնակութեան , բայց ոչ ամուսնանան ընդ այլոց . և պատճառքն որք անմեղադրելի առնեն զայսպիսի բաժանումն են այսոքիկ : Նախ եթէ կամաւորութե հրաժարիցին ի մի մեանց վասն պահելոյ զողջախոհութի առժամանակ մի երկրորդ , եթէ մինն յամուսնեաց անկանիցի ի շուրթի ,

Թի , միւսն կարէ բաժանիլ ըստ բնակութե առանց
մեղաց : Երրորդ , եթէ մինն յամուսնեաց չարացեալ
կամիցի բռնադատել և քարշել 'ի մեղս , և կամ 'ի յան-
հաւատութիս դամուսին իւր , կարէ յայնժամ բարի
ամուսինն բաժանիլ 'ի յայնտիսոյ չարէն՝ զի մի՛ մեղի-
ցէ ըստ դրդեցման նորին , ըստ Տն բանի՝ որ ասէ ,
եթէ աջ ձեռն քո դայթակղեցուցանէ զբեզ, հառ զնա,
և այլն : Չորրորդ , եթէ մինն 'ի յամուսնեաց անկա-
նիցի յուրացութի, կարէ հաւատացեալ ամուսինն բա-
ժանիլ 'ի յանհաւատէն : Ասացի ոչ երբեք կարէ քակ-
տիլ , զի քակտիլն է այն՝ որով կասն ամուսնութեան
քակի վասն ամուսնանալոյ ընդ այլում , բաժանեցելոյ
ամուսնոյն . որ է ընդդէմ անձայնոց օրինաց . զի ասէ
սբն պօղոս , մինչ այր կենդանի է՝ չուն կոյի կինն՝ եթէ
լինիցի առն այլում , որով զուգանէ՝ թէ խորհուրդ
դասակին՝ միայն 'ի ձեռն մահո՛ւան առն , և կամ կնոջն
քակտի . և Տրն ասէ , զոր անձ զուգեաց , մարդ մի՛
մեկնեացէ . այսինքն , մարդն ոչ ունեացի զեղխանութի
քակտելոյ : Սակայն եթէ աւարկիցի՝ որպէս և աւար-
կին ոմանք հերետիկոսք , թէ վասն պատճառի շնու-
թե ամուսնոյն՝ կարէ զսակն՝ ոչ միայն բաժանիլ , այլ
և քակտիլ . զի ասէ Տրն 'ի մատթէոսի ժԹ , ամ՝ որ
արձակիցէ զկին իւր , և ոչ վասն բանի պոռնկութե ,
և առնիցէ այլ շնայ . յորմէ երևի հեռելի՛ թէ որ
վասն բանի պոռնկութե արձակիցէ զկին իւր , և առ-
նիցէ այլ՝ ոչ շնայ : Պատասխանեմ , թէ անդրադար-
ձումն այդ՝ ոչ է ուղիղ , զի բանն Քի՛ աստէնէ՝ կը-
կին . և անդրադարձումդ այդ՝ է մի . և նման է այսմ
կրկնատութե , որ ունելով զմի անդրադարձումն է
թիւր , որդոն , որ խօսի զինն առանց ճշմարտի պատ-
ճառի , և գործիցէ զգործ ինչ անկարգ , է յիմար . ու-
րեմն որ խօսի զինն 'ի ձեռն ճշմարտի պատճառի , և
գործիցէ զգործ ինչ անկարգ , ոչ է յիմար . Թիւր է
անդրադարձումն . զի զերկին արարս յիմարութեան
ոչարունակէ նախադատութին այն , մինն է՝ առանց ճշ-
մարտի պատճառի խօսիլն . և միւսն է՝ զանկարգ գործ
ինչ գործելն . ուստի խօսելուն 'ի ձեռն ճշմարտի
պատճառի , մի յիմարական արարքն միայն բառնի , և
միւսն միայ տակաւին , մինչ գործէ զգործ ինչ անկարգ .
ուստի պիտոյ է զի հակադարձն ևս քիցի կրկին՝ ըստ
այսմ օրինակի , որդոն , ուրեմն որ խօսի զինն 'ի ձեռն
ճշմարտի պատճառի , և ոչ գործէ զգործ ինչ անկարգ .

ոչ է յիմար : Ըստ այսմ՝ օրինակի և բան ՏՆ՝ զոր ասէ
 'ի թիժ գլխով մատթեոսի , է՛ կրկին . զի 'ի Ե գլխովն
 մատթեոսի ասացեալ էր թէ որ արձակէ զկին իւր
 առանց բանի պոռնկութե , նա տայ նմա շնալ , այս
 ինքն ինի նմա պատճառ շնալո՛ւ ոչ յիշելով առնուլ
 զայլ կին . որով յայտնապէս իմանի , թէ արձակելն
 միայն առանց բանի պոռնկութե՛ է շնալ , վասն դոյոյն
 պատճառ շնալոյ արձակեցելոյն , թէ և ինքն արձա-
 կողն ոչ ածիցէ զայլ կին : Էւ աստէն ըստ նոյն բանի
 ասաց , որ արձակէ զկին իւր առանց բանի պոռն-
 կութե , և առնիցէ այլ շնալ . որ ունի զայս զօրու-
 թի , իբրու թէ՛ որ արձակէ զկին իւր առանց բանի
 պոռնկութե , շնալ . և առնիցէ այլ շնալ . ոպ վերոյ
 եդեալ օրինակն մեր՝ ունի զայսպիսի զօրութի , ո՛ր-
 քոն , որ խօսի զիմն առանց ճշմարտի պատճառի՝ է
 յիմար . և դործէ զգործ ինչ անկարգ՝ է՛ յիմար : Բայց
 որպէս աստ ոչ գնի կրկին անգամ յիմար , զի վերջին
 ասացեալ յիմարն բաւական է երկոցունցն ևս , նոյն
 պէս և ՏՐ մեր՝ ոչ եդ անդէն կրկին անգամ զբառս
 զայս՝ շնալ . զի յետին եդեալն՝ երկուց ասութեանցն
 ևս՝ էր բաւական . մանաւանդ զի նախապէս ասա-
 ցեալ ևս էր , թէ արձակողն զկին առանց բանի պոռն-
 կութեան , է պատճառ շնութե , և շուն . ոչ յիշելով
 զմիւս շնալն , որ ինի ածելովն զայլ կին :
 Եւ որի յայտնապէս երևի թէ երկու ասութիք են 'ի
 նախադասութեւ , այսինքն , որ արձակէ զկին իւր
 առանց բանի պոռնկութե , և առնիցէ այլ շնալ . որոյ
 անդրադարձն ևս կրկնակի պարտի ինիլ՝ այսպէս :
 ուրեմն որ արձակէ զկին իւր վասն բանի պոռնկու-
 թե , և ոչ առնիցէ այլ՝ ոչ շնալ . և այսպէս է ուղիղ
 Բայց վասն այն մոլորեցան միոք լօթերականաց՝ և
 այլոց ոմանց հերետիկոսաց 'ի յայսպիսի անդրադարձ-
 ման , զի ոչ մոռճեցին զկէտան . բանզի յետ ասու-
 թեւ , որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկու-
 թե , գոյ ըստ ինքեան միջակէտ , և ըստ պատահմանն
 գնի ստորակէտ . վասն զի՝ շնալ բայն՝ այնմ ասութե :
 է՛ մնացեալ 'ի վերջն՝ զի և միւսոյ ասութեւն , այսինքն
 (և առնիցէ այլ) լինիցի բայ . և վասն այսպիսոյ պա-
 տահման գնի ստորակէտ . սակայն ըստ ինքեան պա-
 հանջէ տեղին այն զմիջակէտ . որպէս յայտ է այսու ,
 զի երբ գհեաակաց բայն իւր գնեմք հուպ նմին , երևի
 բանն եղերեցեալ , որ պահանջէ զմիջակէտ . որդոն

որ արձակէ զկին իւր առանց բանի պաշտօնութեան ,
 շնայ : Եւ զի առաւել յայտնի լիցի , զի աստ 'ի բան
 Քի , նաեւ 'ի վերոյ եղեալ օրինակն մեր՝ ըստ որում
 ասացաք , դոն ը տ ինքեանց միջակէտք , և ըստ որ
 տաճման ստորակէտք , դնեմք աստէն զայլ իմն նա
 խաղաասութի , որ ունիցի ըստ ինքեան զստորակէտ ,
 և իցէ մի ասութի , և կարիցէ անդրադարձիլ ուղղա
 պէս միով ասութի . ո՛րդոն , որ թողու զգուրս տան
 իւրոյ առանց փակելոյ , և ննջիցէ՝ է՛ յիմար . ուրեմն
 որ թողու զգուրս տան իւրոյ 'ի ներքոյ փականաց , և
 ննջիցէ՝ ոչ է յիմար . ահա սա բարւոք անդրադարձնայ
 միով ասութի . զի ըստ ինքեան ստորակէտ է՛ 'ի մէջն ,
 այսինքն զկին բառին փակելոյ , և գոյն յիմար , ոչ կա
 րէ վերաբերիլ միայն առ յայն ասութի , այսինքն , որ
 թողու զգուրս տան իւրոյ առանց փակելոյ . զի այնու
 ոչ լինի որ յիմար . այլ հարկ է զի ննջիցէ՝ ևս , և աստ
 լինիցի յիմար . որոյ վասն , մի ասութի միայն է այսպիսի
 նախադասութիւն : Բայց ասացեալն Քի է՛ երկու
 ասութի . քանզի առանց բանի պաշտօնութե արձակելն
 զկին իւր է՛ շնայ , զի տայ նմա շնայ . որպէս ասաց
 նախապէս . 'ի է դէտոջն . և ոչ է այս ասութի կարօտ
 միւսոյն , այսինքն , առնել զայլ կին , զի ասպա լիցի
 շնացող . որպէս արդէն եղեալ ասութին (որ թողու
 զգուրս տան իւրոյ առանց փակելոյ) պահանջէ զի
 այնպիսին նաեւ ննջիցէ , և ասպա լինի յիմար . քանզի
 որ հակէ և ոչ ննջէ՝ զգուրս տանն առանց փականաց
 թողուլ չէ յիմար . բայց որ ոչ ածէ զայլ կին , և զկին
 իւր առանց բանի պաշտօնութե արձակէ , է՛ շնացող ,
 վասն դորոյն պատճառ շնայոյ արձակելոյն . ուրեմն
 յայտ է , զի կարի տարանջատք են յիրեքաց նախադա
 սութի Քի , որ է կրկին ասութի , և նախադասութիւն
 եղեալ մի օրինակի , որ է մի ասութի : Բայց հերե
 տիկոսքն ուռուցեալք հարարութի , զկրկնասութիւն
 նախադասութեան Քի ոչ տեսին . այլ կայան որպէս
 զմի ասութի , և այնպէս անդրադարձուցեալ թիւրա
 պէս իմացան : Եւ մինչ 'ի լուսոյ բնականէ պակասե
 ղան , կարելին լուսով հեղինակութե սք գրոց ուղղա
 պէս իմանալ . բայց հարարութի իւրեանց զրկեաց
 զնոսին և յայտնանէ լուսոյ : Եւ հեղինակութիւն սք
 գրոց յայտնապէս զուգանէ զհայարարութիւն բանիս՝
 այսու . քանզի մատթէոս . մինչ ներ բանիս այս որ ար
 ձակէ զկին իւր , եղ զայս ասութիւն , առանց բանի

պտունկութեան , երկիցս անգամ դրեաց . զի 'ի հինգ
գլխոջն՝ ասաց որ արձակէ զկին իւր առանց բանի
պտունկութե , նա տայ նմա շնալ , այսինքն , է շնացող
վասն գորոյն պատճառ շնալոյ արձակեցեալ կնոջն . և
ոչ յիշեաց առն արձակողի զածելն զայլ կին՝ որ է երկ
րորդ շնութի . և 'ի թի գլխոջ մինչ յիշատակեաց
ածելն զայլ կին՝ որ է երկրորդ շնութի , զառաջին
ստացեալն ևս կրկնեաց , թէ որ արձակէ զկին իւր
առանց բանի պտունկութեան , և այնպէս շարայարեաց
ընդ երկրորդի ասութեան , և շնացող դո՛ր բազայս
տեաց՝ ոչ միայն զայն որ առանց բանի պտունկութե
արձակէ , այլ և զայն՝ որ զայլ կին ածէ : Իսկ մար
կոս , և զուկաս , որք ոչ գրեցին կրկին անգամ զնոյն
բանն , (այսինքն , առանց բանի պտունկութե) ոչ եր
բեք յիշեցին . այլ միայն դրեաց սքն մարկոս 'ի թ
գլխոջն այսպէս . եթէ այր արձակեաց զկին իւր , և
սրասցէ այլ շնայ : Եւ սքն զուկաս 'ի թ գլխոջն
այսպէս , նմ որ արձակէ զկին իւր , և առնէ այլ
շնայ . որ իմանի բոտ այսմ օրինակի , այսինքն , թէ
վասն բանի պտունկութեան , և թէ առանց բանի
պտունկութե , արձակողն զկին իւր թէ անխցէ զայլ
շնայ . և որ զարձակեցեալն առնու , նոյնն ևս շնայ .
ասելով զարձակեցեալն , իմանի ո՛ր և իցէ կերպիւ
արձակեցեալն . զի ոչ դնէ թէ վասն բանի պտուն
կութե , և կամ առանց բանի պտունկութեան :
Ուրեմն , ո՛ր և իցէ կերպիւ բաժանեցեալ այրն 'ի կնո
ջէ , և կամ կինն յառնէ , եթէ զուգիցին ընդ այլում
շնան : Արդ՝ եթէ որ առնու զարձակեցեալն շնայ ,
վասն կապի ամուսնութե արձակեցելոյն , 'ի հարկէ
հետեւի՝ զի մանուանդապէս շնայցէ արձակեցեալն՝
վասն կապի իւրոյ ամուսնութեանն , որպէս եթէ որ
մասնակցելով ընդ ումեք՝ վասն մասնակցութեան լինի
ցի բանադրեցեալ , 'ի հարկէ հետեւի՝ զի անձն ընդ
որում մասնակցեցաւ , իցէ մանուանդապէս բանա
դրեցեալ : Դարձեալ՝ Տրն մեր՝ մինչ ասաց , զոր ամ
զուգեաց մարդ մի՝ մեկնեացէ , այսինքն , ոչ կարացէ
մեկնել : Զայն վճիռ , այսինքն , ոչ մեկնել , կամ
իմանալի է 'ի վերայ բաժանմանն միայն , իբրութե ոչ
բաժանեացին բնաւ ո՛ր և իցէ կերպիւ , և կամ 'ի վր
բակտեցման . իբրութե ոչ կարացեն քակել զկապն ,
ամուսնանալով ընդ այլում , ո՛ր և իցէ կերպիւ :
Եթէ իմանիցի վասն առաջնոյն է ընդդէմ , քանի

Տը մեր ետ հրաման՝ զի վասն բանի պոռնկութե կա-
րիցեն բաժանիլ միայն . և անկարելի է թէ ինքններ-
հակ ինքեան խօսիցի . ուրեմն վերամայ՝ թէ ոչ մեկ
նիկն իմանի վասն ոչ քակտելոյն զկայն՝ ամուսնանա-
լով ընդ այլում : Ուստի սրբ ասեն , եթէ կինն չնայ
զէ , այրն կարէ թողուլ զայն՝ և առնուլ զայլ կին ,
հետեւեցուցանեն ընդգէմ վճռոյն Բի , թէ մարդն
կարէ մեկնել զայն զոր ամ զուգեաց . քանզի չնա-
ցեալ կինն է մարդ՝ որ ՚ի ձեռն չնութի իւրոյ կարաց
բախել զկապ ամուսնութեն , որով այրն եղև ազատ ,
և կարաց ամել զայլ կին , որէ յայտնապէս ներհակ
ամական վճռոյն որ ասաց մարդն մի՞ մեկնեսցէ , այս
ինքն , ոչ ունեսցի զկարողութիւն մեկնելոյ , այս է
բախելոյ . վասն զի ամ զուգեաց : Եւ ն է ստեղծու-
ածն զի կարիցէ բախել զայն զոր ամ չնեսաց :
Վասն որոյ այս ճշմարտութի , թէ մինչ կենդանի է
մի ամուսին՝ ոչ կարէ միւսն լինիլ առն այլում , այն
քան յայտնի է մինչ զի ոչ կարէ ուրանիլ յա մեքէ , եթէ
ընդունիցի զԲ գիրս . քանզի կարի պայծառապէս
բացատրեաց Տը մեր , որպէս ՚ի վեր եղեղոցս յայտ
եղև :

Բան : Դամանակաւ , միօք , տեղեաւ , որպիսութե
թէ , և կերպիւն : ԼՃ. Դամանակաւ չարաչար ՚ի
կիր առնանի ամուսնութի , չորս կերպիւն : Նախ , եթէ
՚ի յաւուրս հանդիսաւոր , և տէրունի տօնից լինիցի :
Երկրորդ՝ եթէ ՚ի ժամանակի դաշտանութե կնոջն .
զի ըստ բժշկաց՝ մինչ իցէ կինն ՚ի տեռատեսութեան ,
յղանեցեալ զաւակն ծնանի ցաւաղար , և պահասաւոր :
Երրորդ՝ եթէ ՚ի ժամանակի յայնմի լինիցի՝ մինչ կինն
մերձ է ՚ի ծնանիլ . զի այնու վնասն զաւակին , և է
նշան մեծի վավաշտութե : Չորրորդ , եթէ լինիցի
՚ի ժամանակի տկարութե առն , և կամ կնոջն՝ մինչ զի
այնու վնասիցի առողջութի միոյն , և կամ միւսոյն :
Եւ միօք չարաչար ՚ի կիրառնանի ամուսնութիւնն
կրկին կերպիւն : Նախ եթէ դիտիցէ միայն զվավաշ-
տութիւն , և ոչ ունիցի վախճան կամ զծնունդ զաւա-
կին , կամ զհատուցումն պարտուց . և կամ գոնեայ
առ ՚ի զգուշութիւն փորձութեց : Երկրորդ՝ եթէ
՚ի զուգիւն ընդկնոջ իւրում , վերաբերիցէ զմիտ իւր
առ յայլ կին :

Իսկ տեղեաւ չարաչար ՚ի կիրառնանի ամուսնութիւն
երկու կերպիւն : Նախ եթէ ՚ի սք տեղում լինիցի

ամուսնութի . աւտի նաև եթէ ընդ փախչին 'ի յէրեսաց ստորաւորաց' իցեն ամբողջաւք նիմիք եկեղեցւոյ, ոչ կարէ լինիլ անդէն առանց մեղաց ամուսնութի, թէ և ընդերկար ժամանակս մնացեն անդ : Երկրորդ՝ եթէ 'ի հրապարակական տեղւոյ լինիցի, մեղանշեն և այնու՝ վասն պարտութե համետութեն, որ ոչ է 'ի յայնպիսոց ամուսնութե :

Տննդ :

1843

Եւ որպիսութե չարաչար կիրառանի ամուսնութի նկրկին կերպիւ : Նախ, եթէ 'ի զուգիւն կամուսնութե, և կամ անկողնութե արտաքոյ անօթոյն հեղույս դներմն . որ թէ լինիցի կամաւ, է՛ մեղք մահու չափ . զի ամ վասն այսմ մեղաց ետրան զայրն թամարաց, որ ոչ կամէր այսու դորձով տալ զգանակ : Երկրորդ՝ եթէ վաճառութեար շոշափմամբ, և համբուրիլ հեշտանայցեն մինչև առ հեղումն սերման, թարց դուգման . և կամ մինչև առ մերձաւոր որդայթ հեղման սերման : Եւ վասն այն մեղանշեն՝ զի այսպիսիքս ցուցանեն զինքեանս ոչ գոյ իրերաց վասն զուգման պարկէշտի առ 'ի ծնունդ զուակի, և կամ առ հատուցումն պարտուց, այլ առ 'ի գոյ իրերաց գործիք, և առ իմ լոբենի վաճառութե :

Սուսի 'ի վերոյ վաճառութեար և այլն . զի եթէ 'ի միջ ամուսնեաց լինիցին համբոյրք՝ և շոշափմունք պարկէշտութե, և թարց որդայթի հեղման սերման, և կամ եթէ իցէ առ արամաւորութի զուգման, ոչ է մեղք : Իսկ կերպիւ, այսինքն, եղանակաւ . երեք կերպիւ չարաչար կիրառանի ամուսնութիւնն :

Նախ եթէ յետուստ կողմանէ՝ վասն վաճառո հեշտութե զուգիցի ընդ կնոջն առ բնական անօթն :

Երկրորդ՝ եթէ կինն յառնիցէ 'ի վերայ առն, և այնպէս զուգիցին վասն հեշտութե . և այսորիկ մանաւանդ յայնժամ են մահացուք՝ երբ խափանեն նաև զզացումն կնոյ : Երրորդ՝ որ չարաչոյն բան զամէ այն երբ ապականիցի սք ամուսնութիւնն՝ սողմանկան չարաչործութե ընդ կնոջն : Եւ այս այնքան է՝ մինչ զի թարց վիխման, առժամայն ամէ զբարկուիւն անդէն : Եւ բաց 'ի յասացելոց երեքտասանից մեղաց, որք հանդիպիլ կարեն 'ի միջ ամուսնեաց . դոն և այլք ունենք : Նախ, եթէ մինն 'ի յամուսնեաց ախտաւ իցէ զողջախոհութի, ոչ կարէ առանց մեղաց խնդրել 'ի զուգակցեն զպարսն . բաց եթէ միւսն խնդրիցէ՝ ինքն ուխտօրն պարտական է հատուցանել :

Երկ

Երկրորդ , եթէ մինն յամուսնեաց անկեալ իցէ ՚ի
 շնութեան , ոչ կարէ այնու հետեւ առանց մեղաց խնդ-
 րել զզարսն ՚ի յամուսնոյն . բայց թէ միւսն , որ է
 անմեղ խնդրիցէ , պարտական է ինքն հատուցանել . և
 անմեղ ամուսնուհին ոչ ունի զպարտանդութի հա-
 տուցանել զզարսն , երբ խնդրիցէ շնացեալ ամուսինն :
 Երրորդ , եթէ նախ քան զպատկին զուգիցին մեղան-
 չեն ծանր մեղօք . թէպէտ և իցեն նշանեցեալք իրե-
 րաց : Չորրորդ , եթէ մինն յամուսնեաց թարց բա-
 նաւոր պատճառի բացատրիցէ հատուցանել զզարսն ,
 մեղանչէ ծանր մեղօք . զի յանիրաւի առ զուգակիցն ,
 ոչ տալով զզարսն , և զի ասէ առաքեալն , կինն մարմ-
 նոյ իւրում ոչ ի չնէ՝ այլ այլն : Արդ՝ յատեցելոցս , և
 ՚ի նմանեաց օտցին պարսին զգուշանալ ամուսնա-
 ցեալքն , և ոչ ընդդէմ վարդապետութեան սք դրոյ
 զայրանալ . զի սք խորհուդ պատկին նշանակէ զ՚ն
 և զեկեղեցին . ուստի պարկեշտութի , և սք սիրով
 զարդարիլ պարտին . և ոչ այնու բանիչ , թէ պա-
 տուական է ամուսնութի , և սք են անկողինք , խենե-
 շաբար , և վաճառչութեամբ կենդանալալիկ մար-
 թին . զի սք պատկն՝ զբնական , և զպարկեշտ դու-
 դումն սրբէ , և ոչ զանկարգաւոր , և զխենեշ վա-
 ճառչութին :

Բան : Զի երկուտասանք են արդէրմանք պատկաց : 7
 Թ. Երկուտասանքն ևս բացատրին պատկես :

Ասի պատկան , զի եթէ կամիցի որ պատկիլ ընդ 1
 այն ինչ կնոջ , և յետոյ խաբեալ զնա ամբիցեն առ նա
 դալ կին . արդեւանի պատկն , բնական և եկեղեցա-
 կան օրինօք : Ասի ծառայութի . զի եթէ աղատ որ 2
 ունիցի դէպտումն պատկիլ ընդ աղատի ուրուք . և
 խաբեալ զնա առ ամբիցեն նմա զծառայ , արդեւա-
 նի պատկն եկեղեցական օրինօք :

Ասի ուրա՝ զի եթէ որ արարեալ իցէ զուրտ հան- 3
 դիսական , ՚ի կրօնի ուրուք . արինքն , եղեալ է կրօ-
 նաւոր՝ թէ և ոչ ունիցի դատարման , արդեւանի
 պատկն և ոչ կարէ դոյ . զի այնպիսին ըստ անձային և
 եկեղեցական օրինաց՝ անընդունակ է պատկին :

Ասի արեանակցութի . զի արեանառու աղքականքն՝ 4
 մինչև ՚ի չորս աստիճանն արդեւանին ՚ի պատկեցմանի
 ընդ իրերաց՝ եկեղեցական օրինօք . բայց ՚ի յառաջին
 աստիճանի արդեւանին նաև բնականօք օրինօք :

- 5 Ասի մեղքն , զի եթէ որ սղանցէ զիւր ամուսին , որ
պէս զի այնու կարիցէ ամէլ զկին որ ազատ որում
ցանկայր , և կամ թէ էր ինքն ազատ , և եսպան զոր
զի զամուսին նորին սուցէ , և կամ թէ շնաց ընդ
ամուսնոյ ուրուք՝ դաշամք առնլոյ զնա , այսպիսիք
6 յանցանք՝ արգելուն զպսակն եկեղեցական օրինօք :
Ասի այլափառութի . զի եթէ որ սլակիցի ընդ ան-
հաւատի , և ընդ ոչ մկրտեցելոյ ուրուք , արգելանի
սրակն եկեղեցական օրինօք :
- 7 Ասի բռնութի , զի եթէ որ բռնութք , և կամ եր-
կեցուցմամբ բռնաբարիցէ զոր ի յամուսնութի , ար-
գելանի սրակն բնական , և եկեղեցական օրինօք :
- 8 Ասի կարգ . զի եթէ որ ունիցի զսք աստիճան ինչ ,
այսինքն , իցէ հինգ աստիճանաւոր , կամ աւագ սար-
կուագ , և կամ քահանայ , արգելանի ի պսակեցմա-
նէ , եկեղեցական օրինօք :
- 9 Ասի կապ . զի եթէ որ ունիցի զամուսին , և վասն
պատճառաց ինչ բաժանեալ իցէ ի նմանէ , և կամ
իցէ ընդ նմին մինչ կենդանի է ամուսին իւր ո՛ր և իցէ
կերպիւն , արգելանի ի պսակեցմանն ամային և եկե-
ղեցական օրինօք : Ասի համեստութի , զի եթէ որ
10 իցէ նշանեցեալ ընդ ումեք կնոջ՝ բայց ոչ առեալ
զնա , արգելանի ի պսակիլոյ՝ ընդ առաջնոյ աստիճա-
նի ազգականի նորին , այսինքն , ընդ քուեր նորին ,
կամ մօրն , և կամ դստերն նորին : Իսկ եթէ պսա-
կեցեալ իցէ ընդ ումեք , նաև թէ ոչ իցէ զուգե-
ցեալ , արգելանի ի պսակիլոյ ընդ ազգականաց նո-
րին մինչև ի չորրորդ աստիճանն , և այսօրիկք եկե-
ղեցական օրինօք :
- 11 Ասի խնամութիւն . զի եթէ որ
զուգեալ իցէ ընդ ումեք , կամ ի ներքոյ սրակի , և
կամ պոռնկութեամբ արտաքոյ պսակի՝ արգելանի ի
պսակեցմանն ընդ ազգականաց այնորիկ , ընդ որում
զուգեցաւ , մինչև չորրորդ աստիճանն . և այս եկե-
ղեցական օրինօք :
- 12 Ասի անկարութի , զի եթէ պսակիցի որ ընդ այն
պիսւոյ՝ որ ոչ ունիցի զկարողութիւն սերմանելոյ , և
այս յաւիտենականաբար , որպէս զի ի ձեռն դեղոց
ևս ոչ իցէ բժշկութի . արգելանի սրակն՝ բնական ,
և եկեղեցական օրինօք : Ընդ սոցին գոն ևս երկու
արգելանք . այսինքն , յափշտակութի , և զանխու-
թիւն : Յափշտակութիւնն է , յորժամ որ զլուստր
ուրուք առանց հաւանեցուցանելոյ զձեռն՝ և առանց
հա-

հատուցանելոյ՝ առնու : Իսկ զանխլուծիւն է՝ յորժամ
այլ և կին հաւանեալ իրերաց՝ առնուն զիրեարս ի
ծածուկ՝ առանց ներկայութե քահանայի , և վկայից .
այսպիսիքս ևս խափանեն զստակն եկեղեցական օրի-
նօք : Ուստի որք ասացելովք արդելմամբսս ստակին,
ոչ ունին զօրինաւոր ամուսնութի . և ոչ ասին ստա-
կեցեալք՝ այլ մանաւանդ խափանեցեալք ի սք ստա-
կէն : Եւ գիտելի է , զի թէպէտ գոն և այլք իրք
որք ասին արդելիք ստակին . բայց ոչ խափանիւք .
սակայն ստոնն ասացեալքս՝ ամենեքեանք են արդե-
լիք , և խափանիւք . զորոց՝ որք են միայն եկեղեցա-
կան օրինօք արդելեալք , ստայն միայն տնօրինել կա-
րէ , և կամ այն որոյ յատկապէս տրեցեալ է ի շտա-
նութի ի ստակէն , տնօրինել զայսպիսիս :
Իսկ որք անմային , և կամ բնական օրինօք են արդե-
լեալք , ոչ յուսմբէ ստեղծմամբոյ կարեն տնօրինիլ :

Վախճան լուծմանց վեցերորդի գրութի :

Լ ՈՒ Ծ Մ ՈՒ Կ Վ

Եօթներորդի գրգոյն:

Որ յաղագս վերջնոյ ժամանակաց:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր ՈՐ Դ:

ԴԼ Դ.

Ա



Ան: Ասի հուր ճշմարիտ: ԼԾ. Հուր քաւարանինէ հուր ճշմարիտ, և ոչ երևախցանկան. բայց հարկաւոր է զի հոգին որ աւել իբրև զմեզս ինքեան ըմբռնեացէ զհուրն զայն (զոր և ըմբռնէ իսկ ըստ անային արդարութե) որով և տանջեացի անմիջաբար. քանզի թարց ըմբռնան՝ ոչ կարէ հուրն այն առնել ՚ի հոգին:

Ուստի հուրն այն՝ ըստ որում է ըմբռնեցեալ ՚ի հոգւոյ, է մերձաւոր տանջող. և որքան աւայս իմանի վերջեան ստացեալն ՚ի բնաբանոյ, թէ ըստ որում անմիջաբար իւր 70. ալ: տանջ է՝ է անմարմին, և ասի հուր նմանօրէն:

Իսկ հուրն այն՝ ըստ որում է առ բնութիւն հոգւոյն՝ է հեռաւոր տանջող. և որքան առ յայս իմանի ասացեալն ՚ի բնաբանոյ, թէ ըստ որում միջնորդաբար տանջէ, ասի հուր ճշմարիտ:

Բ

Բան: ՚ի մարմին՝ և ոչ ՚ի հոգին: ԼԾ. Մինչ հուրն է միայն գործիք բնութե, առնէ միայն ՚ի մարմին. և մինչ է գործիք անմարմին արդարութե, և այնու առնէ ՚ի հոգին, ոչ հետեւի թէ յայնժամ իբր գործիք բնութե ոչ գործիցէ զինն ՚ի հոգին. զո՞րքինասի, հուրն որ ՚ի մեզ իբրև գործիք բնութեան, ունի ինքեամբ հաշիւ զպղնձ, և զնմանս, և սպառել. բայց յորժամ ինի գործիք արհեստաւորի ուրուք առ ՚ի բաժանել զանկին ՚ի պղնձոյ, ոչ հետեւի թէ յայնժամ ոչ գործիցէ զինն առ բաժանութե այնցայլ միայն այս իմանի, զի եթէ հուրն չէր եղեալ գործիք արհեստաւորին, միայն զհալելն կարէր և ոչ զբաժանելն. և մինչ եղև գործիք, առնէ ևս զբաժանելն:

դորուծէ նախապետականի առնողին , և ընդ նմին
 իւրն բնական դորուծի ինի համբնթաց . զի բնութի
 իւրով և ստանէ զինն անդէն : Ըստ այսմ օրինակի
 իմն , թէ զճարն մկրտութե , որ է գործիք անձայնոյ
 ողորմութե , և թէ զհուր դժոխոց , և քաւարանին ,
 որ է գործիք անձայնոյ արդարութե : Ուստի բոտ
 օգտութենայ , անկարմին հոգին միաւորի ընդ մարմնոյ ,
 զի մարդն ունիցի այնու զհոգեւոր կեան , և զսէր . վերջնան
 բացյ մինչ յեղաշօյեալ մարդն զայն՝ ստանայ միայն իս. 70.
 զսէր մարմնաւոր , արդարապէս հեռեւի՝ զի միացի ս. 3.
 հոգին ընդ հրոյ յորմէ ունիցի զտանջանս , և զպա-
 տիժս , փոխանակ ունելոյն ի մարմնոյ՝ զմարմնաւոր
 կեան , և զսէր : Քանզի որ քանիցս հեշտացեալ է հո-
 գին ի մարմնոյ հեշտացուցանողէ , այնքանիցս չարչա-
 րիլ պարտի ի մարմնոյ տոգորեցուցանողէ :

Ի ան : Այլ գործեալ գործն : Լծ. Եթէ մեռեալ
 որ ի կենդանութե իւրով՝ պատուիրեալ իցէ
 յընկից իւրոց առնել ինչ վասն իւրոյ հոգւոյն ,
 և բնականիքն ոչ արասցեն , հոգին այն ոչ ընդունի
 դօտութի ինչ . այլ տանջանք քաւարանին պարտի
 վճարել զգործը պատիժն . զի գործեալ գործն , որ է
 պտուղ իւրոյ պատուիրելոյն , ոչ կատարեցաւ :
 Թէպէտ ինքն վասն պատուիրելոյն զի արասցեն
 զինն վասն իւրոյ հոգւոյն , արդիւնաւորեցաւ զինն
 բարեգործութի . սակայն դուրս այն արդիւն բա-
 ցարձակ՝ ոչ զերծուցանէ զինքն ի պատժոցն . որպէս
 և ոչ այլք բարեգործութիք իւրք : Աստուտ իմն-
 նի , թէ որքան անօրինին այնք , որք զկտակս , և
 զպատուէրս ննջեցելոց՝ ոչ առժամայն կատարեն . այլ
 արդելուն ինքեանս զգինս փրկանաց նոցին :

Ի ան : Մինչ էին ի կեանս այս՝ առանէլ արժա-
 նացան : Լծ. Արք մինչ էին ի յայտ կեան և առա-
 շել փոյթ ունէին զհոգւոյ ննջեցելոց , կամ
 աղօթելով վասն նոցին , կամ զողորմութի տալով մե
 փրկութե նոցին . և կամ զպատարագս տալով մատու-
 զանել վասն նոցին , այսպիսեաց հոգիքն ի քաւարա-
 նոյ զմեծապոյն օգտութիս ընդունին , ի հասարակա-
 կան յօժանդակութեց ննջեցելոց . վասն զի ըստ Տն
 բանի , որով չափով չափեցին չափն և ինքեանց :

Դ. Դ.

Ա

3. իս. 2.

Դ. Դ.

Ա

վերջնան
 իս. 70.
 14. 13. 14

ԳԼ Ե. Բ. ան : Այսպէս և ՚ի նեռն ամ լրումն անօրէնութե :
ԼԾ. Ոչէ իմանալի զնմանութիւնն ըստ ամի , ուն
 զի ասիցի՝ թէ անձամբ զիւնականաւ իցէ նեռն ,
 Ա որպէս մարդն Քս անձամբ ամայնով . այլ այսպէս՝
 իբրու թէ համայնք անօրէնութիւնք գտանին ՚ի նեռն ,
 թէպէտ ունիցի զանձն մարդոյ . և ոչ իցէ անձնաւո
 թաքար միացեալ ընդ զիւնին : 3 . խ . 8 . պ . 8 .

ԳԼ ԺԴ. Բ. ան : Եւ հրէայքն յայնժամ դարձցին ՚ի հաւատաւ
ԼԾ. Այս ասացեալ լինի ՚ի ձեռն բազմաց վկայ
 ութեց սբ գրոց . և մանաւանդ ըստ բանին
 Ա յովնայ մարգարէին որ ասէ . յաւուրս բազումնստ
 ցին առանց թագաւորի որդիքն իէլի . առանց պա
 տարադի , և սեղանոյ , և այլն : Եւ յետոյ ասէ . յետ
 այսորիկ վերադարձցին , և խնդրեցեն զՏբ ամ իւր
 եանց , և զգաւիթ արքայն որ է Քս . արդ՝ , տե՛ս ,
 զի ասէ վերադարձցին ՚ի խնդրել , որով նշանակէ թէ
 ՚ի ժամանակին յորում խնդրելոցք իցեն , ՚ի վաղնջուց
 եկեալ իցէ Քս : Նաւ սաղմոս երգումն ասէ , դարձ
 ցին ընդ երեկոյս , այսինքն ՚ի յերեկոյն կատարածի
 աշխարհիս :

ԳԼ ԺԵ. Բ. ան : Արդ՝ այնպէս մաքրեցին տարերք : **ԼԾ.**
 ՚ի կատարածի աշխարհի երբ մաքրին տարերք ,
 Ա այնպէս լինի մաքրեցումն , զի միայն որակութեց
 սպականողութիւնքն դադարիցին ՚ի նոցանէ ՚ի ձեռն
 դադարման առաջնոյ շարժումին . և սպականողու
 թիւք իմն զայնս՝ որովք տարերքն զիրեարս եղծեն ,
 և յիրերաց եղծին . քանզի այժմ հուրն զվուրն եղծէ ,
 և ջուրն զհուրն . իսկ յայնժամ թէ և հուր իրերաց
 դիցին , ոչ եղծիցեն զմիմեանս . թէպէտ զիրեանց
 բնական որակութիւնն ունեցին . վասն զի ջերմութին
 հրոյ ոչ լախեացէ զվուրն . և ջուրն ՚ի ձեռն իւրոյ
 յատկի որակութե ոչ լախեացի ՚ի հրոյ . այսպէս և զայ
 լոց իմն . ուստի մինչ ասէ բնաբանն՝ թէ ՚ի հրոյն
 հատանիցի այրեցողական զօրութի , ոչ իմանի թէ
 ջերմութին , այլ ՚ի ձեռն ջերմութե այրելութին :

ԳԼ ԺԶ. Բ. ան : Իսկ ՚ի բարիան բնութիւն պահեցի , և մո
ԼԾ. լութին բարձցի : **ԼԾ.** Այսինքն , ՚ի բարիան
 Ա կրականութիւն որ է կրից և ցաւոց ընդունակու
 թի , բարձցի . բայց ՚ի մարմնոց չարաց՝ ոչ բարձցի
 այն . այլ լինիցին մանաւանդ կրականք , սակայն պա
 տահական տգեղութիւնք , որդոն , սաղաւոտոյ գոյն ,
 բժոտութի աչաց , խլութի ականջաց , և այլք նմանք
 յամե .

յամենից 'ի բայ բառնին 'ի յարութեն : Բայց սկզբնա-
կանն , և յարմատոց բնութե յառաջացեալ պակասու-
թիքն , որդոն , ծանրութի բնութե , որ 'ի հողային
գոլոյն յառաջագայի . և կամ 'ի բնութե յառաջ եկեալ վերջումն
չարակարծութիք , և երկչոտութիք , և այլք նմանք
պակասութիք յսկզբանց բնութե յառաջացեալք 'ի չարսն
մնան , և ոչ բառնին . այլ 'ի բարիսն բառնին նաև նո-
քին 'ի ձեռն փառաց :

Բան : Առցեն զհատուցումն : ԼՃ. Մինչ ասի
թէ արարածք որք չեն բանականք , այսէ՛ եր-
կին , և երկիր՝ առցեն զհատուցումն , պարտե-
խմանալ զհատուցումն լայնագունաբար առեալ զի յառ-
կապէս այնց միայն ասի լինիլ հատուցումն , որք վաս-
տակեցան 'ի ձեռն կամաց , և մտաց . ուստի նորո-
գումն աշխարհի՝ չէ յառկապէս հատուցումն վաստա-
կոց նոցին՝ մինչ ոչ 'ի ձեռն կամաց վաստակեցան . այլ
է յառատագունեղ Տնէ ձիր ինչ շնորհեցեալ նոցին ,
որ լայնաբար առեալ՝ ասի հատուցումն : Աստուստ
կարեմք բորբոքիլ սիրով առ ան . քանզի թէ նաև
յակամայ ծառայողացն տայ զձիր , և զհատուցումն
այնպիսի , ապա որքան շնորհեցէ այնց՝ որք կամաւ ,
և յօժարութե ծառայեցին նմա :

Բան : Ոչ երբէք ունեցի զճշմարիտ աղաչաւ-
րութի : ԼՃ. Մեղաւորքն 'ի դժոխս թէպէտ
աղաչանին պործեցելոց մեղաց , բայց սուտէ՛
և ոչ ճշմարիտ . քանզի աղաչաւին՝ ոչ վասն այսմ , զի
զանձ վշտացուցին , այլ վասն այնմ՝ զի ինքեանք վը-
տանան . ուստի որպէս ասած նոյնպէս և 'ի դժոխս ,
ոչ սիրեն զանձ՝ այլ զինքեանս . վասն որոյ և ոչ ունին
փոյթ զվշտացուցանելոյն զանձ , այլ զինքեանս :

Բան : Կրծելով զհողին և ոչ զմարմին : ԼՃ. Որդն
խղճիմտաց ուղղապէս և անմիջաբար կրծէ զհո-
ղին . բայց միջնորդաբար՝ կրծէ և զմարմինն .
որպէս նաև այժմ՝ որք 'ի հողին իւրեանց ունին զմեծ
իմն հոգ , և զտրամութի , նիհարանան և մարմնով :
Աստուստ եղբակցութեանի , թէ մինչ 'ի մեղաւորսն
դոյ այնպիսի որդն խղճիմտաց , տրանձականն ոչ է
չիմեալ , և բնական բաղձան բարւոյ առաքինութե ,
տէ բառնեցեալ . բայց այս ոչ 'ի յօգուտ նոցին , այլ
առաւել առտանձանս , որպէս 'ի մյունջեաւորապէս
կոյրսն՝ թէպէտ դոյ բնական բաղձան տեսանելոյ ,
բայց ոչ է այն առ յօգուտ իւր , այլ մանաւանդ առ
տան

ԳԼԴ
Ա

ԳԼԴ
Ա

ԳԼԴ
Ա

տանջանա , մինչ ներգործութիւն տեսանէն անկարելի է նմա :

ԴԼԻԴ.

Ա

ան : Աճ հայր տայ բաժինք հարսին : ԼԺ. Աճ հայր առնէ զայս արտաքայ հասարակաց ընծա-
ցից , վասն առաւել սիրոյն որ առ հարսն :

Քանզի բաժինքն է այն՝ զորս ՚ի մեզ՝ հայր հարսին տայ առ ՚ի թեթեւացուցանել զծանրութի փեսային : Ուստի հարսն ՚ի տանէ հօրն իւրոյ առեալ տանի ընդ ինքեան ՚ի տուն փեսային . և փեսայն ՚ի կիրառեալ զայն ՚ի պէտս տանն , թէպէտ իցէ ՚ի ստացուած հարսին : Բայց յորժամ հանդիպի զի հայր փեսային առաւել սիրիցէ զհարսն , ինքն տայ զբաժինքն , և ոչ պա-
հանջէ զի հարսն բերցէ զիր ինչ ՚ի տանէ հօր իւրոյ . այսպէս ևս՝ հայր աճ յոյժ առաւել սիրէ զհօգի մեր , մինչ արեամբ սիրեցելոյ որդւոյ իւրոյ է փրատնեցեալ . ուստի ոչ պահանջէ ՚ի մենջ , այլ ինքն տայ հարսի հոգւոյ մերոյ զբաժինք . և այս առ ստացուին հարսին . իսկ փեսային Քի , որքան առ պատիւ , և ոչ որքան առ կիրառումն , մինչ ոչ կարօտի բարեաց մերոյ . և բաժինքս այսէ՝ այն՝ զորս հայր աճ տայ

Վերջումս
խոյս :

հոգւոյ , ընդ մտանէն նոցին ՚ի փառս . որպէս զի զմայլցին Քսիւ ըստ որում փեսայ իւրեանց , որպէս նաև ՚ի մեզ բաժինք ոչ արին՝ եթէ ոչ յայնժամ , մինչ հարսն մտանէ ՚ի տուն փեսային : Իսկ օժիտք են այնք զորս ՚ի մեզ հայր փեսային տայ հարսին , որպէս զձիր ինչ առ ՚ի զարդ հարսին , և զայս ևս տայ հայր աճ հոգւոյ . և այս է զմայլումն այն՝ զորս ունեցին սքէ ՚ի տեսութի Քի , այսինքն , ըստ որում աչօք մարմնականօք տեսանեն զՔս մարմնով :

Եւ որարդւեքն են այնք , որք ՚ի մեզ արին հարսին ՚ի ժամանակի հարսանեաց , ՚ի յամենից բարեկամաց որք եկեալք են ՚ի հարսանիս , և զայս ունին հոգիք սրբոց ՚ի խնդութի ընկերակցութեց երանեցելոց . որպէս և ասէ բնաբանն :

ԴԼԻԵ.

Ա

ան : Ներգործութիւն և ոչ ունակութիւն : ԼԺ. Մինչ ասի թէ Քս ունեաց զբաժինս մարմնայն նախ քան զարդարանս , ոչ է իմանալի թէ յատկապէս և միշտ՝ զինքեանս բաժինս ունեաց . այլ ունեաց միայն ՚ի ժամանակս յայնս՝ ՚ի ձեռն փառազարդի սքանչելեաց՝ զնման իրս բաժնեաց : Քանզի բաժինքն են մնացականք որակութիւն մարմնոյ փառաւորի , և ոչ անդրանցանողականք : Ուստի եթէ

Քս

Քն ունեալ իցէր զայն յատկապէս՝ միշտ յարամադր
 'իմին . և ոչ կարէր ճշմարտապէս՝ և բնականաբար
 չարչարիլ , և կրէր որ է ընդդէմս Գաւառոյ . և ոչ
 կարէ ասիլ թէ 'ի ձեռն սրանչեւեաց չարչարեցաւ , վերջն
 զի սրանչեւիքն որ առ 'իմահ , և առ 'ի ցաւս , առ բե 3. Խ. 43.
 բն միայն 'ի վերայ չարագործաց . որպէս ուխայի ոչ
 էր բնական յայնժամ մեռանիլ , բայց վասն մեղաց
 բոլորէն հարաւ 'ի Տէ և մեռաւ . և հոգւոցն ոչ է
 բնական տանջիլ 'ի հոյ , բայց մինչ 'ի ձեռն սրանչե-
 վեաց տանջին՝ այն է առ 'ի պատիժ . ուստի ասելն
 զՔն չարչարիլ 'ի ձեռն սրանչեւեաց , է՝ դնել զնա 'ի
 ներքոյ բարեութեանն ամայնոյ , որ է հայհոյութի :
 Նաև լինէր արտառութի սրանչեւեացն այ , որպէս
 և յիշէ բնաբանն : Ուրեմն սրանչեւիքն շուրջ զՔնի
 միշտ եղեն ժառաղարոք , և ոչ առ նոճատութի ինչ :
 Ուստի մինչ ասի 'ի բնաբանոցն զՔն է՝ թէ անչար-
 չարելի էր ներգործութի , և ոչ ունակութի , իմա
 նի միայն վասն այնց ժամանակաց՝ յորս լինէին սրան-
 չեւիքն , քանզի արտաբոյ այնց ժամանակաց՝ էր չարչա-
 րելի ներգործութի , և ունակութի . ասացի յայնս
 ժամանակս միայն , զի 'ի ծննդեան ժամանակին եղև
 Թախանցիկ : 'ի յայլակերպութեն՝ յստակ . ընդ զնայն 3. Խ. 43.
 'ի վերայ ծովուն , թեթև . 'ի ժամու ընթրեացն , ան
 կրտսան . և այսոքիք յայնս ժամանակս միայն՝ 'ի ձեռն
 սրանչեւեաց , և անդրանցանողականապէս , և ոչ իբրև
 քաժիք մնացականապէս : Սակայն յետ չարչարանաց,
 և յարութեն , ունեաց Քն զայնտակ յարամադրապէս,
 և առանց սրանչեւեաց էր Թախանցիկ , յստակ . թե-
 թե , և անկրական :

Ան : Պատահական վարձն : ԼՃ. Ո՛չ թէ էր
 բեմն հուպ լինի կուսանաց ոսկեղէն պատիկին , 74. ԻԹ.
 և երբեմն հեռանայ , և վասն այն ասի պա-
 տահական . այլ նկատմամբ դոյադական վարձուն զորս
 ամսքն ունին 'ի տեսութենէն այ՝ սա կոչի պատահա-
 կան , զի զայս ունին միայն կուսանք , մարտիրոսք , և
 արողիք : և կամ ասի պատահական՝ իբր թէ , Թարց
 տորին ևս կարէ դոլ ոք երանեցեալ :

Ան : Քանզի սրբան դժոճարագոյն է : ԼՃ. Դրժ- 74. Ե
 ոճարութի դործոյն որ ցուցանէ զմեծ սէր առ
 Քն , յայնժամ միայն է , յորժամ գործն 'ի կող-
 մանէ իւրմէ իցէ դժոճարին : Քանզի եթէ 'ի կողմա-
 նէ մերմէ իցէ դժոճարութիւնն , այսինքն , վասն ոչ
 բա-

բարեպէս պատրաստ գորոյն մերոյ , և կամ վասն մե-
 րոյ ծուլութեան , յայնժամ մանաւանդ ցուցանէ ըզ-
 րապէս : Բանդի ծուլիցն թէպէտ նաև
 զոտն փոխելն է՝ ծանր իմն , բայց այսու առաւել
 յանդիմանին՝ քան թէ արդիւնաւորին : Տե՛ս 'ի երկ-
 րորդ գիրս լուծմանց . 'ի կ' գլուխն :

Բ

Բան : Եթէ ոչ ներգործութիւն քարոզիչն : Լծ.

Որք ներգործութիւն քարոզէն , նորին ընդունին
 զոսկեղէն պատկիկն , և ոչ որք գիտեն զքարոզել
 բայց լեն վասն ծուլութե , և ոչ քարոզէն ներգոր-
 ծութիւն . և աստ իմն ընդ քարոզաց նաև զվարդա-
 պետան , որք ուսուցանեն զայնպիսեաց իրաց , որք
 վերաբերին առ փրկութի հոգւոյ : Բանդի որպէս
 քարոզիչն նոյնպէս և վարդապետք վանեն զգեւս , և
 բացամբժեն ոչ միայն յինքեանց՝ այլ նաև 'ի սրտից
 այլոց . որոյ վասն համանշանի ոսկեղէն պատկիկն :

Քարձեալ իմն , զի վարդապետէն , և կամ ուսու-
 ցանէն՝ երբեմն լինի բերանով , և երբեմն գրելով :
 Արդ՝ ոսկեղէն պատկիկ որ տրի ուսուցանողացն որք
 բերանով մեկնեն զի գիրս , կամ ուսուցանեն զս
 հաւատս , և կամ բացատրեն զո և իցէ զամ յին բանս ,
 ոչ զանազանի 'իյոսկեղէն պատկիկն այնց՝ որք զայն
 պիտիան գրելով ուսուցանեն , այսինքն , զգրեանս շա-
 րագրելով և շինելով որք պարունակեն զամային ուս-
 մունս : Բայց գիտելի է , զի ոսկեղէն պատկիկն նա-
 խանէթադրէ զոսկեղէն պատկն , որ է դոյսացական

վարձն : Ուստի որք ցանկան ունել զոսկեղէն պա-
 տկիկն , պարտին միշտ գոլ 'ի սէրն ւն , և ազատք 'ի
 մահու չափից մեղաց , զի շահիցին այնու զդոյսացական
 վարձն , որ է ոսկեղէն պատկն . որով և ապա հետեւիլ
 կարիցի ոսկեղէն պատկիկն : Ուստի քարոզիչք , և
 վարդապետք 'իյուսուցանելն եթէ ոչ իցեն 'ի շնորհս ,
 և կամ եթէ ուսուցանիցեն վասն անախառութե , ոչ
 երբէք շահին զոսկեղէն պատկիկն վասն արարեալ
 քարոզութեանց , 'իյայնպիսի ժամանակսն . ուրեմն
 վասն քարոզութե , և վարդապետութեան շահեցեալ
 լինի ոսկեղէն պատկիկ , 'իյայնս ժամանակս միայն ,
 յորս քարոզիչն , և վարդապետն է 'ի շնորհս , և 'ի
 սէրն ւն :

Բան : Համահեղումն բարեաց : Լծ. Այսինքն ,
 ամբ բարեաց , և այսու իմն զամբ , որ է ամբ բարի , ԴԼ. ԼԱՍ
 որպէս ասաց մօսիսի , ցուցից քեզ զամբ բարի և Ա
 եցոյց զինքն . ուստի ընկում միայնոյ ծայրագունեղի ,
 պարգադունեղի , բարձրագունեղի , և ամենակերպի
 բոտ ինքեան բարւոյ , որ է ամբ , կայանայ երանութիւն
 մեր . զի մինչ նա է աղբիւր ամբ բարութեց , նա ինքն
 է և ամբ բարի , և յոյժ առաւել բարի քան զամբ բարի :
 Վասն որոյ համայնք բարիք որք ՚ի բնաբանոցն
 համաթռեցան , և այլք անթիւք որք ոչ կարեն
 համաթռիլ , ամենեքեանք են ՚ի յամբ . և ինքն ամբ է
 այն ամբ . ուստի աշխատասիրեալ ունել զամբ , և ժա-
 ոանդեցեր զամբ : Տես սրբութիւն սրտիդ զամբ , և տե-
 սեր զամբ : Մասնակցեցն զքեզ սիրոյն ւն , և առեր
 զամբ : Քաղցրացիր սիրովն ւն , և ճաշակեցեր զամբ .
 ընտանեցն զքեզ ւն , և իւրացուցեր զամբ :
 Դարձեալ , հետեւեալ յաւելտ սիրոյն ւն . և հետեւին
 քեզ այնք ամենայնք : Դարձիր առ ամբ , և դառնան
 առ քեզ այնք ամենայնք . արա զքեզ ւն , և ինին քեզ
 այնք ամենայնք : Միացն զքեզ ընդ ւն , և միանան
 ընդ քեզ ամենայնք : Ըստացն զքեզ ւն , և ստանին
 ՚ի քեն այնք ամենայնք . ասեմ զայնս ամենայնս , այս
 ինքն՝ զհամայնս խնդուիս , և զբարիս որք համաթռե-
 ցան ՚ի բնաբանոցն , և համաթռիլ կարեն : Չորեւ
 մեզ շնորհեցե՛ք փրկիչն ամենայնի , որ ինքն է երա-
 նութի , և պատճառ մերոյս երանութե . կեանք ա-
 մենից , և բարութի բոլորից , որ է օրհնեալ ՚ի հա-
 մայնս յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

Վախճան լուծմանց Ածաբանականի ճմարտութե :

՚ի պատիւ և ՚ի փառս Յի Բի , և ամենեքանեցելոյ մօր
 իւրոյ սրբապունեղի կուսին մարիամոս : Ամէն :



Արք երանելոյն մեծի տղերոսի , համառտաբար
արտահանեցեալ ի ճառից հնոց :



Բաներին արդերտոս՝ որ մահանաւորսն կո-
չի մեծ , ամենից ժամանակսից փիլի-
սոփայից, որք ի մէջ բրիտանեկից զխա-
ւոր , և ի նոսին ուղ արեգակ պայծառա-
գունեղ ի յատեղս , եր ի դաւառէն լո-
փնձենայ՝ մերձ քաղաքին աւելաւորնոց :
Սա մինչ եղև ամայ միշտապանից՝ եմուտ
ի կարգ քարոզողոյ՝ վասն ջերմեռանդութե , և ուսում
նասիրութե , ի քաղաքն պատուա . կամ (ուղ ասեն օմանք)
ի քաղաքն դօշնիա : Էւն զի թէպէտ միշտ ջանիւ յու-
շաղիր լինէր ուսման (թերևս առ մեծադոյն փառս
ամենեւրանեցեղոյ կուսին , որում արդերտոս մեծադու-
նիւ ջերմեռանդութե՝ լրձակերտէր , և ջերմեռանդիւ
մոռք ծառայէր) բայց այնքան տկար էր յիշողութե , և
բեթամիտ , մինչ զի տինչ կերպիւն կարէր յառաջանալ :
Ան որոյ ընդ յառաջանալն ընկերաց , և ընդ ոչ յառա-
ջանալն ինքեան , կամեցաւ ի բաց թողուլ ամենևն իմք
զկարգն : Ուստի մինչ տեւէր ի յայտալնս յառաջադ-
րութե , յախշտակեցաւ մոռք , և եղև ի տեսլեան . և
թուիւր նմա , թէ դնէր դասնդուխտ առ որմն մե-
նաստանին , ուղ զի փախիցէ ի մենաստանէն , և ի կար-
գէն : Իսկ մինչ ելանէր ընդ սանդուխտն , ետես ի
գաղաթման նորին , զորեւսին պատուաւոր տիկինն ,
որոյ մինն ի բաց վանեաց զնա , և ընկէջ յերկիր տալա
մինչ կրկնեալ անդրէն ելանէր միւսսանդամ ևս ի յերկ-
րորդէ տիկնոջէ գարձեալ ի բաց վանեցաւ , և անկա-
յերկիր . բայց մինչ երկոյս ջանայր առնել զնոյն , ի յեր-
րորդէ տիկնոջէ պատուաւորէ հարցեալ եղև զպատ-
ճառէ երման իւրոյ ընդ սանդուխտն . որում պատկա-
ռեցեալ զիմօք պատասխանեաց . ով տիրուհի , տեսա-
նեմ զի ընկերքն իմ յառաջանան ի փիլիսոփայութեան ,
իսկ ես զդինչ կարեմ ուսանիլ . ուստի յաղաղս
ամօթոյս այսորիկ յառաջադրեմ հեռանալ ի կարգէ
յայտմանէ : Առ որ ասէ տիկինն , ամենափառաւոր
տիրուհին այն զոր աստէն տեսանես , է մայր մյ ,
թաղուհի երկնից , մայր ողորմութե , և մեք եմք աղ-
խիք նորին . յանձնեալ զքեզ նմա , և մեք լինիմք օգ-
նականք քեզ . որպէս զի նա միջնորդիցէ վասն բոյ
առ որդին իւր , սակս շնորհեղոյ քեզ զլրութի մտաց :

Եւ արարեալս ընդ լսելն զայս՝ յոյժ ուրախացել տաաց իարի յօժարութեմ յանձնեմ զիս ուստի աղաչեմ զձեզ որպէս զի լինիցէք ինձ անսկզականք։ Այս ամիս հանդերձ նորօք աղաչէր զԹադուհին փառաց։ Արարտախանի ետ նմա ամեներանեցեալ կոյսն և տաաց։ Եւ արարեալս, որպիսեւ զԽոռութեմ կամիս գոյ հմուտ ամաքանութեմ, Թէ բնականի գիտութեմ։ Առ որ ամիս ցեցեալ այլք գիտութիւնք յօժարութեմ կամիմ յառաջանալ, և այնպիսի լինիլ որպիսի ոչ երբէք եղև որ կամ իցէ եւոյ ի յայն։ Պատասխանի ետ նմա ամեներանեցեալ կոյսն մարիամ։ Ունեցիս զոր աղաչեցեր այլ փասն զի ոչ գոյնք գիտութիւն որդւոյ իմոյ, որոյ զմերձ փախճանի կենաց քոյ կորուսցես զնմա գիտութիւն քոյ, և եղիցիս այնպէս բժամիմ որպէս ետք այժմիկ։ Այս փառաւորապաշտենէ կոյսն պատմի բեաց նմա զի ստեալ կացցէ աղօթից, և ջերմեան գութեմ, և պարապեցի ուսման։ և արարեալս խոտացաւ այնպէս առնել։ Եւ ընդ բացահեռանալ տեսլեանմ վերադարձաւ առ ինքն։ և ջանայր կատարել զպատմիրանս կուսին։ և զոր ինչ ընթերցայր, իադուհեղապէս իմանայր։ Եւ եթէ երբեմն ուժիցէր զգոհարութի ինչ, զիսկի աղօթիւք սու երանեցեալ կոյսն, և զոր ոչ կարէր իւրով յատկաւ ուժիմութեմ ընկալոր զայն աղօթիւք։ Իսկ յաճախայրէս աղաչէր զերանելի կոյսն, զի մի գուցէ Թոյ տայցէ նմա իմ տարիլ ի ճշմարտութեմ հաւատոյ սօփիսթականօք բանիւք փիլիսոփայից։ այլ ամբացուցանիցէ զհոգի իւր ի հաւատաւութեմ հաւատոյ։ Որ երևեցաւ նմա կրկին, և միսթարելով զնա, տաաց։ Էր հաւատարիմ, և յաշատուեալ յուսման։ զի ամ այնքան փարթամացուցէ զքեզ սուտութեմ գիտութեմ, ամիս զի ի ձեռն որոց քոյ զարդապետութեմ, լուսաւորեցի բոլոր եկեղեցի։ Ասկայն նախ քան զմահ քո՝ բառնիցի ի բէն ամարհեստ ձեռնարկական, զի մի գուցէ կարիցես տա բաբերիլ ի բանս հաւատոյ, և զի յարանեցես ի ստուգութեմ հաւատոյ։ Արդ՝ զայս տեսութի պատմեաց նախասացեալ արարեալսն զինքեմէ ընթերցեմ դատօք, զոր տայր աշակերտացն, յորում և իսկ կատարեցաւ, և ճշմարտեցաւ անասին այն։ Այս սքեմ անձապատիւ պարս այս՝ յետ ընդունելոյն զգիտութի յատուծուտ (ուն նախ անորա) Նախ, դատ ետ

զվճիւռան 'ի վանս հիրտեանէ մէնոյ, 'ի դաւառն սակսն իոյժ
 Յետ այնորիկ ետ դաս 'ի վախիճնիսն : Ապա 'ի ուաթիւս
 սիւնա, երկուս ամս : Եւ ապա 'ի փարէզ յետ փառաւո-
 րապէս դաս տալոյն զվճիւռան , եղև վարդապետ :
 Եւ 'ի նոյն տեղէնոյ եկաց ամս երկուս ապա դարձաւ 'ի դո-
 յոնիս . և սկսաւ փառսն որադունեղապէս դաս ասել :
 'Ի ժամանակի որոյ, սքն թովմաս ապոն ինացին , 'ի նոյ-
 նոյ կարգէ քարոզողաց լուսա զդաս նորին , և աշակեր-
 տեցաւ նմա : Յետ սակաւուց ժամանակաց կոչեցաւ
 ալպերտոս 'ի հուսմ' , 'ի յուրբանոսէ չորրորդէ պապէ ,
 աւ 'ի արմատախալելոյ զոմանս մոլորութիւն' . և հրամա-
 նաւ նոյնոյ պապին , և տեարց կարտինալաց , զարմա-
 նալի եղանակաւ մեկնելով դաս ետ զաւետարանն յո-
 հաննու . և զրն թերցունաւ նորին . յորմէ ապուշ մնա-
 ցեալք յամօթեղէն ամ հակառակորդք ճշմարտութե :
 Եւ ոմն կանոնական սք քահանայ, յաւուր միում կայր
 'ի յեկեղեցւոյ սրբոյն պետրոսի . և 'ի աղօթելն' յախշտա-
 կւցաւ մտօք , և ետես զբոլոր եկեղեցին լի օձիւք .
 որոց զարհուրելի շնծմամբն լնանիւր բոլոր հուսմ' .
 ուստի մինչ նա կայր 'ի մեծի հիւղման , եղբայր ոմն 'ի
 կարգէ քարոզողաց անծանօթ 'ի նմանէ , եմուտ յեկե-
 ղեցին . որ թէպէտ բազում անդամ արդէ լանիւր 'ի
 յօձից , սակայն քաջապէս ընդդիմացաւ նոցին , և 'ի բաց
 վանեալ զնոսին յինքենէ' ել 'ի յամպիտոնն , նորում 'ի
 յաւուրս հանդիսաւորս՝ սովոր է ընթեռնանել աւետա-
 րանն : Իսկ 'ի ընթեռնուլ զիսկզբանէն մինչև զայն տե-
 ղին , բանն մարմին եղև , ամ բազմութի օձիւց լուեաց
 'ի շնծմանէ , և անյայտ եղև 'ի յասացելոյ եկեղեցւոյն :
 Եւ յայտնեցեալ եղև կանոնական քահանային այնորիկ
 պատտախանատրութբ ամայնով , թէ այն էր եղբայր
 ալպերտոսն՝ թէ ութօնիքոս (որ է մեծ ալպերտոս)
 Ապա յետ մարտնչելոյն ընդդէմ հերձուածողաց և
 յաղթելոյն զնոսին , որոյ աղադաւ էր կոչեցեալ (ուղ
 նախ ասացաւ) ուրբանոս պապն՝ արար զնա եպիսկո-
 պոս ուաթիւրիսնացւոց : Արդ՝ զարժանապատուութիւս
 զայս դովելաբար վարեաց զերիս ամս . և տեսեալ սր-
 բոյն թէ զգաւէր մեծամեծիւք պաղմամբ աշխարհայ-
 նովք , հրաժարեցաւ 'ի պատուոյ եպիսկոպոսականէ ,
 և 'ի ուժիկացն ինքեան յստկացելոց . և դարձաւ 'ի դո-
 յոնիս 'ի կարգն իւր . ուստի անդ շարունակաբար ութ
 և տասն ամ դաս ասաց , յարմարադունեղապէս :
 Աերջապէս էր բոլորովմբ զգատտ 'ի յուսումն . և 'ի

գործս բարիս իբրև զձիթենի պտղակից . յաճախաբար քարոզէր եկեղեցականաց , և ժողովողեան . և յորովից զառողջարար խորհուրդս , և զխրատոս բաղդրաբար և ամսորժապէս տայր . ջերմեռանդութիւն մանաւանդա-
կանաւ ասպրիւր . զտեղի գերեզմանի իւրոյ հանապազ-
օր այց առնէր . և անտանօր կատարէր զԺամակարգու-
թի մեռելոց վասն ինքեան , ոնչ թէ իցէր մեռեալ .
յամուսմ աւուր յետ ասելոյն զդատս՝ զբոլոր տաղմոսն
բաղէր . իսկ առ ամեներանեցեալ կոյսն՝ զյոյով
ջերմեռանդ հետեւակս , որք առ նշանին վասն աւուր
շաբաթու , հանդերձ երգով շարադրեալ կատարէր Ե-
փայց մինչ շարադրէր զհետեւակ նոյնոյ կուսին , զվե-
րափոխմանն՝ որ ասի , որջ լեր մայր փրկչին , և եկեալ
մինչև ցայն տեղին ուր ասի , որջ լեր մայր գթութե-
սակաւ ինչ արդել զինքն , և խորհրդածէր՝ թէ զինչ
տողրակցիցէ , և իսկոյն գլեաց . և բոլորի երրորդութե-
ան նշանագոյն խրախճարան : Ուստի ահա յետ սակաւ-
ուց՝ երևեալ նմա երանեցեալ կոյսն , ասաց . շնորհա-
կալ եմ զքէն ավ բարի արպերոտս՝ զի ողջունեցեր զիս
այնպիսի ողջունատրութիւն , որ այնպիսեաւ գովութիւն
յառաջագոյն ոչ երբէք եղէ ողջունեցեալ յուսեք :

Ուստի վարդապետս այս պայծառագունեղ՝ դրէ թէ
զանհուն ընձեռուածս գրեաց՝ որք են պարզագունեղք
որոց ոմանք դնին իբրու ճանապարհ , և հետք վսօգտի
ուսանողաց : Արդ՝ վերջապէս երեք ամ յառաջագոյն
քան զմահն իւր՝ յաւուր միում մինչ դաս ասէր՝ ի քա-
ղաքին գօլծնիս , կորոյց զհամայնս՝ զորս ունէր ի յիշո-
ղութե , և յիշեաց զտեսիլն , և զպայման ամեներանե-
ցելոյ կուսին՝ որ յառաջագոյն եղեալ էր ի պատանե-
կութե իւրում . և յայնժամ պատմեաց ամենեցունց
օտելով , ով որդեակք իմ սիրելիք , ես յայսմ հետե ոչ
ևս դաս ասեմ ձեզ . բայց խօստովանիմ առաջի ձեր
ամենեցուն յայտնապէս՝ զի հաւատամ ճշմարտապէս
զբնաւս մատունս հաւատոյ . և ամենեւինք ոչ երկբայիմ
դնոցանէ . վս որոյ աղաչեմ զձեզ տալ ինձ զեկեղեցա-
կան սրբապնութիւն , ի Ժամու սխտանաւորութե : Իսկ
եթէ ասացի , կամ գրեցի զնմն , որ իցէ անպատկան հա-
ւատոյ , կամ բարուց , այժմ՝ վերադարձուցանեմ զայն ,
և զնման վարդապետութիւն իմ տողրադրեմ սրբադրուէ
սրբոյ մօրն եկեղեցւոյն հռօմէականն : Եւ յետ ասելոյն
զայս՝ էջ ի յաթուոյն վարդապետականէ . ուստի գիրկս
արկեալ , և համբուրեալ զնա ամենեցունց հանդերձ

արտառնօք , և դարձաւ թ սիրով : Եւ յայնմ հն-
տէ մինչև 'ի մահ, մեայ' ի մեծադուռնի պարզամտութե,
և զայնչ զանցարար յայնցանէ : որք էին կրօնին :
Ապա յամի Տն 1280. յետ վեցից ամաց, և ութից ամաց
մահն աւան սրբոյն թօնայի ազնւիւնացոյն , 'ի նոյնմբե-
րի 13. հոգին այն սրբադուռնեղ լուծեցաւ 'ի մարմնոյն-
և թաղեցաւ յետ կոյս աւագ խորանին յեկեղեցւոյ կար-
գին քարոզողաց, 'ի Հնուն դերսադատունեցելոյ Տն սիֆ-
րիստոսի եպիսկոպոսին դօլօնից : Ընդ որոյ և համարն
թագան համայնք ժողովք վարժարանից՝ քաղաքին գօ-
լօնից , և բնաւք իշխանք , և բազում ժողովորդք
ասացելոյ քաղաքին 'ի յեկեղեցին ուր թաղեցաւ : Արդ-
յետ սակաւու ժամանակի թաղեցման մարմնոյ նորին՝
եղև վերահանդրեցեալ 'ի յոմանց՝ ուղ զի տեսցեն զնա .
և անդէն եղև զայնմանայի ինչ . քանզի ոչ գտին զնա
ուղ եղեալ էին 'ի վր թիկանցն տարածեալ յերկիր ,
բաւ հասարակի սովորութե , այլ գտին զնա ծունի-
եղեալ, և խոնարհեցուցեալ զերեսն , բաւ որում ինքն
յատուկ սովոր էր աղօթել՝ մինչ կենդանի էր : Ուստի
ոչ դադարեցաւ ան յայնեղ զփառս նորին յետ մահ-
ւան՝ զոր ժառանգէր երանելին 'ի վերին դաւառին :
Բանդի դասասաց վարդապետին թեոդորոսի , որ էր
'ի քաղաքէն թրեվէրէնոյ՝ ոմն սբ կին , որ էր խոստո-
վանորդի այնորիկ վարդապետի , գողով մեռեալ՝ յետ
հնդեաւասանից աւուրց իւրոյ մահն աւան , երևեցաւ
նոյնոյ վարդապետին՝ մինչ ճգնէր 'ի խղի իւրում, և
ասէ , թէ ահա առաքեցայ ես յոյ՛ առ 'ի բացայայտել
քեզ զերից իրաց . զորոյ ճշմարտութիւն կամէիր գիտել :
Եւ իսկոյն նախ էհարց զնա վարդապետն թէ ոգո-
րոս և ասէ , դու զիւարդ կեաս : Պատասխանեաց ասե-
լով , թէ կամ պղահով յանդիման ամենապէ երբորդու-
թեն . նաև էհարց զարքայութեն , և պատմեաց նմա
կինն սբ , պատւաց երանութե : Ապա էհարց զնա և
ասէ՝ ճանաչե՛ս արդեօք զեղբայր արպերտոսն թէ ու
թօնիլոս 'ի կարդէ քարոզողաց նորապէս վախճանեալ
'ի գօլօնիա : Պատասխանի ետ նմա ասելով , բարեօք
ճանաչեմ : Ասէ ցնա թէ ոգորոս , սբ է : Պատասխա-
նի ետ ասելով . խնդայ անպատմելի ցնծութե՛ յոյժ-
բարձրագոյն քան զմեզ : Բաց յայցանէ , նաև եղբոր
ուսմեմ ջերմեռանդադուռնի որ հսկէր 'ի յեկեղեցին
եղբարց՝ 'ի գօլօնիա , և աղօթէր վասն հոգւոյն արպեր-
տոսի , երևեցաւ երանելին արպերտոս մարմնաւոր տես-
լեալն ,

լեամբ , և զգետաւորեցեալ պատուականադունիւք
 զգետովք հայրապետականօք, ունելով 'ի վր ձակատոյն
 զակն իմն պատուականադունեղ՝ որ արձակէր յինքենէ
 զարեգակնային ձառադայթս , և լուսաւորէր զբոլոր
 եկեղեցին : Իսկ եղբայրն վերոյստացեալ իբրև ետես
 դնա , եհարց զորպիսութիւն կացութիւն նորին : Իսկ երա
 նելին ալպերոտս՝ պատասխանն ետնմա ասելով. զգայ
 ութիք մարդկայինք ոչ են ընդունալք փառաց իմոց՝
 բայց պարծառութիւն որ յառաջադայի յականէ ձակա
 տոյն իմոց, նշանակէ զանպատմելի փառս՝ վասն պայծա
 ոութե գիտութե , զոր ետ Էւք Տէր . միջնորդութիւն
 որոյ, և իմով աշխատութիւն համեցաւ լուսաւորել զբո
 լոր եկեղեցին : Աստի յետ ասելոյն զայստիկ անյայտ
 եղև աչաց նորին . և մատենա առ 'ի զմայլումն ամենա
 սրբոյ երրորդութե . այժմ և 'ի յաւիտեան յնալոց :
 Այսոքիկ համառօտադունեղապէս ասացեալք բանես
 ցին զվարուց երանելոյն մեծին ալպերոտսի , որում և
 'իմիասին մօր կուսի , ամենադործունեայ բարեխօսի ,
 զմեզ, և զվերայինս իբրու յատկի միջնորդի առ մեծ, հա
 մարձակօրէն յանձնել պարտիմք . միջնորդութիւն որոց
 արժանապագք և մեք մասնակցիլ երանութեց նոցին ,
 'ի մշտնջենաւորս յաւիտեանս : Ամէն :

Թէ որքանք իցին դիրք , և որպիսիք՝ զորս արար՝ և
 շարադրեաց երանելին ալպերոտս, 'ի գիտութիւն մարդ
 կայինս, այսինքն շուրջ զեկիւստիայականօք գիտութիւնք :

Ի վերայ հնգից ստորագրելեց եղերաց, 'ի վր տասանց
 ստորագրութեց : 'Ի վերայ վեցից սկզբանց . և 'ի
 վր դրոց առաջնոց , վերջնոց . թօքիւցաց . և էլէն
 դոց . 'ի վր դրոց ֆիզիկայից : Յաղաքս դժից անբա
 ժանելեաց : Յաղաքս երկնից , և աշխարհի : Յաղաքս
 ծնելութե , և ապականութե : Յաղաքս բնութե լու
 սոյ : Յաղաքս յատկութեց տարերաց , և մեթէօրաց :
 Յաղաքս հոգւոյ : Յաղաքս զգայութե , և զգայացե
 լոյ : Յաղաքս յիշողութե , և վերայիշողութե : Յա
 ղաքս ներաշնչման , և վերաշնչման : Յաղաքս ննջման ,
 և հսկման : Յաղաքս սնուցման , և սնուցանելոյ :
 Յաղաքս երկարութե , և կարճութե կենաց : Յաղաքս
 մահուն և կենաց : Յաղաքս հրահալելեաց : Յաղաքս
 անողականաց : Յաղաքս տնկոյ : Յաղաքս շնչաւորաց :
 Յաղաքս պատմասաց : Դարձեալ 'ի վր դրոց մեթա
 ֆի-

Ֆիզիզայից : 'Ի վերայ գրող բարոյականաց . Բաղա-
բականաց . հոգևորականաց : 'Ի վր դրոշմն որ յաղագս
շնչաւորաց , խորագունեղն իմացողութե : 'Ի վր գրող
փոսայեմանից : Յաղագս չորից համայնութենակա-
նաց : Յաղագս ծաղման հոգւոյ : Յաղագս կարողու-
թեց հոգւոյ : Յաղագս իմացութե , և իմանալոյ :
Ընդդէմ միութե իմացութե : Յաղագս միութե տե-
առի : Յաղագս մարդոյ : Յաղագս բարւոյ : Յա-
ղագս խտտոց : Յաղագս քարանց . և յաղագս այնորիկ
արհեստի , որ 'ի յոմանց խտտոց , և 'ի փոշեաց 'ի ձեռն
հոյ շնեցեալք քնին ոչէ իւր : Չգիրքն որ ասի ու-
ղի շաւիղ . և և զգիրք ինչ ընդդէմ գրող կախարդաց .
Դարձեալ զգիրք ինչ 'ի վերայ շրջանակին . և 'ի վերայ
աստուօրասից . այսինքն , գործեաց որովք շարժմունք
ստոտեղաց համանկատին : Չգիրք ինչ որ ասի հայեի
յաղագս ծննդեան մարդոյ : Եւ զգիրք ինչ յաղագս
հղօրեղութե կնոջ :

Թէ որքանք են գիրք , զորս արար , և շարադրեաց 'ի
գիտութիս շուրջ զմեծաբանութե :

Օհետեւակս բաղումն : Եւ գիրք մեկնութեան 'ի
վերայ յօրաց . 'ի վր երգոցն . 'ի վերայ երգեաց .
երեմիայ . եղեկիւնի . դանիւնի : 'Ի վերայ եր-
կոտասանից փոքր մարգարիւց : 'Ի վր մատթեոսի . մար-
կոսի . ղուկասու . յօհաննու : 'Ի վր ամենից թղթոցն
պօղոսի : Դարձեալ արար զմեկնութե գիրս , 'ի վերայ
գիտնէսիոսի , այսինքն , յաղագս երկնայնոց դասակար-
գութեց . յաղագս ամենից անունաց . յաղագս ոլոր-
գն ամեաբանութե : 'Ի վր չորից գրող վրձնոց :
Դարձեալ արար զգիրք ինչ որ կոչի համառօտութի
ամեաբանութե . և բաց յայսցանէ , զգիրք ինչ որ ասի
հաւաքումն ամեաբանականի ճշմարտութե , որ է սոյն
ներկայ գիրքս : Դարձեալ , շարադրեաց զգիրք ինչ ,
յաղագս կատարելութե կեննի հոգւորի : Յաղագս
խորհրդոյ պատարագի : Դարձեալ բան 'ի վերայ այնմ
աւետարանի , որ ասէ առաքեցաւ հրեշտակապետն
գաբրիէլ և այլն : Չգիրքն ոսկեղէն՝ որ ասի առաքե-
ցաւ : Չգրուկ իմն յաղագս սրբազնութե սեղանոյ :
Չգիրքն՝ որ ասի գաղտնի գաղտնեաց : Սաւ դրե թե
արար զայլս անթուելի գրգիւնս , որք աստէն ոչ դնին :

Ապա

Այս Թէ վննչ, և որպիսի դովուծի, յաղաքս զարմա-
նալոյ վարդապետունէ նորին եղև շարադրեցեալ յետ
մահունն, նաև 'ի վերայ գերեզմանի նորին՝ ոմանք
յայնցանէ գրեցեալ, երևի 'ի հետեւեալ ոտանաւորս :

Իշխան էր սա վարդապետաց .

երջանկապոյն ներ լաքունեաց :

անօթ մաքուր սրբոց ուսմանց .

և զայն հեղօղ յողիս մարդկանց :

Գրեամբք իւրովք լուսափայլեաց .

և զգիտելիս մարդկանց գիտաց :

հռչակապէս զգատս ասաց .

այնու զբազումս լուսաւորեաց :

Սեծն ալպերտոս այն քան գիտաց .

հայցմամբ կուսի մօրն փառաց .

զի զամենիւք գերազանցեաց :

որք 'ի յուսման բնականաց :

Թէ որքան է և քանիօն .

մեծ վարդապետս այս մեր զգօն :

է վերնապոյն քան զպղատօն .

ասկաւ 'ի վայր քան զսաղօմն :

Նորհօք ամենազօր սբ հոգւոյն, և միջնորդութի
ամենեւեցեալ կուսին մարիամու, յանկ ելեալ
աւարտեցաւ, ամբարանական մատենա երանե-
լոյն ալպերտոսի, հանդերձ լուծմամբք՝ 'իմի ոմանց բա-
նից տարակուսականաց : Թուին Քի 1716. իսկ ըստ
հայոց, ԴՃԿԵ, ապրիլի 20. Արդ՝ սիրով ընկալեալ՝ պո-
ղաբերութիւն վայելեցէք զարիւմտիսց, և զբաւականա-
գունեղ բուրաստանս որոյ պիտանաւորութի, և օգուտն՝
սու լուսաւորչանութեղ ազգն մեր հայկազեան, այն քան
է, որ քան է յորդահոս աղբիւրն, և առատաբուխ վը-
տակն՝ առ ծարաւուտ երկիրս լն զի սա է աղբիւր՝ որ
յաւե՛ծաբար ուռդէ զսիրտ՝ աննախանձ ընթերցողաց .
ակն պոյծաւ՝ որ լուսաւորէ զմիտս խոնարհաբար ակ-
նածուլաց . խորիսս մեղեր՝ որ քաղցրացուցանէ զբիմ
հեղաբար ճաշակողաց . օղալտան հոգեւոր՝ որ անապա-
կան պահէ զողիս՝ հնազանդաբար ընդունողաց . վարդ-
անուշահոտ՝ որ զմայլէ զբուդունս՝ համեղաբար հոտո-
ւողաց . քաղցրանուաղ երգարան՝ որ յադեցուցանէ

զա

զարտութեան՝ մտադրաբար ունենցողաց : անունապէս
 խրախմբարան՝ որ ուրախ առնէ զհոգեւոր անձանց որոյ
 բանասիրաց : և բուրաստան հոգեւոր , և կատարեալ
 յորմէ բուրին հոռոք համայնից ծաղկանց անձաբանակա
 նաց խնդրոց՝ ի միտս ունեւաբար կիրաւորոց :
 Իարձեալ սակ : ասող առաւօտեան՝ որ հաղածէ զհա
 լար տղիտուծէ : Վահան ամբուծէ , որ պահպանէ
 ի նետից ընդդիմութե : Յուպ աներկեան՝ որ զեր
 ծուցանէ ի յարկածից գլորման : Ըաւիղ ուսման՝ որ
 առաջնորդէ առ լոյս դիտութե : Գիտութի ճշմար
 տութեան , որ ձեռքածէ զմեղ ի սէր սրբութեան :
 Հայեւի համառօտութե , որ յորով քան զբառս պարու
 նակէ զբան : Արեգակնատիպ մատեան՝ որ տեսողացն
 երեւի փոքր , բայց կարի մեծագունեղ նկնքեան :
 Եւ վերջապէս՝ փոքր , և մեծ համանգամայն՝ որ է
 արժանի զարմացման : քանզի Թուղթք իւր դիւրաւ
 ի թիւ գան , բայց ոչ բանքն՝ որք ի նոսին սիւեալ
 կան : Արդ՝ որք զմայլիք պապիսեաւ անձայնով գան
 ձարանաւս , յիշեալիք առ Տէր , զաշխատօղս առ լոյս
 անուան սորին , զնոնաւս ծառայ ձեր , զմխիթար
 վարդապետ սեբաստեան : և զաշխարհս իսն , որք
 և նորին աշխատեցան ի զանազան պիտանաւորութիւն
 սորին : Բանդի տաղաբոլոքն մատենիս՝ վասն ոչ գո
 լոյն յաղգէն մերմէ , և ոչ գորով հմուտք մերոյս լե
 զմի , կարի յանելաւ աշխատութիւն մեր՝ քան զոր
 կարծիւր նախապէս : Իարձեալ յիշեալիք առ տէր
 զնոնօղս ծախից՝ առ տաղաբոլոքն մատենիս զկոս
 տանգնուպօլսեցի պարսն սարգիսն , և զհայր նորին՝
 զտիրացու գէորգն , և զմայր նորին՝ որ է հանգուցեալ
 առ Բն . նաև զկողմիցն նորին , և զեղբարսն՝ և ըղ
 բորսն , և զգեւաբողբոջ որդիսն՝ և զայլ անմարեան առու
 մերձաւորս նորին : Վսգի առ կատարումս սորին զկրկ
 նապատիկ ծախս արար՝ քան զոր կարծէր նախապէս :
 և զայն ամենայօժար մոօք , առ ի յիշատակ ինքեան , և
 իւրայնոց : առ ի լուսաւորութի մանկանց եկե
 ղեղեղ , և առ ի պատիւ , և ի փառս Տն մերոյ
 Յն Բի , փրկին համայնից , որ է օրհնե
 ցեալ ի համայնս յաւիտեանս . ամէն :
 Հայր մեր որ յերկինս ես՝ սք
 եղեցի անուն քո :



